


A 955,767

ԲԱՆԱԽՈՍԱՌԻԹԻՆՆԵՐ

ՄԱՐՏԻՆ ԲԱՍՏՆԱՅԵՐԻ





Estate of

Levon Kazanjian







ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ



Ա. ՀԱՏՈՐ



ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ



1912


ԿԻՆԿԻԱ ՏՊԱՐԱՆ  
ՊՈՍՏՈՆ Digitized by Google











Digitized by Google



ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ

EPISCOPUS. Muskegeh

ՄՈՒՇԵԼ ԵՊԻՍԿՈՍՈՍ

Բանաբանական

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՀԱՏՈՐ

1912

ԿԻԼԻԿԻԱ ՏՊԱՐԱՆ  
ՊՈՍՏՈՆ

AC  
1901  
1564  
E2



Գ. Լ. Մանուկյան  
Գրքի  
Բ. Կ. Մանուկյան  
19/06/1912

## ՆՈՒՒՐՈՒԱԾ

Անոց, որ ինկան Ազգին, Հայրենի-  
փն, եւ Եկեղեցիին սիրոյն եւ մարդկային  
արժանապատւութեան բարձրացումին հա-  
մար,

Եւ

Անոց՝ որ՝ կանգուն, կը կռուին վա-  
սութիւններու եւ բռնութիւններու դէմ:

ՀԵՂԻՆԱԿԷՆ



## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1 Թուրք Հովուական (Բ. սպ.)	\$ 0, 25
2 Պատկերներ . . . . .	» 0, 25
3 Դրուագներ (սպասած) . . . . .	» 1, 00
4 Հովիտին հրատները . . . . .	» 0, 35
բ »           » Թուրքերեն . . . . .	» 0, 35
գ »           » Հայ-Թուրք . . . . .	» 0, 75
5 Ասանայի ցարդը եւ պատասխանա- տուները . . . . .	» 0, 15
6 Les vePRES Ciliciennes . . . . .	» 0, 50
7 Ընկերվարութիւն եւ Հայ ընկերվա- րականներ . . . . .	» 0, 25
8 Վարդան Հոգին . . . . .	» 0, 05
9 Բրիտանական Բարոյակներ . . . . .	» 0, 25
10       »       Վարդապետութիւնը . . . . .	» 0, 25
11 Մանչեսթրի Հայ գաղութը (պատկե- րագրող) . . . . .	» 0, 50
12 Ամերիկանայ Տարեցոյցը (Ա. Տարի) . . . . .	» 1, 00
13 Բանաստուարներ . . . . .	» 0, 50

### Ա Ն Տ Ի Պ Գ Ո Ր Ծ Ե Ր

Նորընծայի մը քառուկեր  
Գ. Նարեկացի եւ իր ժամանակը  
(Պատկուած Եզմիրլեան մրցանակով)  
Հայ բողոքականութեան ծագումները



Հայ ազգը երեք տարիներէ ի վեր ազգային-ընկերական ծանր տագնապ մը կ'ապրի: Կարմիր Մովսէս անցնող Իսրայէլացիներու անապատի կեանքն ըլլար կարծես ապրումա՞ծր. . . .

Փոխանցումի եւ երկունքի շրջանն է, որուն մէջ կը գտնուիմք, մեզմէ ոմանք իրենց առաջնորդողի, եւ սուրար մեծամասնութիւն մը իրենց տրուածի հսկգամանքով:

Ընկերական տեսութիւններու հրաքուիս մը կը ժայթքէ ամեն դի, նիւքապաշս եւ օգտախնդիր փարդապետութիւններէ հրահրումա՞ծ, որուն շաւաներուն տակ կուզեն քաղեչ ամեն ինչ որ կայ ազնիւ եւ վսեմ մարդկային սրտին ու հոգիին մէջ: Եւ այդ մահացումով կուզեն ազգ մը, ժողովուրդ մը, համայնք մը ապրեցընել. . . .

Աշխարհի ու մարդկութեան ազնուացումին ձրգտող մաքուր գաղափարապաշտութեան գործաւորներուն ձայնը արձագանգ չգտնէր սրտերուն մէջ քոչոր անոնց, որոնք նիւքապաշս փարդապետութիւններու անասնականութենէն կը ջանան յազեցընել իրենց ախորժակը: Էմբրսըն ու Գարշայ, որոնք մարդկութեան վերանցման (transcendant) ոյժերուն, եւ անոր հոգնկան ներոյժ ազդումին մարմնացումը եղան, կը ծաղրուին իբրեւ երագող քանաստեղծներ: Եւ մոռացութեան դասապարտուեցաւ նոյն իսկ նիւքապաշս

դպրոցի մեծ վարդապետներէն մեկուն, Հերպրոյ Սթենլորթի սա խօսքը. «Մարդկութիւնը կ'անբաւանայ ու կը վաստակուի, անիկա ուսուցումը կը գործածէ պարկեշտ եւ ազնիւ ըլլալը մոռցընելու համար: Եւ ասի այն պատճառով, որ մենք կեանքը բաւանակաւնութեան (raison) հետ նոյնացուցեր կա՛մ շփոթեր ենք: Մենք խորհուրդին վերագրեր ենք կարեւորութիւն մը, գոր անիկա հետի է ունենալէ մեր ներքին կեանքին մէջ. ամեն ինչ ստորագրուած ենք բաւանակաւնութեան. որ, ասպէս, հագիւ երկրորդական դեր մը խաղացած է եւ կրնայ խաղալ: Կեանքին հակառակ սարբերը բաւանակաւնութիւնը չէ, այլ զգացողութիւնը, զգացումի եւ ազնիւ յոյզի իր կրկնակ դերին մէջ» (Facts and Comments, 1903),

Այսօրուան մեր ուսուցումը, պիտո՞ւ շունչերէ անաջնորդուած, մի եւ նոյն ժամ իրախանութիւնը կը ցուցադրէ մեզի: Եթէ նոյն իսկ ստողը եւ հասուն դասողութիւնը, Սթենլորթի վարդապետութեամբ, անբողջ կեանքը չէ, եւ ո՛չ ալ անոր ամենակարեւոր դերակատարը, ալ ուրեմն, ի՞նչ բաներով պիտի կրնանք որակել, քան որով զործը բոլոր անոնց, որոնց իսկ միտքը. եւ բերուած դասողութիւնը, միացած սզգովնաս սկզբունքներու, ինքնակոյ անաջնորդողի դերն են ստանձնել իրենու խորը քափակեցելու վիճակէն շա՛տ հետի ապրող ժողովուրդի մը մէջ:

Անոնք իրենց անբոխավարի գործունէութեանը մէջէն, մեզի կրնան քի ճշգրտ եւ ստույկ ժողովուրդին վերածնունքը սեր համար որրան կը պատրաստենք: Բայց. իրապէս, պատրաստմանին որրան մը չէ, այլ դազող մը, իր մէջ ծարեղու համար Հայր, իր ազգութիւնով ու իր Կրօնական մտածումներով:

Արհեստաւորներ են անոնք, որոնք իրենց շիտեստութիւններուն եւ իսաւար մտածումներուն համաձայն աստուածներ կը շինեն, նման Կարգեղանացի-

ներուն, իբրև առեւտուրի առարկայ ծախելու համար զանոնք, եւ աչ չեն փնտնէր, թէ իրենց կերտած կուռքերը շա՛ր թէ բարեւար ոյժ մը պիտի ունենան, չեն անդրադառնար նոյն իսկ թէ անոնց ծնցուցած արդիւնքը աղետաբեր է թէ ո՛չ, ազգերու կեանքին համար:

Էսուարդ Շուրե երբ կը խօսի գեղարուեստի վերածնութեան (Renaissance) դարուն նկատմամբ, կը գրէ. «Եղծախիսաբար մեծ դարերը իրենց յաղթութեան կառքին ետեւէն կը քաշեն նաեւ մեծ սխալներ. Վերածնութիւնը կարծեց, թէ կրցաւ արուեստն ու գեղեցկութիւնը պատշաճանցնել իբրև զարդարանքի զգեստ մը, իր կատարի ու ապականած կեանքին վրայ, ինքզինքը գեղեցիկ ու զօրաւոր ընելու համար. Ասիկ է որ առաջ եկան այն պղտատնական քոնաւորները, գեղեցկապաշտ բախդաւարտիկները (Condottieres dilettantes), սարփանոյ առաջնորդները, Ս. Կուսի եւ Յիսուսի անասուած նկարիչները, ոճազործ իշխաններու սպասարկու այն դպրոցականները (humanistes), որոնք Տիսոս Լիվիոսի եւ Պլուտարքոսի մասին կը խօսեին, եւ Բրուսոսի եւ Կասոնի վրայ կը ճանեին. Այս էր նաեւ պատճառը բարոյական, ընկերական եւ քաղաքական սնանկութեան այն քաղաքակրթութեան, ուր սուս հեղեկականութիւն մը կեդաւոր քրիստոնէութեան ժածկոյթն էր եղած»:

Մեր մեջ այսօր գործունոյ մեծ սխալները յաղթութեան կառքերու չեն ծուած: Մեծ դարու մը մեջ ապրող ՊԶՏԻԿ ԱԶԳԻ մը կրած մեծ պարտութեան հետեւանքներն են անոնք, շատ պզտիկ եւ նեղ ուղեղներէ ծնունդ առած, եւ որոնք ընկերական ու ազգային մեծ յաղթանակի մը յառաջընթացները պիտի չըզան:

Այսօր Հայ ժողովուրդը՝ Ազգային նաւաբեկութենէ մը

յեսոյ ինքզինքն փնտռելու անողոք վիճակին մէջն է. քոյլ քանք, որ անկազմ գտնէ ինքզինքն իր խախտուած, արիւններէ հեղեղուած իր հիմերուն վրայ:

Անիկա իր կեանքին համար Հոգիի մը, եւ իր կենցաղին զարգացմանը համար նեմարտութեան մը պէտք ունի: Այդ երկուքին պակասը իր լինելութեան ժխտումն է: «Հոգին եւ նրեմարտութիւնը, այդ երկու անտուածային ոյրերը, որոնցմէ մին ֆողարկուած է, եւ միւսը հառազայքարձակ», այս երկուքը միայն պիտի կրնան Հայ ժողովուրդը առաջնորդել կիրքերու եւ կեանքի մեծ ծովերէն անդին դէպի խաղաղութեան եւ երջանկութեան ուղիները: Փոխանակ այդ հոգիի, ու նեմարտութեան նիմնաւորումովը զբաղելու, մեր մէջ կարգ մը մարդիկ, կուսակցական բռնապետութեան յիմարութենէն տարուած, ժողովուրդը մոլորընելու ետեւէ եղած են մանաւանդ երեք տարիներէ ի վեր:

Այսօր ժողովուրդը խաբուած մըն է իր գնացքին մէջ, եւ այդ խաբողներուն ու խաբուած ժողովուրդին կուզեմք յեշեցնել Լինքնի խօսքը. «Կրնաք խաբել բոլոր ժողովուրդը՝ ժամանակ մը, ժողովուրդէն մաս մը. ամեն ժամանակ, բայց չէք կրնար ամբողջ ժողովուրդը խաբել ամեն ժամանակ»:

Հայ ժողովուրդը պէտք է ըմբռնէ. քէ պատրաստութեան, հիասթափումի ժամանակը հասած է այլեւս:

*Ի՛նչ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, այդ սխալը մտնան շեշտու. եւ մեր ազգային վերաշինութեան ճանքուն մէջ մեր բռնելիք ուղղութիւնը ցոյց տալու համար միայն արտասանուած են. եւ անոնք հիմնուած են պատմական սա տուիքներուն վրայ, քէ 1) Ազգ մը իր ժառանգական, բնատուրիկ ընդունակութիւններովը, եւ իր մէջ ապրող յակութիւններուն ազնուացումովը միայն կրնայ բարձրանալ եւ ապրիլ. քէ 2) Ազգերու բարձրացումին մէջ անհրաժեշտ է նկատուի ունենալ անոնց հոգեկան յուզումները, անոնց արեւուն խորը բաղուած բախում ուժերը, զանոնք մաքրագործելու եւ զանոնք շարունակ վառ պահելու համար. քէ 3) անհասներու եւ ազգերու մէջ*

կրօնական ոգին աւելի ներոյժ է եւ ներհարդկային կարեւնալ շարունակ այդ յոյզերը վառ պահելու համար. եւ թէ վերջապէս, 4) Հայ եկեղեցիին կենսունակ շունչը դեռ անհրաժեշտ պիտի մըն է մեր ազգային գոյութեան համար, եւ այդ իսկ պատճառով պիտի է մաքրագործել այդ եկեղեցին, վերապրեցրնել Աւեստրական ոգին անոր մէջ, անով վերապրեցրնելու համար Հայ Ազգը, իր հաւաքական անհասկանալիութեամբ:

Սոյն **ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՍ** արտասանուած Ամերիկահայ Բեւիկն վրայ, (1910 նոյ. — 1911 դեկտ.) մասամբ հրատարակուած են, օրը օրին, «Ազգ»ի մէջ իրենց անփոփ ու խստացած ձեւովը: Այս անգամ հաստորով մը կ'անփոփենք անոնցմէ կարեւորագոյնները միայն, նոր ուրբաւ մը ընելով անոնց վրայ, եւ զանոնք իրենց այս անփոփ վիճակով կը ներկայացընենք մեր ընթերցողներուն:


Մեր ազգային-ընկերական ուսումնասիրութեան այս շարքը անուշ աշխատութիւն մը պիտի չըլլայ, եթէ նոյն իսկ անիկա կարող ըլլայ գոնէ քանի մը հասազգայնապէս մոլորածներ դարձի բերել եւ նոր գիտակցութիւն մը շինել անոնց մէջ:

Եւ այդ արդիւնքը մեր բարոյական վարձատրութիւնը պիտի ըլլայ:

**ՄՈՒՇԵՂ, ԵՊԻՍԿՈՊՈՍ**

10 Մայիս 1911

Պոստն



# ԱԶԳԻ ՄԸ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Պատմութեան դասերը՝ ազգին կեանքին մէջ, ամենէն ճշգրիտ ու փրկարար փորձառութիւնները կուտան մեզիւ Անոնք, որ օգտուել չեն գիտեր այդ դասերէն ու այդ փորձառութիւններէն, պատմութիւնը անոնց համար ահաւոր և անդադանալի վճիռ մը ունի. — ՄԱՀ:

Աշխարհի մէջ կեանքերը միեւնոյն օրէնքի մը համաձայն կ'ապրին: Այդ կեանքերը ըլլան, ազգերունը թէ ժողովուրդներունը, համայնքներունը թէ անհատներունը, ունին իրենց ծնունդը, մանկութիւնը, չափահասութիւնը, ծերոյթը և մահը: Գիտութեան բոլոր ջանքերը կը կատարուին կարելի եղածին չափ երկարելու անհատներու կեանքին տեւողութիւնը: Գիտութիւնը գոհունակութեան երկար շունչ մը կ'առնու այն օր, երբ կը յաջողի հիւանդի մը սնարը կանգնած, քանի մը վայրկեան գողնալ մտուան ճիրաններէն, և զանոնք բարդել հոգեվարքին գողգողջուն կեանքին վրայ: Հիւանդութիւններու դէմ պայքարը, և Բասթէտրեան հաստատութիւններու խաղաղ լուծեանը մէջ գիտուններու մտածկոտ ուսումնասիրութիւնը կեանք-

ԾԱՆՕԹ. — 1911 Մարտ 26ին Շիտ-իտի Գէլ Իոստոն-ի:

քի երկարութեանը նուիրուած ճգնութիւններ, եւս միայն:

Ի՛նչ անհուն տարբերութիւն երէկի ու այսօրին միջև. կրօնի ճգնաւորներուն և գիտութեան ճրգնաւորներուն միջև: Երկուքին ալ աշխատութիւնը կեանքին նուիրուած է: Բայց անոնք երկու հակառակ ուղղութեամբ կը քալեն. հակասութիւն մը կայ երկուքին միջև: Պատմութեան և արդի գաղափարներու ըմբռնումին մէջ երեւան բերուած այդ հակասութիւնը մենք աւելի ժամանակին կը պարտինք, քան թէ մարդերուն:

Կրօնի ճգնաւորներուն մտածումն էր կարելի եղածին չափ շուտ կարճեցընել մարմինի կեանքը, վայրկեան մը առաջ հոգիի կեանքը, կամ Յաւետեանականութիւնը ապրելու համար: Գիտութեան ճգնաւորներն ալ, որոնց մէջ կրօնական ոգին չէր, որ պիտի պակսէր. այդ միեւնոյն յաւիտենականութեան կը ձգտին, բայց ո՛րքան տարբերութիւն ունի անոնց մտածումը առաջիններու խորհելակերպէն: Գիտութեան ճգնաւորները կը հաւատան միեւնոյն ժամանակ, թէ աշխարհ հաստատուն անկիւնաքարն է Յաւետենականութեան, թէ՛ ապրուած կեանքի մը թանկագին վայրկեանները յաւիտենականութիւն կոչուած շղթային սսկի օղակներն են, թէ՛ «կեանքը ամբողջութիւն մըն է ոյժերու, որոնք մահուան դէմ կը կռուին», թէ՛ «ազգ մը, ինչպէս կինդանի էակ մը կրնայ տեսական ըլլալ շարունակական ստեղծումով մը», թէ այնքան մեծ կ'ըլլայ Յաւետենականութիւնը, որքան շատ օղակներ դարձնուին կեանքի մէջ, շղթային երկարութեանը համար:

Սիրելի հայրենակիցներ,  
կեանքին երկարութիւնը միայն տարիներու.

գումարումէն չէ որ կը չափուի, այլ մանաւանդ ու աւելի ապրուած գործերէն, ստանձնուած ծառայութիւններէն, գործնականացուած գաղափարներէն, մարմնաւորուած անձնագորութենէն, ցուցադրուած բարոյական, հոգեկան, իմացական և գիտնական ստեղծումներէն, գիւցազնական զոհողութիւններու կամաւորութենէն, մէկ խօսքով, յանուն մարդկային փրկութեան, յառաջդիմութեան, զարգացումին տարուած յաղթանակներէն, որոնք «չարունակական ստեղծումներն» են անհատական և հաւաքական կեանքերու: Ահա թէ ինչո՞ւ համար Սոկրատ մը, Պլատոն մը, Մովսէս մը, Քրիստոս մը կ'ապրին ու պիտի ապրին, ահա թէ ինչպէս անոնք կրցան իրենց մարմինի կեանքին մէջ իսկ մասնակցիլ Յաւիտենականութեան: Պատմութիւնը անհատներու և ազգերու խորհուրդ չի հարցներ, Մարդկութեան մեծ զաւակները, մեծ հանճարները, մեծ առաքեալները, Փրկիչները, վերստեղծիչները անմահացնելու համար:

Անհատներու անմահութեան զոյգ կը քալէ ազգերու ալ անմահութիւնը: Մեռած անհատներուն ման մեռած Ազգեր ալ կան աշխարհի մէջ, Հազարաւոր ազգեր ապրեցան մեր մոլորակին վրայ, ինչպէս միլիոնաւոր մարդեր, որոնց մեծագոյն մասը այլեւս չեն խօսիր մեզի. համր կը մնան անոնք ազգերու պատմութեան քարտէսին վրայ: Եւ ինչպէս նշանաւոր խորհող մը կ'ըսէ, այդ առանց պատմութեան, և առանց շարունակական ստեղծումի կորսուած ազգերը այսօր ազգեցութենէ զուրկ խորհրդաւոր ստուերներն են միայն: . . . Մենք խարխափելով կը քալենք անոնց աւերակ քաղաքներուն վրայէն, կը հաւաքենք անոնց ձեռքով գործածուած խեցանօթները, անոնց շքադրամները և զէն-

քերը. և մինք մեզի կը հարցնենք, թէ ի՞նչ տեսակ մարդեր էին անոնք: Համբը ազգերու շարքին մէջ էր երբեմն, Եգիպտոս ալ, որուն համար Վոլդէր ըսաւ, թէ «Եգիպտոս յաւիտենապէս մեռած է»: Բայց անա օրին մէկը մեռած Եգիպտոս դուրս եկաւ իր մատարաններէն, իր գերեզմաններէն. մոմիաններուն ծոցը պահուած Մեռելոց գիրքով, և միացած՝ Յոյներուն, Եբրայեցիներուն, Հռոմայեցիներուն, մեզի պատմեց, թէ ազգերը ինչպէս կը կազմուին, ինչպէս կը սիրեն ու կ'ատեն, ինչպէս կը պայքարին ու կը յաղթանակեն, ինչպէս կը հաւատան, և իրենց հաւատքը կը գործնականացնեն, մէկ խօսքով, թէ՛ ի՞նչպէս կ'ապրին ու կ'անմահանան:

#### Սիրելի հայրենակիցներ,

Սօսող ազգերուն պատմական դասերն են, որ իբր փորձառութիւն պիտի ծառային, ապրելու կոչուած, կամ կեանքի տենչացող Ազգերուն համար: Մենք իբր հայ մարդ, մեր ցեղային գոյութեան կենսական հարցին մէջ, եթէ երբեք խզուինք պատմութեան փորձառութիւններէն, մեզի համար ստոյգ հաւանականութիւն մը գոյութիւն պիտի ունենայ. — ՓՃԱՅՈՒՄԸ, որ պիտի յաջորդէ մեր դարաւոր ու արիւնոտ հոգեվարքին: Մենք մեր ապրած դարաւոր եղերիբութեան արիւնոտ և զգայացունց դրուագներուն մէջէն, ինքզինքնիս փրկելու միջոցներու ընտրութեան ատեն յուրջ դատողութեան մը չհետեւեցանք ցարդ, մոլորեցանք ընդունայն յոյսերու բաւիղի մը մէջ, առանց արամաբանելու, կամ յետադարձ ակնարկ մը ձգելու պատմութեան դասերուն և փորձառութիւններուն վրայ ուղեցինք մինչև այսօր, մեր վաղուան գոյութիւնը դռնիկ անխօս ու անբառբառ ստուերներու վրայ,

առանց երբեք մտածելու, թէ մեր շարունակական գոյութիւնը կախուումս ունի ազգային կեանքի մը «շարունակական ստեղծումին», և թէ այդ ստեղծումի դերագոյն ուժը պէտք էր փնտռուեր ազգային հաւաքական Հոգիի մը մէջ, ուր՝ ազգային գոյութեան հարցին շուրջ անհատներու կուրծքին տակ սրտերը տրոփէին համաչափ ներգաշնակութեամբ, ուր զոհաբերումը կատարեալ ըլլար Հայ ժողովուրդէն Ազգ մը, Հոգի մը կազմելու մեր փափաքներուն մէջ:

Հայ ժողովրդին մէջ երկար դարերէ ի վեր տեսնուած անմիաբանութիւնը, և հատուած հատուածի, գաւառ գաւառի գէմ ունեցած հակառակութեան և ատելութեան ոգին, աղետաբեր իր բոլոր յատնութիւններուն մէջ, մեզի հետզհետէ սա համոզումին կը տանի, թէ մենք մեզմով ԱԶԳ մը կազմելու քաղաքական ընկերական գիտութեան չենք տիրացած: Եւ դարերու ընթացքին մէջ մեր կրած բոլոր զրկումները, բոլոր տառապանքները, բոլոր մահասարսուռ կսկիծներն ու ջարդերը կրնան իբր ապացոյց ծառայել սա յայտնի իրողութեան, թէ մենք զուրկ կը գտնուինք ԱԶԳ մը կազմելու քաղաքական իմաստութենէն:

Մենք մեր առջեւ ունինք ազգերու պատմութիւնը և եթէ երբեք հին ազգերու ծագումը, և անոնց կազմաւորութիւնը ծրարուած կը մնայ առասպելներու մշուշի մը մէջ, միայն սա որոշ կը տեսնուի, թէ Հայրենիքներու աշխարհագրական դիրքերը անհուն ծառայութիւններ մատուցած են Ազգերու կազմաւորութեան գործին մէջ: Միջավայրներն են եղած շատ անգամ ազգերու մեծութեան և անկումին պատճառները: Այնպէս որ երբ Յունաստանի զանազան գաւառները հովիտներով և լեռներով բաժնուած, կեդրոնախոյս ջանք մը որ-

դեղորեցին շարունակ, և ատով Յունաստանի անկումը պատրաստեցին, անդին Հոռոմէական պետութիւնը, շնորհիւ իր լայն ու երկար ճամբաներուն, իր հազորակցութեանց գիւրութիւններուն, իր քաղաքական կազմակերպութիւնը շինեց, ԿԱԶՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԳՆ ԻՍԿ Է, Ասոր համար է, որ ըսուած է, «Ազգ մը կարենալ ըլլալու համար, պէտք է կազմակերպուիլ ու ապրիլ. պէտք է տեւել, պէտք է բարձրանալ մինչև (հաւաքական) անձնատուրում»:

Ազգի մը կազմութեան գաղտնիքին, ոյժերուն, ազդակներուն կարենալ գիտակցելու համար, չի թափառինք պատմութեան խորհրդաւոր ճամբաներուն վրայ: Լաւագոյն դաս մը ունինք այսօր աչքերնուս առջև. և կ'արժէ, որ անոր անդրադասնանք: Պրիւնը թիէր, որ աշխարհածանօթ ուսումնասէր քննադատն է գրականութեան՝ և ընկերական գիտութեանց, կը գրէր, թէ «Միացեալ Նահանգները՝ կը կազմեն ամենագեղեցիկ դաշտը փորձառութեան, որ երբեք ընծայուած ըլլայ մարդկութեան»: Փորձառութեան այս ամենագեղեցիկ դաշտին մէջ, մեր աչքին զարնող առաջին պատահարներէն մին է ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱԶԳԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ: Այս ազգին կազմութիւնը դեռ երէկի գործ մըն է. չունի հին պատմական ազգերու արշալոյսին ո՛չ մթաստուերները, ո՛չ անոնց առասպելահիւս բանաստեղծականութիւնը, որ մեկնաբանական ուսումնասիրութիւններու խճողումով մը մեզ մոլորեցնէր: Ամերիկան դեռ երէկ մոզայիք մըն էր աշխարհի ամեն կողմերէն, ու ամեն ազգերէն, գրեթէ դիպուածով կամ բախտին մէկ խաղովը նոր աշխարհի ափերուն վրայ նետուած անհատներու առնթերադրութեամբը շինուած: Դեռ երէկ իւ

բաքանչիւր Գաղթականութիւն, իւրաքանչիւր Նահանգ, ու նոյն իսկ իւրաքանչիւր քաղաք, տարբեր ազգութիւններու առանձնայատկութիւնովը կը բնորոշուէր: Դեռ երէկ Հիւսիսի ու Հարաւի մէջ կատաղի թշնամութիւն մը կ'ապրէր ու կը շնչէր: Բայց այսօր այս ամենուն տեղ, Ամերիկայի մէկ ծայրէն միւսը կը տեսնենք հասարակաց գիտակցութիւն (conscience), հասարակաց ՀՈԳԻ մը, որ ԱՄԵՐԻԿԱՑԻԻ կամ Ամերիկեան ազգին կազմութեան կորիզը կազմեց: Գրեթէ քառասուն և հինգ տարիներէ ի վեր աշխարհ զարմացումով մը տեսաւ նոր ազգի մը ծնունդը, և այդ ազգը Ամերիկացին է, հակառակ որ այդ ազգին հիմնարկութիւնը եղաւ 1783 ին: Կ'արժէ պահ մը կանգ առնուլ պատմութեան այդ հրաշքին առջև, դիտելու և տեսնելու համար թէ ազգերը ինչպէս կը կազմուին:

Ձերանսացի հեղինակ մը հիացումով կը դիտէր Ամերիկացին, և այս բառերով կ'ուզէր բացատրել այս նորահրաշ ժողովուրդին ծագումը. «Մենք Ամերիկայի մէջ ներկայ կը գտնուինք մարդկային զարուհի մը փոքրուիկ: Այս ձուլումէն առաջ եկած է անծանօթ մեծադէ շինուած արձան մը. երբեք նախընթաց օրինակ մը չունի անիկա: Այդ մարդկային վերանորոգումին կամ անծանօթ մեծադէ շինուած արձանին անուն մը չաչ պէտք էր, եւ անիկա կոչուեցաւ ԱՄԵՐԻԿԱՑԻ: Ոչ միայն անտիպ է անիկա, այլ մանաւանդ անսնունակէն: Անծանօթէն եկած. որ դէպի անծանօթը կ'երթայ, ամեն օր անիկա կ'աւելնայ, կը կծկուի, կը մեծնայ, կը նուազի, կը գունաւորուի, կը ջնջուի, կը մաքրագործուի, կ'ապականուի, կը հաստատուի. ապշեցուցիչ ընտրողութիւն, որ տեղի կունենայ կախարդուած... ու դողահար խորհողի աչքին

ատջել: . . . Աշխատութեամբ եւ յանդգնութեամբ դաս-  
նակցած ցեղ մը: Այս տողերուն մէջ մատնանշուած  
յանդգնութիւնն ու աշխատութիւնը նպատակ մը  
չեղան բնաւ, այլ իբր արդիւնաբեր միջոցներ ծա-  
ռայեցին Ամերիկեան ազգին ծնունդն ու կեանքը  
ապահովելու համար:

Այսօր, սակայն, այդ արձանին իբր նիւթ ծա-  
ռայող մետաղներուն ինչութիւնը ճշդուած է, շը-  
նորհիւ ազգագրական-ընկերաբանական հետազոտու-  
թիւններու: Եւ մարդիկ, եթէ հետաքրքրուին դիւ-  
րաւ պիտի կրնան ծանօթանալ անոնց: Պզտիկ վեր-  
լուծում մը յայտնուած կարծիքներուն, տրուած  
ապացուցումներուն, բաւական պիտի ըլլայ կար-  
ծեմ մեզի, ամփոփ գաղափար մը կազմելու Ամե-  
կեան ազգին կազմութեանը մասին, և այնուհետև  
անցնելու մեր ազգային գոյութեան հարցին:

Ազգերու կազմութեան և հիմնաւորութեանը  
համար անհրաժեշտ ուժերէն կարեւորներն են Հա-  
սարակաց Շահերը եւ Հասարակաց Հոգին: Եւ Ամե-  
մերիկացին այդ երկու ուժերը ունեցաւ այս երկ-  
րին մէջ: Երկիրը իր բնական հարստութիւններով  
իր վրայ հրաւիրեց մարդեր, որոնք զեռ երէկ լե-  
զուով, նկարագրով, բարքով ու սովորութիւննե-  
րով աննման, անծանօթներ էին մէկմէկու: Երկ-  
րէն դուրս բերուած այդ անտեսական առաւելու-  
լութիւնը պէտք էր պահպանել արտաքին ոտըն-  
ձգութիւններու դէմ: Գաղթականներ, որոնք Ամե-  
րիկայ եկած էին քառապանֆներով, կորովներով  
եւ յոյսերով լեցուն, և որոնք առաջին օրէն իսկ  
բնիկներուն հետ կոխով սկսած, իրենց մէջ ցոյց  
տուած էին պահեստի ուժերու ահագին մթերք  
մը, վարժուեցան իրարու հանդէպ ներողամտու-  
թեան լայն ոգի մը ցոյց տալ: Հասարակաց թշնա-

մին դէմ կարենալ դաշնակցելու համար, նուազ վտանգաւոր թշնամիներ կը բարեկամանան, կը դաշնակցին աւելի վտանգաւոր թշնամիներու դէմ: Նիւթական շահերու պահպանումը, պէտք ունէր գաղթականներու միջև ծնուելիք տնտեսական համերաշխութեան մը, և ինչպէս իրաւամբ կը գրէ Տիրմէն Բօզ (Firmen Roz) ճնշեսարկան համերաշխութիւնը իբր առաջին եւ ամենասարական ձեւը եղաւ ազգային համերաշխութեան: Այդ համերաշխութեան պէտք ունէր Ամերիկայի ժողովուրդը, ո՛չ միայն իր գոյութիւնն ու շահերը պաշտպանելու համար, մէկ կողմէն՝ կարմրամորթներուն, և միւս կողմէն՝ Հին աշխարհի անիրաւ ոտնձգութիւններուն դէմ, այլ և պէտք ունէր ինքն իրեն բաւելու համար: Ճարտարագործ եւ քաղնաւարդ Արեւելքը իր սնունդը կը քաշէ Արեւմուտքի ազարակներէն, իր քննականութիւնները եւ կտաւի գործարանները կը սնուցանէ Հարաւի քանկակներով, Արեւմուտքի մարտնչութիւնը քաղաքականութիւնը ստունց փոխարէն իրմէն կը պահանջէ երկրագործական մեքենաները: Ջանադան գազութիւններու և զանազան նահանգներու մէջ գոյութիւն ունեցող կարեւոր պէտքերու այս տուրեւառութիւնը բնական ազդակ մըն էր անոնց մէջ ըստեղծելու տնտեսական համերաշխութիւնը, որ ինչպէս ըսուեցաւ քիչ մը առաջ, կը դնէր ազգային համերաշխութեան մը ամենէն զօրա որ և շօշափելի հիմնաքարը:

Տնտեսական համերաշխութեան ամենակենսական տուիքը կրնար մէկ օրէն միւսը վտանգուել այսքան ալացեղ և ալակրօն ժողովուրդներու մէջ, եթէ դարերու ընթացքին մէջ, անոնց համար հասարակաց Հոգի մը չը շինուէր: Այդ հասարակաց հոգին ստեղծողը եղու կրօնքը և կրօնական նե-

թողամտութիւնն: Մասաչուսէթցի առաջին գաղթականները Փիւրըթէններ էին, և անոնք՝ իրենց նիւթական զարգացումին հետ Ամերիկայի հողին վրայ տարածեցին իրենց ո՛չ թէ դաւանութիւնները, այլ կրօնական ոգին: 1835 ին երբ Թոքըվիլ Ամերիկա եկաւ Երկրին ռամկավարութիւնը ուսումնասիրելու իր ուսումնասիրութիւններուն մէջ մատնանշեց, նաև Ամերիկայի կրօնական ոգիին կատարած կենսական դերը: 1903 ին Բոլ Ատամ «Աստուածեան իտէալ» մը տեսաւ այս ժողովուրդին զարգացման իբր կորիզ. իսկ Հանրի Պէրկի (Henry Bargy) կը յայտարարէ, թէ «կրօնական կամ քրիստոնէական միութիւն մըն է» Ամերիկեան ազգ ըսուածը Ճէյմս Պրայս կը գրէ. թէ «Քրիստոնէութիւնը ազգային կրօնք մըն է» Ամերիկայի մէջ:

Կրօնքը Ամերիկացիին մէջ հասարակաց հոգի մը. բարոյական մը շինեց, սնունդ տուաւ ազգային ծանօնին, որուն բունին վրայ ոստերն ու ճիւղերը տարբեր ուղղութիւններով աճեցան բիւրապատկուած: Ամերիկայի մէջ «ազգային ոգին կրօնական ոգի» մը մղաւ, և փոխադարձաբար, որովհետև հոս կրօնքները վարդապետական վիճաբանութիւններով չզբաղեցան, այլ ձգտեցան միմիայն հասարակաց հոգի մը ստեղծել, և ստեղծել ամերիկայացած ազգայնականութիւն մը, որ կրօնի շուքին տակ արդիւնագործէ, թշուառութեան սփոփանքին, և արգիտութեան փարատումին համար: Ամերիկայի մէջ ազգայնացած կրօնքը իր բոլոր ձեւերուն, իր բոլոր յարանուանութիւններուն մէջ «կեդրոն մը եղաւ ընկերական գործունէութեան, և մարդկային աշխատանքի»: Այս ձեւով կազմակերպուած կրօնք մը իրաւամբ պիտի կրնար ձեւակերտել Ամերիկեան Ազգայնականութիւնը, որ այսօր այնքան վիթխարի

փորձունէութիւն մը կը ցուցադրէ աշխարհի  
Ազգերու գոյութեան խնդրոյն մէջ ամենէն զօ-  
րաւոր հիմերն անգամ կրնան խախտիլ, ամենէն  
ներշնչուած Հոգիներու մէջ կրակը կրնայ մարիլ,  
եթէ շարունակական վերաստեղծումի ջանքերը պակ-  
սին ազգերու մեջ: Ամերիկա իր տնտեսական հա-  
մերաշխութիւնը կարենալ պահպանելու համար  
չբաւականացաւ փոխադրութեանց և յարաբերու-  
թեանց այն պարզ միջոցներովը, զոր բնութիւնը  
իրեն տրամադրած էր, նաւարկելի գետերուն, և  
լիճերուն միջև հաղորդակցութեանց ջրանցքներ շի-  
նեց, և ամբողջ երկիրը ցանցեց երկաթուղիներով:  
Ամեն մէկ երկաթուղիի գիծ, ամեն մէկ գետ ու գե-  
տակ ազգայնականութեան գաղափարը փոխադրեցին  
հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք. զգա-  
ցումը տարափոխիկ հիւանդութեան մը պէս պա-  
տուաստուեցաւ ամեն մէկ գաղութի, ամեն մէկ  
մարդու, և ստեղծուեցաւ աներիկեան ազգային տի-  
պարը: Ինչ որ հաղորդակցութեանց ճամբաները  
ըրին տնտեսական համերաշխութեան պահպանու-  
մին համար, նոյնը դպրոցները ըրին կրօնական-  
ազգայնականութեան պահպանումին համար:

Ամերիկայի մէջ դպրոցները նո. իրուեցան տըն-  
տեսականին, և իմացականին, և անոնցմով Ազ-  
գին ու Հայրենիքին: Անոր համար ըսուած է իրա-  
ւամբ, թէ «Աւերիկեան դպրոցին առաջին գործն շ  
անտուկը կեանքի պատրաստել, և երկրորդ գործն Խ  
զանի ազգային կեանքի պատրաստել»: Կառավարական  
օրէնք մը կը պահանջէ որ, Ազգային դրոշմ դրպ-  
րոցներու վրայ ծածանի դասերու ատեն: Ամերի-  
կացի աշակերտներու աչքը անոր կը յառի շարու-  
նակ, և ամեն առտու անոնք պարտաւորուած են  
ողջունելու այդ դրոշմը: Ամերիկայի պատմութիւնը՝

իր բոլոր մանրամասնութիւններով կ'աւանդուի աշակերտներուն, և անոնց մէջ Ամերիկեան ազգասիրութիւնը գոգոնելու, սնուցանելու միջոց մը կ'ըլլայ արժանապէս: Ամեն գաղթական, ամեն սերունդ իր զաւակը կը մեծցնէ դպրոցներուն վրայ ծածանող այդ աստեղազարդ դրոշին տակ, որուն աստղերը որ և է նմանութիւն չունին Սըլտըզի աստղին հետ. աւելի կը նմանին Բեթլեբեմի աստղին, որոնք մանկութիւնը գէպի կեանք և գէպի ազգային կեանք կ'առաջնորդեն: Եւ բոլոր անոնք, որ ազգային ոգիով դարբնուած՝ կը թողուն դպրոցական յարկը, իբր Ամերիկացի, ըլլան գործաւոր, թէ արուեստագէտ, ըլլան կրօնաւոր, թէ զրագէտ, միակ նպատակ մը միայն ունին անոնք, որ է աւելի շար ծանայել Ամերիկեան ազգին ու դրոշին: Ու ալ չենք զարմանար, երբ կը տեսնենք ճարտարարուեստի մեծ քրչքներուն քով կազմուած կրօնի քրչքը և իւնացականութեան քրչքը, Ֆիրմէն Րօզի բառով, մէկը՝ Եպիսկոպոսներու ժողովով, և միւսը Ամերիկեան Ակադեմիայով:

Ասոնց վրայ բարդեցէք մխիթարութեան, գութի խանդաղանգաքի ընկերական մեծ շարժումը, որուն զուխը կը գտնուին եկեղեցիներն ու կիներու լէգէոնները, և պիտի համոզուիք, թէ ինչպէս այս երկրին գաղթականութեան անգամները, կամաւորապէս և սիրայօժար կը մտնեն Ամերիկեան ընկերական կազմին մէջ. այդ նորակազմ, Ազգային մարմինին մէկ մէկ գործունեայ ու կենդանի քջիջները ըլլալու համար:

Ամերիկեան ազգին կազմութեան մէջ, ուրեմն, ամենէն զօրաւոր ազդակները եղած են Հասարակաց շահը, և անոր պահպանումին համար կազմուած տնտեսական համերաշխութիւնը, կրօնը և

կրօնական ներողամտութեան ոգին, բարեգործութեան ընկերական գերազանց շարժումը, դպրոցներու կազմաւորութիւնը, հաղորդակցութիւններու դիւրութիւնը:

Սիրելի հայրենակիցներ, եթէ մենք պատմութիւնէն առաջնորդուած ու լուսաւորուած, պատեհութիւնը ունենայինք բոլոր ազգերու կազմախօսութեան տեղեկանալու պատեհական փաստերով, չեմ կարծեր, թէ ասոնցմէ տարբեր ազգակներու պիտի կրնայինք հանդիպիլ անոնց ծնունդքի յայտնութեանը մէջ: Եզրպտոս կրօնական ազգ մըն էր, և կ'ուզէր մնալ իր հաւատալիքներուն մէջ. անոր համար էր, որ անոր քուրմերը անիծեցին ծովը որ օտար գաղափարներու դէպի Եզրպտոս արշաւանքին դիւրութիւն կ'ընծայէր: Հռովմ կրօնական ազգ մըն էր, անոր համար իրմէն կարտաքսէր Քրիստոնէութիւնը, որ Կեսարներու աստուածութեան գերեզմանը կը փորէր: Իորայելացին կրօնական ազգ մը եղաւ, անոր համար իր Եհովան իր ազգութեան առանցքը կազմեց:

Հայ ժողովուրդը պատմութեան բոլոր օրերուն մէջ, եթէ չկրցաւ իր յաղթանակի և փառքի բովանդակ յայտնութեամբը տիրապետել մօտաւոր Ասիայի տարածութեանը վրայ, ես կը կարծեմ, թէ այդ պատմական ձախողանքին իրական պատճառները պէտք է փնտելի չգոյութեանը մէջ այն ազգակներուն, որոնք Ամերիկացի ազգը ծնցուցին: Հայաստան լեռներով ու հովիտներով անշատուած գաւառներու կուտակում մըն է: Հոն շարունակ մղուեցաւ գոյութեան պայքարը բնիկ և արշաւող կամ ըսենք նոր բառով, գաղթական ժողովուրդներու միջև: Ամեն լեռնամէջ իր խառնուածքը, իր սովորութիւնը ունէր, և ամեն ցեղային կուտա-

կում իր կրօնքը: Բաղաճական տեղատուութեան և մակընթացութեան իրերայաջորդ երեւոյթներ, վերջապէս յանգեցան կառավարական կաղմութեան մը, որ, իր գագաթնակէտին կը հասնի Տիգրանի օրով, և մինչև Արշակունեաց թագաւորութեան վախճանը կը տեւէ, այսինքն մինչև մեր թուականին 420 տարին: Բայց նոյն իսկ Հայկական թագաւորութեան այս շրջաններուն կարծես դեռ ազգային որոշ ուղղութիւն մը, որոշ ձգտում մը գոյութիւն չունի, ամբողջ Հայաստանի մէջ դեռ հասարակաց հոգիին կազմութիւնը չէ՛ շեշտուած: Ամեն գաւառ ու ժողովրդական հատուած ունի իր որոշ ուղղութիւնը, իր անջատ գոյութիւնը ըմբռնելու և պահպանելու անկախ ձգտումը: Եւ այդ անկախ ձգտումներու հետեւանքովն էր, որ Հայ նախարարական տուներ, Հայկական թագաւորութեան և Հայ թագաւորներու հանդէպ ամենէն գէշ դերը կատարեցին, իրենց չափազանց անկախութեան սիրով, իրենց անմիաբանութեան պատճառով հայկական թագաւորութեան կործանումը փութացուցին:

Զուիցերիոյ մէջ իմ կատարած ուսումնասիրութիւններուս միջոցին, տեսայ, թէ կարգ մը նրմանութիւններ կամ հանգիստութիւններ կան Զուիցերիան կազմող ժողովուրդներուն և Հայ ժողովուրդին միջև: Ասիոյ Զուիցերիան Հայաստանն է, և Արեւելքի Զուիցերիացին է Հայը: Զուիցերիացին, իր զանազան նահանգներուն կամ գաւառներուն մէջ կը ցուցադրէ խառնուրդ ազգերու որոշ տիպեր: Յեղերու առանձնայատկութիւնները հոն չա՛տ շեշտուած են միջավայրի բնական ազդեցութիւններէ: Ամեն լեռնամէջ հոն որբանը եղած է ժողովուրդի մը, կամ ազգագրական ընտանիքի մը,

որ անկախ ըլլալ ուզած է: Եւ գիտէք անշուշտ անկախ ըլլալ ուզել կը նշանակէ գերին ըլլալ իր միջախախտին, իր սովորոյթներուն, իր կրօնական եւ ընկերական հաւատարիքներուն, իր մասնաւոր շահերուն: մէկ խօսքով, իր ընկերական, սնտեսական եւ քոռոյական ճակատագրին: Եւ պէտք է ապահով ըլլալ, թէ Հելուետիան ճիշդ հայ ժողովուրդի բախտին պիտի արժանանար, եթէ հասարակաց շահերու պաշտպանութեան խնդիրը զիրենք չմղէր տնտեսական համերաշխութեան մը, եթէ այդ համերաշխութիւնը զիրենք չառաջնորդէր կարգաւորումի, եթէ կրօնական ոգին և կրօնական ներողամտութիւնը նահանգային դաշնակցութեան շահունդէր զիրենք, եթէ կրթութիւնը միտքերը այդ ուղղութեամբ չպատրաստէր, եթէ անհուն զոհողութիւններով ձեռք բերուած հաղորդակցութեանց դիւրութիւնները այդ լեռներու մէկ ծայրէն միւսը չփոխադրէին շարունակ Զուիցերիոյ լեռներուն վսեմութենէն շինուած հասարակաց հողին, եթէ զիրենք չըջապատողներուն շահերը դիւրութիւններ չընծայէին անոնց: Առանց այս պայմաններուն Զուիցերիան ամենէն խառնակ, ամենէն յետադէմ երկիրը պիտի ըլլար, և անիկա մինչև վերջ բաժնուած պիտի մնար Իտալիոյ, Գերմ. Ա.ստ. և Ֆրանս. միջև, ինչպէս Հայաստան բաժնուած մնաց, նախ Սասանեան ու Հոովմէական կայսրութիւններու միջև, յետոյ Բիւզանդական և Արաբական տիրապետութիւններու միջև: Զուիցերիոյ մէջ Լատին միտքին և հոգեբանութեան ծնունդը եղող կարգապահութեան ոգին, միացած. երկրին ընդհանուր տնտեսական կեանքի պահանջներուն հետ կրցաւ այդ տարբաժանուած երկրամասերէն պետութիւն մը և ազգ մը հիմնել: Իրենց գաւառական անկախութեանը մէջ ազատ, ներողամիտ ու բարեացակամ քաղաքացիներով:

Հայաստան շարունակ որսաբաժինը մնաց հե-  
տաւոր պետութիւններու և զրացի իշխանութիւն-  
ներու միջև: Հասարակաց շահը, և տնտեսական  
համերաշխութիւնը պակսեցաւ զանազան գաւառ-  
ներուն մէջ. հասարակաց Հոգին տեղականացած մը-  
նաց, և հաղորդակցութեանց դժուարութիւնները  
թողուցին, որ մասնաւոր գաւառներ, իրենք իրենց  
մէջ ամփոփուած՝ չկարենան ընդհանուր ամբողջու-  
թեանը մէջ իրենց որոշ բաժինը բերել: Այդ իւրա-  
քանչիւր նահանգի մէջ սահմանափակուած ու հայ-  
կական տեղական դրոշմով մը Վասնաւորուած հայ-  
րենասիրութիւնը կայսերապաշտ հայրենասիրու-  
թիւններու» դիւրին որսը պատրաստեց, և այս-  
պէսով թշնամին անարգել իր դիւանագիտութիւնը  
մտցուց Հայաստանի լեռներուն գիրկը, իբրև ար-  
դելիչ ոյժ մը Հայկական ազգային կազմութեան  
մը իրականացումին:

Միրելի Հայրենակիցներ.— Հայկական պատմու-  
թեան մէջ որոշ ժամանակ մը ունինք, որը գերա-  
զանցօրէն կը ցուցնէ, թէ մեր նախնիք ի՛նչպէս  
ըմբռնեցին ազգային գոյութեան մը կազմութեան  
պայմանները, և թէ ի՛նչպէս աշխատեցան անոնց  
գործնականացումին: Այգ պատմական և անմոռա-  
նալի շրջանը կը պարունակուի 420—451 թուա-  
կաններուն մէջ: Այդ մեծ շրջանին դործող երկու  
մեծ դէմքերը եզան Սահակ Պարթև և Մեո-  
րոպ վարդապետ, որոնց ժամանակին կը զուգազի-  
պէր Արշակունեաց թագաւորութեան կործանումը:  
Սահակ և Մեսրոպ տեսան, թէ այն ատեն Հայկա-  
կան գոյութեան միակ նեցուկը եղող թագաւորու-  
թիւնը դատապարտուած էր ուշ կամ կանուխ տե-  
ղի տալ արտաքին բռնապետութիւններու ազդե-  
ցութեանը, և այնուհետև պիտի չգտնուէր ո՛չ մէկ

ուժ, որ կարենար Հայկական գոյութեան ապագան ապահովել: Նահանգներէն մէկ մասը կապուած դեռ, իր հեթանոսական սովորութիւններուն. և հակամէտ՝ Մաղղէականութեան: որ պարսկական պետական ոյժին կրթնած դէպի Հայ աշխարհը խուժելու պատրաստ էր, մէկ մասը Ասորական և միւս մասը Յունական եկեղեցիներուն ենթակայ, յունածէս և ասորախօս արարողութիւններու տարուած, դատապարտուած պիտի ըլլային յամբ բայց ապահով ձուլումի մը, և այնուհետև հազիւ քանի մը էջ պատմութեան պիտի խօսէին Հայ ցեղին անցեալ գոյութեանը վերաբերմամբ:

Անոնք—Սահակ և Մեսրոպ— հոգիի մեծ անձկութիւններով լեցուն, իրենց մշտաբուխ արցունքներու ընդմէջէն տեսան ապագայի քսամնցրնող հեռանկարը, և գերմարդկային հոգեհայեցութեամբ մը չափելով ահաւոր անդունդը, փորո ած՝ Հայութեան առջև, ուզեցին լեցնել զայն ուժով մը, որ կարող ըլլար զօրութեան և խանդի նոր երակներ բռնալ հակառակութիւններով թուլցած հոգիներուն խորը: Անոնք ջանացին՝ սեւ օրերու մէջ երազուած լուսաշող կարելիութիւնները իրականութիւններու վերածել: Անոնք Սինայի օրինակը ունէին իրենց աչքին առջև: Մովսէս Քանանացիէն, Սեմականէն, Յոովմացիէն, և անապատի զանազան թափառականներէն ժողովուրդ մը, ԱԶԳ մը շինած էր, Սինայէն բերուած երկու քարէ տախաակներով: Անոք գիտէին, թէ յաղթանակները մարդկային փռչիներէն ժողովուրդներ, եւ մարգարէները կրօններ շինած էին: Անոնք գիտէին, թէ բարձունքներէն խօսող ձայներն էին, որ ժողովուրդներու մէջ հասարակաց ըմբռնում, հասարակաց գաղափար, հասարակաց հոգի կը շինեն, ու իրենք ալ իբրև նոր մարգա-

րէներ, որոնք կոչումը ունէին ժողովուրդի մը առաջնորդելու, միեւնոյն մեծ գաղափարին նուիրուեցան: Եւ Սահակի ու Մեսրոպի ձեռքով դրամաւոր գիրը, և Աստուածաշունչի թարգմանութիւնը, իբրև նոր քարէ տախտակներ, Հայ ժողովուրդին ի սպաս դրուեցան, անկէ իրական ԱԶԳ մը կազմելու համար:

Մենք, Սիրելի Հայրենակիցներ, մինչև այսօր Սահակի ու Մեսրոպի վրայ նայեցանք պարզապէս իբր ջերմեռանդ ու պարզուկ վեղարուորներու վըրայ: Եւ այդպէսով անոնց կատարած գործին ասասհման նշանակութիւնը պզտիկցուցինք: Անոնց վանականի վեղարին տակ մեծ դիւանագէտները ապրեցան, ազգային անզուգական զոյգ դիւանագէտները, զոր երբեք Հայ ազգը ունեցաւ իր ազգային գոյութեան ամբողջ պատմութեանը միջոցին: Անոնք քաղաքական քայքայուած իշխանութեան մը տեղ կ'ուզէին հոգիներու թագաւորութիւն մը հիմնել, Հոգի մը տալով Հայունս Այդ հոգին հայերէն խօսող Աստուած մը պիտի կրնար տալ ժողովուրդին, անոր համար, ինչպէս կ'ըսէ պատմիչը, ուզեցին որ «Աստուած հայերէն խօսի» հայ ժողովուրդին հետ: Կ'ընդունիմ, թէ Աստուածաշունչի թարգմանութիւնը անհրաժեշտ կը նկատուէր կրօնական տեսակէտով, բայց կրօնքը Սահակի ու Մեսրոպի տեսութեամբ միջոց մըն էր ազգային գոյութեան պահպանումին: Անոր համար է որ Հայ քրիստոնէութիւնը կ'ազգայնանայ, և նոյն իսկ իր ազգային ու կրօնական անկախութիւնը ապահովելու համար ԵՍԼ թուականին գումարուած Քաղկեդոնի ժողովը կը մերժէ: Անոր համար է որ Մեծն Սահակի շունչին տակ Մամիկոնեան Առիւծները կը ծնին, ու կը զիւցազնանան: Անոր համար է, որ

Հայ Պատմութիւնը կ'ըստեղծուի: Անոր համար է որ հայ վարժարանները, հայ դաստիարակութիւնը կը կազմակերպուին: Ազգային գիտակցական ծրնունքի այդ թուականէն սկսեալ այլ եւս Հայ Քրիստոնէութիւնը կը դադրի միայն կրօնք մը ըլլալէ. անիկա Հայութեան ազգայնականութեան միջուկը կ'ըլլայ, և կ'ըլլայ միջոց մը պարզապէս հայ հոգեբանութեան մէջ ստեղծելու հասարակաց հոգի մը, որ կարենայ ԱԶԳը ծնելու: Խտխտուած թաղաւորութիւնը մարմին մըն էր, հակառակութիւններով, նախարարական նախանձտութիւններով ջլատուած, և երկու անզուգական և հեռատես դիւանադէտները—Սահակ և Մեսրոպ—ուզեցին հիւանդ մարմինին տեղը դնել առողջ հոգի մը: Անոնք,—Սահակ և Մեսրոպ — ԺԹ. դարու իմաստասէրներէն շատ առաջ, Ռժնանէն շա՛տ կանուխ գիտցան, թէ ազգը հոգի մըն է, հոգեկան սկզբունք մըն է», թէ «ազգը մեծ համերաշխութիւն մըն է»: Անոնք Լաքորդէրէն շատ կանուխ, համոզուած էին, թէ «ժողովուրդ մը որուն մէջ հոգիները միացած չեն, կրնայ ժողովուրդի մը արտաքին երեւոյթները պահել, բայց իրականին մէջ ժողովուրդ մը ըլլալէ կը դադրի, եւ պատահար մը ուշ կամ կանուխ գիտելը պիտի ձգտէ աշխարհ գոյութիւն չունեցող ազգերու շարքին մէջ»: Եւ իրենց այդ գիտակցութիւնը, և քաղաքային ու ընկերական պատահարներու դերին հանդէպ իրենց ճանաչողութիւնը՝ թելադրեց զիրենք Հայ ազգը հոգիով մը կերտելու:

Սիրելի հայրենակիցներ, Սահակ և Մեսրոպ ըրին ինչ որ կը տրամադրէր իրենց դիւանագիտութիւնը, ա՛յնքան պայծառատես քաղաքականութիւնը. ըրին ինչ որ կարելի էր ընել նոյն ժամանակին, և ինչ որ ապերախտ միջավայրը կը թոյլատ-

րէր ընել: Անոնք չէին կրնար տնտեսական ազգակներ սահղծել, տնտեսական գետնի վրայ համերաշխութիւն մը գոյացնելու համար, անոնք չէին կրնար լեռներու մէջ երկաթուղիներ շինել կամ փապուղիներ բանալ, հաղորդակցութիւններու դիրութեան համար, բայց անոնք Ամերիկացի ազգին կազմակերպութենէն առաջ, միեւնոյն սիւսեւեր, միեւնոյն միջոցները գործածեցին Հայ ազգին կազմաւորութեանը մէջ, Եթէ վերջին երեք դարերուն մէջ միայն Քրիստոնէութիւնը ազգային կրօնքը եղաւ Ամերիկացի Ազգին, ինչպէս կը գրեն Ճէյմս Պրայս և ուրիշներ, Սահակ և Մեսրոբ 15 դար առաջ ազգայնացուցին այդ կրօնքը Հայաստանի մէջ: Եթէ Ամերիկայի մէջ դպրոցները ազգային զգացումին նուիրուեցան. Սահակ և Մեսրոպ միեւնոյն նպատակին 15 դար առաջ եկեղեցիներու կուշտին տնկեցին Հայ դպրոցները: Եթէ մեր դարուն՝ ընկերական բարեգործութիւնը Ամերիկայի մէջ գործածուեցաւ տարաբախտ գաղթականութեան անդամներու մէջ սերմանելու պարկեշտ քաղաքացիութեան սերմերը, Սահակ և Մեսրոպ իրենց կազմած որբանոցներով, հիւանդանոցներով, և անկելանոցներով միեւնոյն նպատակին ձգտեցան շատ կանուխէն:

Այս պարագաները ցոյց կուտան, թէ Սահակ և Մեսրոպ վանական միջնորդութիւնով մեծցած երկու Հոգիներ էին, որոնք գործաւորը եղան մեր ազգին կազմութեանը, և անոր տեւականութեան հիմունքը դրին: Դու եթէ երբեք օր մը Հայ Ազգը վայրկեանը եկած համարի Յաղթութեան բլուրներու վրայ կանգնելու ազատութեան կոթողներ, ամեն քաղաքի ու գիւղերու հրապարակներուն վրայ բարձրացող զոյգ արձանները պէտք է ըլլան

Սահակինն և Մեսրոպինը, իբրև ազգին ստեղծողներունը: Եւ ԱԶԳը պէտք է պարտաւոր զգայ ինքզինքը, յարգանքի ու երախտագիտութեան իր տուրքը վճարելու Հայ ինքնազոյութեան և Հայ ազգային վերածնութեան այդ երկու անձան՝ դիւցաղներուն: Հայ ազգի կազմութեան արի դործաւոր այդ երկու դիւցաղներէն մին, Սահակ՝ Պարթեւենքը ու ժառանգական հայրենասիրութիւնը ունէր, և միւսը՝ Մեսրոպ, այդ հայրենասիրութիւնը գործնականացընելու իմաստութիւնը: Սահակ ազգին սիրան էր որ կը զգար, և Մեսրոպ ազգին զլուխը՝ որ կը խորհէր: Ժառանգակալ հայրենասիրութիւնը չլնունիր, եթէ արիւն տուի անոր, եւ ուշ կամ կանուխ կ'արդիւնագործէ: Ամերիկայի առաջին գաղթականներուն ամբողջ մտասեւեռումը եղած էր անկախութիւնը և ազատութեան ոգին: Այդ անկախութեան ոգին կազմակերպուեցաւ առաջին անգամ Վերճինիայի մէջ, և հոն երեւան եկաւ self governmentի նախնական ձեւը Hous of burgresses «Պուրժուաներու տուն» անունով, որ իր առաջին նիստը ունեցաւ 1610 յուլիս 30 ի ուրբաթ օրը: Այս ինքնավարութեան հիմնադիրներէն մէկն էր Ճէֆրըսըն, որուն թոռներին մին, ուրիշ Ճէֆրըսըն մը, իր պապուն ձեռնարկէն 157 տարի վերջ Ամերիկայի անկախութեան Յայտարարութիւնը կը խմբագրէր: Հոգին շմոռնիր ազգերու և սերունդներու մէջ, աւելի կը կենդանանայ շարունակական վերստեղծումներով և կը դիմէ իր վերջնական յաղթանակին: Սահակի մէջ Պարթեւենքը մեծ հոգին կ'ապրէր, ժառանգականօրէն իրեն փոխանցուած, և անիկա իր հոգիին յաղթանակը կը նուիրագործէր Մեսրոպի միացած, Հայուն տալով իր ազգային կազմակերպութիւնը և զայն պահպանելու գաղտնիքը:

Միտելի հայրենակիցներ. — մեր ասնախօսութեան ընթացքին, քանի մը անգամներ շեշտեցինք շարունակական ստեղծումի կամ վերստեղծումի դերը ազգերու և անհատներու ճակատագրին վրայ: Իհիտանանք, թէ կեանք չկայ. առանց այդ վերստեղծումին: Տիեզերական — կենդանական գործարանաւորութիւնը «չարունակական վերստեղծումի» օրէնքով միայն կը տեւէ, կ'ապրի և կը յաւերժանայ: Ամերիկայի մասին խօսած ատեննին բոլոր ընկերաբանները և ուսումնասիրող միտքերը համաձայնած են սա սկզբունքին վրայ, թէ ծերութիւնը անկարողութիւն մըն է. քող ծերը ձգէ իր սեղը, երբ իր գործը կատարած է: Երիտասարդութեան քաղաւորութիւնն է հոս: Ասիկա, սակայն, միայն Ամերիկայի ճակատագիրը վարող օրէնքը չէ'. տիեզերքի օրէնքն է անիկա: Այն մարդերը, որոնք կը թողուն, որ ժամանակէ առաջ ծերանան, աշխարհի մէջ տեղ չունին: Այն ազգերը՝ որոնք իրենց ծերութիւնը չեն դարձաներ իրենց հոգիին շարունակական վերստեղծումովը, անոնք պիտի ստիպուին իրենց տեղը ուրիշներուն թողուլ, և քաշուիլ ասպարէզէն: Կեանքը մահուան և յաւիտենական վերըստեղծումներու շարունակական փոխանակութիւնն է:

Մեր ազգային մեծագոյն տառապանքը, աղետաւոր փորձանքը սա եղաւ, որ մենք մեր ազգային դժբախտութեան շարունակութեանը մէջ կարծես մոռցանք հրամայողական օրէնքը, և կա'մ ծրարուած մեր ազգային արիւնոտ վիշտերուն մէջ, և կա'մ զբաղուած մեր բնկերական, ու կուսակցական կռիւներով, ատելութիւններով ու հակառակութիւններով, չկրցինք մեր ազգային գոյութեան խարխիւրը եղող հասարակաց հոգին պահել շարունակական վերստեղծումով:

Սահակի և Մեսրոպի ստեղծած հոգին ուժգնօրէն երեւան եկաւ, աւելի առոյգ, ու աւելի կեն-

դանի ձեռով, Աւարայրի դաշտին վրայ, Տարոսեան սարերու բարձունքը, և Անիի աւերակները այդ հոգին պահեցին իրենց տակ: Ու մեր պատմութեան այդ փռուստը՝ դրուագներուն յաջորգեց հոգեկան վատասեռումը, ազգային ինքնասպանութիւնը շարունակական վերստեղծումի օրէնքին հանդէպ մեր անտարբերութիւնով: Հայ տղան իր պատմութիւնը մոռցաւ, հայ մարդը իր պարտականութիւնը լքեց, և շարունակական ճրգնածամ մը՝ իբրև պատանք, մեր գոյութիւնը խանձարուրեց: Ամեն գործ որ չկրկնուիր, կը մեռնի, ամեն կարողութիւն որ չզարգացուիր, կը բթանայ, ամեն արեւ որ շարունակաբար լոյս չըղխեր իր սկաւառակէն, մարած կը համարուի: Մարդկային ու ազգային նուիրական կիրքերը շարունակ վառ պահելու համար շարժումներու պէտքը զգալի է միշտ: Ըսուած է, թէ մեր յուզումները կախումն ունին մեր շարժ ու ձեւերէն: մեր դիրքէն, մեր գործերէն: Աւերիկայի մէջ դրպարոցական մանուկներու ձեռք կուտան պզտիկ դրոշներ, զոր օդին մէջ կը շարժեն յաղթական կամ պարտութեան ձեւական չափով, զանոնք իրենց կուրծքին վրայ կը սեղմեն. որ մը դուրսը իրականանալու կոչուած միտնութեամբ մը: Ու այս գրէթէ— անգիտակից շարժումներն են, որ շարունակական վերաստեղծումով մը Ամերիկացի տղուն մէջ կը կազմեն ապագայ գիտակից ազգասէրն ու հայրենասէրը:

Բարեկամներս, երբ ես աչքս կը դարձնեմ մեր ազգային անկերպարան կացութեան վրայ, որ այսօրուան տիրող իրականութիւնն է, մեր Հայրենիքի մէջն ու գուրսը, երբ կը տեսնեմ ցամքիլը Սահակ—Մեսրոպի ձեռքով կազմակերպուած Հայ Հասարակաց Հոգիին, երբ կը տեսնեմ, խորունկ

ցաւով մը, Ազգային Հոգիին դասալքումը կամ վատասերումը զանազան ընկերական խաւերու մէջ, չեմ կրնար ինքզինքս զսպել, ըսելու համար կիւսթալ Լը Պանի հետ, թէ մենք հասած ենք այն վրճուակսն վայրկեակն, ուր ամեն ոք պարտաւորուած պէտք է զգայ ինկզիսն ի առաջնայ մը ըլլալու, պաշտպանելու համար ընկերակիսն շեկն աղանդաւորներու աւերիչ բարբարոսութեանը դէմ: Ամեն մտածում, ամեն ձեռնարկ, ազգային և ընկերական ամեն ուղղութիւն իր յառաջ բերած արդիւնքէն կը չափուի: Եթէ բարբարոսութիւնը կ'արհամարհենք անոր համար, որ անիկա կը քանդէ ամեն ինչ որ կայ, դարերու աշխատութեանց կուտակումին իբր արդիւնք, պէտք է արհամարհենք նաև անտարբերութիւնը, որ մեզի միեւնոյն արդիւնքը կը ցուցադրէ: Տուն մը միայն հրդեհով չէ, որ կը քանդուի, այլ և նորոգութեանց պէտքին առջեւ ցոյց տրուած անտարբերութիւնով: Հարստութիւն մը չփճանար միայն թալանով, այլ և կը փճանայ սխալ գործածութեամբ և անհաշիւ վատնումներով: Հոգի մը միայն բռնակալութեամբ չպղծուիր, այլ և իր կամաւոր ինքնամոռացումով: ճրագ մը միայն հովէն չմարիր, այլ և իւրին սպառումով: Եւ մեր ազգային քայքայումին մէջ, եթէ բարբարոսութիւնը, հրդեհը, թալանը, հովը իրենց աւերիչ գերը խաղացին, չմոռնանք, թէ մեր անհոգութիւնը, մեր ոյժերուն անհաշիւ և յոռի վատնումը, մեր իւրին սպառումը չա՛տ աւելի մեծ դեր մը խաղացին մեր ազգային քայքայումի գործին մէջ:

Եկած է ժամանակը, որ մեզմէ ամեն մարդ պէտք է գործաւոր մը, առաքեալ մը ըլլայ ազգային վերաշինութեան գործին: Պատմութեան մէջ Սահակով և Մեսրոպով ստեղծուած Հասարակաց

Հոգի մը ունինք, պէտք է համոզուինք, թէ առանց այդ հոգիին Հայ ազգը գոյութիւն չունի։ Անոնց Հոգիին պատկերը մեր հոգիներուն մէջ և անոնց սկզբունքը մեր սրտերուն մէջ ապրեցընելով միայն կրնանք դարերու ընթացքին ինքզինքնիս վերստեղծել, և մեր գոյութեան անբռնաբարելիութեան իրաւունքը ճանչցընել մարդկութեան։ Եթէ ազգային վերաշինութեան ճամբուն մէջ, մենք մեղմով չենք կրնար անմիջապէս տնտեսական նոր շահեր ստեղծել, կրնանք սակայն, մեր պզտիկ շահերուն շուրջ ստեղծել տնտեսական համերաշխութիւն մը, մեծ ու պզտիկ ընկերակցութիւններով։

Եթէ չենք կրնար մեր երկրին մէջ հաղորդակցութեան նոր դիւրութիւններ ստեղծել անմիջապէս, մենք մեղմով, կրնանք մեր վարժարանները ծաղկեցընել, և զանոնք, առաջուան պէս Ազգային Հաւաքական Հոգիին, Հաւաքական Գիտակցութեան վառարաններ շինել։

Եթէ չենք կրնար այլասեռ տարրերէ ԱԶԳ մը շինել, կրնանք շինուած ԱԶԳ մը պահել, մեր մէջ զօրացընելով ազգայնացած կրօնքի մը կենսատու հոգին, որ աստուածային կոչումը ունի մեզ իբրեւ մարդ և իբրեւ ազգ պահպանելու աշխարհի ամեն կողմերուն վրայ։ Մենք հիմա կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր ահարկու պայքար մը կայ, լուին ու յաղթական պայքար մը ազգերու միջեւ։ Վա՛յ պարտեալին։ Պայքարը կը մղուի կատաղօրէն տնտեսական, ընկերական ու ազգային գետնի վրայ։ Ընտանեկան ու հայրենական աշխարհագրական սահմանները կարծես նեղ կուգան կայսերապաշտ տիրապետութիւններու։ Երկրագունդը, որ այնքան ազգերու գերեզմաններ տուաւ, կարծես, թէ տեղի կուտայ նոր ծրագիրներու յաղթանակին առջեւ։

Ազգերու պայքարը, որ երբեմնի տխտաններու պայքարը կը գերազանցէ, կը մղուի մերթ մթին ու երկիւղալի անդունդներու զլուխը, և մերթ յաղթութեան և փառքի սահմանուած Եղիւսեան դաշտերու մէջ: Գերեզմաններ պիտի չը պակսին ինկողներուն համար. դաշտերը մարդկային միսով ու արիւնով կը պարարտանան: Պսակներ տլ պիտի չպակսին Յաղթողներուն համար, որչափ ատեն դիւցազներ ապրին, կուրին ու յաղթանակեն:

Մենք, Սիրելի Հայրենակիցներ, այսօր այդ պայքարի բանակներուն մէկ թեւը կը կազմենք մեր ազգային գոյութեամբը: Վստահ ըլլանք, թէ մեր բարոյական գոյութեան, և մեր ազգագրական լինելութեան իբր երաշխաւորութիւն, պէտք է ազնիւ յաղթանակներու *nostalgie*ին ծնունդ տանք մեր հոգիներուն մէջ, որոնք փոխակակ հետաքրքրուելու փաղաքական մասսայներով կամ կուռնկի խառնարայ խապրիկներով, պէտք է նուիրուին ինքնագիտակցութեան և անձնուիրումի կեանքին, պէտք է մկրտուին, անգամ մըն ալ, այն հոգիով որով ազգը շինուեցաւ ու իր գոյութիւնը ամրապնդեց:

Եւ այդ գոյութիւնը, որուն պէտք է ձգտի Հայ Ռամկավարութիւն մը, երազներով, մասսայներով, ցնորքներով չկրնար ապրի: Ամերիկայի ազգային վերազարթնումի և կազմաւորութեան առաջին օրերուն, գիտակցութեան, ինքնավստահութեան, և արիւթեան ձայնը բարձրացուց (1837 օգոստ 31ին) Ralph Waldo Emerson, երբ Գէմպրիճի բեմէն սա բառերով խօսեցաւ իր հայրենակիցներուն:

«Մենք շատ երկար ատեն մտիկ ըրինք Եւրոպայի նրբամիտ (*raffinees*) մուսաներուն: Մարդիկ արդէն կը կասկածին, թէ Ամերիկայի ազատ մարդուն միտքը երկչոտ, նմանող և անգոյն է... Եղբայրներ ու բարեկամներ, մեր կարծիքը այդպէս պիտի չըլլայ. եթէ Աստ»

տուած ուզէ, մեր կործիքը այդպէս պիտի չբլլայ: Մենք մեր սեփական ոսկերուն վրայ պիտի ֆայնէմք, մենք մեր սեփական ձեռքերով պիտի աշխատենք՝ եւ մեր հոգիին համեմատ պիտի խօսինք:

Էմբրսընի այս ձայնը, զոր Փարքըր «Հինգերորդ Աւետարանը» յորջորջեց, Ամերիկեան ժողովուրդին իմացական և բարոյական անկախութեան հիմունքը դրաւ, և արդէն գոյութիւն ունեցող Հոգիի ու Բնութեան կրօններէն Ամերիկացիին ԿեԱնՔի ԿՐՕՆՔԸ շինեց, Կեանքի այս կրօնքն է որ կ'ապրի այսօր Ամերիկան, իր շոգենաւներուն և երկաթուղիներուն վրայ բեռցուցած, ինչպէս կը գրէ, Ուայթ Հուիթմէն, ֆահանայապետական Ասիան եւ աւազական-քրիստոսական Եւրոպան:

Թէպէտ արդէն ուշ, բայց կրնանք ըսել, թէ ժամանակն է, որ մենք ալ զօրացնենք մեր սեփական ոտքերը, դէպի կեանք, ազգային կեանքը քալելու համար, զօրացնենք մեր ձեռքերը, կեանքի պատճառներուն և յաղթութեան գաղտնիքներուն տիրանալու համար, զօրացնենք մեր սիրտերը՝ աւելի ուժով կռուելու համար, ու վերջապէս, զօրացնենք մեր Հոգիները, Սահակ — Մեսրոպեան շունչով, զոհաբերութեան ճամբուն վրայ չկաղալու համար:

Այդպէսով է, որ Հայ ազգութեան բարոյական և տնտեսական յաղթանակին գրոշը պիտի կրնանք պանծացընել դարերու և ապագայի խաւարին մէջէն:



# ԱԶԳԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

## ԱՆՀԱՏԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Թու ճշմարիտ Գաղտնաբերման ծա-  
րատ էրէրաւորքը եւ Վլ ճշման հեցսով  
հփին. սրվէտե- գեղեցիկն և լեգն լըայ  
հեանալով ե, որ ոլտէ կըանտ տէլ ճ յարեան  
Վեր հեցսով աւարայն: Պ Լ Է Գ Ի

*Սիրիլի Հայրենակիցնե՛ր,*

Այս իրիկուան սա զուտ ազգային համաժողո-  
վին մէջ իմ առաջադրած նիւթիս մասին խօսելէ  
առաջ, նախ շնորհակալութիւնս կը յայտնեմ Յրէզ-  
նօի և շրջակայքի հայ գաղթականութեան, որ իր  
համակրանքովը կը շրջապատէ զիս հոս ժամանու-  
մէս առաջ ու հիմա, և այդպէսով մոռցընել կուտայ  
ինծի մշտանալած կեանքի մը դառնութիւնները,  
որոցմէ՝ սակայն, հոգիս իր գոյութեան և ոյժի  
անուկը կը ծծէ:

Տարուան մը միջոցին, իմ ճամբորդութիւննե-  
րըս զիս առաջնորդեցին երկրէ երկիր, գաղթակա-  
նութենէ գաղթականութիւն, և զիս չիտմի մէջ  
դրին զանազան երկիրներու և զանազան հատուած-  
ներու հետ: Մարսիլիոյ, Փարիզի ու Մանչեսթրի

---

ԵԱՆԹԹ. — 1911 յուլիս 2 ին Ֆրեզնօի Էմիլայր Թասրո-  
նին մեջ խօսուած, 1000 Կ աւելի ունկնդիրներու ներկայու-  
թեան:

վաճառական գաղութէն վերջ, Զուիցերեան ուսանողական գաղութին, Արեւելեան Ամերիկայի գործաւոր գաղութէն վերջ, հիմա ինքզինքս կը գտնեմ Արեւմտեան սա հողագործ գաղականութեան մէջ: Առաջին անգամն է, որ իրական և ճշմարիտ «Հայ Գաղութ»ի մը մէջ կը գտնուիմ, գաղութ մը՝ որ հողին կապուած է, որ իր տունն ու տեղը ունի, և իր ընտանեկան կեանքը, և իւրացուցած ու գործադրած է հող չունեցող մարդը, մարդ չունեցող հողին վարդապետութիւնը:

Արեւելքի մէջ հայ պանդխտութիւնն է, որ կ'ապրի էր բոլոր անորոշութիւններով, իր գործաւորական դառնութիւններով: Իսկ հոս կ'ապրի հայ Գաղթականութիւնը, համեմատաբար աւելի հիմնուողուած, ու բախտորոշուած, աւելի հաստատուն և կայուն հանգամանքով, որուն ստեղծուած պայմաններուն առջեւ պահ մը կանգ չ'առնուլ և չ'ըխորհրդածել անկարելի պիտի ըլլար ուշադիր դիտողի մը, և զգայուն հայու մը համար:

Բաղդատմամբ անոնց, որ իրենց պանդխտութեան օրերուն գերի եղած են գործարաններու մարդակեր մեքենաներուն, և անոնց, որ հայրենիքի ու բնագաւառի քաղաքային ու ընկերական զրկումներու և ճնշումներու մէջ ամեն առաւօտ անորոշ և անստոյգ օրուան մը արեւը կ'ողջունեն, միշտ անակնկալներու ենթակայ, Դուք, Սիրելի հայրենակիցներ, սա օտար երկրին մէջ ձեզի համար ըստեղծած էք Հայրենիք մը, որ այսօր, կը ժպտի ձեզի, և որուն այնքան երջանիկ ժպտը. սակայն, չեմ խորհիր, թէ բաւական ըլլայ ձեր մէջ մարելու այն գերագոյն ըրձանքը, զոր ունիք ձեր բնագաւառին, ձեր արիւնադանդ Հայրենիքին համար: Դուք ամենքնիք ալ կը նմանիք, մասամբ, այն կէսեր-

ջանիկ երկրագործին, որ իր արօրը պարարտ հողին մէջ պտասցուցած պահուն, մերթ ընդ մերթ իր աչքերը ետին կը դարձնէ, հեռաւոր հորիզոններէ անդին, արիւնտ մշուշներու մէջ պարուրուող Հայրենիքի մը յիշատակներէն քաշուած: Եւ այս ձեր կեցուածքն անգամ, ձեր այս հոգեբանական վիճակը ձեզի կը մատնանշէ պարտականութեան երկու ասպարէզները, որոնցմէ մին հոս՝ ձեր աչքին առջեւն է, և միւսը հեռուն. մէկը ձեր Գաղթավայրն է, միւսը ձեր Հայրենիքը: Եւ այդ երկուքին կարենալ հասնելու, կարենալ բաւելու համար մարդուս կեանքը շատ կարճ պիտի ըլլար, բաղդատմամբ անջրպետին մեծութեան, և ընկերական ու տնտեսական պայմաններուն անողորմութեան, եթէ սրտերը լմուած չ'ըլլային աներեւոյթ ոյժերով, որոնք մեր կեանքին ու մարմինին կաւը պիտի կենսաւէտէին, և մեզի կարող պիտի ընէին մեր կրկնակ պարտականութիւնները կատարելու:

Այդ աներեւոյթ ուժերը կը ծնին մարդուս մէջ, հոգեկան յատկութիւններէ, որոնց կարենալ տիրանալու համար պէտք ունինք ազգային հոգեբանութեան մը և անհատական նկարագրի մը: Եւ ես այսօր կ'ուզեմ այդ մասին խօսիլ ձեզի:

Ինչպէս նկարագրի՞ր՝ անհատին, նմանապէս հոգեբանութիւնը ժողովուրդի մը և ազգի մը բարոյական, մտաւորական և հոգեկան կեանքին լուսանկարն է: Երկար ատենէ ի վեր զաղջնի կոչուած գիտութիւններ կան, որոնք կը պնդեն, թէ անհատի մը գանկին կազմութիւնը, ձեռքերուն գիծերը ուսումնասիրելով, կրնան ըսել, թէ ի՛նչ բնաւորութեան, խառնուածքի և նկարագրի տէր է այս կամ այն մարդը: Չենք կրնար որոշապէս ըսել, ի՛նչ ո՛ր-

քան ճշմարտութիւն կայ, այդ գիտնականներու պատմութիւն մէջ, բայց գիտութիւն մը կայ, որ անվրէպ կերպով մեզի կրնայ պատմել յաջողելու մեր ընդունակութիւնը, զարգանալու մեր կարողութիւնը, վերջապէս մեր կեանքին առնելիք կազմը ընկերական զանազան փոփոխութիւններու մէջ. և այդ գիտութիւնը հիմնուած է Ազգային հոգեբան-նութեան եւ անհասական նկատարի ուսումնասիրութեանը վրայ:

Նկարագիրը, ինչպէս հոգեբանութիւնը անհատին և ազգին մէջ կը հիմնուի երկու ճամբով, ժառանգականութեամբ, և միջավայրի ու անհատական ջանքերու արդիւնքով: Ստաց դէ որ ազգի մը հոգեբանութիւնը ո՛չ անհատի ջանքով կը շինուի, և ո՛չ ալ տարուան մը կամ դարու մը աշխատանքով: Անիկա արդիւնք է դարերու և սերունդներու աշխատանքին ու գործունէութեանը: Այս պատճառով է որ ըստուած է, թէ մեր կեանքին մէջ գործող ամենազօր ոյժերը, մեռած սերունդներու և անհետացած դարերու կուտակած ոյժերն են: Մեռեալներն են, որ կ'ապրին մեր մէջ, և կ'իշխեն մեզմով կեանքի ու բնութեան երեւոյթներուն վրայ: Գերեզմաններն են որ ժողովուրդի մը հոգեբանութեան կարկառուն գիծերը կը շինեն: Բայց այդ հոգեբանութիւնը, որ կը յայտնուի հասարակաց հաւատալիքներու, հաւաքական բարքերու, և ազգայնացած հոգիի մը մէջ. պիտի չը կազմուէր ընաւ, եթէ օրերը և անհատները իրենց աշխատութեան բաժինով այդ յօրինուածութեանը չ'օժանդակէին: Անհատական նկարագիրը, ինչպէս ազգային հոգեբանութիւնը նման աշխարհի մեծութիւններուն՝ մասնիկներէ կազմուած են: Անոնք կազմուած են պզտիկ ջանքերով, պզտիկ մաքառումներով. պզտիկ

զտնողութիւններով. անձնուիրութեան ու արդար փառասիրութեան անուանով թափուած քրտինքի և արիւնի պղտիկ կաթիլներով: Ինչպէս առանց անձրեւի պղտիկ կաթիլներու՝ հեղիղ, առանց սւաղի պղտիկ հատիկներու՝ լեռներ, առանց մանկութեան՝ մարդկութիւն, և առանց սերմի՝ ծառ պիտի չունենայինք, մենք նկարագիր և ազգային հոգեբանութիւն պիտի չ'ունենայինք, եթէ ամեն դար, ամեն սերունդ իր աշխատութեան. զոհաբերութեան, և անձնուիրութեան բարոյական տուրքովը չի խոշորցընէր՝ շարունակաբար, դարերուն կողմէն իրեն փոխանցուած Ազգային Հոգեբանութեան նուիրական զրամագլուխը:

Եւ անա հոս է, որ անհատական ջանքերու և միջավայրի ազդեցութեան կարեւորութիւնը կը շեշտուի, և կը զուգորդուի ժառանգականութեան կարեւորութեանը հետ: Երբ մենք Հայ ժողովուրդին դարաւոր Հոգեբանութիւնը կ'ուսումնասիրենք, կը տեսնենք, որ՝ բազմատմամբ Ասիական ժողովուրդներու հոգեբանութեան, անիկա շատ կանուխէն կ'ընթացէ իր մէջ ծրարել համեմատաբար մաքուր և բարձր ընդունակութեան մը անհրաժեշտ կարողութիւնը: Այս ազգային վիճակը աւելի արժէք կ'ունենայ՝ դիտողի մը աչքին, երբ նկատի կ'առնու իր ապրած միջավայրին աննպաստ պայմանները: Օտար ազրիւրներէ մեզի աւանդուած պատմութիւն մը շատ յատկանշական է Հայ հոգեբանութիւնը ցոյց տալու համար իր մեծութեանը մէջ: Երբ օր մը, Մեծն Տիգրան, Տիգրանուհի և Կիւրոս սեղանակից կ'ըլլային իրարու, Տիգրան Կիւրոսի գեղեցկութենէն ազդուած իր կնոջ Տիգրանուհիին խորհուրդը կ'ուզէր իմանալ. Հայ Թագուհին կը պոտասխանէր, թէ «Իմ Տիգրանիս սրտի

գեղեցկութիւնը գերազանցող չ'կայա: Տիգրանու-  
հիի բերնով Հայ ցեղին հողերանութեանը մէջ աբ-  
մատացած պարկեշտութիւնն ու հոգեկան և սրտի  
գեղեցկութիւններու հանդէպ շինուած պաշտամուն-  
քն էր, որ կը խօսէր այդ պահուն: Երկրորդ յատ-  
կանշական կողմը այդ հոգեբանութեան, անկախու-  
թեան և մեծութեան ոգին էր, այն ազնիւ փա-  
ռասիրութիւնը, որ աղգերն ու անհատները բարձ-  
րացուց տափակութիւններէ վեր, և զանոնք ձգտե-  
ցուց 'դէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը: Դրժ-  
բախաբար յետագայ դարեր այդ մաքրութեան մէջ  
պղտորումներ բերին պատուաստեցին: Եւ այդ  
պղտորումները ա'յն ատեն միայն սկսան սարգիլ  
մեր մէջ, երբ Հայ միտքն ու սիրտը սկսան թու-  
նալ՝ արտաքին ազդեցութիւններու տակ, և իրենց  
մէջ սպաննել անկախութեան ձգտումը, փառասի-  
րութեան ոգին, և հիացումի զգացումը: Լորտ Պայ-  
րըն, երբ կը խօսի հայերու մասին, կը գրէ. «Հա-  
յերը ինչքան լաւ որ ունին իրենցն է. իսկ ինչ որ  
գէշ ունին իրենց զրացիներէն առած են, որովհետեւ  
իրենց պատմութեան շրջանին չեն շրջապատուած  
զրացիէ մը, որ նկարագրով իրենցմէ բարձր եղած  
ըլլայ»

Սիրելի Հայրենակիցնե՛ր,

Անգլիացի մեծ բանաստեղծին այս գնահատու-  
մը ճշմարտութիւն մըն է և անողոք ճշմարտու-  
թիւն մը: Բայց ամեն ճշմարտութիւն արդարացում  
մը չ'կրնար ըլլալ ո'չ ոքի համար: Արտաքին ազ-  
դեցութիւններ գոյութիւն պիտի ունենան շարու-  
նակ. բայց վա'յ այն մարդուն և ազգին, որ ինք-  
զինքը ամբողջովին կը յանձնէ այդ ազդեցութիւն-  
ներուն, և ղեկը կորսնցուցած նաւի մը պէս կը  
տարուբերի այդ ազդեցութիւններէն ծնած ալիք-

ներուսն միջև: Բնութիւնը մարդուս գերազանց վարժապետն է. եթէ լեռները շարժէին հովերէն, ու ամեն ծառ խոնարհէր փոթորիկին առջեւ, այսօր ո՛չ անտառներու գեղեցկութիւնը, պիտի ունենայինք մեր գլխուն վերեւ իբրեւ հովանի, և ո՛չ ալ լեռներու երկնամբարձ վսեմութիւնը իրենց ձիւնափառ կատարներով: Արտաքին ազդեցութիւնները երկու ուղղութեամբ կը փչեն վատ են կամ բարերար. վա՛տ են՝ երբ խորշակի մը պէս կը փչեն և կը թռուսեցընեն մեր սիրտին ու հոգիին ազնուական ծաղիկները. բարերար են՝ երբ զեփիւոթի մը պէս կուգան կեանք տալու առաքինութեան ծագիկնւորուն:

Ալ անցած են ժամանակները, երբ Ոլիմպոսի մը կամ Մասիսի մը բարձունքէն Աստուածները կ'առաջնորդէին ազգերու պատմութեան: Պատմութեան դերակատարը ՄԱՐԿՆ է հիմա, և պատմութիւն մը այնչափ արժէք ունի, որչափ բարձր է զայն կազմող ազգային—անհատական նկարագիրն ու հոգեբանութիւնը: Յեխով ու թուքով շողուած պատմութիւններ կան, պատմութիւններ կան արիւնով շաղուած, և պատմութիւններ՝ որոնց առէջքը ազնիւ և մաքուր հոգիներու ջիղերովը կազմուած է: Պատմութիւնը՝ իբր ժողովուրդի մը անցեալ կեանքին յուշարարը, և սպազային փարոսը, մաքուր է և պատուաբեր՝ երբ անոր մէջ կը տեսնենք պատմութեան ծնունդ տուող ցեղին հոգեբանութեան մաքրութիւնը: Հոգեբանութիւնը մաքուր է՝ երբ վճիտ է նկարագիրը ցեղը կազմող անհատներուն, և նկարագիրը վճիտ է ու պայծառ, երբ անհատին մէջ ազնիւ փառասիրութիւնը կայ, և հիացումի զգացումը: Խորտակեցէք պատմութեան, հոգեբանութեան, նկարագրի, և հիացման զգացումի

չղթային օղակներէն մին և խորտակած պիտի ըլլաք  
ամբողջ շղթան:

Հիմա, Սիրելի հայրենակիցներ, մեր ազգային  
հոգեբանութեան ամենէն տկար կողմը հիացումի,  
գնահատումի, արդար դատողութեան պակասն է  
մեր մէջ: Եւ այդ իսկ է ստուգանիչը քաղաքակը-  
թութեան ճամբուն վրայ մեր ընկրկումին: Ի զու-  
չէ, որ ըսուած է, թէ Ժողովուրդ մը ա՛յնքան շատ  
փաղափարում կ'ըլլայ, ո՛րքան շատ ունենայ իր  
մեջ իմաստուն եւ հասարակաց բարոյականութեան  
պահպանութեան ու զարգացումին նուիրուած ան-  
շահասխնդիր մարդեր: Ֆրէտէիք Նիցչէ. երբ կը  
խօսէր իր օրերու լրագրութեան վրայ, սապէս կ'ը-  
սէր. «Տեսէ՛ք սա աւելցուքները, անոնք հիւանդ  
են միշտ, անոնք իրենց մաղձը կը փսխեն և անոր  
լրագիր անունը կուտան. անոնք զիրար կը լափեն,  
ու չեն կրնար զիրար մարսել»: Նիցչէի խօսքը այ-  
սօր ալ ճշմարտութիւն մ'ըն է շատ մը թերթերու  
համար. դժբախտ ճշմարտութիւն, որ արդիւնք է  
ազգային հոգեբանութեան, և անհատական նկա-  
րագրի ստորնացումին, արդիւնք է հիացման զգա-  
ցումի պակասին: Կ'արհամարհուին սրբութիւնները,  
անհատներու պատիւը թեթեւօրէն խաղալիք կը  
դառնայ ստորին նկատումներու, որովհետեւ մար-  
դիկ չեն կրցած գիտնալ, թէ հիացման և գնահա-  
տումի ոգին է, որ առողջ նշարագիր, մաքուր հո-  
գեբանութիւն մը կը չինէ: Աշխատեցէ՛ք, որչափ  
կրնաք, ձեր ամենամեծ կարելին ի գործ դրէ՛ք. Սի-  
րելի Հայրենակիցներ, ձեր զաւակներու սրտին մէջ  
դրօշմելու գնահատումի, հիացման զգացումը: Թող  
ճշմանիչ դասխարակութեան ծարաւի երիտասարդը—  
կըսէ բարոյախօս մը — իր մեջ մշակի հիացումի  
ոգին, որովհետեւ գեղեցիկին ու վսեմին վրայ հիա-

նաշովե, որ պիտի կրնանք քիչ մը մօտենայ մեր հիացումի առարկային»։ Ծաղրելու, զրպարտելու և լաւը արհամարհելու պէս վատ բան չկայ այնքանի մէջ։ Հանճարին առաքինութեան, արժանիքին, անձնութեան, մէկ խօսքով՝ նոգեկան և բարոյակտն գեղեցկութեան պաշտամունքը ներմուծեցէք ձեր զաւակներուն սրտերուն մէջ, և անոնց նկարագրին ու ազգային նոգեբանութեանը ազամանդէ հիմունքը դրած պիտի ըլլաք։

Վաղուան սերունդի սրտին մէջ այսպիսի հիմք մը գնելու դործը թեթեւ աշխատութիւն մը չէ։ Ընդհակառակն անիկա յարատեւ աշխատութեան, յարատեւ զոհողութեան, յարատեւ կրկնութիւններու պէտք ունի։ Եւ արդարեւ ի՞նչե կեանքը, եթէ ոչ բարի կամ չար սովորութիւններու նմանօրինակ կրկնութիւն մը միայն։ «Ճարտասանութեան միակ և լուրջ կերպը կրկնութիւնն է» կ'ըսէր Մեծն Նաբոլէոն։ Կրկնութիւնը ինչպէս վատութեան, նմանապէս առաքինութեան մեծ վարժապետն է։ Եւ դուք կրկնութեան ճամբով է, որ ձեր նիւթական բախտը, և կեանքի նկարագիրը պիտի կրնաք չինել։ Ձեր սերունդին, ձեր զաւակներուն աչքին առջեւ զրէք տիպարներ, որոնց վրայ հիանան, և անոնց նմանելու աշխատին։ Այն բոլոր արձանները, որոնք այս երկրին փառքերն ու հասարակաց շէնքերը կը զարդարեն, վաղուան սերունդին առջեւ դրուած տիպարներ են, որոնցմէ ոմանք իրենց քաջութեամբն ու արիութեամբը, ոմանք զոհարութեան ոգիով, ուրիշներ տաղանդով ու պարկեշտութեամբ հիացումի առարկայ կը դառնան, և իրենց վրայ կը կաղապարեն մանկութեան մաքուր նոգին։ Գործնական ժողովուրդներ ասկէ տարբեր միջոց չունին աւելի մեծնալու համար։ Եւ երբ մեզի պէս

կարգ մը ժողովուրդներ անձնատուր եղած երազներու և մասաշներու կ'երեւակայեն այնպիսի վարդապետութիւններ ու մեթոտներ, զոր բնաւ միջոց և պատեհութիւն պիտի չ'ունենան գործադրելու, հոս, այս երկրին մէջ Ամերիկացին աւելի առաջ կ'երթայ գործնական սկզբունքներու ճամբով, և մեծ կարեւորութիւն կուտայ արտաքին երեւոյթներու, զանոնք գործադրութեան դրուելիք ծրագրի մը յառաջընթաց նշանները համարելով: Ամերիկացին կ'ըսէ. Ջանսցեֆ երեւնալ ինչ որ կ'ուզեֆ ըլլալ. մարդիկ ո՛չ միայն պիտի հաւատան քե դուր այնպէս եֆ, այլ եւ՝ ուշ կամ կանուխ դուր այդպէս պիտի ըլլաֆ: Եւրոպացիք Ամերիկեան այս ընկերական վարդապետութեան «պլըֆի ներդր» կ'ըսեն ըրածիծաղով մը, բայց իրականութիւնը ս. է. թէ այդ երեւոյթները կրկնուելով բնաւորութիւն կ'ըլլան, և մարդուս մէջ նկարագրին է, որ կը շինեն:

Դուք, Սիբիլի Հայրենակիցներ, երբ այս հասոգումով ճամբայ ելլէք ձեր քաղաքացիք, հայու և ծնողքի պարտականութիւնը կատարելու համար, հակառակ ձեր ջանքերուն՝ ինքզինքնիդ չըջապատուած պիտի գտնէք արտաքին ազդեցութիւններով: Մի՛ վախնաք, սակայն անոնցմէ, որչափ ատեն ձեր սրտին մէջ զօրաւոր հիմ մը ունիք: Բարեբախտաբար կը գտնուիք երկրի մը մէջ, ուր հիթէ կան մարդկային բարքերը ստորնացընող ընկերական ապականութիւններ, կան նաեւ աւելի շատ թիւով գործունէութեան, կորովի, ձեռներէցութեան, զոհողութեան և անձնուրացութեան տիպարներ: Անոնցմէ օգտուեցէք: Ամերիկացին «տղար շինող մեքենայ մը չէ», միայն. ճշմարիտ Ամերիկացին մարդ մըն է բառին ընդարձակ առումովը, որուն Ֆիզիքական կորովը և առնական հոգին իր հոգեբանու-

Թեան կառկառուն գիծերը կը կազմեն: Անյագ գործող մը, չեկնսի հետամուտ, անխոնջ աշխատաւոր մը. ամեն օր ամեն վայրկեան ինքզինքը գերազանցելու. իր կեանքին կէտ նպատակը ընտրած է կարծես շահիլ՝ իր երկիրը շէնցընելու համար, շահիլ՝ բարեգործելու և նպաստելու համար իր երկրին յառաջդիմութեանը: Ան կը ձգտի ամեն օր ինքզինքը գերազանցել ուղղամտութեան մէջ, արդարութեան մէջ, հայրենասիրութեան մէջ, անձնուիրութեան մէջ, օրինապահութեան մէջ:

Երբ կ'ուսումնասիրէի Ամերիկահայ Պատմութիւնը, և կ'ուզէի գիտնալ, թէ Ամերիկացիք ի՞նչ գաղափար կազմած են Հայուն նկատմամբ, ինքզինքը տխուր իրողութիւններու առջև գտայ: Անոնք հայերուն նկատմամբ սա կարծիքը չինած են, թէ Հայերը ստախօս են, չարախօս են մէկ մէկու հանդէպ, մաքրութեան բարեկամ չեն, և անկարգապահ են ընդհանրապէս: Այս ոչ—պատուաբեր համոզումը մենք շինեցինք անոնց մտքին մէջ, որովհետեւ մեր Հայրենիքին մէջ մեզի հիացումի առարկայ ճշմարիտ, մաքուր, և իտէական տիպարներ չ'ունեցանք: Բընապետութիւնը, և քաղաքական ու կրօնական հալածանքները մեր նկարագրի ու հոգեբանութեան մաքուր գիծերը ջնջելու ծառայեցին. մինք հոն ազգովին կեղծել սորվեցանք, և չարախօսութեան ու զրպարտութեան մէջ մեր կեանքը, մեր ապրուստը փնտռեցինք: Հիմա, որ համեմատաբար աւելի բարձր և աւելի մաքուր միջավայր մ'ունիք, աշխատեցէք վերստանալ մեր ազգային լաւագոյն կարողութիւնները, աշխատեցէք ինքզինքի գերազանցել բարութեան մէջ, առաքինութեան, ազնուութեան, ճշմարտութեան և գնահատումի կարողութիւններուն մէջ, և գիտցէք, թէ ինքզինքը գերա-

զանցելու գործը պիտի տեւէ այնչափ, որչափ կեանքը պիտի տեւէ: Ինքզինքը գերազանցել կը նշանակէ շարունակ յառաջդիմել: Յառաջդիմութիւնը, սակայն, երկու ուղղութիւն ունի. ասին քայլ կրնայ դէպի վեր և դէպի վար, դէպի ետ և դէպի յառաջ ելթալ: Դէպի վար և դէպի ետ յառաջգիմութիւնը յետադիմութիւնն է, վատերու, տկարներու, վատասերածներու, աննկարագիր մարգերու. ձեռքով պատրաստուած ազգային սնանկութիւնն է: Մինչդեռ ճշմարիտ յառաջդիմութիւնը վերելք մըն է, տիրապետութիւնն է բնութեան, նիւթին և անձին, օրըստօրէական յաղթանակը մաքուր ներշնչումներու, հիացումի առակայ տիպարներու, տիրապետութիւնն է ճշմարտութեան, արդարութեան, սիրոյ և մաքուր փառասիրութեան գաղափարին: Ասոր համար էր, որ Յրանսայի պետական մարդը, Թիւրքօ, որ Յրանսական Յեղափոխութեան միտքին պատրաստողներէն մին հղաւ, ըսաւ, թէ յառաջդիմութիւնը նիւթին վրայ մարդկային զօրութեան անսխնանական զարգացումն է. յառաջդիմութիւնը անսխնանկ զարգացումն է իր բարոյականութեանը: Ուստի գիտնանք, թէ սուտին մէջ բարոյական, զրպարտութեան մէջ նկարագիր, գրական, ընկերական և անհատական խարդախութիւններու մէջ մաքուր հոգեբանութիւն, հիացումի և գնահատումի ոգիէն զուրկ մարդուն մէջ նկարագիր փնտռել պիտի նմանէր աղբանոցի մէջ ապամանդ փնտռելուն: Բայց մինքնկարագրի պէտք ունինք, ազգային մաքուր հոգեբանութեան մը պէտք ունինք, ֆիզիքական և բարոյական ոյժի, առողջութեան պէտք ունինք հոս՝ այս գաղթավայրին մէջ իբրեւ պարկեշտ քաղաքացիներ, օգտակար ըլլալու համար մեր տուններուն և մեր զաւակներուն, և իբրեւ Հայեր

օգտակար ըլլալու համար, մեր ազնիւ օրինակովը, մեր ներշնչումներովը, մեր նիւթական և բարոյական օժանդակութիւններովը՝ մեր տառապող Հայրենիքին ու հայրենակիցներուն: Այդ օգտակարութիւնը կարենալ արտադրելու, այդ մաքուր նկարագիրը կարենալ ունենալու, այդ առողջ հոգեբանութիւնը կարենալ շինելու համար ըսինք, թէ ամեն բանէ առաջ գնահատումի և հիացումի զգացումը ունեցէք, և ամեն օր ինքզինքնիդ գերազանցելու տրամադրութիւնը:

Այս ամենը ունենալու համար որոշ ուղղութիւն մը պէտք է մարդուս, և ուղղութիւնը պահպանելու համար, ըստ իս սապէս պէտք է ընել:

Ընտրէ նպատակդ, որ քու անձիդ և հասարակաց բարիքին համար շինուած ըլլայ, և առանց դանդաղելու քալէ: Ծամբուդ վրայ արհամարհել գիտցիր վատութիւնները, թո՛ւք աղտոտութիւններու վրայ, մի՛ հետաքրքրուիր անոնցմով և աչքըդ ու մտածումդ յառէ շարունակ վսեմ և բարձր տիպարներու: Ուղղակի թէ անուղղակի կերպով մի՛ քաջալերեր շուրջդ ծլարձակող ստորնութիւնները, քալէ՛ ու գործէ՛ նպատակիդ համար, և այսպէսով դուն ուժի եւ ժամանակի կրկնակ խնայողութիւն մը ըրած պիտի ըլլաս: Յաղթականները այս ճամբով և այս ուղղութեամբ քալած են և վստահ եղէք, թէ ճշմարտութիւնն ու արդարութիւնը չեն մեռնիր, և անոնց յայտնութեան տողեւ ուշ կամ կանուխ կը լռեն չարախօս լեզուն, անիրաւ բերանը, ապականուած սիրտը, և այլասեռած հոգին: Եւ աշխատեցէք մաքուր բարքերու, մաքուր սիրտերու, ազնիւ հոգիներու քանակը շատցնել և որակը բարձրացնել այս գաղութին մէջ:

Այս նպատակին հասնելու միջոց մը ունինք


մեր կեանքին մէջ, Այդ միջոցը ուրիշ բան չէ, եթէ ոչ կատարեալ ներդաշնակութեան մէջ պահել մարդկային ԿԱՄՔը, ԽՆԼՔը և ԶԳԱՑՈՒՄը, Մարդկութեան մէջ անհատներ կան, որոնք խելք ունին, և որոնց՝ սակայն սիրտը ապականուած է. անոնք մեր ազգին ու իրենց առններուն օգտակար ըլլալէ շատ հեռի են. ժողովրդական առածը այնպիսիներուն համար կ'ըսէ. «Աղէկ իւր է, բայց չունի սիկի մէջ կոխուած է»։ Անհատներ ալ կան, որոնք խելացի են և զգայուն, և որոնց մէջ կամքը կը պակսի. անոնք կը նմանին գեղեցիկ շօփօթիճնեբու, որոնք առաջ երթալու համար իրենց մէջ պէտք եղած ուժը չ'ունին։ Մենք մեր գաղթավայրերուն և մեր Հայրենիքին մէջ աւելի շատ առատապէս ենք անոր համար, որ մեր սիրտը մեր ուղեղէն, ու մեր սւղեղը՝ մեր կամքէն շատ հեռի կ'ապրին։ Աստուած մեզի Հայերուս ամենամեծ բարիքը ըրած պիտի ըլլար, եթէ բացառաբար մեր սիրտը, և մեր ուղեղը միասին զրած ըլլար մեր գանկին մէջ։ Անոնցմէ մէկը մեր կուրծքին տակ, և միւսը մեր գանկին մէջ բանտարկուած, շատ անգամ ո՛չ միայն իրարմէ տեղեկութիւն չ'ունին, այլև իրարու հակառակ ուղղութեամբ կը շարժին ու կը գրծեն։ Առողջ միտք, մաքուր սիրտ և զօրաւոր կամք իրարու միացած՝ պիտի կազմեն մեր անպարտելի ոյժը, և մեր յաջողութիւններուն զափնին պիտի հիւսեն։

Երեք ամիս առաջ, երբ Եիքակոյի Հնուիթեանց Թանգարանը կ'այցելէի, ինքզինքս դէմ առ դէմ գտայ Մատակասգարեան նուագարանի մը, և չը կրցի զարմանքս զսպել, Այդ նուագարանը քնարմբն էր, տարօրինակ, իր տեսակին մէջ, մարդկային գանկէ շինուած։ Գանկին վերի մասը սղոցուած, և անոր վրայ դաի մը անցուած էր. չուրջէն դէ-

պի վար կը կախուէին մայերը, և դափին վրայ քնարին թելերը կ'երկարէին: Մարդկային գանկին վրայ երկարող թելերուն վրայէն Մատակասդարցին անշուշտ նուագեց իր երջանկութեան ու զժբախտութեան երգերը: Այդ բարբարոս նուագարանին տեսքը զիս սոսկացուց առաջին անգամ. ամբարշտութիւն մը փորձեցի տեսնել անոր մէջ, սրբապղծութիւն մը մեռելական խաղաղութեան, որ կը ժպըրհէր գերեզմանի մը նանգիստը խռովել ուրախութեան մը երգով: Մտածումս, սակայն, կամաց կամաց հաշտուեցաւ գալափարին հետ, որ ծնունդ տուած էր այդ նուագարանին: Քնարը հետզհետէ այլաբանական երեւոյթ մ'առաւ, և տեսակ մը խորհրդապատկերը եղաւ մարդկային կեանքին: Չէ՞ մի որ բանաստեղծներն ալ մարդկային սիրտը քընարի մը նմանցուցած են, և իրենց ամենէն մաքուր երգերը, հոգիին ամենէն եթերային օրհներգութիւնները թռթռացուցած են սրտի թելերուն վրայ: Եւ Մատակասդարցին կեանքի ամենէն հզօր ներդաշնակութիւնը կազմելու համար, ուրիշ բան ըրած չէր, եթէ ոչ՝ տգիտաբար և անզգալաբար, սրտին թելերը փոխադրած գանկին մէջ:

Սիրելի Հայրենակիցներ, եթէ կ'ուզէք, որ դուք ալ յաջողիք. և ձեր կեանքը կազդուրող, շինող ու ներշնչող մեղեդի մ'ըլլայ ձեր ազգին ու մարդկութեան համար, ձեր սրտին թելերը անցուցէք ձեր գանկէն, և ձեր կորովին ու կամքին մատներով հնչեցուցէք ձեր սրտին ու գանկին, կամ ձեր զգացումին ու խելքին երգը՝ ձեր և ձեր սերունդին մխիթարութեանը համար:





## ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴԻՐՔԸ

### ՎՏԱՆԳԻՆ ԱՌՋԵԻ

Երբ կարողութեան ճշմարտութիւնը  
հասարակաց բարի մասին ինքն արեւ ընկե-  
լիս ի՛նչ փոյթս. հասարակաց բարեւոր-  
ութիւնն է: ՄՈՆԹԻՍՏՐԻԷՅ

#### Սիրելի Հայրենակիցներ՛ր

Ազգի մը կամ ժողովուրդի մը պատկանող ան-  
կատները, որոնք պետութեան մը քաղաքացիներն  
են, իրենց ընկերական դաւանանքին ճակատը պէտք  
է գրեն իրենց քաղաքացիական պարտականութիւ-  
նը: Այդ պարտականութեան գիտակցութիւնը և  
յանձնառութիւնն է, որ պիտի իրագործէ մարդկա-  
յին ընկերութեան ամենավեհանձն և բարձրագոյն  
մտածումներն ու խորհուրդները: Քաղաքացիներու  
համար հասարակաց դատերը ամենասուրբ դատերն  
են, և այդ դատերուն հանդէպ և անոնց ի սպաս  
դրուելու համար պարկեշտ քաղաքացիին մէջ փնտ-  
ռուած առաջին բանը պարտաճանաչութիւնն է,  
եռանդն է, այդ դատերուն հանդէպ նուիրումն է:  
Հո՛ն՛ ուր այդ եռանդը և այդ նուիրումը կը պակ-  
սին, ժողովուրդները ճակատագրուած կ'ըլլան  
իրենց մեծութեան պատուանդանը կորսնցընելու,  
և անհատական, կուսակցական, ընկերական կամ  
պետական բռնապետութիւններու ոտքին տակ սո-

ԾԱՆՍԹ. — Իտուած Նիւ Եորթի մէջ 1911 Յունվարիս:

զալու կը դասապարտուին: Այս պատճառով էր  
անշուշտ, որ Եւրոպական Յեղափոխութեանց և  
Սահմանադրական-Ռամկավարական կարգերու Հայ-  
րը Մանթէսքիէօ ըսաւ. երբ կառավարութեան մը  
սեղ աննն մտրդ հասարակաց դասի մասին խօսած  
ասնն ըսէ. ԻՄ Ի՛ՆՉ ՓՈՅԹՍ, հասարակաց դասը  
կորսուած եւ Մանթէսքիէօէն վերջ Թոքըվի, յետոյ  
Միշլէ, «Ռամկավարութեան Մարգարէն» և էակար  
Քինէ «Ռամկավարութեան դաստիարակը» միեւնոյն  
խմաստութեամբ խօսեցան, և երեւան բերին սա  
պարագան, թէ ժողովուրդը անտարբեր հանդիսա-  
տես մը չէ պատմութեան բանագործութիւններուն  
(drame), թէ ժողովուրդը ինքն է պատմութեան  
դերակատարը, դիւցազնը: Եւ երբ Թոքըվի ժողո-  
վուրդը կը բացատրէ մեզի, իր անխոնջ ճամբորդի  
յամառութեամբ և իր իմաստասէր-վերլուծող միտ-  
քի փորձառականութեամբ, և երբ Միշլէ, շնոր-  
հիւ իր արուեստագէտի, մարգարէի և բանաստեղծի  
մաքրասէր զգացումներուն, մեզի կը սիրցընէ ժո-  
ղովուրդ ըսուած յարաշարժ զանգուածը, չեն մոռ-  
նար միեւնոյն ժամանակ գծել այն բաւարար ուղ-  
ղութիւնը, որուն պէտք է հետեւի ժողովուրդ մը,  
ազգ մը, պետութիւնը կազմող ամեն անհատ, ամեն  
խորհող ու զգացող մասնիկ, ժողովրդագետութեան  
կամ Ռամկավարութեան սկզբունքը պատուաւո-  
րապէս արդիւնագործելու համար: Գաղափարները  
կը յղացուին, ո՛չ թէ գաղափար մնալու համար,  
այլ ընդհակառակն անոնք կը յղացուին ժողովրդա-  
կան բարւոյն տեսակէտով արդիւնագործուելու  
համար: Ինչ որ է ծաղիկը պողատու ծառին վրայ,  
նոյնն է գաղափարը մարդուն մէջ, երկուքն ալ  
առանց պտուղի շատ աննշան արժէք մը պիտի ու-  
նենային: Մաքի և սրտի տաժանելի երկունքը

ապերախտ գործ մը պիտի ըլլար, եթէ զայն գործնականացընելու յօժարութիւնը պակտէր մարդկութեան մէջ: Բոլոր մեծ գիւտերը, որոնք մարդկութիւնը պանծացուցին, բոլոր յառաջդիմութիւնները, որոնք մարդկային քաղաքակրթութեան վերելակող սանդուղին մատները աւելցուցին, արդիւնք են նախ՝ դադափարին, ու յետոյ՝ այդ գաղափարը գործնականացընելու յօժարութեան: Անտարբեր, անհոգ, ին ի՛նչ փոքրս ըսելու վարժուող անհատներն ու ազգերը յաւիտենական լծացումի մը կեանքը միայն կրնան ապրիլ, և անոնց ու գետնաքարչ սողուններու միջև գտնուած անջրպետը, թուղթէ պատուար մը միայն պիտի ըլլայ:

Սիրելի Հայրենակիցներ՛, Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախորդ նախագահը Ռուզվելթ, օր մը երբ կը խօսէր Ամերիկայի կատարելիք դերի մասին, իբրեւ ճշմարիտ և գիտակից Հայրենասէր մը իր խօսքը հայրենակիցներու ուղղելով, կ'ըսէր. Մենք ժողովուրդ մըն ենք. մենք մեծ դեր մը կ'ստանալու կոչումը ունինք: Ամեն ժողովուրդը իր գոյութեան իրաւունքը ապացուցանելու համար, պէտք է խորհի, և որդեգրէ, սա սկզբունքը, թէ ինք մեծ դեր մը կ'ստանալու կոչումն ունի, իր պատմական, և աշխարհագրական գիրքին համեմատութեամբ, իր ազգագրական, բարոյական ընդունակութեան չափով:

Հայ ժողովուրդը իր աշխարհագրական, իր պատմական, և իր ազգագրական գիրքով, իր քաղաքակրթական ընդունակութիւններով, սահմանադրական թիւրքիոյ իբրև հաւատարիմ քաղաքացին, պէտք է ընդունի, թէ ինք այդ երկրին վերածնութեան գործին մէջ դեր մը կատարելու կոչումը ունի. պէտք է ընդունի, թէ մեծ կոչում մը

ունի նաև համամարդկային, համառլաւական կամ համաթրքական ձուլումի քաղաքականութիւններուն հանդէպ պահպանելու իր ազգայնական ինքնուրոյնութիւնը, ըլլայ Թուրքիոյ, ըլլայ Ռուսիոյ, ըլլայ ամբողջ տիեզերքին մէջ: Թէ՛ պէտք է ըլլայ մէկը այն տարրերէն, որոնք քաղաքակրթութեան իրենց ընդունակութեամբ ինքզինքնին իսպաս կը դնեն իրենց Ընտանիքին, իրենց Հայրենիքին, իրենց Ազգին, ու այդպէսով ամբողջ մարդկութեան դատին ծառայելու: Անհատներ ու ժողովուրդներ իրենց այդ մարդկայնական կոչումին կարենալ ծառայելու համար, պէտք է տիրացած ըլլան կարգ մը յատկութիւններու, որոնք զօրաւոր երաշխաւորութիւնները պիտի ըլլան իր կարողութիւններուն: Այդ յատկութիւնները կամ կարողութիւններն են, նախ կոչումին յարմար ԲԱՐԻ ՆՊԱՏԱԿԸ, երկրորդ, այդ նպատակին տրամատրելի ԶՈՂՈՂՈՐԹԵԱՆ ՈՒԻՆ, երրորդ նպատակը գործնականացընող ԶՕՐԱԻՈՐ ԿԱՄՔԸՆ ԵՎ ՆԱԿԱՏԱԿԻ, կամքի և զոհողութեան այս երրորդութիւնը, անբաժանելի ըստ ինքեան, առաջին քայլն է ժողովուրդներու և Ռամկավարութեան կոչումը արդարացնելու համար: Չրանսացի իմաստասէր մը, հիմնուած ժողովուրդներու կոչումին և Ռամկավարութեան նրա պատակին նուիրուած այս սկզբունքներուն վրայ, կը գրէր. Ռամկավարութիւն մը հաստատելու միջոցն է զայն կսզունդ անհասներու իրախանջութիւն մեջ սեղծել անձնակիս արժանապատիւներ կամ դիտակցութիւնը, իրաւունքի զգացումը, եւ զայն պաշտպանելու քաղաքակրթութիւնը: Անոսք որ այս միջոցներուն մէկէն կամ միւսէն զուրկ են, և ամբողջովին չեն որդեգրած, երրորդութիւնը, նպատակին, զոհողութեան ոգիին, և կամքին, անոնք որ կամ անձնական անժամանապատուութիւն չունին, կամ իրաւունքի զգացումը և կամ անոնց արժանապատիւնը չունին:

ջութիւնը, անոնք կը նմանին ա՛յն մեքենաներուն, որոնց մէջ պզտիկ անիւի մը, ճախարակի մը պակասը, անգործածելի և նոյն իսկ անարժէք կ'ընէ վիթխարի մեքենան:

Հայ ժողովուրդը այսօր այդ անգործածելի, ու նոյն իսկ ըսեմ անարժէք մեքենային կը նմանի: Անհատական և կուսակցական եսականութիւնը մէկ կողմէն, տնաւեր անտարբերութիւնը միւս կողմէն շարիքի անաւոր միջերք մը ստեղծած են մեր ազգային կազմին մէջ, ուր մաքուր նպատակը հետզհետէ կ'անտեսուի, և անոր տեղ կը զրուին աղտոտ կիրքեր: Ազգային ակնարկուած չարիքը, ուրկէ այսօր առաւել քան երբեք կը տառապինք, երկու ակերէ կը բղխի:

Այդ ակերէն մին կուսակցական գործելակերպի ծայրայեղութիւնն է, կարգ մը մարդերու մէջ, և միւսը՝ անչարժութեան կամ անտարբերութեան չափազանցութիւնը ժողովրդեան մեծամասնութեան մէջ: Ես սուելի պիտի նախընտրէի սիրել զանոնք որոնք զոհողութեան ոգի և գործելու կամք ունին, հոգ չէ թէ անոնց գործելակերպը վնասակար ուղղութիւն մը առած է գէշ առաջնորդողներու թունաւոր ներշնչումին տակ, քան զանոնք, որոնք ինքզինքնին ցոյց կուտան մեղի բարի տրամադրութիւններով լեցուն, և որոնց մէջ գործելու կամք և զոհողութեան ոգի կը պակսի: Քրիստոնէութեան մեծ քարոզիչներէն մին Վինէ, իրաւամբ ըսած է. Աշխարհ բարի տրամադրութիւններով լեցուն է, բայց եթէ այս բոլոր բարի տրամադրութիւնները իրարու միացընենք մեկ կամք չեն աւժեր: Եւ չէ՞ որ Վինէէն առաջ բանաստեղծը երգած է, Դժոխքն աչ սայարկուած է բարի տրամադրութիւններով, որոնք չեն գործնականացած զոհողութեան ոգին, և կամքի

ոյժը պակասած ըլլալուն համար: Ինծի համար կամ-  
քէ զուրկ, զոհողութեան ոգիէն թափուր, բայց  
բարի կամեցողութիւններով լեցուն մարդիկ կը նը-  
մանին այն տակառներուն, որոնց մէջ բարի նպա-  
տակներու համար գրուած թուղթեր լեցուած են,  
և որոնք տեղերնէն շարժելու կարողութիւնը չ'ու-  
նին:

Սիրելի Հայրենակիցնե՛ր, գիտեմ, թէ գնահա-  
տումիս այս կերպը շատ ախորժ պիտի չի պատճառէ  
ձեզի: Բայց պէտք է գիտնաք, թէ ձեզի ախորժ  
պատճառելու, ձեր ֆէյժը բերելու կոչումը չեմ  
զգար իմ մէջս: Կրնան ամբոխավարներ նոյն իսկ  
ձեր թերութիւնները շոյել, ձեզի հաճելի շողշողուն  
Փրագնեքով զլուատել մեր ազգային երեւակայական  
մեծութիւնները, և ստութիւններու ետին թաղել  
ծայրայեղ գործունէութեան հիւանդագին, վաստիս-  
տարակ վիճակը, և ծայրայեղ անտարբերութեան  
ստորնութիւնը. կրնան բանտերու խորերէն ազա-  
տութիւն, բոնապետութեան արգանդէն Սահմա-  
նադրութիւն ծնուցած ըլլալու յաւակնոտութեամբը  
գինովցած կռուակի թեւերուն վրայ կապել Հայ  
անկախութեան մը, կամ Հայ ինքնավարութեան  
մը դրոշը, մինչև Արարատի բարձունքը անկելու  
համար: Ես ո՛չ այդ դրոշը ունիմ և ո՛չ ալ ծիրա-  
նին, իբև պատանք ծառայեցընելու համար Հայու-  
թեան մեռելային անտարբերութեանը, ազգային  
նուիրական գաղափարներու, սկզբունքի և համո-  
զումի առջև: Ես իրականութիւն մը միայն կը տես-  
նեմ, և այդ ահաւոր իրականութիւնը ժողովրդեան  
անտարբերութիւնն է հասարակաց դատի մը առ-  
ջև, որ դատերուն նուիրականն է, և պէտք է այն-  
պէս նկատուի հասարակաց և ազգային դատ մը  
ըլլալուն համար: Ես իրականութիւն մը միայն կը

տեսնեմ, ներկայիս մէջ, ու ապագային համար. և այդ իրականութիւնը սա է, թէ Երբ կառավարութեան մը մէջ, ամեն մարդ հասարակաց դասի մը մասին խօսած ասեմ ըսէ, իմ ի՛նչ փոյթս, հասարակաց դասը կորսուած է: Ես իրականութիւն մը միայն կը տեսնեմ, և այդ իրականութիւնը սա է, թէ Հայ ազգը ներկայիս մէջ ունեցած իր ազգային—ընկերական սա պայմաններով, սա գործելակերպով, սա՛ վարչութեամբ, և սա գերեզմանային անտարբերութեամբ մեռնելու դատապարտուած է օտարութեան ու Հայրենիքին մէջ:

Եւ երբ ես ալ ձեզի հետ կը վերլուծեմ սա այլ լաստած անտարբերութեան ծնուցիչ պատճառները, կը տեսնեմ, թէ անոնց կարգին առաջինն է մեր արեւելքցիի հոգեբանութիւնը, որ մեզի դիւր կուտայ ժամերով մտասեւեռուիլ պարագութեան վրայ, աւելի երազներու անձնատուր ըլլալ քան իրականութեան, աւելի փափաքիլ քան գործել: Մեր խորհուրդին մէջ, մեր մտածումին մէջ, մեր կամքին մէջ բնական ծուլութիւն մը կայ, և մեր ձեռքերը՝ ոչնչութիւններն ու վատութիւններն անգամ ծափահարելու փութկոտ. կը դանդաղաշարժին մեծ պարտականութիւններու լծակին առջև: Բարբերու և նկարագրի վատասեռութեան արդիւնք մեր անտարբերութեան պատճառներէն երկրորդը բռնապետութեան տիրականութիւնը եղաւ: Մեր կրած ընկերային—քաղաքական պատրանքները, և պատրանքի ճամբուն վրայ թափուած ապարդիւն արիւնները մեզի յուսահատութեան մատնեցին, մեր մէջ մարեցին ասպետական ազնիւ տեսչանքներու մարքուր կրակը. ու շունտութեան սալին վրայ ծեծուած մեր հոգիները, փոխանակ պողպատուելու, և արիւններէն ջրդեղուելու, անոնք փչրուեցան

մեր գլխուն իջնող մուրճի հարուածներուն տակ: Երբորդ պարագայ մը, պիտի ըսէք, ինձի, թէ կուսակցութիւններու և կուսակցական շարքերու մէջ տարիներու ընթացքին երեւցող յոռութիւնները, մեծադրոգ զեղծումները, զիրար անպատուելու համար ստեղծուած զրպարտութիւններն ու լկտի վայրահաջութիւնները այս ժողովրդդին մէջ ա՛լ աւելի շեշտեցին անտարբերութիւնը, և ասանկով ազգային հաւաքական կեանքը կազմալուծեցին:

Երբեք պիտի չկրնայի հաշտուիլ սա գաղափարին հետ, թէ այս ամենը իրաւունք կրնային ունենալ զմեզ անտարբերութեան մղելու: Ընդհակառակն, ուր որ բռնապետութիւն կայ, հոն ազատութիւն մը ստեղծելու պէտքը հոգիները աւելի կը զօրացնէ, բաւական է որ այդ հոգիները ընդունակ ըլլան ազատութեան բարիքները գնահատելու: Եւ ուր որ այդ զեղծումները կը գործուին, հոն աւելի շատ պէտք է գործելու մղուի արգարութեան տինջանքը: Գիտնանք, թէ ո՛չ բռնութիւնները կը դադրին աշխարհի մէջ, և ո՛չ ալ զեղծումները: Անոնց գոյութիւնը պատճառը պիտի ըլլայ յաւիտենական կռիւին, ազատութեան և արդարութեան դատին համար: Եթէ բռնապետութիւնները պատճառ եղած ըլլային յուսահատութեան և անտարբերութեան, այսօր ազատ ազգեր գոյութիւն պիտի չունենային: Եթէ զեղծումները պատճառ եղած ըլլային յուսահատութեան և անտարբերութեան, այսօր ոչ մէկ ընկերական կազմակերպութիւն, նոյն իսկ ոչ մէկ Պետութիւն պիտի ապրէր: Գերմանիոյ մէջ, Ֆրանսայի մէջ գործածուած զեղծումները, փոխանակ ժողովուրդները յուսահատեցնելու, տեսակ մը խթան եղած են արդարութեան և ուղղութեան իրացումին հա-

մար: Ամերիկեան քաղաքական կազմին և ընկերային—քաղաքական կազմակերպութիւններուն մէջ գտածուած զեղծումները առասպելական ըլլալու առտիճան ցնցող եղած են, բայց ամերիկեան առողջ և առողուն նկարագիրը չ'յուսահատիր, չ'անտարբերիր, ու առաւել քան երբեք մեծ կորուլով, մեծ եռանդով կը հետապնդէ շարիքը ու շարագործները, և երկիրն ու ընկերային—քաղաքական կազմը մաքրագործելու կը հետապնդի:

Աշխարհի մէջ, որչափ ատեն որ ժողովուրդներու հաւատքն ու յոյսերը շահագործող մարդիկ գտնուին, — և դժբախտաբար պիտի գտնուին միշտ — ամենէն մեծ ճշմարտութիւններն անգամ, ամենէն մաքուր կրօններն անգամ ձեւազեղծելու աղանդաւորական փորձեր տեղի պիտի ունենան: Վարդերու վրայ բուսած փուշն է այդ սկզբունքները շահագործող զեղծումի ոգին: Նիւ Եորք քաղաքը սկզբունքներու զեղծումին մէկ ահաւոր օրինակը ընծայեց, գրեթէ ամբողջ դար մը, երբ իր մէջ ողջունեց և անայդ Թեմիսի Ռիկկի կամ Թուիս Ռիկկի նման կազմակերպութիւն մը: Այդ ընկերութիւնը 1807ին կազմուած, որդեգրեց իրեն համար աշխարհի մէջ ծանօթ կառավարութեանց ամենէն իմաստուն ձեւը. — Ռամկավարութեան աշխարհահայեցքը: Թերեւս իր ծագման օրերուն այդ կազմակերպութիւնը կը հետամտէր Ռամկավարութեան ամենամաքուր սկզբունքներուն գործնականացումին: 1822ին երբ կարգ մը շահամոլ զիւանազէտներ (Politiciens) ինքզինքնին տեղաւորեցին այդ ընկերութեան մէջ, անիկա՝ Ռամկավարական շապիկին տակ եղաւ ահաւոր բռնապետութիւն մը: Այդ բռնապետութիւնը 1855 — 1863ի շրջանին, ահաւոր ոյժ մը եղաւ, և Թեմիսի շղթան, Ուրիլերմ

Թուխտով դարբնուած, եղաւ Նիւ Եորքի անտեսական կեանքին գերութեան օղակը: Ռիֆկէն դուրս մնացող ու է անհատ, հակառակ իր իրական արժանիքներուն, չէր կրնար հասարակաց պաշտօններու կոչուիլ: Եւ Ռիֆկէն իր ամբողջ ոյժը տրամադրած էր իր անդամներուն անձնական ու հաւաքական շահերուն պաշտպանութեանը, հոգ չէր թէ այդ շահերը ապօրինի ըլլային:

Նիւ Եորքի ժամանակակից պատմութիւնը կ'ըսէ, թէ Ռիֆկէն առաջին անգամ իր տղէտ ընտրողներուն միջոցով ձեռք ձգեց զատարանները, որպէսզի իր անդամները առանց պատժուելու երկիւղին կարող ըլլան իրենց գողութիւնները շարունակել: Դատարաններէն վերջ ձեռք ձգեց Նիւ Եորքի Քաղաքապետարանը, ուր 1869ին ձեռք բերուած նոր Շարքին շնորհիւ կրցան կատարելագործել իրենց *bureaucratique* աւազակութիւնը: Պատմութիւնը կ'ըսէ թէ Ռիֆկէն շրջանին, Court Houseի շինութիւնը, և Broadwayի ընդլայնումը ահագին գողութիւններու, գայթակղութիւններու գուռ բացին, այնպէս որ իրաւամբ ըսուեցաւ, թէ Պրոտուէյ ճշմարիտ գողերու անձաւ մը եղաւ:

Գիտէ՞ք, Սիրելի Հայրենակիցներ՝, թէ ո՛վ եղաւ այդ զգայացունց գայթակղութիւններուն վերջ մը տուողը: Կառավարութիւնը, բնաւ: Թէ՛մէնի Ռիֆկէն իր պաշտպանները, իր ընկերները, իր բարեկամները ունէր կառավարութեան ժողովներուն մէջ: Դատարանները իր ձեռքն էին: Ժողովուրդն էր, որ ցցուեցաւ այդ կազմակերպութեան դէմ, արթննալով 1871ին Նիւ Եորքի Թայմզի մէջ հրատարակուած վաւերագրութենէ մը: Եւ ամերիկեան ժողովուրդը, որ դատարանական ձեւակերպութիւններու առընթեր Լիւնչի օրէնքով մըն ալ

կառավարուած էր, այդ հրամայողական բոպէին կառավարութենէն անկախ, դատարաններէն դուրս ծառայաւ պիղծումներուն դէմ, և կազմեց պարկեշտ ու պարտաճանանչ ֆաղսֆաղիներու Քոմիտէն, որ կոչուեցաւ Եօրանասնից Քոմիտէ, և որ յետոյ Քարաֆաղիներու Միութիւն (Սիթիզէնս Եունիոն) անունը առաւ: Ռինկի անդամները փախան արտասահման, սմանք բանտարկուեցան, և Նիւ Եորք քաղաքը քիչ մը շնորհքի բերուեցաւ, Սիթիզէնս Եունիոնի հայրենասէր ջանքերուն շնորհիւ:

Սիրելի Հայրենակիցներ, չէ՞ք խորհիր, թէ այսօր Հայ ազգը ի՞ր մէջ կը սնուցանէ Թեմեկի մը ծնունդը: Անիկա հակառակ ի՞ր համամարդկային սկզբունքներուն, հակառակ ազգային զաղափարին և ազգային նուիրականութիւններու հետ ի՞ր խզումին, հակառակ կրօնքի, հաւատքի ու եկեղեղեցիի հանգէպ ի՞ր տուած հրաժեշտին, իրերու սինիք մէկ հոգեբանութեամբը ազգ պատուի դրոշին և ազգ. շահերու պաշտպանութեան կեղծապարիշտ դիմակաւորումով անիկա ատելութիւն, կոիւ, արիւն կը սերմանէ ազգին ծոցին մէջ, և երբ խօսքին ու տրամաբանութեան փաստը կը դիմակազերծէ զինքը, ան՝ կոիւի ձեռնոցը կը նետէ ազգին երեսին, փայտը իբր փայտ գործածելով: Այն բոլոր յետնամիտ զրպարտութիւնները, այն բոլոր սօփայակրութիւնները, այն բոլոր սպառնական ժեսդերը, որոնցմով ի՞ր գոյութիւնը կ'ուզէ ապացուցանել անունով ազատական ու գործքով բռնապետական հայ Թէմէնի Ռինկը, ուրիշ նպատակ չ'ունի: Եթէ ոչ աւելի՛ շեշտել, աւելի՛ արմատացընել ժողովուրդին մէջ արգէն իսկ գոյութիւն ունեցող վախի զգացումը, և անտարբերութեան նախաբերութիւնը: Որովհետև անոնք շատ լաւ գի-

անն, թէ իրենց միանալու անտրամադիր, ու միևնոյն ժամանակ անտարբերութեան յօժարակամ ժողովուրդ մը իրենց գործակիցն է:

Y. D'Autriac իբ La France d'Aujourd'hui գործին մէջ, խօսելով Ֆրանսական ազգին աեւակաւնութեանը մասին, կը գրէ. Եթէ մեր կառավարութիւնը կրցաւ կանգուն մնալ 40 տարիներէ ի վեր, անիկա այս վիճակը կը պատրի ո՛չ թէ իր սեփական յոյժին, այլ՝ իր քշնամիներուն զարուրեանը: Այսօրուան մեր մէջ գոյութիւն ունեցող ազգային բուստայեանութեան հերոսները այս միեւնոյն բառերով պիտի խօսէին մեզի, եթէ անկեղծ ըլլալու քաջութիւնն ունենային անոնք: Բայց պէտք չիկայ անոնց դիմել, գիտնալու համար, թէ ի՛նչ է անոնց ոյժ կարծուածին գաղտնիքը: Պատերազմներու մէջ շատ անգամ բերդեր կ'առնուին, ո՛չ թէ յարձակողներուն զօրութեանը պատճառով, այլ բերդապահ գինուորներու, բերդապահ քաղաքացիներու վատութեան պատճառով: Եւ այդ ապիկարութեան նըշանը ամեն բանէ առաջ ու ամեն բանէ վեր անտարբերութիւնն է, և բարձր նպատակները, ազնիւ գաղափարները արժեցընող, մէկ խօսքով պարկեշտ քաղաքացիներու յատուկ պարտականութիւնները գործնականացնող կամքի պակասը: Արթնցուցէք այդ կամքը, ու աւելի հանդարտ խիղճ մը պիտի ունենաք, ու պիտի պիտի չզգամ ինկիլինկիտ հսկել Տայու զաղեմի ուսիկաններէ, անձերնիդ պաշտպանելու նամար: Հաւաքական գործակցութեան մէջ, ամեն պարկեշտ քաղաքացի իր դրացիին գաղտնի ոստիկանը, պահապանը կ'ըլլայ, և փոխադարձ օժանդակութեան, փոխադարձ օգնութեան սկըզբունքէն զատ զօրաւոր ոյժ չ'կայ անհատական և հաւաքական շահերն ու կեանքերը պաշտպանելու համար:

Ես կը հաւատամ, թէ ժողովուրդի ամեն մէկ անհաւ, ո՛րչափ ալ աննշան համարուած ըլլայ, ոյժի մասնիկ մըն է մարդկային մեծ գործաւորութեան մէջ։ Բայց միեւնոյն ժամանակ կը հաւատամ, թէ ոյժերը ոյժ ըլլալէ կը գաղբին, և անօգուտ կը գտնան, մինչև որ անոնք չ'միանան օրէնքի մը տակ, և որոշ ուղղութեամբ մը իրենց օգտակարութեանը չ'ձգտին։ Շոգին ոյժ մըն էր, նախապատմական դարերէ ի վեր, բայց շոգին օգտակար եղաւ միայն այն օրէն, երբ ձէյմա Հոււայթ մը զայն մասնաւոր օրէնքներու հպատակեցուց, և գործածեց շոգեշարժ մեքենաներու համար։ Ելեքտրակոնուսթիւնը ոյժ մըն էր, ու անիկայ ընդունայն վազեց ջրվէժներէն, հովերէն, առանց օգուտի, մինչև որ Էտիսըն մը զայն կազմող մասնիկները ենթարկեց կազմակերպական օրէնքներու և զանոնք անցուց բարակ թիւերու մէջէն։ Բնութեան մէջ միեւնոյն օրէնքն է որ կ'իշխէ ոյժի բոլոր մասնիկներուն, անոնցմէ օգտակարութիւն մը ծընցընելու համար։ Մենք այսօր ազգային ոյժերու անհաշուելի վտանու մը, սպառումը կ'ապրինք կա՛մ մեր սխալ ուղղութիւններով և կամ մեր մահացու անտարբերութեամբը։ Եւ չենք կրցած դեռ այդ ոյժերուն ընդունարանը կտմ ճիկնամօն պատրաստել։

Մենք չենք կրնար պահանջել, որ ամեն մարդ միեւնոյն կերպով ըմբռնէ, խորհի, զգայ, ապրի, ու որդեգրէ կեանքի բոլոր մանրամասնութիւնները։ Այս տեսակ պահանջում մը պիտի չկրնար համեմատիլ մարդկային յառաջդիմական պահանջներուն։ Ատիկա պիտի նշանակէր կեանքի բանաստեղծութիւնը ջնջել, և մարդկութիւնը ենթարկել յետոսմուղ տախակութեան մը։ Մարդկութեան յառաջ-

դիմութեան ապացոյցներէն մին գաղափարի ու ըմբռնումի զանազանութիւնն է, անոնք են մարդկային կազմակերպութեան ամենէն գեղեցիկ զարդերն ու գրուագները: Վայրենութեան մէջ այդ զարգացմանքները գոյութիւն չ'ունէին, և մարդկութեան ամեն մէկ անհատ միւսին ճշգրիտ մէկ հայելացումն էր միայն: Բայց Սիրելի Հայրենակիցնե՛ր, ազգերու գոյութիւնը ապահովող հիմ մը պէտք է, և այդ հիման վրայ պէտք է մեկտեղին համոզումները, ազգերուն գոյութիւնը արժեցընող հոգի մը պէտք է, և անհրաժեշտ է որ այդ հոգին միեւնոյն ուժգնութեամբ, միեւնոյն զարկերով տրոփէ ազգային ամեն մէկ անհատի կուրծքին տակ: Եւ կործնիմ, առանց այլեւայլի մենք կրնանք ամենքնիս ալ բոց ճակատով յայտարարել, թէ Հայ ազգին գոյութեան իբրեւ հիմ, Հայ ազգին իբրեւ հոգի Ռամկավարութիւնը միայն ունինք: Անոր պատմական անցեալը, իր բոլոր տխուր ու երջանիկ, ժպտուն ու արիւնոտ դրուագներով, անոր ցեղային հոգեբանութիւնը զայդ կը հաստատեն: Եւ ասիկա այնքա՛ն ճշմարիտ է, որ ո՛չ միայն հայ Ռամկավարները յանուն Ռամկավարութեան կը խօսին Հայ ժողովուրդին, այլ և ընկերվարականները, այլ և անիշխանականները, այլ և նոյն իսկ ազատական բռնապետները: Եւ այս վերջինները այդ անունով կը խօսին, ոչ թէ Ռամկավարութեան բարեկամ ըլլալնուն համար, այլ պարզապէս հայ ժողովուրդին ռամկավարական համոզումները, մտումները շտհագործելու համար:

Այս շահագործումին ապացոյցը ներքին է բոբոլորովին, և կը բղխի Ռամկավարութեան սկզբունքներուն և անոնց գործերուն միջև գոյութիւնունեղող աչքատու և վրան բաց հակադրութենէն: Արդ՝

1. Ռամկավարութեան առաջին նպատակն է ազատութիւնը սեղծել, եւ անհասկերու զայ անձնական անկախութեան առողջ զարգացումը եւ զիսակցութիւնը: — Եթէ ազատութիւնը իր մէջ ընդգրկէ անհատներու իւրաքանչիւրին քմահաճ ազատութիւնը, կը հեռանայ իր կոչումէն, և կ'ըլլայ անսահման ապերասանութիւն մը, որուն համար կը դադրին ուրիշներու անձնական իրաւունքները, անձնական արժանապատուութիւնը գոյութիւն ունենալէ: Ռամկավարութեան ձեռք բերել ուզած մարդավայել ազատութենէն անջատ ազատութիւն մըն է ազատական կոչուած բռնապետներու գործադրած կեղծ ազատութիւնը. որ մամուլի և խօսքի իրաւունքը կը բռնաբարէ ընդդիմադիրներուն համար, և ինքզինքին իրաւունք կուտայ միեւնոյն մամուլը և խօսքը պատշաճից սահմաններէն անդին տանելու, զրպարտութիւններով, քսութիւններով, սեւեռքի գձուձ գրութեայ: Անոնց քով կը պակսի բոլորովին հակառակորդին հանդէպ ցոյց տրուելիք յարգանքի վեհանձնութիւնը: Ռամկավար միտք մը ազատութիւնը կը դաւանի իր ողջամիտ, լայն և անկաշկանդ ըմբռնումովը, կը յարգէ ու կը պաշտպանէ զանի, որովհետև կը հաւատայ, թէ ազատութիւնը անհրաժեշտ գետինն է մարդկայնական զարգացումներուն:

2. Ռամկավարութիւնը կ'ընդունի և կը բարոզէ Օրեկֆին յարգանքը, եւ անոր հանդէպ շածուելիք պահպանակներ: — Օրեկքը ազգի մը անգամներուն և կամ հայրենիքի մը քաղաքացիներուն ընդհանուր կամքին արտայայտութիւնն է: Կրնան օրէնքները թերի ըլլալ, կրնան օրէնքները տիրող տարրի մը մեծամասնութեան ձայնով այնպէս մը շինուած ըլլալ, որ կերպով մը լիտասն փոքրամասնութեան

մը ընկերական ձգտումներուն: Իրաց այս կացութիւնը մեզի իրաւունք չի տար բռնաբարելու Օրէնքը և մանաւանդ օրէնքին սգին: Կը բողոքենք, առանց անոնց դէմ ընդվզելու, և կ'աշխատինք անոնց արդարութիւնը կատարելագործել: Օրէնքին դէմ ցոյց արուած արհամարհանքը զօրութիւն մը չէ օրէնքը կտրենալ կատարելագործելու համար: Օրէնքի հանդէպ պատկառանք չ'ունեցող ժողովուրդները ինչալու դատապարտուած են: Դժբախտաբար ազատական բռնապետութիւնը Օրէնքին հանդէպ իր ցոյց տուած արհամարհանքովն է, որ կ'ուզէ իր գոյութիւնը ապացուցանել, և ամբոխավարութեան իր գործելակերպով միաժամ ժողովուրդին մէջէն Օրէնքին յարգանքը կը խլէ: Անցեալները, ձուլիւ Հառի յիշատակին նուիրուած հանդէսի մը մէջ սեւամորթ փաստաբան մը, Մր. Լուիզ, սեւամորթներու դատին պաշտպանութիւնը ընկելով, կ'ըսէր ներկաներուն. Հասարակաց կառծիք շինեցեք, եւ հասարակաց կառծիք օրեկն պիտի շինեք: Մեր ամբոխավարները հասարակաց կտրծիք մը կերտել կը ջանան, ոչ թէ օրէնք շինելու, այլ արդէն իսկ գոյութիւն ունեցող Օրէնքը ջնջելու համար: Անդունդ մը կայ սեւամորթ փաստաբանին, և հայ ամբոխավարին մտածումին ու գործելակերպին միջև:

3. Ռամկավարութիւնը ազատութեան և օրէնքի յարգանքին սկզբունքները պաշտպանել ուզելով, նպատակ ունի ժողովուրդները դէպի յառաջօրինութիւն, կամ զարգացում, դեպի անհասական եւ ազգային կասարեղագործում տանիլ: — Ան՝ իր այս սրբազան նպատակին հասնելու համար չի մոռնար յարգել անցեալը, և անոր փրկարար դասերը. կը յենու իր ազգային աւանդութիւններուն. ոտսուծ

չ'ընդունիր, և բարեչըջութեան խաղաղ օրէնքը կ'որդեգրէ: Ազատական-բոնապետները բարեչըջութեան օրէնքը կ'արհամարհեն, գէթ գործնականին մէջ, կր խզուին ազգային ամեն աւանդութենէ. կ'արհամարհեն սրբութիւնները, կը պայքարին կրօնական ողջմտութեան դէմ իսկ, և մեր հաւաքական շինուածքը կը փորձեն դնել ոչ թէ հաստատուն հիմերու վրայ, այլ՝ աւազներու վրայ: Քաղաքացիական յիմարութեան մը գործաւորութիւնն է, որ կը փորձուի մեր մէջ: Սիրելի Հայրենակիցներ, դուք իբրև արեւելքի ժողովուրդ և և իբրև Հայաստանի գաւառացիներ, զիտէք, թէ երբ տունի մը հիմերը կը դնէք, անոր անկիւնաքարին վրայ գառնուկի մը կամ քաղաղի մը արիւնը կը թափէք, այն միամիտ համոզումով, թէ այդ թափուած արիւնը խորհրդաւոր ոյժ մը պիտի ըլլայ մեր շինուածքին ամրութեանը: Հայ ազգին հիմերը բերաւոր մարտիրոսներու մաքուր և կենդանացրնող արիւններով օծուած են: Այդ արիւնով լմուած շաղախը անփշրելի ոյժ մը ունի իր մէջ, և ազգային դաւաճանութիւն մը պիտի ըլլար ազգային վերաշինութեան գործը այդ զօրաւոր հիմէն գուրս, աւազի, օղի վրայ զետեղել ուզելը: Ահա թէ ինչո՛ւ Ռամկավարութիւնը իբրև սրբազան մասունք կը յարգէ Հայ անցեալը և Հայ աւանդութիւնները, և զանոնք կ'ուղէ գործածել իր ձեռք բերելիք ազգային զարգացումին իբրև անկիւնաքարը, իբրև հիմունքը:

4 Ռամկավարութիւնը կը սիրէ խաղաղութիւնըն ու անդորրութիւնը, որովհետև կը հաւատայ, թէ անիկա է միակ նպաստաւոր գետինը փափաքուած զարգացումներն ու յառաջդիմութիւնները արդիւնաբերելու համար: Եւ խաղաղութեան հա-

մար իր ունեցած սէրն է, որ զինքը կը հարկադրէ իր գործուէութեան շրջանին մէջ, հրաժեշտ տալ նոյն իսկ յեղափոխութեան փայփայտած գաղափարին, այնչափ ատեն որ կարելի է: Ռամկավարութիւնը կը ջանայ կարելին ընել երկարելու համար այդ խաղաղութեան շրջանը, հոն կարենալ իր մեծագոյն ծրագիրը, նկարագրի, բարոյականի, ողջմըտութեան, կամքի մեծութեան ծրագիրը յաջողցընելու համար: Իր խաղաղութեան նպատակին կը հետամտի այն համոզումով, թէ պարկեշտ քաղաքացիներու համար ողջամիա յատուցիմութեան խօսքը աւելի զօրաւոր է քան անգիտակից սօփան: Օրէ օր կրկնուած տխուր փորձերը ցոյց կուտան, թէ կեղծ ազատականները բարեկամ չեն խաղաղութեան: Յեղափոխութեան կը հաւատան անոնք, և որ աւելի է ընկերական բարեկարգութեան ճամբուն վրայ խիզախ ոստումներու կը հաւատան անոնք: Մենք ալ կը հաւատանք Յեղափոխութեան, բաւական է որ այդ յեղափոխութիւնը ծնունդն ըլլայ ժողովուրդի մը հոգեբանական պէտքերուն, և հրամայողական բոպէի մը: Բայց մարդիկ, որ Թուրքիոյ Սահմանադրութեան առջև չեկաչ, Եւրոպայի առջև միջազգային ընկերվարական, Թուրքիոյ Հայ ժողովուրդին առջև յեղափոխական, և Ամերիկայի ասիերուն վրայ, Հայ ինֆլաւարութեան մը քարոզիչներն ու աւետարներնրը կ'ըլլան: մենք կը չուարինք գիտնալու համար, թէ իրենց այս չորս դիմակներէն որին տակ անկեղծ պիտի նկատենք զիրենք: Անկեղծութեան պակասը յոռի ախտանիշ մըն է ունէ անձի վրայ, ըլլայ անհատ, թէ ընկերութիւն:

5. Ռամկավարութիւնը կ'ընդունի Հայրենիքնուրու գոյութիւնը, եւ կը յարգէ ու կը սիրէ անոնց

նուիրականութիւնը: — Հայրենիքներու գոյութիւնը սերտօրէն կապուած է ընտանիքներու գոյութեան, և ընտանիքներու գոյութիւնը՝ անհատներու գոյութեան: Անհատը ա՛րքան գոյութիւն ունենայ գոյութիւն պիտի ունենայ թէ՛ տունը և թէ՛ ընտանիքը: Հայրենիքը ընտանիքին և առնին ընդլայնումն է: Ինչպէս անհատի մը գոյութիւնը չի վնասեր ուրիշ անհատի մը, ընտանիքի մը գոյութիւնը ուրիշ ընտանիքի մը, Ռամկավարութիւնը կ'ընդունի, թէ հայրենիքի մը գոյութիւնը չի վնասեր ուրիշ հայրենիքներու: Հայրենիքնեւր՝ տիեզերքին, և ազգերը մարդկութեան բաղկացուցիչ մասերն են, ուր և կազմակերպուած անդամներն են տիեզերական մարդկութեան: Եւ Ռամկավարութիւնը իր այս որոշ ըմբռնումով երբ կը սիրէ Հայրենիքի Հողին, միեւնոյն ժամանակ կ'այխատի այդ հողին վրայ բուսած թրթուրները մաքրել, և տիեզերական համերայխութիւնը ստեղծել, ազգերու և հայրենիքներու միջև գոյութիւն ունեցող կապերը ամրապնդելով, և ընաջնջելով մարդկութեան եղբայրակցութեան վնասող ուղղութիւնները: Ռամկավարութիւնը, սակայն, իր այս համամարդկային գաղափարներէն չ'անդամալուծուիր, և երբ կը տեսնէ իր ազգին ու Հայրենիքին դէմ սպառնացող վտանգը, կը ցցուի՝ իր ազգային արժանապատւութեամբ, կռուելու իր ազգին ու Հայրենիքին դատին համար, և նախամեծար կը սեպէ անձնասպան ըլլալ Սամսիական երկրորդ պատերազմի հերոսներէն Բրուտուլոս Պապիոսի նման, քան, թէ ի գին առերեւոյթ խաղաղութեան մը իր ազգն ու հայրենիքը Հռովմայեցիներուն յանձնելու ամօթը:

Եւ այս ամենը Ռամկավարութիւնը իբր իր քաղաքական դաւանանքը կ'ընդունի, Սիրելի Հայ-

րենակիցնհ'ր, որովհետև կը հաւատայ թէ ազատութիւնը պաշտպանելով, Օրէնքը յարգելով, դէպի յառաջդիմութիւն երթալով, և ազգի ու Հայրենիքի գաղափարը պաշտելով, ծառայած կ'ըլլայ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ: Արդարութենէ մեծ ու բարձր սկզբունքը չ'կայ բնաւ: Ան է որ կը պաշտուի նոյն իսկ Աստուծոյ մէջ: Եւ եթէ երբեք պատմութիւնը քորքորենք, անոր արիւնոտ է՞ երէն պիտի տեսնենք, թէ արդարութեան նպատակին, և անոր ճամբուն վրայ թափուած արիւններուն չափ արիւն չէ՞ թափուած ուրիշ ոչ մէկ գաղափարի ու դատի համար: Եւ արիւններ տակաւին պիտի թափուին ալ: Որովհետև պահանջուած արդարութեան հազիւ մէկ անշան մասը միայն իրագործուած է աշխարհի մէջ: Արդարութեան տաճարին անկիւնաքա՞րը միայն դրուած է այնչափ մարտիրոսութիւններէ և այսչափ դարերէ ի վեր, և մարդկութեան պարտքն է այդ աստուածային տաճարին շինութեան գործաւորները դառնալ:

Սիրելի Հայրենակիցներ, մենք ամենքնիս ալ իբրև մարդ և իբրև ազգի մը անհատներ արդարութեան մեր գործաւորի հանգամանքովը պարտաւոր ենք կատարել մեր քաղաքացիական պարտականութիւնը: Մի գոհանաք ձեր բարի տրամադրութիւններով, ձեր փափաքներով, ձեր բարեացակամութիւններով: Այդ ամենը ամուլ պիտի մնան, և նոյն իսկ վնասակար, եթէ զանոնք արգիւնագործող կամքը, զոհողութեան յօժարութիւնը չ'մըշակէք ձեր մէջ: Մի՛ յոռնաք, թէ դուք ազգային հաւաքական ոյժի մը մասնիկներն էք. միաձուլեցէք այդ ոյժի մասնիկները, և ջանացէք ձեր վրայ ծանրացող, զձեզ սպանող անտարբերութիւնները թօթափել: Ամերիկան, ուր կ'ապրինք, կամքի հը-

բաշագործ սյժին, ընկերակցութեան ոգիին որբանն է: Ինքզինքնիդ պատուաստեցէք այդ կամքէն, այդ ոգիէն:

Ազգերու ազատագրութեան պատմութեան մէջ ցեղերու անձնաւորութիւնը խորհրդանշող առարկաներ կան, որոնք իբր սրբազան մասունք իրենց մոգութիւնը պիտի ունենան ապագայ սերունդներու համար: Կրօնասէր Ամերիկայի շատ վերանցական, ու յաճախ շատ չոր վարդապետականութեանը կից, Հայրենասէր, ու նոյն իսկ Հայրենամու Ամերիկա մը կայ: Այս Ամերիկան հակառակ իր տաճարներու մասունքներէ զերծ չոր ու ցամաք դատարկութեան, ունի իր ազգային մասունքը, այն Independence-Bell կոչուած Ջանգակը. զոր 1780ի անկախութեան պատերազմին, Ուոշինկթըն հնչեցուց Միացեալ Նահանգաց ազատութեան նուիրուած առաջին զինուորները զէնքի տակ կանչելու համար: Ասկէ քանի մը տարի առաջ դպրոցական հանդէսի մը առթիւ, այդ Ջանգակը զինուորներու հսկողութեամբ 28 ժամ աշակերտներու տըրամադրութեան տակ գրուեցաւ: Լրագիրները կը պատմեն, թէ եռամիսն է ազդասէր բարեպաշտութեամբ մը, աշակերտները այդ զանգակը պըտըացուցին թափորով, և 50.000 աշակերտ անոր տակէն անցաւ, իր ազգասիրութեան, իր նուիրումին իր զոհարհրութեան ուխտը կատարելով:

Ապագայ պարկեշտ քաղաքացիներու հանդիսաւոր ուխտն էր այդ անցքը:

Սիրելի Հայրենակիցներս. մեր ազգային սաճնաժամին մէջ, ուր հաւաքական կամքի, հաւաքական զոհարհրութեան, հաւաքական բարեկամեցողութիւններու, հաւաքական պարտականութիւններու կատարման պէտքը կայ ամեն ժամանակէ

աւելի, Ուխրաւորի մը պէ՛ս անցէք ազգային գը-  
րոշին տակէն, զոր Ռամկավարութիւնը պատուա-  
ւորապէս Հայ քաղաքացիներու զխուն վերև կը  
բարձացընէ: Անիկա Ուոշինկթընի Զանգակին մար  
տաշունչ գանգիւնը չ'ունի. անոր նշանաբանը  
սկզբունք մըն է, ազատութեան, օրէնքի, յատաջ-  
ղիմութեան, Հայրենիքի և արդարութեան խաղաղ  
սկզբունքը:

Ճշմարիտ և պարկեշտ քաղաքացիներու համա-  
գործակցութեան սկզբունքն է անիկա. Հայու-  
թեան դարաւոր սկզբունքը, որ ձեզի կը հրաւի-  
րէ Սիբիզիկն Նունիշնի դերին, ներկայ և ապագայ  
Թէմէնի Ռինկերու հանգէպ: Քալեցէք զործելու,  
զոհողութեան յօժար կամքով մը գօտեպնդուած,  
դէպի Ազգը, որուն զաւակներն էք:

Հայ ազգը իր հարազատ ու չ'վատասեռած զա-  
ւակներուն պէտք ունի:



## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ՝

### ԱԶԳԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԻՆ ՄԷՋ

Սիրելի Հայրենկիցներ,

Պարտականութիւն մը ունիմ նախ ձեզի հա-  
տուցանելու, որ է շնորհակալ ըլլալ այն պործնա-  
կան համակրութեան մասին, զոր ցոյց կուտաք այս  
երեկոյ, ինձ ըսելու համար ձեր ներկայութեամբը  
պատուելով այս ժողովը: Սոյն շնորհակալութենէս  
վերջ կ'անցնիմ բուն նիւթին, զոր ինձի մատա-  
կարարեցին ինձմէ առաջ խօսող յարգելի բանա-  
խօսները:

Քիչ մը առաջ Բրոֆ. Անանիկեան իր խօսքը  
ձեզի ուղղելով կրտէր. քաղաքացիներ ու ազգային  
կեանքին մոտեցիք: Այդ մերձեցումը կարենալ ի-  
րացընելու համար ամեն բանէ առաջ պէտք է հե-  
տաքրքրութիւն ունենաք: Ես չեմ կրնար հաւատալ,  
թէ մարդիկ կրնան ունէ բանի, ունէ զազափարի,  
ունէ համոզումի ու սկզբունքի մօտենալ, առանց  
կանխաւ անով հետաքրքրուելու: Հետաքրքրութիւ-  
նը ամեն սեփ գործերու, ամեն յառաջդիմութիւն-  
ներու և գիւտերու սկզբնաւորութիւնն է եղած:  
Հետաքրքրութիւնը մարդկային մտքին մէկ կարո-  
ղութիւնն է: Ամենէն բեղմնաւորը թերեւս, եթէ  
անիկա լաւ կերպով մշակուի մարդերու մէջ: Ես  
չեմ ուզեր խօսիլ այն միւս հետաքրքրութեան մա-

ԾԱՆՕԹ.— Խօսուած՝ Նիւ Պրիորնի մէջ 19 փետր. 1911 ին:

սին, որ փոխրոցի ու ցած մարտերու աչքառու թե-  
րութիւնը կը կազմէ: Վատաբար հետաքրքիր մար-  
դերու համար իմաստասէր մը ըսած է, թէ անոնց  
հետաքրքրութիւնը չկրնալով ինքն իրեն գրադիչ,  
պէտք ունի ուրիշներուն գրադումներովը զբօսնուի:  
Այդ հետաքրքրութիւնը՝ ծաղրելի է մանր գործերու  
վերաբերմամբ, և զգուելի՝ կարեւոր գործերու մէջ:

Յաւալի է ըսել, թէ այդ փոքրոգութեան քը-  
սու հետաքրքրութիւնը գոյութիւն ունի նոյն իսկ  
ազատ երկիրներու մէջ՝ ապրող, ու ինքզինքնին  
իրր մտաւորականներ մեզի ծախել ու զող անհատ-  
ներու մէջ ալ: Այս պարագան ցոյց կուտայ, թէ  
անոնք ա՛յնքան ազտոտուած են ներքնապէս, և  
ա՛յնքան ստորին է իրենց նկարագիրը, որ Ազատու-  
թիւնը՝ հակառակ իր ամենակարողութեան, չէ կրը-  
ցած անոնց բարքերու և ապականուած նկարագիր-  
ներու խլիպաներուն վրայ մաքուր գիծ մը դրոշմել:  
Եթէ անոնք քաջութիւնը ունենային ինքզինքնին  
դիտելու, և իրենց անձերով հետաքրքրուելու, եթէ  
անոնք թիչ մը ազնիւ ըլլալու կարողութեան տիրա-  
նային, վստահ եղէք, բարեկամներս, թէ անոնք իսկ  
պիտի ամչնային իրենց նկարագրի վարնոցութենէն,  
իրենց հոգիներու զզուելիութենէն: Ես իմ կողմէս  
այդպիսիներուն ազնիւ ըլլալու կարողութիւնը կը  
մաղթեմ, և կը շարունակեմ իմ նիւթս:

Հետաքրքրութիւնը իր ծնունդքի զանազան  
փուլերուն մէջ կը ցուցնէ, թէ ինքը բնական մէկ  
պահանջն է մարդկային միտքին: Որչափ առեն ըն-  
կերական և հաւաքական կեանք մը կայ աշխարհի  
մէջ, մարդիկ միշտ հարկադրուած պիտի ըլլան հե-  
տաքրքրուելու: Նոյն իսկ անոնք, որ ընկերութիւն-  
ներէ կը փախչին, և կ'երթան անապատներու մէջ  
միանձնական կեանքը ապրելու, անոնք անգամ չեն  
կրնար իրենց մէջ սպաննել հետաքրքրութեան պա-

հանջը կը պատմուի, թէ Թերայիտի անապատին մէջ ալեւոր ճգնաւոր մը, որ երկար տարիներէ ի վեր խզուած էր աշխարհէն, ու մարկային յարաբերութիւններէ, ամեն անգամ հետաքրքրութիւնը կունենար նոր եկող ճգնաւորի մը հարցընելու, թէ աշխարհի մէջ տակաւին տուներ կը շինուին, թէ տակաւին կ'աւուսնանա՞ն մարդիկ, թէ տակաւին կը գործեն: — Մարդիկ պիտի ամուսնանան, պիտի վերաշինեն, ու պիտի գործեն, որովհետեւ աշխարհ անապատական միանձութիւններու բոյն մը չէ, անիկա վառարան մըն է գործունէութեան, շինութեան, չարժումի և վերածնութեան:

Ազնիւ միաքերը պիտի հետաքրքրուին շարունակ, ոչ թէ մարդկային խօսքերը, գործերն ու կեանքերը խճճելու, քաջքշելու, այլ պիտի հետաքրքուին մասնակցելու համար լաւագոյն դորձերու, յառաջգիմական ուղղութիւններու, ճարտարարուեստական, ընկերային ու քաղաքական սկզբունքներու գործնականացումին: Անհատներու կենսագրութեամբ չըզրազիր հետաքրքրութիւնը, այլ գործերու կենսագրութեամբ: Ամեն լաւագոյն սէր, ամին մարգասէր բաղձանք հետաքրքրութեան պատուին է եղած: Մարդիկ մէկ անգամէն սիրելու, փորձելու չեն սկսած: Աստիճանական կեանքի մը նշանները զգալի են ամեն ճամբու վրայ: Ամեն հաստատառն և տեւական գործ այդ աստիճանական յատաշօքմութեամբ իրագործուած է: Վերելակող սանդուխը իր աստիճանները ունի կեանքի ամեն ճամբու վրայ: Ուսումներով վերելակել ուզողները խորտակուելու, իյնալու պատահականութիւնը ունին իրենց առջև, մինչ աստիճանաբար բարձրացողները ամեն քայլափոխի հաստատառն սանդուխա՞նստ մը կրնան գտնել իրենց ուրքը գնելու համար:

Այսպէս է նաև գաղափարներու և համոզումներու ճամբուն մէջ: Որպէտզի մարդիկ կարենան համոզում մը, գաղափար մը, սկզբունք մը սիրել, ամեն բանէ առաջ պէտք է հետաքրքրուած ըլլան անով: Հետաքրքրութիւնը ծանօթութիւն կը ծնի, ծանօթութիւնը՝ սէր, սէրը՝ գործ, և գործը՝ անձնութիւն: Անոնք որ այս ճամբով չեն քալեր, չեն կրնար ո՛չ տեւական սէր ունենալ, ո՛չ հաստատուն գործ, և ո՛չ ալ երաշխաւորուած անձնութիւն: Սէրն ալ, գործն ալ, անձնութիւնն ալ արդիւնք են այն ծանօթութեան, զոր հետաքրքրութիւնը կուտայ մեզի, և մեր մէջ հաւատք մը, դաւանանք մը կըստեղծէ: Ուր որ հետաքրքրութիւն չկայ, ծանօթութիւն չկայ, ուր ծանօթութիւն չկայ հոն սէր չկայ, ուր որ սէր չկայ, հաւատք չկայ, և գործն ու անձնութիւնը հաւատքին զաւակներն են, ու կը մնան: Աշխատեցէք մարդկային միաքին ազնուական կարողութիւնը եղող այդ հետաքրքրութիւնը արթնցնել ձեր մէջ, եթէ կուզէք սիրել ձեր մարդկայնական, ընկերային և քաղաքական կոշումը:

Բայց հետաքրքրութիւնը կ'արթննայ հոն, ուր դիտելու պատենութիւն, և տեսնելու ազատութիւն կայ: Բռնապետական վիճակը և գերութեան կեանքը հետաքրքրուելու պատենութենէն և ազատութենէն կը զրկեն մեզի, և կը տանին մեզի փոքրողիներու հետաքրքրութեանը: Առէ՛ք, օրինակի համար, հայ մանուկ մը, և բաղդատեցէք Ամերիկացի աղու մը հետ: Հայ մանուկը բնադաւառի մէջ չըջապատուած պետական ու ծնողական կաշկանդումներէ, չըջապատուած գաղափարի, համոզումներու, ճարտարարուեստի ամուլութիւններէ, և ստորկացած՝ նախապաշարումներու, և հասարակաց ան-

միտ կարծիքի մը շղթաներուն տակ, չկրնար տեսնել ազնիւ բան մը, որով հետաքրքրութիւն կարենալ սիրելու համար դայն: Անիկա կը մնայ ու կը մեծնայ ստրուկ, նեղմիտ, անզգայացած՝ լաւագոյն մտածումներու և գեղեցիկ արտադրութիւններու հանդէպ: Ու ալ չենք զարմանար մենք, երբ հայ ցեղը կը տեսնենք զուրկ կարգ մը աչքառու կարողութիւններէ: Ստրկութիւնը, տունի մը մէջ ապրուած ըլլայ թէ բռնաւոր պետութեան մը մէջ, մարդէն կը գողնայ այն կարողութիւնները, որոնք զինքը ճշմարիտ մարդ մը շինելու կոչումը ունին: Հոս դուք պատեհութիւնը ունիք տեսնելու Ամերիկացի տղան: Հոս քաղաքակրթութիւնն ու ազատ քաղաքացիութիւնը տղան շրջապատեցին այն ամեն առարկաներով, վիճակներով, և կեանքերով, որոնք ամեն բանէ առաջ տղուն հետաքրքրութեանը կը խօսին: Տունը, թաղը, շուկան, գործարանը, դպրոցը, պարտէզը ամենքն ալ միեւնոյն ուղղութեամբ կը խօսին, կը թելադրեն, կը ներշնչեն տղուն: Տղոց խաղալիքները, դպրոցական առարկաները նշանաւոր գիւտերու, մեծ մեքենաներու, գեղարուեստի մանրանրկարներ են, որոնք տղուն մէջ կ'արթնցընեն հետաքրքրութիւնը, և շատ կանուխէն անոր կը ներշնչեն գեղեցկին սէրը, արուեստին հաւատքը և կորովի ու ձեռներէցութեան ոգին: Եւ երբ կը տեսնենք մենք ազատ ազգերու ազատ զաւակները, որոնք քաղաքակրթութեան և ճարտարարուեստի ամեն ճիւղերուն մէջ հսկայաքայլ կը յառաջդիմեն, ալ չենք զարմանար, որովհետև գիտենք, թէ անոնց սերմերը շատ կանուխէն, տղայութեան միջոցին, հետաքրքրութեան միջոցով կը սերմանուին անոնց սրտին ու միտքին մէջ:

Ազատութեան մէջ հետաքրքրութեան միջոցով սերմանուած նկարագիր մը բարոյականի և պատասխանատուութեան հիմունքը կը զնէ մարդուս մէջ: Գերիները և ստրուկները չեն կրնար ո՛չ բարայական ունենալ և ո՛չ այ պատասխանատուութեան զգացում: Իրաւ, ստոյգ է, թէ օրկնկներն ու սովորութիւնները. յոնաւորներն ու դահիճները անգօր են մարդկութիւնը կազմող ներքին ազատութեան դիմ, բայց առոնց ամենքն ալ կարողութիւնը ունին մեր մէջ մարիու հետաքրքրութիւնը, և ջնջելու զայն արծարծող, արթնցնող պատճառները, և այդ ջնջումն իսկ բաւական կըլլայ ամութեան դատապարտելու մեր ազատութիւնը և անոր իրաւունքները: Հայ կեանքը այս իրողութեան մէկ ճշմարիտ յայտնութիւնը եղաւ: Ահա թէ ինչու համար անհատներն ու ազգերը շարունակ կը ջանան իրենց քաղաքացիական ազատութեանը տիրանալու:

Բայց, Սիրելի Հայրենակիցներ, եթէ ամեն մարդու մէջ հաւասարապէս գոյութիւն ունի ազատութեան սէրը, մարդիկ հաւասարապէս մի և՛նոյն կերպով չեն գործածեր իրենց տրուած ազատութիւնը: Աւետարանին մէջ առած մը կայ, որ այս պարագան կը հաստատէ: Հարուստ մը իր գերիներէն մէկուն տասը տաղանդ, միւսին հինգ տաղանդ, և երրորդին մէկ տաղանդ կը յանձնէ, որպէս զի գործածեն իրենց պատասխանատուութեան տակ, և ինքը օտար երկիր կը մեկնի: Առաջին անգամն էր, որ պատասխանատուութեան կեանք մը պիտի ապրէին այդ մարդիկը իրենց տրուած ազատութեանը մէջ, և իրենց վստահուած միջոցնելով: Առաջին երկուքը պատուաւորապէս կը գործածեն իրենց ազատութիւնը և իրենց յանձնուած գու-

մարը կը շահեցընեն. իսկ երրորդը՝ որուն մէջ ազատութիւնը բարոյա՛յան մը չէ կրցած ըլլալ, կը կը թաղէ լրեն յանձնուած տաղանդը, և անձկանօք իր տիրոջը կըսպասէ: Անիկա իր այդ անպատասխանատու և անբարոյական վիճակով կընար յանձնուած այդ գումարը վատնել ցոփութիւններու մէջ, և ասիկա ամենէն հեշտ ու ամենէն դիւրին բանը պիտի ըլլար իրեն համար, եթէ գերիներուն վրայ ճնշող մեծ և հուժկու զսպանակը, վԱճը զինքը չ'արգիլէր: Սոյն պատիկ և շինիչ առակը յաւիտենական պատմութիւնն է մարդկութեան:

Ամեն անգամ որ տեւական թէ ժամանակաւոր ազատութիւն մը տրուի անհասներուն ու ազգերուն, ազատ մարդկութիւնը հաշիւ մը պիտի պահանջէ անոնցմէ, ցեսնելու հաւար թէ անհասներն ու ազգերը ի՛նչպէս գործածեցին իրենց տրուած ազատութիւնը, թէ ի՛նչպէս ապրեցան իրենց պատասխանատուութեան եւ բարոյականի կեանքը:

Երեւ կ'աւարտէի Ամերիկեան կեանքի վրայ գրուած հատոր մը: Հմուտ բրոքէտորը իր հոյակապ գիրքը կ'աւարտէր, սա խորհրդածութիւններով:

Ժամանակն եկած է, որ բոլոր ազատ ժողովուրդները հաշիւ տան, թէ ի՛նչ բանի գործածեցին իրենց ազատութիւնը:

Ասիկա ժամանակը պիտի ըլլայ այն հայրենասիրութեան, որ ինքզինքը պատաստ կը զգայ խաղաղութեան պատրաստութիւններուն, եւ պատրաստի վստահներուն: Ժամանակը չէ արհամարհելու կամ մոռնալու անցեալը, այլ ընդհակառակն, յիշելու այն ազնիւ ոգին, որ 18<sup>65</sup>ին արիւնազանգ Ամերիկան վերակազմեց, եւ 1870ի փոշիէն Ֆրանսան բարձրացուց փառաւոր կերպով:

Սիրելի Հայրենակիցներ, երբ ազատ մարդկու-

քիւնը ժամանակը եկած կը համարի հաշիւ պահանջել ազատ ազգերէն. թէ ինչ բանի գործածեցին իրենց ազատութիւնը, կը կարծեմ թէ մեզի համար ալ եկած է ժամանակը. որպէսզի մենք ալ այդ մի և նոյն հարցումը ուղղենք Հայ ժողովուրդին. թէ ի՛նչ քանի գործածեց երկու շարունակ ազատութիւնը թուրքիոյ մէջ, եւ շասնեւհինգ-սուն շարունակ ազատութիւնը Ամերիկայի մէջ: Եւ այս հարցումը ընելու ժամանակը եկած է, քանի որ ընկերական պարկեշտութիւնը և քաղաքացիական պատասխանատուութեան հարցերը սպաննացող վտանգի մը երեւոյթը առնուլ սկսած են մեր մէջ. Պէտք է գիտակցինք մեր վիճակին, որոյ և անաչառ հաշուեալ տուութեամբ մը, ուրկէ ներկան և ապագան կատուած է:

Քիչ մը առաջ Տիար Անանիկեան մեզի կըսէր, թէ ինքը կը նախընտրէ փոխանակ ապագայով մը տահոգուելու. «Իր քիթին տակ եղածները միայն տեսնել»: Անշուշտ յարգելի բանախօսը մեզի ըսել չ'ուղեց, թէ ինք ներկան անջատ վիճակով մը կըմբռնէ: Բնաւ ժամանակը անբաժանելի է, ո՛չ մէկ ձեռք կրնայ խորտակել անցեալի, ներկայի և ապագայի իրարու հետ ունեցած կապերը: Ժամանակը սերունդ մըն է, եւ ամեն սերունդ, նախ զաւակ մըն է, ու յետոյ հայր մը: Եւ երբ բրոֆէսորը ներկան միայն հաշիւի կ'առնու, պատճառը այն է, որ ինքն ալ ներկային մէջ կը ջեւեկ երկի զաւակը, եւ վաղուան հայրը: Աբբա Քլէյն երբ կը գրէ ՎԱՂՈՒՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՆ գիրքը, կըսէ. պէտք է երկուան Ամերիկային հարցընէ վաղուան Ամերիկային զաղնիքները. — Ներկան երկի զաղնիքներուն, հատուումներուն, հաւաստիքին, ժառանգորդն է, եւ վաղուան իրականութիւններուն, վաղուան կեանքի:

ֆին կտակողը: Ուշադիր եւ քափանցող միտք մը կր-  
նայ այսօրին մեջ կարդալ երկկի բոլոր յուզումները,  
տրոփումները, յոյզերը, առափնևութիւնները, հոգե-  
կան եւ բարոյական հիւանդութիւնները: Հօր մը կամ  
մօր մը ապրած կեանքը ճանչնալու համար անհրա-  
ժեշտ չէ՛ անպատճառ տեսնել զիրենք. առէք անոնց  
զաւակը, և ժառանգականօրէն անոր իւրացուցած  
յատկութիւնները, վատ, յոռի, պարկեշտ բնաւո-  
րութեան գիծերը, քիչ մը ընդլայնեցէք, և ձեր  
աչքին առջև պիտի ունենաք անոր ծնողքը: Զաւա-  
կը հայեցի մըն է, որ իր ծնողքին ապրած կեանքը  
եւ հոգեբանութիւնը կը ցուցնէ իր մեջ: Մի եւ նոյնն  
է նաեւ ժամանակիին հանար: Այսօրուան առաւելու-  
թիւններուն ու քերութիւններուն մեծ մասը երկկի  
ժառանգութիւններն են. եւ վաղը այսօրինէն տար-  
բեր բան մը պիտի չ'ծնի, երբ մեկն ճշգրիտ հաշուե-  
փննութեամբ մը մեր սխալները չ'ուղղենք, մեր վնաս-  
ները դարմանելու չ'աշխատենք, եւ առողջ հետաքր-  
տութեամբ մը չըդիտենք ընկերական եւ անհասակական  
կեանքի շաւաղոյն կողմերը, երբ այդ հետաքրտու-  
թեամբ մարդկայնական աւելի պայծառ, աւելի վճիռ  
եւ մաքուր հորիզոններու չ'ձգենք, եւ վաղուան  
պատասխանատու եւ բարոյիկ իրականութեան հայ-  
տերը, կամ ըսենք սեղծողները ըզրայ չ'աշխատենք:

Հարցընենք, ուրեմն, թէ ի՞նչ բանի գործածե-  
ցինք մեզի տրուած ազատութիւնը:  
Սիրելի Հայրենակիցներ, ես իմ Եւրոպայի և  
Ամերիկայի ճանապարհորդութիւններուս միջոցին,  
երբ մօտէն տեսնելու և քննելու պատենդութիւնը  
սունեցայ հայ գաղթային կեանքը, ներեցէք, որ  
ըսեմ, թէ ճշմարիտ և խորունկ պատրանք մը ու-  
նեցայ: Եւ ես չափազանց ուրախ եմ, տեսակէտով  
մը, այդ պատրանքը ունենալուս, բանի որ այդ

երջանիկ հիասթափումս զրդապատճառը պիտի ըլ-  
լայ այսուհետեւ իմ գատողութիւններուս հիմնաւո-  
րութեանրց Ես պիտի փափաքէի, որ Թուրքիոյ  
հայ ժողովուրդն ալ ինծի հետ ունենար այդ միեւ-  
նոյն պատրանքը, որ ազգային տեսակէտով փըր-  
կարար շրջանի մը սկզբնաւորութիւնը պիտի ըլ-  
լար: Ամբողջ հայութեան հետ, որ Հայրենիքի հո-  
գին կապուած կը մնայ, մենք հրք կը տեսնէինք  
Ամերիկայէն գարձող մէկը, որ փողկապ մը ունէր,  
իւր օձիքին շուրջ, և փանրաշուն մը, իւր երբեմնի շաշ-  
վատին տեղ, և որ 10—15 տարիներ ապրած էր Ամե-  
րիկայի հողին վրայ, կամ Եւրոպայի գիւրկը, մենք զին-  
քը իմաստուն մը, դիտնական մը, գարգացած մը  
կամ կարծէինք: Կը խորհէինք, թէ ամեն անոնք, որ  
ազատութեան և քաղաքակիրթ ժողովուրդներու  
մէջ կ'ապրին, առաւել կամ նուազ չափով կը հա-  
ղորդակցին մտաւորական և բարոյական շարժում-  
ներու, կ'առինքնեն, կ'իւրացրնեն անոնցմէ մաս  
մը, և չափով մը աւելի պարկեշտ ու աւելի իմաս-  
տուն կը դառնան, քան այն հասարակ մահկանա-  
ցուները, որոնք գերութեան լուծին տակ ապրե-  
լով, զրկուած էին այն երջանկաբեր հետաքրքրու-  
թենէն, որ մարդերը գէպի պատասխանատուու-  
թեան կեանքը կ'առաջնորդէ: Անոր համար է, որ  
Թուրքիոյ հայութիւնը անպայման այդ գարձուորնե-  
րը դրաւ իւր հասարակական գործերու զլուխը,  
յանոնք քաղաքական, հոգաբարձու, վարժապետ, նոյն  
իսկ Ազգ. Երեսփոխան շինելու յիմարութիւնը ու-  
նեցաւ: Եւ այսպէսով շատ մը աննկարագիր գա-  
զարկապորտներ ազգային առաջնորդողի, ազգային  
լիւրի գիրքին տիրացան: Այդ ամեն գիրքերը այդ-  
պիսիներուն արուելէ առաջ սա հարցը պէտք էր  
դրուէր մէջտեղ. թէ ասկէ առաջ ինչ բանի գործ-  
ծեցիր ազատութիւնը:

Դուք, Սիրելի Հայրենակիցներ, այս հարցու-  
մին հանգէպ կը լռէք ու պատասխան չէք ասու-  
Բայց ձեր լռութիւնը զիս չի շփոթեցընէր. խօսուն  
իրողութիւններ կան, որոնք անայտօրեկ կը պար-  
զեն կացութիւնը, եւ մեզի կը պատեն, քե դուք ի՛նչ  
բանի գործածեցիք ձեր ազատութիւնը: Առնենք այդ  
իրողութիւններէն մէկ քանին:

Արտասահմանի մէջ ազատութիւն մը կար, և  
մեր երկրին մէջ բռնապետութիւն մը: Արտասահ-  
մանի ազատութիւնը իր չարաչար գործածումով  
աւելի վնասեց մեր պատասխանատու դիրքին: Երբ  
արտասահման կուտակեցական վէճերու ամենաող-  
տատ երեւոյթները կը ցուցադրէր, երկիրը՝ գէթ  
բռնապետական օտսկումներէն ահաբեկած, այդ  
վտասահուով խմորումէն անմասն կը մնար: Եթէ  
արիւնոս բռնապետութիւնը հազիւ կրցաւ քանի մը  
ԽԱՅԻՒՆներ սեղծել պարկեշտ ժողովուրդներուն մէջ,  
գեշ գործածուած ազատութիւնը բամբասող, չարա-  
խօս, զրպարօխչ եւ հայհոյող անհասներու ստուար  
քիւ մը տուաւ ազգին: Եթէ բռնապետութիւնը  
անտարբերութիւնով մը շեշտեց մարած զգացումնե-  
րը, գէշ գործածուած ազատութիւնը զգացումները  
թունաւորեց, և բարքերու այլասեռումը, մինչև  
ապերասանութեւն տարաւ: Բռնապետութեան մէջ  
հայ ցեղը իր անհատական և ազգային բարոյականը  
իբրև զարհուր նուիրական կտակը, ճրարեց իր հո-  
գիին խորը, մինչ գէշ գործածուած ազատութիւնը  
զաղթական հայուն մէջ սպաննեց Ֆիզիքական, բա-  
րոյական և հոգեկան առողջութիւնները: Եթէ վեր-  
ջապէս, գաւառի հայութիւնը, իր մեծամասնու-  
թեանը մէջ չ'ունեցաւ պատերազմի վսակներուն  
դիմագրաւող հայրենասիրութիւն մը, արտասահ-  
մանի հայութիւնն ալ իր կողմէն չունեցաւ խաղա-

դուքեան պարտականութիւններուն նուիրուած հայ-  
րենասիրութիւնը: Եւ անօրինակ վատասեռում,  
արտասահմանի հայութիւնը մոռցաւ ու արհամար-  
հեց իր անցեալը, փոքրամիտ մարդերու հետաքրք-  
րութիւնը մշակելով, չկրցաւ գնահատել երէկի  
ոգին, որ ինչպէս ըսուեցաւ 1861-85ի հարաւի և  
հիւսիսի պատերազմին ատեն Ամերիկան վերակազ-  
մեց, և 1870ի պատերազմէն վերջ Պրանսոսն բարձ-  
րացուց իր պարտութեան փոշիներէն:

Սիրելի Հայրենակիցներ, այս պարագաները  
ցոյց կուտան թէ արտասահմանի, և մասնաւորա-  
պէս Ամերիկայի հայութիւնը չէ՛ կրցած օգտուիլ  
իր ապրած միջավայրէն, ո՛չ միայն անոր հա-  
մար, որ պէտք եղած պատրաստութիւնը չունէր  
օգտուելու, այլ և անոր համար, որ իր նկարա-  
գիրը ազնուացընող և իր բարոյականը շինող բա-  
ներու հանդէպ պէտք եղած հետաքրքրութիւնը  
չ'ունեցաւ: Եւ ազատութեան սխալ գործածու-  
թիւնով մը, ո՛չ միայն իր առողջ կազմը բեռնա-  
ւորեց կարգ մը հիւանդութիւններով, այլ և կոր-  
սընցուց իր ցեղային պարկեշտութիւնը: Եթէ գոնէ  
քանքարաթաքոյց ծառային պէս, բան մը չլահած  
ատեննիդ գէթ ձեզի տրուածն ալ պահած ըլլայիք,  
ատիկա ալ առաւելութիւն մը պիտի նկատուէր  
ձեզի համար. որովհետև, ձեր կեանքին մէջ ազա-  
տութեան շնորհիւ վախի զգացումը փարատած  
ատեն պարկեշտ մարդերու համոզումը չէր հիմ-  
նուած:

Սիրելի Հայրենակիցներ, եթէ դուք պատեհու-  
թիւնը ունեցած ըլլայիք. ձեր տունի, խանութի,  
գործարանի, փողոցի և զաւկներու կեանքէն դուրս  
ելնելու, և մտնելու Ամերիկան շարժող ընկերա-  
կան խնդիրներու հոսանքին մէջ, եթէ հետաքրք-

րուէիք Ամերիկացիներու ընտանեկան, դպրոցական, ազգային և ընկերային կեանքով, կը հաւատամ, թէ ձեր այժմու եղածէն շուրջովին տարբեր վիճակ մը պիտի ապրէիք ձեր կեանքին մէջ: Աւա՛ղ, այդ հետաքրքրութիւնը չ'ունեցաք. . . :

Ամերիկայի մէջ չորս վիճակ նշմարեցի ես, և որոնց պէտք ունէինք մ'նք, և որոնցմէ բացարյակակապէս զուրկ կը գտնուի Ամերիկահայը:

Այդ վիճակներէն առաջինն է ՕՐԻՆԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ոգին — Հակառակ որ Ամերիկացին ամենէն ազատ ժողովուրդը նկատուած է, անիկա տմին բանէ առաջ աշխատած է իր ազատութիւնը դնել օրէնքին հնազանդութեանը մէջ: Վախով չ'հնազանդիր օրէնքին, այլ համոզումով: Անիկա գիտէ ստրկութիւնը զանազանել օրէնքի հնազանդութենէն: Պատերու վրայ, հասարակաց պարտէզներու մէջ, ժողովուրդին ուղղուած պատուէրներ կան, և պարկեշտ քաղաքացիները ինքզինքնին պարտաւոր կրգգան, հնազանդելու տրուած հրահանգներուն, թէ իսկ հսկողութիւն մը չգտնուի իրենց վրայ: Օրհնի հպասակութեան այս շարժումը խորունկ համոզումի մը, հաւաստի մը, նկատագրի մը արդիւնքն է: Հոս հասարակաց առաջ կարծիք մը կայ, որ կը դատապարտէ անկարգապահ, անհնազանդ և հասարակաց հանդէպ յարգանք չ'ունեցող քաղաքացին: Սոյն ընկերական վիճակին մօտ բիւրէք Ամերիկահայ կեանքը, և բաղդատեցէք պա՛մը, գիտնալու համար. թէ իր ազատութեան օրերուն, ո՛րքան բան կրցաւ իւրացնել օրինապահութեան և հնազանդութեան ոգիէն: Ոչինչ, Հայուն մեջ շեշտուած քերութիւններուն ամենամեծը անօրինութիւնը, անհնազանդութիւնը եղած է: Ամերիկահայը գերութենէն ու ըս-

արկութենէն փախած, երբ հոս է եկեր, այնպէս է կարծեր, թէ ազատութիւնը իր օրէնքը, իր հնազանդութեան պատշաճութիւնները չ'ունի: Ընդհակառակըն ազատութիւնը ամենամեծ զերութիւնն է: Բռնապետութեան մէջ մարդիկ զահիճներու բժշակուցի, անոնց կամայականութիւններուն գերքին են. իսկ ազատութեան մէջ՝ օրէնքին: Բռնապետութեան շինած գերութիւնը զարհուրելի է, որովհետեւ մարդու մէջ կըսպաննէ պատասխանատուութեան և բարոյականի ոգին, մինչ ազատութեան գերութիւնը քաղաքացիին կուսայ մարդու մեծութիւնը շինող արժանապատուութիւնը, մարդու բարոյական արժանիքին չափանիշը եղող պատասխանատուութեան ոգին: Բռնապետութեան գերքին գործիք մըն է: մերթ լաւագոյն բաներու համար, բայց յաճախ գործիք մը վատութիւն և ապականութիւն արտադրելու: Մինչ ազատութեան գերքին մարդ մըն է բառին ընդարձակ առումովը: Հոսմի գերքինըն շատ քիչեր գրական արտադրութիւններով պանծացուցին ինքզինքնին, մինչ բիւրաւորներ արիւնի, աւերումի, քանդումի գործին մղուեցան մեքենարար, ակայտյօրէն: Ազատութեան գերքինը, սակայն, Բրիտանիանութեան մէջ հիմունքը դրին քսաներորդ դարու քաղաքակրթութեան: Օրէնք մը կայ, որ պատճառ կը դնէ ազատ կամեցողութեան առջեւ, եւ մեկ կըսենք թէ կամեցողութիւնը բարի է, երբ պատճառ կ'աւարուած է: Ազատութեան պատուէրն է այդ: Ես սակե դուրս ազատութիւն չեմ կրնար ըմբռնել: Հայրենակիցներ, Ամերիկան արդարն է ազատ կամեցողութեամբ ընդգրկուած պարտանանաչութեան, օրէնքի յարգանքի, և հընազանդութեան: Հետաքրքրուեցէք այդ կեանքին, և աշխատեցէք զայն իւրացընել ձեր և ձեր ազգին

փրկութեանը համար ի զուր չէ՛ որ ըսուած է.  
Թէ Օ՛հնՔին ՍէՐՉ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ է:

Ամերիկայի մէջ ապրուած երկրորդ սկզբունքը  
ԸնկերԱյծՈւԹԵԱՆ ՈԿԻՆ է: — Զկայ երկիր մը աշ-  
խարհի մէջ, որ այնքան ընդարձակ և մեծ առտի-  
ճանի մը վրայ իրականացուցած ըլլայ՝ Ամերիկայի  
չափ, ընկերակցութեան ոգին: Ամերիկացին հաւա-  
սացած է թէ ամեն յառաջդիմութիւն կրնայ հիմ-  
նուիլ միայն այդ փրկարար ոգիին վրայ: Ոյժերու  
ցըւումը վատնում մըն է, որ սնանկութեան կ'ա-  
ռաջնորդէ ազգերը: Հետաքրքրուեցէք գիտնալու  
համար Ամերիկեան գիտական, վիճակագրական և  
ճարտարարուեստական զարգացումներուն պատ-  
ճառը և պիտի տեսնէք, թէ Ամերիկեան հողի վը-  
րայ հրաշագործող ոյժը ծնած է ընկերակցութեան  
ոգիէն: Հազարաւոր ընկերութիւններ կան հոս,  
հարիւր հազար, նոյն իսկ միլիոնաւոր անդամներով,  
որոնց իւրաքանչիւրը իր ընտրած մասնագիտու-  
թեան շրջանակին մէջ գաշնակցած՝ մասնաճիւղերու  
հետ, հսկայաքայլ յառաջ կը տանին, Պետու-  
թիւնէն անկախ, բարեգործութիւնը, դաստիարա-  
կութիւնը, ճարտարարուեստը, բարոյականի գոր-  
ծը, առողջութիւնը, և ամեն ինչ որ կապ ունի  
ազգին ճակատագրին հետ: Օժանդակութիւն մըն է,  
որ ովկիանոսէն փրթած, դէպի ցամաք կը խուժէ  
քաղաքացիներու կեանքը մաքրագործելու, ար-  
գիւնաւորելու, ազնուացընելու, վիշտերը ամոքե-  
լով, տգիտութիւնը փարատելով, հիւանդութիւն-  
ներու դէմ մաքառելով: Նոյն իսկ սրտոքները կը  
մատակարարուին ընկերակցութիւններով, համա-  
գործակցութիւններով: Եւ այդ նպատակներուն  
իրագործումին համար ընկերակցութիւնները մի-  
լիառներ կը ծախսեն և այդ միլիոնները պար-

կեչտ քաղաքացիներու քսակն է. որ կը տրամադրէ: Ամերիկայի մէջ գործող ընկերակցութեան ոգիին դոյութիւնը ապացոյց մըն է, թէ ճշմարիտ անհասպաշտութիւնը (individualisme), որ շեշտուած, բարացուցական մէկ ուրիշ կողմն է Ամերիկացիին, երբեք անհաս չի ընկերակցութեան ոգիին (Collectiivisme) հետ: Սիրելի Հայրենակիցներ, եթէ դուք հետաքրքրուած ըլլայիք Ամերիկեան կեանքի այս կողմով, ես վստահ եմ, թէ պիտի հարկադրուէիք զայն սիրել, զայն սիրով պիտի գործադրէիք, և գործադրութեան ճամբուն վրայ զոհողութիւններէ պիտի չընկրկէիք: Ընդհակառակն հոս, Ամերիկա. հայը շատ վարնոց տեսակէն անհատապաշտութեան մը տիրացեր է, իր ազատութեան մասին կազմած սխալ համոզումով: Ես չկրցի գտնել գոնէ գիւղական հայ համայնք մը Ամերիկայի հողին վըրայ, որ ինքն իր մէջ ապրեցուցած ըլլար ընկերակցութեան ոգին: Ընդհակառակն Եւր որ գացի, տեսայ պզտիկ հատուածներ անձնական ու ընկերական ատելութիւններով, գձձութիւններով, հակառակութիւններով խմորուած: Անպատկառ հակառակասիրութիւն մը, լկտի և լրբենի զրպարտողութիւն մը շատերու նկարագիրը կը կազմէ. զիրար վնասելու, զիրար անուանարկելու կեանք մը կայ հոգիներուն մէջ, և ասի ընկերական ասպականութեան փաստ մըն է: Եթէ զիրար չէք սիրիր, գաղափարը սիրեցէք, եթէ ատելութիւն ունիք մէկզմէկու հետ—ինչ որ ամօթ մըն է պարզապէս— սկզբունքի մը շուրջ համախմբուեցէք, բաւական է որ որդեգրուած սկզբունքը մարդկայնական ըլլայ, և շինարար, և համախառնեցէք թարեգործական, կրթական, ճարտարարուեստական ընկերակցութիւններու զրոյին տակ: Երե կուզե՛ք, որ ազատութիւնը ձեզ պատշտի,

գիտցե՛ք անով զգեա՛ս մը շինել ձեզի, ձեր բորոսած մեղկութիւնը հագուեցրնելու համար, եւ պարկեշտ մտրդու նկարագրով, պատասխանատու անհասի պատուաւոր դիրքով ձեր մէջը ապրեցուցե՛ք ընկերակցութեան ոգին, որ կուսակցութիւններէ բարձր է, եւ իր ներշնչումները կը ծծէ եղբայրական համագործակցութեան, պատուաբեր համերաշխութեան հատկութիւններէն: Հետաքրքրուեցէ՛ք Ամերիկեան կեանքին այս կողմով, և զանի իւրացընելու աշխատեցէ՛ք:

Ամերիկայի մէջ ապրուած երբորդ սկզբունքն է ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒԳԻՆ. — Ամերիկա կրօնական հաւատաւիքներու գերազանց երկիրն է եղած իր կաղմակերպութեան առաջին օրէն ի վեր: Ամերիկայի գաղթականութեան առաջին ոահվիրաններուն մէջ եթէ կային ցանցառ թուով անանուն մարդեր, մաւթ անցեալով դատարկապորտներ, զոր հին աշխարհը արտաքսած էր իրմէն, այդ ոահվիրաններուն մեծագոյն մասը կը կազմէին մաքուր հոգիները, որոնք իրենց ճնշուած խղճին ու հալածուած կրօնական համոզումներուն գործադրութեանը համար ազատ գետին մը փնտռեցին: Անոնց մէջն էին Քուէյքըրներու, Փիւրթթէններու, Մեթոտիսդներու բարի ներկայացուցիչները: Ու այսօր Ամերիկայի բոլոր ուսումնասիրող միտքերը, անխտիր կը խոստովանին, թէ մեծութեանց ճամբուն մէջ Ամերիկեան ինչքան բան կը պարտի՝ Ատլանտեանի ափերուն վրայ սնուցուած կրօնական ոգիին: Ամերիկեան իր ամբողջութեան մէջ կրօնական երկիր մըն է, դիտցէ՛ք ասիկա. և 85—90 միլիոն ժողովուրդին մէջ իրապէս ԱՆԿՐՕՆ մարդեր շատ քիչ կը գտնուին թերեւս: Անոնցմէ մեծագոյն մասը դաւանանքի մը, եկեղեցիի մը կը պատկանին, և եկեղեցիի մը չպատկանող Ամերիկացիներն անգամ

տակաւին ինքզինքնին ղուրկ չեն նկատեր կրօնական ոգիէ: Այդ սօին իրենց ազգային ողնածուծը կը կազմէ: Եւ այդ սօին է, որ կ'արտացոլայ իրենց ընկերական, կրթական և բարեգործական բոլոր իրայայտնութիւններուն մէջ: Չէք կրնար երբեք երեւակայել մէկը, որ դաւանանքի մը պատկանի, և որ զոնէ կիրակի օրը եկեղեցի չ'երթայ: Անոնց եկեղեցիները, զոր տեսայ, իրական սրբարաններ են, սրուն խաղաղ. անշշուկ և պատկառելի մըթնոյորտին տակ, հոգիները կը ներշնչուին, կ'աղօթեն, կը մտամփոփուին, և հոգեկան ներոյժ բափոփանքով մը կը մեկնին անկէ աւելի կազգութուած, աւելի մխիթարուած. Ամերիկայի մէջ ազատութիւնը գործածուած չէ կրօնական զգացումը սպաննելու համար, այլ գործածուած է զայն զօրացնելու համար Իռլանդի Ireland արքեպիսկոպոսին քաշած հեռագրով կըսէր. այս երջանիկ երկրին մէջ, որ մերն է, ազատութիւնն ու կրօնը երկու բնական դաշնակիցներ են, եւ ձեռք ձեռքի տուած դիպի առաջ կը փաչեն:

Սիրելի Հայրենակիցներ, ի՛նչքան բան կըրցաք շահիլ, ձեր հետ բերած աւանդական կրօնասիրութեանը մէջ, Ամերիկեան կրօնական ոգիէն: Ոչինչ. և որ աւելի գէշն է ձեր ունեցածն ալ կորսնցուցիք հոս: Եւ երբ կորսնցուցածնուդ հետ կը բազդատենք ձեր շահածները, կը տեսնենք որ Ամերիկայի մէջ աւելի տուժած էք քան շահած: Ո՛ւր է ձեր եկեղեցին, ո՛ւր է ձեր կրօնական կազմակերպութիւնը, ո՛ւր է ձեր քահանան, քարոզիչը, Հոգաբարձան: Ո՛ւր էք դուք ձեր աղօթքի ժամերուն — կա՛մ անկողնի մէջ, և կա՛մ սրնարանի մը անկիւնը: Ես չատ անգամ գփուարութիւն կը կրեմ Ամերիկացիներուն հասկըցնելու, թէ մեք Հայերո

Թուրք չենք, ինչպէս կուղին պնդենք. թէ, մենք անջատ ու քրիստոնեայ ազգ մըն ենք. և անոնք ինծի կը հարցնեն. ապա ուրեմն ո՛ւր է ձեր եկեղեցին, ձեր կրօնական պաշտամունքը: Եւ ես կը խորհիմ, թէ իրաւունք ունին մարդիկը մեզ թուրք նկատելու, երբ կը տեսնեն, որ իրենց եկեղեցի գացած պահուն, հայերը գինետուն մը կամ սրճարան մը կը մտնեն: Անոնք, որ իրենց հաւաաքին մէջ կը թուլնան, իրենց ձեռքով խորտակած կրլլան կեանքին զսպանակը: Եւ խորտակուած, ջախջախուած զսպանակով ժողովուրդ մըն է եղած Ամերիկայը: Հաւաստիք թուրքիւնը արժանապատեան սխտրացում յառաջ կը բերէ մարդու մեջ. եւ անոնք որ արժանապատեանութիւն չ'ունին, կրնան վատ տեսակէն ետանդ մը ըլլալ, բայց բնաւ չեն կրնար պատասխանատու եւ բարոյականի տէր մարդ մը դառնալ: Հետաքրքրեցէք, Սիրիլի Հայրենակիցներ, Ամերիկեան կրօնական ոգիով, և աշխատեցէք, որ այդ հետաքրքրութիւնը լայնօրէն, ուղղամտօրէն ունենաք, իբրեւ հաւատքի մը, կեանքի մը, զոհաբերութեան մը հիմունքը: Եւ կարելի եղածին չափ շուտով կաղմակերպուեցէք, և գործնականապէս ցոյց տուէք, թէ ձեր կեանքին յառաջամուկ ոյժը կրօնական ոգիէն քաղած էք:

Ամերիկայի մէջ ապրուած չորրորդ սկզբունքը ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ է: — Ամերիկան, որ ինքզինքը չէզոքացած ցոյց կուտայ միջազգային խնդիրներէ, ինքն իր մէջ ունի ներոյժ կեանք մը, որ իր ծայրայեղ հարեհասիրութեամբը կը բնորոշուի: Երէկ կարմրամորթ վայրենիներու երկիրն էր Ամերիկան: Արդի ժողովուրդին նախահայրերը պանդուխտներ, վտարանդիներ էին, մարդիկ, որոնք իրենց բնիկ հայրենիքին մէջ սխիթարութիւն մը

չէին վայելած: Այս հիւրընկալ ափը իր խորթ գաւաակներուն առջև բացաւ՝ դարերու ընթացքին մէջ, իր կուրծքն ու թեւերը, և իր ազգային շապիկի՛ն (1) մէջէն անցուց զժբախտութենէ, բռնութիւններէ բալոր հալածուածները, և զանոնք Ամերիկեան ազգայնականութեան զրոշմով մը մկրտեց: Անկախութեան և աղատութեան պատերազմի՛ միջոցին, Ամերիկայի բոլոր եկւոր գաւաակները հայրենասիրութեան միեւնոյն կրակով, հրահրուած, հսկայ մարմինի մը պէս, որուն մէջ բիւրաւոր սրտեր միեւնոյն տրոփումներով կը բաբախէին, ցցուեցան միահամուռ, և հայրենասէր տիկնոջ մը, **Գէսթի Ճոն Ռօսի** (Besty John Ross) ձեռքով շինուած անկախութեան աստղազարդ զրոշը պարզեցին ազատ Ամերիկայի գլխուն վրայ: Այդ օրերէն ի վեր ազատ Ամերիկան ձգտում մը միայն ունեցաւ, որ է խորապէս արևասացընել Հայրենասիրութիւնը իր ժողովուրդին մէջ: Տուները, գարոցները, մատենագարանները, հրապարակները, հատարակաց պարտէզները, քաղաքապետարանները, ուր որ ալ երթաք, գիւղերուն մէջ, թէ քաղաքներուն մէջ, պիտի գրանէք արձաններ, Ազատութեան դիւցազներուն նուիրում, վերտառութիւններ՝ հայրենասէրներու բերնէն քաղուած, և որոնց ամենքն ալ որոշապէս շիւնուած են Հայրենասիրութեան զգացումը զօրացընելու: Ամերիկացին ընդհանուր պատմութիւն չ'ըզբիտեր, ըլլայ հին թէ նոր, Ամերիկացին իր պատմութիւնը միայն գիտէ, և գիտէ դիւցազնակսն բոլոր դրուագներովը: Եւ եթէ կարելի ըլլար Ամերի-

1) Հայաստանի մէջ երբ ամուլ կին մը զաւակ մը որդեգրէ, զանի իր շագիկին մէջէն կ'անցընէ իբր թէ շագիկէն անցնողը իբր արդանգէն ծնած կըլլայ:

կեան հայրենասիրութիւնը խտացընել քանի մը բառերու մէջ. իր կրօնական բովանդակ միսթիկականութեամբ, պիտի կրնայինք սապէս ամփոփել. «Աստուած Ամերիկայի Աստուածն է, Ուշշիկըն իր միակ մարգարէն է, ու Ամերիկա՝ Աւետեաց երկիրն է» բոլոր ազգերուն համար, Աւետեաց երկիրը, որ կաթ և մեղր կը բղխէ Այսօրինակ ազգասիրութիւն մը, հայրենասիրութիւն մըն էր, որ Նաթան Հէյլի (Nathan Hale) ըսել տուաւ «կը ցաւիմ որ մեկ կեանք միայն ունիմ հայրենիքս համար զոհեալու»: Բայց գիտնանք թէ, հայրենիքին համար ապաքուած կեանք մը բիւրապատկուած կըլլայ զոհաբերութեան, անձնութեամբ ա՛յն չափով, որով կ'ապրի ու կը մեռնի մարդ, իր հայրենիքին ճակատը զարդարող ասաղերուն վրայ նստելը աւելցընելով:

Սիրելի Հայրենակիցներ, դուք ո՛րքան հետաքրքրուեցաք Ամերիկեան Հայրենասիրութեամբ: Ոչ, մէկ չափով, դիտեմ. Եւ ասոր համար է, որ չկրցիք ոչ Ամերիկեան ճշմարիտ սիրիզն ըլլալ, և ոչ ալ նուիրուիլ ձեր թշուառ ու տարաբախտ հայրենիքին մեծութեան, և մխիթարութեանը գործին: Ամերիկա ձեզի ձրի իրաւունք մը կուտար, իբր քաղաքացի օգտուելու իր ծոցին մէջ, և դուք չուզեցիք օգտուիլ այդ իրաւունքէն, ձեր մէջ Հայրենիքի մը սէրը ապրեցընելու համար: Եւ իրաւունքին տիրման չուզող անհատը շատ զժուարութեամբ կը հաշտուի իր պարտքերուն հետ, մանաւանդ անանկ ժամանակ մը և անանկ ազգի մը մէջ, ուր մարդիկ ապերասանօրէն իրաւախնդիր են եղած, առանց իրենց պարտականութիւններու մասին խորհելու: Հայրենասիրութիւնը բարեւոյ ազ-


նուստըստին կ'առաջնորդէ մարդս: Հաւաստ մըն է Հայրենասիրութիւնը, եւ ամենամեծն հաւաստը, բաւական է որ Հայրենասիրութեան զգացումը ներդաշնակուած ըլլայ մարդկութեան սիրոյ զգացումին հետ: Ամերիկայի Հայրենասիրութիւնը այդ գեանին վրայ հիմնուած է. անիկա հաւատքն է ազատ քաղաքացիներուն, և դաւանանքը քաղաքակիրթ մարդկութեան: Հետաքրքրուեցէք Ամերիկեան Հայրենասիրութեամբ, ձեր դիակներուն մէջ փոխադրեցէք անոր ոգին, եթէ կուզէք որ իբր մարդ, իբր ազգի մը ներկայացուցիչը, իբր հայրենիքի մը զաւակը ճանչցուիք և գնահատուիք:

Սիրելի Հայրենակիցներ, լեզուս քիչ մը խիստ է, և բառերս ոչ այնքան անուշ, երբ մեր ազգային կենսական թերութիւններու մասին կը խօսիմ ձեզի, և ձեզի ցոյց կուտամ ձեր կիսանքին հիւանդադին կողմերը: Ինձմէ առաջ յարգելի բանախօսներէն մին Հայուն առաւելութիւնները մասնանշեց: Այդ առաւելութիւններուն մօտ թերութիւններն ալ կան ու կը մնան: Երբ այդ զրական ու ժխտական յատկութիւնները, փառքի և ամօթի գումարումը նժարի թաթերուն վրայ կը դնենք, այն ատեն միայն կըզգանք մեր ազգային չարիքը, ներկային մէջ ազգային գոյութեան սպառնացող վտանգները: Այդ վտանգները մեզ չեն սոսկացընէր, սակայն, ընդհակառակն անոնք մեզի իրաւունք կուտան ըսելու. կը տեսնենք մեր վստակները, բայց անոնք մեզ չեն յուսահատողներ. մենք իտեղիւսներ ենք, հետեւաբար եւ դժգոհ՝ ներկային. մենք շառաւիտներ ենք, հետեւաբար եւ հաւաստ ունինք ապագային վրայ:

Բայց որպէս զի մեր հաւատքը իրականանայ, և մեր իտէալները մարմին առնեն, հետաքրքրուեցէք

լաւագոյն բաներով, հետաքրքրուեցէք քաղաքացի-  
ներու պարկեշտ ու ազնուական կեանքովը, և աշ-  
խատեցէք, որ ձեր հետաքրքրութիւնը՝ ծանօթու-  
թեան, ձեր ծանօթութիւնը՝ սիրոյ, ձեր սէրը հա-  
ւատքի, ձեր հաւատքը՝ դորձքի, և ձեր զորձը՝ անձ-  
նութրութեան տանի ձեզ:

Այդպէսով կրնաք ապրիլ, և ապրեցընել մեր  
Աղզն ու Հայրենիքը:





## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Ժողովուրդ մը, որ յառաջդիմութեան ճամբուն  
մէջ կը մտնէ, չկրնար հեռու մնալ կուսակցական  
կազմակերպութիւններէ: Կուսակցութիւնները, եթէ  
կարելի է այսպէս ըսել, ընկերական կեանքի շինա-  
մօներ են, ուրկէ մարդկային ուժերը կը բաժնուին  
ազգային ու ընկերական ուղղութիւններով, բարե-  
բաստիկ կամ չարաղէտ արդիւնքներ յառաջ բերելու  
համար:

Ամեն այժ բարիքի մը, կեանքի մը օժանդակը  
չէ: Այո երկրին մէջ դուք գիտէք, թէ եթէ էլեկ-  
տրականութիւնը կը գործածուի ճարտարարուեստի  
յառաջդիմութեան, քաղաքներու լուսաւորութեան,  
փոխադրութեանց գիւրութեան, և հիւանդութիւն-  
ներու բուժումին, այդ միջոցով շինարար ու ար-  
դիւնագործ ելեկտրականութեան հոսանք մը կայ, որ  
մինչեւ քաներուն խորը կը մտնէ, եւ հոն կը դառ-  
նայ մահապատճեններու կեանքը սպաննելու միջոց:  
Դուք պիտի սիրէիք վայելել էլեկտրականութեան  
արտադրած բարիքները իր բոլոր ձեւերուն մէջ,  
բայց ձենէ և ո՛չ մէկը այնչափ անմիտ պիտի ըլ-  
լար երթալ ինքզինքը տեղաւորելու համար այն  
մարդասպան աթոռին վրայ, որ նահանգային բան-  
տերու մէջ հաստատուած խորհրդաւոր սոսկումն է,  
ծանօթ էլեկտրիկ չէր (electric chair) անունով:

ԾԱՆՅԹ.— Ամփոփում Պրինտոքրի մէջ արտասանուած  
բանախօսութեան:

Եթէ, սակայն անհատական կեանքերու համար մարդիկ չափազանց անձնասէր են, և կարելի եղածին չափ կը խորշին ելեքտրիկ յեւերու հպուժէն, դժբախտաբար շատ չեն խղճանարուիր անոնք, ամբողջ ազգ. մը, անոր նուիրականութիւնները, անոր պատմական անցեալը, անոր ապագայի տենչանքը ելեկտրակ սն արողներու կապելէ: Ամեն ատեն չարամտութեան արդիւնք չէ ազգային սպանութեան ձեռնարկը. ո՛րչափ ազգասէր, ո՛րքան եռանդուն հայրենասէրներ կան, որոնք՝ կուրցած սխալ վարգապետութիւններով, ամենէն անկեղծ հաւատքը ունին իրենց գործելակերպին ազգայնական վերածնչութեանը: Այդպէս ըրին Հրեաները՝ որոնք գործիք դարձած քահանայապետական վատութիւններու, հովուական իշխանութիւնը բռնադատեցին անձեղին մաւալճիւր ստորադրելու: Այդպէս ըրին հայ կառնաւորները, որոնք կուսակցական պետերու կոյր գործիք դարձած, եղբայրասպանութեան գործաւորներ եղան:

Եռանդն ու պատգումը, իբրև ոյժի անսպառ աղբիւր, միայն բաւական չեն ազգի մը կեանքն ապահովելու համար: Քաղաքական եւ ընկերական ինաստութիւն մը անհրաժեշտ է փափաքուած նըպասակին հասնելու, փափաքուած արդիւնքը կարենալ ձեռք բերելու համար: Եւ ա՛ն այդ իմաստութիւնն էր, որ պակսեցաւ հայ կուսակցութիւններէ՝ մէկ մասին մէջ:

Առանց արեւսի ծառ չկայ, եւ առանց ակի՝ աղբիւր: Ամեն կեանք որ գոյութիւն ունի կրնայ իր գոյութիւնը պահպանել իր արմատովը. փրցուր ծառին արմատները, և ծառը պիտի չորնար. չորցուր աղբիւրին ակը, եթէ կրնաս, և աղբիւրը պիտի ցամքէր: Մարդերու կեանքին արմատը մայրու-

թեան և հայրութեան մէջն է. ջնջի մայրութիւնն ու հայրութիւնը, եւ սերունդը պիտի անհիսկու. Բառերու աւելի լայն իմաստով մը պիտի կրնանք ըսել, թէ ազգի մը պատմութիւնը, իր աւանդութիւնները, իր պատմական նուիրականութիւնները, իր ցեղային ընդունակութիւնները այդ ազգին արմատներն են, փրցուր այդ արմատները, իբրև աւելորդ բաներ մէկ կողմ դիր զանոնք, և ահա ազգը կորսնցուցած պիտի ըլլար իր գոյութեան ամենէն զօրաւոր ոյժը, և օրէ օր դէպի այլասեռութիւն առաջնորդուած, քիչ ժամանակէն ա՛լ պիտի կորսնցընէր իր առանձնայատուկ իր սեփական զարգացումին ոյժերը, և պիտի մտնէր մեռած ազգերու շարքին մէջ:

Հայ ժողովուրդը տարիներու երկար շրջանէ մը ի վեր հարուածուած Համիտեան բռնապետութեան կողմէն, իր ազգային ամենէն նուիրական զգացումներուն մէջ, մորթոտուած իր ամենէն առողջ ու խոստումնայից երիտասարտութեան սպանումով, ջլատուած՝ իր տնտեսական կեանքին մէջ, շարունակական ու սխտեւնաքիֆ քաշաններով, համեմատաբար խաղաղ կեանքի մը պէտքը կ'ըզգար ու կ'երազէր մեր կորսնցուցած ազգային ոյժերը վերագտնելու, և մեր վասնգուած ազգային գոյութիւնը ուպահովելու համար: Ձենէ ոմանք դեռ շատ պիտի էին, կարենալ այդ սոսկումի օրերուն տառապանքն զգալու համար: Ձենէ ոմանք այդ ջարդի օրերուն մղուած կոիւին զինուորներն եղան, և ապրեցան այն վիշտի, անձկութեան և արիւնքի օրերը, որոնք ստեղծուեցան հայութեան և հայ քրիստոնէութեան բնաջնջումին համար: Այդ սև օրերու հայածանքի առարկան Հայ կեանքն էր, Հայ Յկեղեցին, հայ պատիւը. հայ հարստութիւնը,

և Հայութիւնն ամբողջ, այնպէս որ ջարդերէ զերծ մնացին Արարկերի այն երեք հազար գիւղացիները, որոնք վայրկենի մը ակարութիւնն ունեցան ուրախալու իրենց ազգութիւնը և կրօնքը, և ընդունելու Իսլամութիւնը, իր յարակից նշաններով: Յսիմ պաշտօնավարութեանս միջոցին զգացի այն խորունկ վիշտը, զոր լացին այդ Իսլամացած, յետոյ դէպի Հայութիւն վերագարձող եղկելիները, որոնք աւելի նախամեծար կը սեպէին միւս նահատակներուն հետ ինչպէ մարտիրոսութեան դաշտին մէջ, քան թէ վայրկեանի մը տկարութեամբ ազարտել ինկողներուն արիւնը, և հայութեան զգացումը: Ուրացումը աւելի ահաւոր էր իրենց համար քան մարդասպան ետրադանին դաժան հարուածը: Յաւալի է որ այսօր այդ ազգային ուրացումի փորձերը կը կրկնուին, ո՛չ թէ բռնութեան ու ճնշումի տակ, այլ սխալ համոզումներու որդեգրումով մը, և այդ ուրացումը նուազ աղետաբեր պիտի չըլլար քան առաջինները, որոնք Հայ նահատակութեան պատմութեան սև ու նախատինքի էջերը բացին:

Ուրտխ եմ, որ Ամերիկահայ գաղթականութեան այս պղտի, հատուածին մէջ այսօր ինծի պատահութիւնը կը տրուի խօսելու Ակումբի մը հողմէն, որ իր կազմակերպական ծրագրով, և իր ուխտուածի զոհարարութեամբ նուիրուած է հայ կեանքին և անոր բնականոն ու իսկատիպ զարգացումին, և ատով իսկ իր վրայ կը բերէ զուտ հայկական կազմակերպութեան մը բնողորոշմը:

Ռամկավար սկզբունքները, որոնց կը ձգտին դէպի յառաջդիմութիւն քայլող ժողովուրդները, պատմութեան մէջ ո՛չ միեւնոյն ուղղութեամբ քալած են, և ո՛չ ալ միեւնոյն փրկարար արդիւնքները յառաջ բերած:

Ամերիկան, որ Ռամկավար երկրիներուն առաջինն է, իր անկախութեան օրհրէն ի վեր իր մէջ ապրեցուցած է երկու մեծ կուսակցութիւններ, որոնք ծանօթ են Հանրապետական և Ռամկավար անուաններով: Պէտք է ըսել, թէ այս երկրին մէջ Հանրապետականները ռամկավար են, և Ռամկավարները՝ հանրապետական: Որովհետև այս երկրը Հանրապետական Ռամկավարութեան որրանն է: Աւելին կայ, այսօրուան Ռամկավար կուսակցութիւնը՝ Ամերիկայի մէջ, մինչև 1832 թուականը հանրապետական էր, մինչդեռ այսօրուան հանրապետական կուսակցութիւնը մինչև 1860 թուականը կը ճանչցուէր Դաշնակցական և այլ անուններով: Սա ստոյգ է, թէ Ամերիկայի մէջ կուսակցական կազմակ'րպութիւնը արդիւնք է Ամերիկայի գաղթականութեան երկու որոշ մասերուն, որոնք ճարտարարուեստի և տնտեսական կեանքի մէջ իրարու հակառակ երկու որոշ ուղղութիւններու կը հետեւէին: Այդ երկու որոշ տիպարները կը կազմէին Հարաւի ծխախոտի մշակողները, որոնք պահպանողական եւ երկրագործ ազնուապետութիւնն էին, և Նիւ Ինկլէնտի ճարտարագործ վաճառականները, որոնք յառաջդիմական եւ վաճառականական ռամկավարութիւնն էին: (Իր կը կազմէին Այս երկու ըմբռնումներն էին, որ կը շեշտէին Հարաւի և Հիւսիսի տարբերութիւնը, և այս տարբերութիւնն էր որ ծնունդ առաւ զերիներու ազատագրութեան պատերազմին: Ամերիկեան այդ երկու կուսակցութիւնները ծնունդն էին տնտեսական ըմբռնումներու, և այնպէս ալ մնացին մինչև վերջ, հակառակ անուաներու փոփոխութեան, այնպէս որ այսօր ամերիկացին Ռիփըպլիքըն ըսելով կը հասկնայ այն կուսակցութիւնը, որ մաքսապաշտպան դրու-

թիւնը, ամերիկեան իշխանութեան կեդրոնացումը և կայսերական հզօրացումը կը ջատագովէ, մինչ Տէմօքրատ ըսելով կը հասկանայ այն կուսակցու-  
թիւնը, որ կը ջատագովէ ազակեղրոնացումը, առեւտուրի ազատ փոխանակութիւնը, եկամուտի տուրքը, և Սահմանադրութեան ոգիին ճշգրիտ գոր-  
ծադրութիւնը:

Հայ Ռամկավարութիւն մը բաղդատմամբ Ամե-  
րիկեանին, բոլորովին տարբեր կոչում մը ունի,  
տրուած ըլլալով այն տարբեր պայմանները, որոնց  
մէջ կը գտնուի մեր երկիրը, Օսմ. Հայրենիքը:  
Ամերիկեան Ռամկավարութիւնը տնտեսական—պե-  
տական նպատակ միայն ունի, որովհետև հոս Ամե-  
րիկեան ազգին գոյութեան սպառնացող ուէ վտանգ  
այլեւս կորուսած է իր նշանակութիւնը: Գաղթա-  
կանները ս'ըքան ալ ստուար ըլլան Ամերիկայի  
մէջ, անոնք ո'չ միայն վտանգ մը չեն Ամերիկեան  
ազգին, ընդհակառակն, անոնք ոյժի և ստուարա-  
ցումի նոր տարրերը կը բերեն—երբեմն ապակա-  
նութեան տարրեր ալ անշուշտ— այս ազգին հա-  
մար: Հայ Ռամկավարութիւնը աւելի լայն ու աւելի  
տաժանակիր պործ մը ունի կատարելիք մեր երկ-  
րին համար: Անիկա իր քաղաքական և ընկերական  
ծրագիրներէն դուրս, ունի նաև իր ազգային ծը-  
րագիրը, որով կը ձգտի ա'յնքան անմեղներու  
արիւնով մկրտուած Հայութեան Ազգային, ինք-  
նուրոյն կեանքը պահպանել ձուլումի քաղաքակա-  
նութեան դէմ, որ այսօր զուլումի քաղաքականու-  
թեան յաջորդած է Օսմ. Հայրենիքին մէջ: Հայու-  
րեան հասնող նպասակները փոխուած չեն հոն, այլ  
նպասակին հասնելու միջոցները: Որչափ ատեն որ  
նպատակը կը գործէ հայութեան հանդէպ, հայ կազմա-  
կերպութեան կոչումը և դերը պիտի չգաղթին գո-

յութիւն ունենայէ: Զուշուրի փաղափարսնութեան  
դիւ Յերսիոխութեան միջոցը եւ ձուշուրի փաղա-  
փարսնութեան դիւ Հայ Ռամկափարսութեան ո՛չ թե  
ազգայնաւոյ այլ ազգային գործելակերպը շարժման  
մէջ դրուած է: Եւ ազգային գոյութեան պահպանու-  
մի իր գործունէութեան ընկացքին Հ. Ս. Ռ.  
Կուսակցութիւնը պիտի ձգտի հայ ժողովուրդին  
մէջ ստեղծել դաւանական խնդիրներու վերաբեր-  
մամբ ներողամտութեան լայն ոգին, ազգին կրօնա-  
կան հատուածներէն ամբողջութիւն մը կազմելու  
համար:

Ան կը ձգտի իրարու մօտ բերել աշխատանք  
պարկիշ դասակարգը, պարսաճանաչ հարուստը, անձ-  
նուէր մտաւորականը եւ առաջինի փաղափսցիին, որով-  
հետեւ պատմութիւնէն վաւերացուած սա համոզումը  
ունի, թէ այս աշխարհը վարող միակ ոյժերը եղած  
են աշխատութիւն, հարստութիւն, տաղանդ եւ առա-  
ջինութիւն:

Միայն այդ ոյժերը իրարու մօտ բերելը բա-  
ւական պիտի չըլլար փափաքուած ազգային կեան-  
քը իրագործելու համար. պէտք է միեւնոյն ժամա-  
նակ այդ ոյժերը զօրացընել, զարգացընել: Այժօր  
մեր երկրին մէջ գտնուած այդ ոյժերը, ի՞նչ ո՛չ զըն-  
ջուած գո՛ւ է խորապէս քայքայուած են: Աշխա-  
տատմութիւնը ասպարէզ չունի, հարստութիւնը  
անպիտան մօտեցած է, մտաւորականութիւնը՝  
կորսնցողացած է իր ազնուականութիւնը կրթական  
գործին հանդէպ հանուած գոնարութիւններուն  
չնորհիւ, և առաքինութիւնը՝ պղտորուած իր ակէն,  
ապրուած ստրկութեան շնորհիւ: Ուրեմն, Հայ  
Ռամկափարսութիւնը կրկին առաջելութիւն ունի իր  
մէջ, այդ երկու առաջելութիւններն են շինելու եւ  
պահպանելու կոչումը:

Այդ շինութեան և պահպանութեան գործին համար կարծես ժամանակը հասած է, որ ամեն պարսկեշտ ու պարտաճանաչ Հայ գինուորացրուի, որովհետև Հայ ազգը իր զաւակներուն զարգացումովը, զոհարերութեան պատրաստակամութեամբը, անոնց գիտակից ու առաքինի պարտաճանաչութեամբը պիտի ապրի: Եւ երբ կը տեսնեմ Պրինութըրի պզտիկ գաղութին մէջ կազմուած Հ. Ս. Ռ. Ակումբը, իր անձնուէր ու պարկեշտ գործունէութեան նուիրուած, չեմ կրնար անտարբերութեամբ վերաբերուիլ իրենց հանգէպ: Այդ ակումբի անգամներէն շատեր գեռ երէկ մանուկ էին և ուսանողներ իմ ձեռքիս տակ, Արարկերի մէջ: Անոնք հազիւ նետուած կեանքին ասպարէզը՝ ահա կը գտնուին ազգային գործունէութեան մը գլուխը, նուիրուած ու գիտակից իրենց պարտականութիւններուն: Ակումբը թէպէտ Բենիամինը իր եղբայրներուն մէջ, վստահ եմ թէ Անդրանիկին շափ իր գնահատելի ծառայութիւնը պիտի ունենայ, իր անձնուիրութեան ոգիէն մղուած:

Կը վերջացնեմ խօսքս, անգամ մըն ալ յեշտելով սա իրողութրւնը, թէ պահպանեցեք ազգին արմատը, եւ այդ ազգին ծառը պտղաբերեցեք աշխատութեանը, որուն փարսած եք, հարստութեանը, որուն հասար կը զննիք, շաղանդով, որուն ծառաւը ունիք, եւ սերմերը ձեր մէջ, եւ առաջինութեանը, որուն ներշնչումովը կ'ապրիք, և աշխատեցէք ազգայնացնել այդ քառնակ ոյժերը: Ձեր երջանկութեան և Հայութեան մտաւորական, բարոյական ազնուացումին և ազատութեանը համար:

## ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հայրենակիցներ,

Առածը կ'ըսէ թէ «Լռելը ոսկի է»: Ժամանակներ կան, երբ լռելը ուրիշ մը պիտի նկատուէր: Այդ ժամանակին մէջ կ'ապրինք այս պահուստ և յնպէս որ եթէ հրաւիրուած ալ չ'ըլլայի, պիտի փաքէի խօսիլ ձեզի, հակառակ ինքզինքս յոգնած զգալու:

Արդէն ձեզի քանի մը անգամ խօսելու պատեհութիւնը ունեցայ. բայց խօսեցայ, ազգային, ընդհանուր պարտականութիւններու մասին: Այս երեկոյ կ'ուզեմ խօսիլ Ուստի հայ զաղթականներու և անոնց ներկայացուցիչներուն, այս երկրին մէջ իրենց բռնելիք դիրքին և ուղղութեանը վերաբերմամբ, և ջոյ տալ, թէ ինչպէս պէտք է ապրինք հոս, որպէս զի կարող ըլլանք այս երկրին տնտեսական-ընկերական յառաջդիմութիւններէն, տիրող քաղաքակրթութենէն օգուտ քաղել:

Ամերիկա գերազանցօրէն զաղթականութեան երկիրն է եղած. Ամեն երկիր, ամեն ազգ, ամեն ժողովուրդը իր ներկայացուցիչը ղրկած է հոս, և անոնց խառնուրդովն է որ գարեբը Ամերիկեան ժողովուրդը և Ամերիկեան քաղաքակրթութիւնը բնաւորներ են: Կը տեսնենք Անգղիական, Ֆրանսա-

---

ԵԱՆՕԹ.—Խօսուած Ուստի մէջ 1910 Դեկտ. 13 ին:

կան, Գերմանական, Իտալական գաղթականութիւնները, որոնք՝ որոշ չափով մը կրցեր են դիրք չինել և հաղորդակից գտնուել այս երկրին տնտեսական — ընկերական շարժումներուն: Ճեղքերը՝ հոս միաձուլուած, բայց որոշ չափով մը իրենց ցեղային առանձնայատկութիւնը պահած, տենգոտ գորնէութեան մը մղուած են: Սաքսոնին, Գերմանին, Լատինին ու Հրեային ինքնատուութիւնը կը շեշտուի առեւտրական, կամ քաղաքային ընկերական գոնազան ուղղութիւններու մէջ: Հայն է, միայն, որ իր 30-35 տարիներու գաղթականի կեանքին մէջ, չէ կրցած բաւարար կերպով օգտուել երկրին նւայաստաւոր պայմաններէն, և մնացած է յետամընաց դիրքի մէջ: Պէտք է այս հրեկոյ մենք փրնառենք՝ պատճառները ուրիշներու յառաջդիմութեանը, և Հայերուս յետամնացութեանը, որչէս զի գէթ վաղուան համար կարելի ըլլայ մեզի յաջողութեան ասպարէզներ ստեղծել:

Երկրի մը մէջ, որ իր օտարի հանգամանքով մեր առջև կը բացուի, մեր առաջին պարտաւորութիւնը պիտի ըլլայ ճանչնալ զայն, մանրակրկիտ և խղճամիտ ուսումնասիրութեամբ մը, երեւան բերելու համար այն ազդակները, որոնք յառաջ գիմութիւններու ծնունդ կուտան: Առանց այս ուսումնասիրութեան կարելի չէ բնաւ յաջողութեան նպաստաւոր գետին մը ստեղծել ո՛ր և է անհատի համար: Բոլոր օտարները, որոնք յաջողած են, եթէ քննենք, պիտի տեսնենք, որ եթէ իրենց յաջողութիւնը կը պարտին, մասամբ՝ բախտին, մեծ մասամբ կը պարտին սակայն իրենց միջավայրը ուսումնասիրելու ոգիին: Ամեն լեզուէ ուսումնասիրութիւններ կան այս երկրին տնտեսական, ընկերական և ընտանեկան կեանքի պայմաններուն

վերաբերմամբ: Ոչ մէկ հայերէն ուսումնասիրութեան չ'հանդիպեցայ իմ պրպտումներու միջոցին, և ստիպուած եմ ենթադրելու, թէ՛ Ամերիկահայ հրապարակագրութիւնը աչքի առջև ունենալով, նոյն իսկ բեմերը թերացած են իրենց այդ պարտականութեան: մէջ: Բախտին հաւատանք, բայց միեւնոյն ժամանակ հաւատանք, թէ բախտը չ'ինողը մտքի սուր թափանցողութիւնն է, հետատեսութիւնն է, միջավայրին և պայմաններուն ճշգրիտ ծանօթութիւնն է: Մենք Հայերս, մեր բնիկ սովորամուտութեամբ ինքզինքնիս խնայած ենք այդ տաժանքոտ աշխատութենէն, և ոչխարներու հանդարտ ու տուրիկ քալուածքով ընթացեր ենք այն հետքերուն վրայէն, ուրիշ մեր ռանվիրաները կամ գաղղիականութեան առաջնորդները քալեցին: Եկած օրերնուս մտանք գործարանը, ուր մեր հեղինակները կը գործէին. և մեր կեանքը Ամերիկեան գործարանի մը չորս պատերուն մէջ սահմանափակեցինք. տեսանք կարապետ մը, կիրակոս մը, որ աշնի էր կամ պախաշ, ու անոր ընդգրկած ասպարէզին միայն աչք տնկեցինք, ու չ'ուզեցինք պատուել աւանդամուտութեան պայմանագրական պատուարները, և մեզ առաջնորդել անկոխ գետիններու, չ'մշակուած ասպարէզներու: Եւ աստեղով չ'կրցինք զգալ ձեռներէցութեան ոգիին փրկարար գերը այս երկրին և աշխարհի ամեն կողմերուն վրայ:

Այս երկիրը շատ ճշգրութեամբ նմանցուած է պատերազմի դաշտի մը: Անհատներ ու խմբաւորումներ հակառակորդ բանակներու դերը կը կատարեն մէկ մէկու դիմաց, տոլարներու մրցանքը շահելու համար: Վա՛յ է եկեր քնացողին: Անհրաժեշտ է որ հոս ամեն մարդ արթնութեամբ հսկէ

փախչող պատենութեան վրայ, հրացանը աչքին, բռնելու համար կոյր բախտը, որ շատ անգամ անարժաններու գիրկը կ'իյնայ: Հրացանը պարապ պատող կամ պատէն կախող զինուորին համար ո՛րևէ հաւանականութիւն չ'կայ յաղթելու:

Այդ արթնութիւնը ունենալու, և պատենութեան կամ բախտէն կարենալ օգտուելու համար կարգ մը պայմաններ կան, այդ պայմանները կարենալ ճանչնալու համար, պէտք է նախ ուսումնասիրել թէ Ամերիկացին ի՞նչպէս կը յաջողի այս երկրին մէջ: Քանի մը օր առաջ մատենագարան գացի, ու խնդրեցի որ ինծի տան Փրանսերէն գրքեր, որոնք խօսէին ինծի Ամերիկեան ժողովուրդի ընկերական, ընտանեկան և անտեսական կեանքի մասին: Շատերուն մէջէն միայն երկու հատոր ընտրեցի. և երբ գիշերը առանձնութեան մէջ սկըսայ թղթատել անոնցմէ մին, պատահարաւ ինքզինքս գտայ էջի մը առջև, ուր կը խօսուէր Ամերիկեան ժողովուրդի յաջողութեան գաղտնիքին վրայ: Հեղինակը երկուքի կը բաժնէ այն զանազան տեսութիւնները, որոնք յայտնուած էին՝ ցարդ, այս գաղտնիքին նկատմամբ: Ոմանք, կ'ըսէր հեղինակը, կ'ըսեն, թէ՛ «Ամերիկացին կը յառաջդիմէ, որովհետեւ եսասեր է եւ դրամին միայն արժեք կ'ուսայ, ուրիշներ կը խորհին ընդհակառակն քե իր կորովը աւելի բարձր ազդիւր մ'ունի, եւ կը քոյիսի անձնական արժանապատուութեան ամենաբարձր ըզգացումներն»:

Ամերիկացիին կեանքը չափազանց կնճռոտ է. և որպէս զի կարելի ըլլայ անոր գործունեութեան մէջ ցուցած ձեռներէցութիւնը և կորովը ճանչնալ իրապէս, պէտք է մանկ անոր տունը տեսնելու համար, թէ ի՞նչ գաստիարակութեամբ, ի՞նչ սովո-

բութիւններով կը մեծցընէ ան իր զաւակը, յետոյ պէտք է մտնել անոր դպրոցները, գործարանները, ագարակները, խանութները, տեսնելու համար, թէ ընամանիքին մէջ ամերիկացի զաւակներուն տրուած փորձառական դաստիարակութիւնը ինչ չափով կը կիրարկուի և կ'իրագործուի բուն իսկ գործի կեանքին մէջ:

Ինչ որ ալ ըսուի Ամերիկացիներու յաջողութեան պայմաններու մասին, ըստ իս վերոյիշեալ մէջբերումները՝ իրենց զանազանութեամբն ու տարածութիւններովը իրարու միացած՝ կը կազմեն Ամերիկեան նկարագրին խոշոր դիմերը: Ամերիկացին ամեն բանէ առաջ ու վերջ ձեռններէ կ, արժանապատուութեան զգացումը ունի, եսասէր է եւ դրամասէր: Եւ ես պիտի ուզէի, որ ամեն հայ ալ այս երկրին մէջ ու հայրենիքին մէջ միեւնոյն յատկութիւններով երիւան վար, գիտնալով, թէ առանց այդ յատկութիւններուն՝ յաջողութեան բախտաւորութիւնը չ'ունի:

1. Գոհ է ձեռներեցութեան ոգի ունենալով: — Շատ հասարակ և շատ գեղջուկ բան մըն է հասարակաց ճամբաներէն քալելը. պէտք է յանգոնութիւնը ունենաք անկոխ գետիններէն, բլուրներէն վեր մագլցելու, մշակելու՝ հողեր, ուրկէ հարստութիւնը չէ ծծուած: Եւ ասիկա ընելու համար պէտք է գիտնալ պատուելու մեր ոչխարամիտ շագիկը, կրծել մեր աւանդամուրի բժոժը, և ցոյց տալ, թէ մենք ալ ստեղծող, նախաձեռնող ոգի մը ունինք: Ի զուր ինքզինքնիս կապեցինք գործաւորութեան ստրկական շղթային, պէտք է գիտնանք և տեսնենք, թէ գործարաններու չորս պատերէն դուրս Ամերիկա մը կայ, որ կը շարժի, կ'ալեծփի, կը գործէ, կը պայքարի. կ'երկնէ ու կըստեղծէ:

Մինչև որ այդ շարժումին չի մասնակցինք, մեր ճակատագիրը կապուած պիտի մնայ մաշիցընող մեքենային, և մեր կեանքը պիտի փտի գործարաններու աղտոտ մթնոլորտին մէջ: Գործաւոր եղած առաջին օրն իսկ պէտք է մեր մտածումն ըլլայ, թէ գործաւորութիւնը մեր սկսնակ կեանքին առաջին օթեւանն է, թէ մենք աւելի վեր պիտի բարձրանանք, և թէ պիտի աշխատինք կարելի եղածին չափ կարճեցընել մեր գործաւորութեան շրջանը, սկսելու համար՝ մեր ձեռնհրեցութեան ոգիով, աւելի անկախ, ազատ և արդիւնաբեր գործերու:

Յ. Արժանապատուութեան զգացումը բարոյսկան ոյժն է ամենագոր.— Այս զգացումն է, որ մարդս կանգուն կը պահէ, և չ'թողուր որ սողանք, քակրոտութիւնք գործաւորի ստրկութեան ճամբուն վըրայ: Ո՛վ որ զուրկ կը գտնուի անձնական արժանապատուութեան զգացումէն, անոր մէջ կը պակասի ամենակենսական ոյժը մարդկայնական կոչումը արդարացընելու համար: Կը տեսնենք մարդեր, որոնք արհամարհուած և կոխկոտուած ըլլալով հանդերձ իրենց կրած նուաստացումը չեն զգար: Անանկները կը նմանին փողոցներու մէջ կոխկրուտուած և ապականուած սառերուն: Պէտք է աշխատիլ մեր վրայ բերել ժայռերուն կողքին փակած սառերուն վճիտ մաքրութիւնը, կարենալ զուարացընելու համար մեր արժանապատուութեան ըզգացումը, իր բովանդակ վեհութեամբ: Վերցուր մարդուն մէջէն, արժանապատուութեան զգացումը, և այլեւս անիկա պիտի դադրէր մարդ ըլլալէ: Մեր անհատական և ազգային կեանքին մէջ, իրերու դժբախտ արդիւնքով մը, կարծես ժամանակէ մը ի վեր արժանապատուութեան զգացումը դադրեր է ուժգնօրէն խօսելէ մեղի հետ: Ո՛րչափ մշակենք

արժանապատուութեան զգացումը, անձնական աւելի կը յարգուինք ուրիշներէ, և կը բարձրանանք մեր աչքին: Աշխատեցէ՛ք այդ զգացումը զօրացնել ձեր մէջ, իրբև գերրնտիր մասը ձեր կեանքին:

3. Ո՛վ որ կ'ըսէ թէ ինքը անձնատէր չէ, կը ցուցնէ, թէ կեղծաւոր մըն է, եւ միւսներուն ժամանակ յիշատարած մըն է: — Ես ապաշտութիւնը անհատական և ընկերական վատութիւն մըն է, իսկ եսասիրութիւնը՝ ընկերային առաքինութիւն մը: Մարդիկ որ իրենց անձնասիրութիւնը չեն կրնար մշակել, և կը թողուն որ լուծուին տափակութեան կամ ուրիշներու եսականութեանը մէջ, կ'ապացուցանեն, թէ ո՛րքէն առողջ գործ կատարելու անընդունակ կը գտնուին: Անձնասիրութիւնը զօրաւոր կամքի մը ցոլոցումն է, և սիւնոյն ժամանակ ընկերական սերերու հիմունքը: Աւետարանի պատուէրով մենք մեր ընկերը մեր անձին սէրն է: Անձնական տկար սէր մը, չ'կրնար ընկերական զօրաւոր սիրոյ փոխուիլ: Որչափ ուժով սիրէք ինքզինքնիդ, այնչափ կը հաստատ, թէ ձեր ընկերական սէրը ատուր է և տեւական, քանի որ ձեր ընկերը ձեր անձին պէս ու ձեր անձին չափ սիրելու յօժարութեան պտուղը պիտի ըլլայ անիկա: Աշխատեցէ՛ք չեր կրցածին չափ ու աւելի Ամերիկեան բարի քաղաքացիներ ըլլալ: ասիկա արժանիք մը պիտի ըլլայ ձեր համար: Ատով ցոյց պիտի տաք Հայկական բարքերու մէջ ցայտուն հանգամանք ունեցող պարկեշտ քաղաքացիութեան յարմարութիւնը և յօժարութիւնը: Բայց մի՛ մոռնաք ձեր մէջը մտնողները և ուժով ցընել անհատական ու ազգային անձնասիրութեան ոգին: Ատով արժող մարդ

մը և յարգանքի արժանի Ազգ մը ըլլալնուդ ապա-  
ցոյցը տուած պիտի ըլլաք: Եստպաշտութիւնը ըն-  
կերական սէքերու ժխտումն է, մինչ անձնատիրու-  
թիւնը, ամուր և անւական սկզբնաւորութիւնը  
այլատիրութեան:

Կ. Սիրեցե՛ք դր սմը: — Չեմ ըսեր, թէ կծծի եղէք  
կամ ագահ. բնաւ կծծիութիւնը կամ ագահութիւ-  
նը չարիք մըն է, որ անհատին սիրտը կը մեաա-  
ղացընէ: Ընկերական չարիքներուն ամենաթունաւոր  
ազբիւրը արծաթին պաշտասունքն է եղած. անոր  
համար ըսուած է թէ ոսկին եւ արծաթը շա՛ս անելի  
մարդ սպաննած են քան երկաթն ու պողպատը: Դրամ  
վաստկելը և գրամը ծախսելը շատ աւելի կարեւոր  
գիտութիւն մըն է, քան աստղագիտութիւնը, եթէ  
աստղագիտութեան հմուտ չըլլանք, մենք ու մեր  
հեա աշխարհ բան մը չ'տուծեր: Աստղերը նորէն  
կը ծագին, ու կուգան մեր տգիտութեանը վրայ  
սփռելու իրենց լոյսերէ հիւսուած ոսկեղէն վե-  
րարկուն: Արեգակնային գրութեան մասին մեր մէկ  
ոխալ տեսութիւնը արեւ իխաւարում չ'կրնար պատ-  
ճառել: Մինչպէս գրամ վաստկելու և գրամ ծախ-  
սելու մասին մեր տգիտութիւնը, մեր սխալ մե-  
թոտները, յոռի տեսութիւնները մեզ գէպի կործա-  
նում, գէպի ստրկութիւն, գէպի վատթարացում  
կը տանին:

Դրամը ոյժ մըն է որ մեծութիւններ, յառաջգի-  
մութիւններ, գեղեցկութիւններ կը ծնցընէ: Գէտը  
է պարկեշտութեա՛ր տիրանալ այդ ոյժին և շատ  
չըջահայեցութեամբ գործածել զայն: Դրամին տի-  
րանալը նպատակ մը չէ, այլ աւելի մարդկայ-  
նական — քաղաքակրթական նպատակներու հոռ-  
նելու միջոց մը: Եթէ մինչև այժմ մեր իրապէս  
հայրենասէր փափաքները ամուլ մնացին, պատ-

ճառք այն էր, որ մենք մեր փառաքաններուն մեծութիւնը շինող կամ կերտող դրամի ոյժէն զրկուած էինք: Աշխատեցէ՛ք, Սիրելի Հայրենակիցներ, այդ ոյժը ձեռք բերել պարկեշտ միջոցներով, յամառ աշխատութեամբ, և ձեռներէց սգիով, և գուք պատենութիւնը պիտի ունենաք, դրամի մեծ կարողութիւնը գնահատելու: Եթէ կ'ուզէք բարիք գործել, դրամ ունեցէ՛ք, եթէ կ'ուզէք դրամպէս ծառայել ձեր Ազգին ու Հայրենիքին, եթէ կ'ուզէք մխիթարութեան հրեշտակներ ըլլալ մարդկային թշուառութեան ճամբուն վրայ, դրամ ունեցէ՛ք, Դրամ ունեցէ՛ք առանց անոր պերին դատնալու: Դրամն ու քաղաքակրթութիւնը, դրամն ու յառաջդիմութիւնը զոյգ կը քալին, բաւական է, որ մարդկային իմաստութենէն ու բարութենէն առաջնորդուին: Եւ եթէ Թուրքիոյ մէջ յառաջդիմութիւնը կասեցաւ, պատճառն այն էր, որ հոն տիրող արդիաութիւնն ու բռնապետութիւնը ցամքեցուցին հարստութեան ազրիւրները, արժանապատուութիւն, ձեռներէցութեան սգի և անձնասիրութիւն:

Վերոյշեալ տարրերով կազմուած նկարագիր մը անպարտելի ոյժ մըն է: Անիկա կը դիմանայ ամեն տեսակ դժուարութիւններու: Նկարագիր (caractere) բառը երկու իմաստով կը գործածուի ամեն լեզուներու մէջ: Կը նշանակէ փոքրագրուած զիր և մարդկային յատկութիւն: Դուք տեսած էք գաւառին մէջ քարեր, ժայռեր, որոնց վրայ արձանագրութիւններ քանդակուած են նշանագրերով, և որոնք դարերու ընթացքին մէջ դիմացած են ցուրտին, բուքին, անձրեւին և հովերուն: Անոնք մարդկային որոշ և վճիտ նկարագրին տուածնութեան դարաւոր վկաներն են: Միեւնոյն կերպով կը դիմանայ նաև մարգուս նկարագիրը

քաղաքային-ընկերական և տնտեսական փոթորիկներու մէջ: Բայց գիտցէք թէ նշանագրերը (caracteres) ինչպէս նաև նկարագիրը (caractere) մէկ օրով չեն շինուիր: Նշանագրերը արդիւնք են համբերատարօրէն զարնուած մտրճի պղտիկ հարուածներու՝ գրոցին վրայ, որ պաշտօնը ունի այդ նշանագրերը փորելու, և անոնց յստակ ու մաքուր ձեւը տալու: Մարդկային նկարագիրն ալ միեւնոյն ձեւով կը կազմուի: Համբերատար աշխատութեան մը պէտք ունինք և տեւական՝ ծանր ճիգերու, ջանքերու, տիրանալու համար այդ ոյժին: Մի՛ թերանաք ձեր կոչումին, ձեր գերին մէջ և կատատարեալ փոյթով այդ նկարագիրը շինելու աշխատեցէք ձեր մէջ:



## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Բեմը ուրկէ կը խօսիմ այս երեկոյ, չէ այն սովորական բեմերէն, ուրկէ բարոյախօսաներ ու քարոզիչներ իրենց խօսքը կը լսեցընեն ժողովուրդի մը, որ հոգեկան սփոփանքի քանի մը վայրկեաններ կ'ուզէ անցընել ընկերական ու տնտեսական կեանքի բերտ պայքարին յոգնութիւններէն վերջ: Այս երեկոյ այս բեմէն ինծի պատեհութիւնը տրուած է խօսելու անոնց, որոնք վաղուան սերունդին բարոյական ու մտաւորական վերածնութեան գործաւորները ըլլալու կոչուածը ունին:

Մարդեր կան՝ որոնք կը սորվին պարզապէս իրենց ստացածը ուրիշներուն փոխանցելու համար: Մեքենական գործողութիւն մ'է այս կատարուածը: Անոնք կը նմանին այն միջնորդներուն, որոնք, ուրիշներուն հաշտոյն ապրանք կը գնեն, առանց ինքզինքնին կարենալ հագուեցընելու կամ սնուցանելու այն ապրանքէն, զոր կը գնեն ուրիշներու համար: Մարդեր ալ կան, որոնք կը սորվին, և իրենց սորվածը ուրիշներու փոխանձելէ առաջ իրենք կ'ապրին իրենց աւանդուած գիտական ու բարոյական կեանքը, և երբ պարագան կուգայ, որ ուրիշներու փոխանցեն այդ աւանդը, այդ փոխանցումին մէջ կը գնեն իրենց կեանքին փորձառու-

---

ՄԱՂԹ.— Խօսուած Պրինցիպալի Նօրմըլ ՍԲուլի երկսեռ աշակերտներուն 1911 մայիս 7ին:

Թենէն, իրենց սրտէն, ու իրենց հոգիէն մաս մը: Այս աշխատութիւնը ա'լ կը դադրի մեքենական շարժում մը ըլլալէ, ու կը կազմէ ճշմարիտ զոհաբերութեան, անձնուիրութեան գերընտիր մասը: Բուն զաստիարակները, որոնք իրապէս իրենց կոչումին մարդը ըլլալ ուզած են, այս կերպով միայն կրցած են կատարել իրենց կոչումը, և ճշմարիտ օրհնութիւն մը եղած են ապագայ սերունդին համար: Դաստիարակութեան մէջ, բարոյականի ու կրօնի ուսուցման խնդիրներու մէջ, զաստիարակի մը մեծագոյն յաջողութիւնը չկայանար իր հանձարին, ու մեթատներուն, իր գիտական հմտութեան առատ պաշարին մէջ միայն, այլ մանաւանդ ու աւելի իր ապրած կեանքին, իր ցուցադրած անձնական օրինակին մէջ: Ի զուր շէր, որ քսան եւ հինգ դար առաջ Չինացի փիլիսոփան Կոնֆուցիոս ըսաւ. շաւր գիրք մը, շաւր ֆարոց մը, կրեան բարիք ընել, քայց բարի օրինակ մը աւելի մեծ պերճախօսութեամբ մը կ'ազդէ սրտին: Դաստիարակութեան և բարոյականի ամբողջ փիլիսոփայութիւնը հիմնուած է Չինացի իմաստասէրին այս արտայայտութեանը վրայ, և Քրիստոնէութիւնը՝ այս աստիճանով, նոր բան մը չաւելցուց անոր վրայ: Ամենագոր պատճառարանութիւնը ազրուած կեանքն է, և սրիշներուն մէջ առաջը համոզումներ չինելու ճամբուն վրայ: Ընդ որ ուրիշին ինչ որ կուգես որ ուրիշ մը քնդի ընէ» քրիստոնէական գրական բարոյականին գրէթէ պատշաճեցումը եղաւ՝ ժողովուրդի մը առաջնորդներուն համար Ամիէյի ոտ բանաձեւը. «Եղիք ինչ որ կ'ուզէք ուրիշ մը ընել. մ'չ քե ձեր խօսքերը, այլ ձեր կուրսները քող ֆարոց մը ըլլայ»:

Մանկութիւնը պէտք ունի տիպարներու, մօ-

Տեխներու, որոնք շինուած ըլլան գեղեցկագիտութեան. մաքուր հաւատքի, և ասող թարոյականի արտագրած շաղախովը: Դժբախտաբար այսօրինակ գործաւորներու պակասը զգալի կ'ըլլայ օրէ օր: Մարդկային բարեւրու ապահանջութեան օրոսօրեակսն աճուելը այդ պակասով միայն կարելի է բացատրել: Մարդկութիւնը իր մանկութեան մէջ մանաւանդ, միաք մ'ունի, որ լուսանկարչական ապակիին չափ զգայուն է ընդօրինակելու համար այն տպաւորութիւնները, որոնք ցուցադրուած տառերկայէ մը կը ճառագայթուին: Տգեղ յիպարնետու ահագին չեզոքն ինչ կայ մանկութեան հոգիին այդ զգայուն փոփոխին առջեւ: Գեղեցիկ տիպարները, իրենց պատահական կամ բացառիկ հանգամանքով կարծես հաճոյք չեն պատճառեր տափակութիւններով յագեցած ամբոխին: Վսեմին ու գեղեցկութեան ճաշակէն զրկուած խուժանը անտարբերութեամբ կ'անցնի Միշէլ Անժի արձաններուն, կամ Բիւպէնտի նկարներուն առջեւէն, ու կատաղօրէն կը ծափահարէ արուեստի անունով իրեն հրամցուած ոչնչութիւնները, կամ խէնչչութիւնները: Համատարած ստորնացում մը կը տիրէ հիմա աշխարհի մէկ ծայրէն միւսը. ճաշատութիւն մը կայ առանց խանդավառութեան, հաճոյք մը՝ անժպիտ, կրօն մը՝ անհոգի, երիտասարդութիւն մը՝ առանց աղուամազի, սէր մը՝ առանց խորհուրդի, արուեստ մը՝ ճառագոյթումէ ղուրկ: Ազնուական իճեալը մշակական հալածանքի մը առարկան է դարձած վաստակուած ժողովուրդներու կողմէն: Բայց այդ արօ համարհանքը բաւական չէ մեղքընելու համար բարութեան, սիրոյ, առաքինութեան, հաւատքի ու գեղեցկութեան իսէալը, որուն կը հետամտին իբրև տիպար ծառայելու կոչուած ընտրեալ կիներ և

մարդեր: Աշխատհի եսասերները կ'անեսեսն այդ իսկա-  
լը, յարերը կ'ուերանան զայն, քերեւաւիտները կը  
ծաղրեն զանի, անքարոյսիսանները կը յարձակին ա-  
նոր վրայ, խուժանը հագիւ կ'ընդնշխարե զայն, իսկ  
ընտրուածներն են: ու կը պաշտեն զանի եւ անոր  
պարգեւած հոգեկան գինովութիւնը կ'ըմբռնեն:

Դուք որ այս գրասեղաններուն առջև ինք-  
զիքնիդ կը պատրաստէք վաղուան սերունդին բա-  
րոյական գործաւորները, և անոր ապագային ըս-  
տեղծողները ըլլալու, գուք այժմէն իսկ կոչուած  
էք այդ ընտրեալներու թիւը ստուարացնելու:  
Հիմա է որ ինքզինքնիդ պիտի կաղապարէք ձեր  
տող և գրուած ագնուութեան, համոզումի, գեղեց-  
կութեան, հաւատքի, սիրոյ և անձնուիրութեան  
վտակին վրայ, զոր Ամերիկեան Ազգը գիտցաւ կեր-  
տել հին աշխարհէն իր հետ բերած մտքի ու սրտի  
պաշարներուն շնորհիւ:

Խօսք մը դայ, որ կ'ըսէ, թէ «աշակերտը  
վարձապէսէն մեծ չէ»: Սխալ մըն է այդ խօսքը իր  
ընդհանուր առումին մէջ, քանի որ ան պիտի  
կրնար ամբողջ աշխարհի յառաջդիմութիւնը ջնջել:  
Եթէ ճշմարտութիւն մը եղած ըլլար: Ծարտարա-  
գործ և զարդացած Ամերիկեան ամենէն զօրաւոր  
հերքումն է այդ սխալ դաւանանքին: Առանց այդ  
հերքումին աշխարհ վայրենութեան և բարբարո-  
սութեան յաւիտենական բոյնը պիտի ըլլար: Քսա-  
ներորդ դարուն հսկայ յառաջդիմութիւնը կը պար-  
տինք վաժապետին բաղդատմամբ՝ աշակերտին ցոյց  
տուած մեծութեանը: Այն յարգելի բրոֆէսէորները,  
որոնք իբրև դաստիարակութեան առաքեալներ,  
իրենց փորձառութեան, իրենց գիտութեան, իրենց  
սիրտէն ու հոգիէն մաս մը ձեզի կը փոխանցին  
ձեր մէջ շինելու համար փորձառու, պարկեշտ ու

անձնուէր մարդը. ինքզինքնին վարձատրուած պիտի զգան երբ դուք օր մը ցոյց տաք, թէ ձեր անձնուիրութեամբ, ձեր միտքով, ձեր հոգիով, ձեր կեանքով գերազանցած էք զիրենք դաստիարակութեան ասպարէզին մէջ: Միջակութեան չմտազատուած, գեղեցկութեան եւ բարութեան անընդունակ աշակերտքներ մահացու վերջն ե իր դաստիարակին կը յուսամ, թէ այդ վերջը գոյութիւն չունի այս վարժապետանոցին մէջ:

Դաստիարակութեան գործին մէջ, անձնական օրինակի, ապրուած կեանքի ազդեցութեան մասին, ձեզի երկար ճառելը աւելորդ պիտի համարիմ: Ես տեսայ ձեր վարժարանը, իր զանազան մասերով, տեսայ, թէ հոս փորձառական մեթոտ մը գործադրութեան դրուած է ամենէն պզտիկ «զաքներու դասարաններէն սկսած մինչև բնթացաւարտներու դասընթացքը: Ամեն գիտութեան աւանդում առարկայական է հոս: Մանուկը թուղթի կամ փայտի կտորներով հաշուել կը սորվի, ծաղիկ մը ունի աչքին առջև բուսաբանութիւն սորվելու համար, կերպընկալ (plastique) արուեստներու նախագիտելիքները իւրացընելու համար մանուկներուն դիւրաթիւք մատները կաւի զանգուածներով կը զբաղին: Այլ չեմ խօսիր քիմիաբանութեան և բնագիտութեան գործիքներուն վրայ, որոնք ժամէ ժամ շարժման մէջ կը դրուին հոս տեսականօրէն աւանդուած դասերը փորձառականութեամբ մը աւելի լաւ ապաւորելու համար ուսանողներու միտքին մէջ: Մեքենան որ կը շարժի, ելեքտրական ոյժը՝ որ կը գործէ, ծաղիկը՝ որ կը ցուցադրուի, կաւը՝ որ կը ձեւակիրպուի, աւանդուած նիւթերուն և դասերուն բնական և դրական օրինակներն են, առանց որոնց ձեր գիտութիւնը շատ բան պիտի

առւժէր կարհնալ հիմնական ըլլալու համար։ Անկենադժուարին զիտութիւն մը կայ աշխարհի մէջ եւ այդ զիտութիւնը բարոյականն է։ Առաջ՝ արուեստները, ինչպէս բարոյականը ժառանգաբար կը փոխանցուէին իրարու, առանց գիտական հիմնաւորութեան։ Մարդիկ արհեստաւոր կ'ըլլային քուքակօքաւ, եթէ կարելի է այսպէս ըսել, ու բարոյական կեանք մը կ'ապրէին ունակութեամբ։ Հիմա գիտութեան դարու մը մէջ կ'ապրինք. արուեստը գիտնականացած է, բարոյականն ալ պէտք է գրուի գիտնական կամ ըսենք գիտակցական հիմերու վրայ։ Եւ ամեն ուսուցում, որ կը ձգտի այդ բարոյականին տարածմանն ու հիմնաւորութեան, պէտք է առարկայական, շօշափելի ըլլայ, և բարոյական գիտութեան ուսուցումը առարկայական ընելու միակ միջոցը ուսուցչին ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆ է։ Որովհետեւ բարոյականը կեանքին զիտութիւնն է։ Միւս բոլոր գիտութիւնները առաւել կամ նուազ չափով օգտապաշտ գիտութիւններ են, կը զարգարին աշխարհը, մղում կուտան ճարտարարուեստի, կը շահագործեն բնութեան ոյժերը. միայն Բարոյականն է որ ՄԱՐԴԸ կը շինէ, և կը մղէ մեծագոյն և անշահախնդիր զոհողութիւններու, և մարդկային վերածնութեան, հողեւոր նորոգումի և շինութեան ամենակենսական գործին նուիրուած առաքեալներ կը պատրաստէ։

Աշխարհ այսօր առաւել քան երբեք պէտք ունի այդ առաքեալներուն։ Մոռութիւններու քրկնազդը, եւ սարափոխիկ ազդեցութիւնը մեկ կողմէն, եւ ժողովուրդներու ընկերական եւ ֆաղսֆական ձեռքազատումի սիգերը միւս կողմէն, զիտական բարոյականի մը պէտքը զգայի կ'ընեն աւելի ու աւելի։ Առանց ատոր մարդկութիւնը կրնայ վայրէջք մը

ունենալ գէպի էին օրերու բարբարոսութիւնը, որուն վրայ մեւ, դարը զարհուրանքով ու պօգանքով կը նայի:

Գէպի ազատութիւն ըստ ժողովուրդները բարոյականի մը պէտք ունին իրենց հաւատարակչութիւնը պահպանելու, և աշխարհի ընկերական համերաշխութեան շնորհիւ համար: Թայերբան Ֆրանսացի նշանաւոր քաղաքագէտը կ'ըսէր, թէ Դաստիարակութիւնը ազատութեան անհրաժեշտ հակադէմքն է: Եթէ մերթ ընդ մերթ մարդկութեան այս կամ այն հատուածը ազատութիւնը ապերաստութեան հետ շփոթեց, պատճառը այն է, որ անիկա գէպի ազատութիւն իր գնացքին մէջ զուրկ կը գտնուէր բարոյական դաստիարակութենէ: Բարոյական դաստիարակութիւնը մոլութիւններու գէմ յաղթանակելու համար շինուած աղանակն էր գրանն է, որով պէտք է զգեստաւորի ամեն մարդ, ի՛ր և աշխարհի բարիքին համար: Ժողովուրդներու ինչպէս նաև անհատներու ազատութիւնը երաշխաւորելու, և այդ ազատութենէն ազգերու և մարդերու համար ճշմարիտ և տեւական երջանկութիւն մը շինելու համար այդ աղանակն էր գրանն պատրաստեցէք այժմէն. նախ ձեր անձին համար, որպէս զի կարող ըլլաք անով մտնել կեանքի ասպարէզը, և իբրև անյաղթելի տիպար մը ծառայել անոնց, որոնց պիտի առաջնորդէք:

Դուք վաղուան ճարտարագետներն էք, և արհեստաւորները՝ վաղուան կեանքերուն: Երբ քրոնագետներ կը վերլուծեն Իտալիոյ գեղարուեստական վերածնութեան դարը և կուսուճմասիրեն Միշէլ Անժի ու Վիթթորիա Կոլոնայի բարեկամական յարաբերութիւնները, և անոր ազգեցութիւնը արուեստին վրայ, կըսեն, թէ անոնցմէ մին, Կալս-

նա, սերկն ու մարդասիրութենէն արուեստ մը շինեց  
խոսք Միշէլ Անժ, արուեստէն շինեց ուժի օրինակ մը,  
ագնուացունի միջոց մը, կրօնք մը, Աշխատեցէք,  
որ ձեր դաստիարակութեան ջանքերու միջոցին բա-  
րոյական անսակէտով ձեր մէջը ձուլէք, առինքնէք  
Իտալացի այդ երկու մեծ արուեստագէտներուն  
ըմբռնումը, մարդասիրութենէն արուեստ մը, և  
արուեստէն՝ ոյժ մը, ագնուացումի միջոց մը, կրօնք  
մը շինելու համար: Որովհետև աշխարհ այդ սիրոյն,  
այդ մարդասիրութեան, այդ ոյժին, այդ ագնուա-  
ցումի միջոցին, վերջապէս այդ կրօնքին պէտք  
ունի:



## ՇԻՐՎԱՆՁԱՏԷ

Պետ Ե ու արտոգրութեւն ԳԻՔ-ԵԿ  
ԸԼԼՆ, հանձարին նախընտրելու ինչ  
Լ- հոգի: ՎԻԼՀԷԼՄԻՆ ՇՐՈՏԷՐ

Հայութեան մէջ գոյութիւն ունեցող եւկու  
րնկերական-ազգային սխալները հետզհետէ սրբա-  
գրուելու, ուղղուելու վրայ են: Այդ սխալներէն  
մէկն էր. կտակ ընել, յետ մահու գործադրելի, եւ երկ-  
րորդը՝ արժանաւորը թշուառութեան մասնէլ իր  
կենդանութեանը, եւ յարկանքի շայն թաժիկ մը քե-  
տէլ անոր գերեզմանին վրայ: Առաջին պարագային,  
կտակող մը ինքզինքն էր, որ կը զրկէր իր բարե-  
քին արտադրելիք երջանկութենէն, երկրորդ պա-  
րագային ազգն էր որ կը զրկէր իր տաղանդաւոր  
զաւակը, մերժելով անոր հատուցանել իր հանձա-  
րին հանդէպ արժանաւոր յարգանքը:

Այս իրիկուան Յորելեանի հանդէսը ինքնին  
ապացոյց մըն է, թէ այլեւս դուրս ելած ենք մեր  
շատապարտելի վերարերումէն հանդէպ արժանի-  
քին, ըլլայ անիկայ գրական թէ արուեստագիտա-  
կան, և ատով իսկ ապացուցած՝ մեր գոյութեան  
իրաւունքը: Որովհետեւ ապրելու իրաւունք չունի  
ազգ մը, որ չ'գիտեր զնահատել իրական արժանի-

---

ԵՄԼԹԹ.— Իօսուած Պոստոնի մէջ Շիրվանզատի գրական  
յորելեանի հանդէսին առթիւ:

քը, հանճարի և տաղանդի բոլոր արտադրութիւններուն մէջ:

Սիրելի Հայրենակիցներ, ազգի մը մեծութիւնը, հիթէ կը չափուի անոր անդամներուն հաւաքական նկարագրէն, անոր ապրած մտաւոր, հոգեկան և բարոյական յարմարութիւններէն, պէտք չէ մոռնալ, թէ ազգի մը խօսուն ներկայացուցիչները իր արտադրած հանճարներն են: Յունաստանը անմահացնողները Մարաթոնի զինուորներէն աւելի եղան իր արտադրած Պլատոնները, Սոկրատները, Փիթիասները, Հոմերոսները, Եւքլիդէսները: Իտալիան եթէ իր գոյութիւնը մասամբ կը պարտի իր բնութեան գեղարուեստականութեան, չ'մոռնանք, թէ Իտալիան անմահացնողները եղան իր ծնած հանճարները, Միքէլ-Անժերը, Ռաֆայէլները, Մաքիաւելները, Լէոնար Տի Վինչիները, Մանցոնիները, Սալոնարոլները: Այսպէս է նաև բոլոր ազգերու համար: Մեծ ազգերը անոնք չեն, որ մեծ թիւ կը կազմեն, այլ անոնք՝ որոնք մեծ ու շատ հանճարներ սուած են աշխարհի: Անոր համար էր անչուշտ, որ Վիքտոր Հիւկօ ըսաւ. Ժողովուրդի մը մեծութիւնը չի՛ չափուիր իր թիւէն, եւ ո՛չ ալ մարդու մը մեծութիւնը իր հասակէն, միակ չափը իմացականութեան եւ առաքինութեան ֆանկտիօնէն է: Ո՛րչափ շատ ըլլան այդ առաքինութիւնները և այդ իմացականութիւնները, ա՛յնքան ազգ մը մեծցած կ'ըլլայ իր կեանքին մէջ ու պատմութեան առջև, և անիկա ոյժը կ'ունենայ ապրելու նոյն իսկ քաղաքական հալածանքներու, արիւններու, ջարդերու, վիթխարի անիրաւութիւններու հանդիպած միջոցին:

Այս իրիկաւն այդ մեծ իմացականութիւններէն մէկուն, Շիրվանզատէի Յորեյեանն է, զոր կը

տօնենք այս զուտ գրական-մտաւորական երեկոյ-  
թով: Անիկա մեր գրականութեան համեմատաբար  
ազքատ պատմութեան մէջ, իր տեղը ունի, և կա-  
րեւոր տեղը, իբրև իրապաշտ (realiste) և առար-  
կայական (objectif) գրող, որ այնքան ինքնատը-  
պութեամբ մը փայլեցաւ վիպական ու թատերական  
ճիւղերու մէջ: Երբ զինքը տեսնէք իր պոլիլի մա-  
ղերուն տակ, զուարթութեան ժպիտը միշտ իր  
խաժ աչքերուն մէջ, պիտի չը կրնաք համոզուիլ,  
թէ ինքն է հեղինակը այն ինքնատիպ և այլազան  
դէմքերուն, զորս անիկա կը վերստեղծէ իր «ՆԱԻ-  
ԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ», «ՆԱՄՈՒՄ», «ԳԱՂԱՓԱՐԻՆ  
ԳԵՐԻՆ» գործերուն մէջ: Իր ապրած զուտ իտէա-  
պաշտի կեանքը հիմնական հակադրութիւնն է իր  
վէպերուն և թատրերգութեանց իրապաշտութեա-  
նը: Եւ այդ իր անձին ու իր դրուածքներուն մէջ  
գոյութիւն ունեցող հակադրութիւնն է որ կը շեշ-  
տէ իր գործերուն կարեւորութիւնը, որովհետև  
ինքը ջանացած չ'է ինքզինքը ներկայացնել մեզի: Իր  
արուեստագէտի անանձնաւորութիւնը իր գործե-  
րուն փառապսակն է: Մարդկային մորթին տակ  
ապրող յուսազուրկ, տառապող, տանջուած և զրժ-  
բախտ հոգիներուն մեջիռնն է ինքը, լուսանկա-  
րիչը եթերային տժգունութեամբ մը թափառական  
հոգիներուն, զորս կեանքի կոիւրի դաշտէն ժողվելէ  
վերջ կը մարմնացընէ, կը հագուեցընէ, և իրենց բը-  
նական իսկութեամբը աշխարհի կը վերադարձընէ:  
Իբրև ճշմարիտ արուեստագէտ անիկա ինքզինքը  
չ'ըպղծեր՝ քաղաքագէտին պէս, կուսակցութիւններու  
սիդիին մեջ, և ո՛չ ալ բռնաւորին պէս մարդկային  
արիւնին մեջ, կը նկարէ, անոնց ցաւը կ'ապրի,  
կուլայ, անոնց ժպիտներովը կը զարդարուի, ազ-  
նիւ տիպարներու յաղթանակովը կը գինովնայ,

մոռնալու համար պահ մը ասպեկներն ազդեցութիւնը, և լեզու կուտայ մարդկային հոգիին խորը կոտորացող համը մարտիրոսացումին:

Շիրվանդատէ բիւրապատկուած է իր նկարներուն, իր իրական պատկերացումներուն մէջ, իբրև մարդ մը, որ գիտէ ինքզինքը զոհել, զոհերո՛ւ կեանք տալու համար, և այսպէսով գերազանցօրէն ապացոյցը եզաւ սա էջմարտութեան, թէ ինկզիսֆէն հրաժարի միւսիսայն ինկզիսֆէն խորհակելու համար, ոճիւր մըն է. իսկ ինկզիսֆէն հրաժարի ազատ կերպով ինկզիսֆէն վերստեղծելու հասար, գերագոյն առաքինութիւնն է: Եւ Շիրվան իր գրական կեանքին մէջ այդ առաքինութիւնը ապրեցաւ: Մենք կը հիանանք կարգալով կենսագրութիւնը նշանաւոր երգչուհի՝ Վիլհէլմին Շրոտէրի, որ ինչպէս կ'ըսէ Շուբէ, Պերովէնը դիւրեց եւ Վակները ներշնչեց, երբ անոր համար մեզի կ'ըսուի, թէ բեմին վրայ իննսուն երեք մարդերու կեանքը ապրեցաւ, և զանոնք երգեց ո՛չ թէ իր ձայնով, այլ իր հոգիով: Մենք կը հիանանք Սարա Պլինարի վրայ, երբ կը տեսնենք զինքը կարգ ըստ կարգէ անձնափոխուած, մերթ իբր Քամելիազարդ Տիկին, և մերթ էկլոն, ուր այլեւս ինքը գոյութիւն չ'ունեցող մարմինի մը ստուերին պէս, ինքզինքը մոռցնել կուտայ մեզի, և իր ներկայացուցած դերերուն անձերուն հետ կը շփոթուի. մեր այդ հիացումին մէջ մեր յարգանքը աւելի կը մեծնայ Շիրվանի հանգէպ, որ իբր միակ հայ քասերագիրը, կրցած է հարբիւրաւոր անձերու հետ նոյնանայ, անոնց մութին մէջ ապրիլ առանց իր գոյութենէն պզտիկ կտակած մը ներշնչելու մեզի: Դերասանը արուեստագիտ մըն է, որ կը ձգտի իրեն տուած անձերուն կեանքը քարզմանէ ու ապրիլ թեմին վրայ, մինչ

քաւերագիրը կրկնապէս արուեստագէտ մըն է, որ ոչ միայն գիտէ իր հոգիին խորը ապրիչ, միեւնոյն ժամանակ ա՛յնքան հոծ ու հակասական անձերու կեանքը, այլ եւ գիտէ համադրել՝ մարդկութեան ապրուած քաւերագրութեան տեսարանէն ընտրուած զանազան տիպեր, եւ անոնցով փիլեսփի մը յօրինուածքը շինել: Արուեստագէտ գրողը հեղինակ մըն է, մինչ ամենէն վարպետ դերասանը՝ քաղցմանիչ մը:

Գիծերու երաժիշտը, Հոգիներու նկարիչը Կիւստավ Մորո (Gustave Moreau) ըսած է, թէ նկարչութիւնը կրայոյզ լուսփունն է, որովհետեւ նկարչութեան մէջ խորհուրդները գիծերով կ'արտայայտուին: Բայց քաւերագրութիւնն ալ՝ նկարչութիւն մըն է, նրկարչութիւն մը՝ ո՛չ թէ կրայոյզ լուսփունն, այլ խօսող կրայուգրութիւններու, որ լուսփունն մէջ ապրուած առաւապանքը, մութին մէջ թափուած արցունքը, հիւզակի մը մէջ հիւսուած երջանկութիւնը, և հոգիին մէկ անկիւնը բացուած վերքը՝ հանճարի, զգացողութեան արուեստով մը կը գնէ հանրութեան աչքին առջև:

Այս անսակէտով Շիրվան, բոլոր տազանգաւոր թատերագիրներու նման հոգիներու երաժիշտ մըն է, ցնցող, շինող, կազմութիւնը երաժիշտ մը, որուն բառերուն և compositionին gameրը ախտավարակ շեշտ չունին քնաւ: Իր արուեստը ներդաշնակութիւնն է, անխառն անսիթեւեթ ներգաշնակութիւնը: Մէկ խօսքով, Շիրվանգատէ, իր արուեստագէտի հանճարով, իբր վիպասան և իբր թատերագիր գիտցաւ կեանքի դրուագներուն մէջէն ծնող փոթորիկները, կրայուգրութիւնները, մտամոլորութիւնները, ախտերը ապրիլ, սաղմնաւորիլ անոնց մով, և զանոնք անգամ մըն ալ իբր արուեստագէտ մայր ծնիլ, աշխարհի և մեր ազգին տալու համար

իր հոգեբանական ուսումնասիրութիւններու իբրև արդիւնքը:

Գրեթէ ՅՅ տարի առաջ էր, որ Շիրվան իր գըրական առաջին գործը տպագրութեան յանձնեց: Բաւական ատեն անիկա աննշան մնաց իբր հրապարակագիր, որովհետև շատ քիչերու տրուած էր գրիչի առաջին հարուածով համբաւ մը շինել: Իսկ երբ անիկա անհատ մը եղաւ, իր ճամբուն վրայ գտաւ հակառակորդներ, նոյն իսկ լուրջ կարծուած դասակարգէն: Եւ եղաւ ժամանակ մը, երբ Շիրվանզատէ ընտանիքի և զաւակներու հոգերովը բեռնաւորուած, իր դէմը գտաւ օրագրողներ, որոնք իր գործերուն ծանուցումը իրենց թերթերուն մէջ հրատարակելն անգամ զլացան, ինչպէս ինքը կ'ըսէր ինծի:

Այսօր իր Յորեկեանին առթիւ չկամութիւնները, կ'իրքերը տեղի կուտան, և մարդիկ՝ առանց գրական կամ կուսակցական նեղատութիւններու կը համախմբուին Շիրվանի անձին կամ անունին շուրջ, խոնարհելու համար անոր գրական արժանիքին առջև: Եւ արդէն ուրիշ կերպ կարելի չէր, որ ըլլար: Տաղանդը ամենազօր ոյժն է, որ կը յաղթանակէ, և պարտաւորիչ կ'ընէ իրեն համար գնահատումի և յարգանքի հրապարակային արտայայտութիւնը:

Երկու խօսք ալ և վերջացնեմ այն բառերով, որոնք սոյն համառօտ բանախօսութեանս բրուկը կազմեցին: Վիլհէլմին Շրոտէր, երբ առաջին ամուսնութեան վերջ բոլորովին յուսախաբ եղաւ, ըսաւ, Պեճֆ Ե որ արուեստագիտը դժբախտ ըլլայ, հաւնաւորին նուիրագործունը ունենալու համար: Դժբախտ արուեստագէտներուն մխիթարութիւնն են այդ բառերը, բայց ճշմարտութիւն ըլլալէ շատ հոռի

են: Արուեստագէտը ընդհակառակն պէտք է գնահատուած զգայ ինքզինքը, նիւթապէս և բարոյապէս: Տաղանդը յաջողութեան ճամբուն մեջ ջնասիր. կ'ապրի ամեն ճեղ: Շիրվանի նմանները, որոնք ապերախտ ասպարէզի մը յառաջընթացներն են, պէտք է քաջալերուին նիւթապէս ալ, որպէսզի կարող ըլլան շարունակել իրենց ճամբան, և ունենալ իրենց հետեւորդները:





## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Որչափ ատեն մարդ այլ եւս վեր բարձրացած է կ'ըսուի անասնութենէ, անիկա շարունակ իր մէջ պիտի ունենայ կազմակերպութիւններ, բլլան անոնք բաղաճական, ընկերական—կրօնական կամ բարեգործական: Կազմակերպութիւնները ժողովուրդի մը կամ մարդկութեան ապրած վիճակին արդիւնքն են: Գրիստոնէութիւն մը գոյութիւն պիտի չունենար, եթէ այն ատեն Հռովմէական պետութեան սահմաններուն մէջ քարոյական ամենածայրայեղ ապականութիւն մը բուռած չըլլար: Ինչ որ ալ ըլլայ, կազմակերպութիւնը միջոց մըն է միայն, նպատակի մը հասնելու համար: Եւ երբ ա'ն իր նպատակին կը հասնի, ալ իրեն գործը կ'ըլլայ պահպանել իրմով ստեղծուած վիճակը, և իր կանգնած ընկերական շէնքին խարխուլ մասերը նորոգել: Կազմակերպութիւն մը նպատակ մը չէ՛. այն օրը, որ ո'ւէ կազմակերպութիւն իր գոյութիւնն ու նպատակը կը շփոթէ իրարու հետ, այն օրէն անիկա անարժան է վայելելու մարդկայնական ո'ւէ համարումս Աշխարհի բռնապետութիւնները սկսած են միջոցի ու նպատակի շփոթումով:

Կեանքի պայմաններն են, որ ծնունդ կուտան խմբաւորումներու, կազմակերպութիւններու: Վը-

---

ՄԱՆՕԹ.—Խօսուած Յրեզնօի Հ. Բ. Ը. Միւրքեան հրապարակային ժողովին մէջ 1911 յուլ. 23 ին:

ասնգի մը առջև ամենէն անհաշտ հակառակորդները կը մէկտեղին, միասին կռուելու համար հասարակաց վտանգին դէմ։ Անձնապաշտպանութիւնը, որուն վրայ շատ կը խօսուի մեր մէջ, եւ որ դժբախտաբար շատ քիչ անգամ կը գործադրուի, անասնական պարտականութիւն մըն է մարդուս համար։ Օձը, որ իր թշնամին կը խայթէ, վտանգի պահուն, ձին՝ որ կ'աքացէ, ցուլը՝ որ կը խեթկէ իր եղջիւրով, երբեք իրենց մօրերնուն չենհարցնենք, թէ պէ՞տք է չէզոքացընել թշնամին, երբ վտանգ մը կը բերէ իրեն։ Դեռ անձնապաշտպանութեան խնդրոյն մէջ, ուրիշ երեւոյթ մըն ալ կայ անասուններուն վրայ դիտուած։ Ռուս անիշխանականը Բրոփոթքին կը պատմէ, թէ Սիպիրիոյ մէջ անասուններ ան, որոնք ապահովութեան միջոցին իրարու հակառակորդներ են, զիրար կ'ըսպաննեն ու կը լափեն։ Երբ ձիւնը ամեն կողմը կը ծածկէ, և զիրենք կը ստիպէ ապահով տեղեր ապաստանիլ, անոնք քարայրները կը մտնեն։ Եւ տարօրինակ բան, երէկի հակառակորդները, երէկի զիրար լափողները, այդ քարայրներուն մէջ խաղաղութեամբ կ'ապրին իրարու հետ, որովհետեւ գուրսը հասարակաց թշնամի մը կայ, և կեանքիտու պահպանումի բնազդը զիրենք բարեկամներ կը շինէ գոնէ ժամանակի մը համար։ Հայ ժողովուրդը դեռ չհաշտուեցաւ այս մտածումին։ Այս խնդրոյն մէջ մեր դերը պէտք է ըլլայ, հասկցընել մեր ժողովուրդին։ Թէ մարդ-կենդանիս անձնապաշտպանութեան տեսակետով անասունի մը քննազոյն պէտք է հետեւի, որոշ դատողութեան մը գաղտնիքն է, եւ անհասարակ պէտք է ինքը կեանքի ու պատիւի սպառնալիքին առջեւ կիծ մը, խայրոց մը, եղջիւր մը ունենայ, պատրաստ, այն համոզուով, թէ երբ անեն մարդ զինուած է ո՛ր եւ ուժով մը,

հասարակաց վստահը ի պահանջել հատկին պիտի կազմակերպե զիրենք, միասին կոուելու, միասին ապրելու, կամ ի հարկին միասին մեռնելու համար:

Բայց այդ անհատական ջանքերուն զուգընթաց ուրիշ գործ մ'ունի մարդկութիւնը կատարելիք, և այդ կատարելիքը ԲԱՐԵԴՈՐՄ ՈՒԹԻՒՆՆ է, կազմակերպուած, ճշտուած բարեգործութիւնը, կեանքի կռիւին մէջ ամեն բանակի, ամեն ժողովուրդի կամ ամեն ազգի տրուած չէ միշտ յաղթական վերադառնալ տուն կամ հայրենիք: Պարտեալներ կան կեանքի գուպարի դաշտին վրայ, ինկածներ կան ճամբաներուն երկայնքը, որոնք, սփոփանքի, մըխիթարութեան, քաջալերութեան, օժանդակութեան պէտք ունին: Այդ պէտքը կը մատակարարէ մարդուս մէջ գոյութիւն ունեցող ընկերասիրութեան, զոհողութեան, բարեգործութեան զգացումը: Երիքովի ճամբուն վրայ ինկած վիրաւորը, որուն գութի զգացումով մը կը մօտի Սամարեցին, յաւիտենական պատկերն է մարդկութեան: Յաւիտենական ցաւը և յաւիտենական բարեգործութիւնը կը խորհրդանշէ Աւետարանով մեզի բացատրուած կեանքի այդ արիւնոտ դրուագը: Ըսուած է, թէ Աստուած երբ մարդը ստեղծեց, տեսնելով, թէ իր ձեռագործը կրնայ հեռանալ իրմէն, անոր սրտին մէջ դրաւ բարեգործութեան զգացումը իբրև իր էութեան մէկ մասը, որպէս զի մարդ յիշէ, թէ ինքը Աստուծոյ մը մէկ յայտնութիւնն է աշխարհի վրայ:

Հայ ժողովուրդը, իր մարտիրոսացումի տաժանքոտ օրերուն, որ իր կեանքի արիւնով ու մոխիրով գրած պատմութեան վերջին քառորդ զարը գրաւեց ամբողջ, իբրև իր գոյութեան անհրաժեշտ ու կենսական պէտքերէն մին իրմէն ստեղծեց բարեգործական կազմակերպութիւն մը, նպատակ ունենալով տառապանքին թեթեւացումը, իրարու

մօտ բերելով, հարուստն ու աղքատը, մասւորականն ու հայ դատին զինուորը, կրօնական համոզումով անջատուածն ու կուտակցական մտասեւեռումով կուրցածը, ու այդ բոլոր հատուածներէն ու զատուածներէն կազմելու Հայկական Ընդհանուր Միութիւն մը, սա հալածուած ազգին վերաշինութեան, մտիթարութեան, և վերածնութեան կենսական գործին համար:

Ամեն կազմակերպութիւն աշխարհի մէջ իր բարեկամներն ունի, ինչպէս նաև իր թշնամիները: Եւ այս այսպէս պիտի մնայ որչափ ատեն, սիրտերը, մտածումները, գլուխները, հոգիները մէկ չափով, և մէկ խմորէ շինուած չեն: Հակ' Բարեգործական Ընդհ. Միութիւնը բացառութիւն մը պիտի չըլլար ապահովաբար: Հայկ. Բ. Ը. Միութեան նման կազմակերպութեան մը ապագան կը չափուի իր նպատակէն, իր որդեգրած միջոցներէն, իր արտադրած արդիւնքէն: Քրիստոնէութիւնը ցնորք մը նըկատուեցաւ իր ծնունդի ու ծագման օրերուն, ունոյնիսկ Հռոմէական վիթխարի բանակաները անգամ, որոնք ապահովաբար աւելի վիթխարի էին քան Դաշնակցական քանակները, տկարացան, և Քրիստոնէութիւնը հալածանքի, չկամութիւններու, և ատելութիւններու մէջէն, գէպի յաղթանակը յառաջացաւ: Բարեգործական Միութեան համար ալ չարագուշակ մարտեր են երեցան այս բեմերու վրայ, և այս երանելի երկրին մէջ, և որոնք անոր մօտալուտ մահը կանխագուշակեցին, բայց կերուի թէ անոնք կեանքը շփոթած էին մահուան հետ: Լա Պրիւյէր կ'ըսէր. թէ Կան սոցոս հոգիներ ցեխով ու զարշուրեանք շաղուած, շահի եւ օգուտի սիրահար, ինչպիսի կան ազնիւ հոգիներ, որոնք փառքի ու առաքիւնութեան սիրահար են: Որչափ ատեն փառասիրութեան

և առաքինութեան սիրահար հոգիներ գտնուին աշխարհի մէջ, — և միշտ պիտի գտնուին — բարեգործութիւնը իր ընթացքը պիտի շարունակէ, և պիտի ապրի այնչափ ատեն, որչափ ատեն անիկա հաւատարիմ մնայ իր մարդասիրական սկզբունքներուն, և նուիրուած՝ իր առաջադրած նպատակի համաձայն, իր ազգաշինութեան, և ընկերական վերածնութեան գործին: Եւ եթէ գտնուին մարդիկ՝ ապրինքսու ընթացքին, որոնք բարեբը շփոթել ուզեն շարիքին հետ, և բարեգործութիւնը՝ չարաս գործութեան հետ, պիտի փոստանք անոնց այդ անօրինակ և շինծու մտայնութեանը վրայ, և ասանց յուսահատելու առաջ պիտի քայլենք: Յամառութիւնը տկարներուն զէնքն է: Իմաստուններն ալ յամառութիւն մը ունին: որ հիմնուած է սկզբունքներու վրայ, ճշմարտութեան եւ իրաւունքի վրայ, կարգի, կանոնի, պարսփի ու վեհանձնութեան վրայ: Եւ Բարեգործական Միութիւնը. իմաստուններու այդ յամառութիւնը, կամ աւելի ճիշտ բառով՝ հաստատականութիւնը որդեգրած է իրեն իբր նշանաբան, յաղթելու համար սկարներուն յամառութեանը: Ոմանք կ'ուզեն Բ. Միութիւնը քանդուած տեսնել, նոյն աւերակներուն վրայ իրենց եսին բաղինը կանգնելու համար: Ես ալ կ'ուզեմ որ քանդուի այդ Միութիւնը, բայց ես այդ քայքայումին համար մէկ պայման կ'ընդունիմ. — Պէտք է քայքայուի Հ. Բ. Ը. Միութիւնը, այն ատեն, երբ ալ ազգը և որբերը անոր պէտք չունենան: Որչափ ատեն այդ պէտքը կայ, դաւաճաններ պիտի ըլլան անոնք, որոնք որբին և այրիին նեցուկ եղող Հայկ. Բ. Ը. Միութիւնը քայքայած պիտի ուզէին տեսնել:

Այսօր որոշ իրողութիւն մը կայ առջեւնիս և

որոշ ու տխուր վիճակի մը հանդիսատեսներն ենք  
ամենքնիրս: Մեր երկրին մէջ թշուառութիւն մը  
կայ, որ պիտի կրնայ մեղմանալ հասարակաց գոր-  
ծակցութեամբ, վէրքեր կան բուժուելիք, զորս  
բռնապետութիւնը իր ամբողջ ճիգը թափեց աւելի  
ևս արիւնոտելու: Արիւններու ծովուն վրայ մեր  
կրած ազգային նաւարեկութեան պահուն, հայ մար-  
տիրոսները, որոնց յիշատակը ազգը վազը պիտի  
տօնէ, և վաղը Հայ ժողովուրդը իր զաւակնե-  
րուն սուգի դառնութիւնովը պիտի մասնակցի Օսմ.  
Սահմանադրութեան տարեդարձի հանդէսներուն,  
ազգին կտակեցին այրիներ, որբեր, մայրեր ու քոյ-  
րեր, և զանոնք յանձնեցին այդ նաւարեկութենէն  
վերապրողներուն, որոնց նաւիրական պարտակա-  
նութիւնը պիտի ըլլար հուաքաբար օգնութեան  
ձեռք երկնցընել մեզի կտակուած դժբախտներուն,  
անոնց ազազուն և տկար մարմիններէն կեանք մը,  
անոնց չմշակուած միտքերէն՝ ճառագայթ մը, և  
անոնց ցաւած սիրտերէն առաքինութիւն մը շինե-  
լու համար:

Միրելի Հայրենակիցներ, առածի կարգ անցած  
ճշմարտութեան պէս բան մը կայ, որ կ'ըսէ. Այլհ  
հեռու սրճե հեռու: Թող այս առածը ճշմարտութիւն  
մը ըլլայ հոգ չէ'. բաց յիշատակներ կան, որ չեն  
հեռանար մեր աչքերէն, անոնք մեր մորթին մէջ  
կ'ապրին, կ'ապրին իբրև մեր կեանքին մնունդը,  
կ'ապրին իբրև մեր պարտականութեան մղիչ ոյժը:  
Եթէ կեանքին նպատակը երջանկութիւնն է, եր-  
ջանկութիւնն ալ ուրիշ բան չէ հիթէ ո՛չ կաստելիք  
գործ մը, սիրելիք առարկայ մը, եւ յուսալիք բան  
մը ունենալուն մէջ: Մեր կասարելիք մեծագոյն  
գործը միսթարութեան գործն է, մեր սիրելիքը՝  
բարիքն է, և մեր յուսալիքը՝ մեր ազգային առողջ

վերածնութիւնը: Այս ճամբուն մէջ է, որ տալը ստանալ կը նշանակէ, ուրիշները երջանկացնելը՝ երջանկանալ կը նշանակէ: Զգացուած ուրախութիւններուն ամենէն մեծը, վայելուած հաճոյքնեմուն ամենէն ընտիրը, ապրուած երջանկութեան ամենէն ազնիւը յանուն տառապողներուն, զըրկուածներուն, հարստահարուածներուն տալ գիտնալուն և տալ կարենալուն մէջը կ'ամփոփուի:

Եւ Հ. Բ. Ը. Միութիւնը գերազանց միջոց մ'ն է, տուողին և առնողին, նպաստողին ու նըպաստասուորուածին երջանկութիւնը ապահովելու համար: Յոյն իմաստունը, Պիւթագոր, ժամանակին իր աշակերտներուն դասախօսած պահուն անոնց կ'ըսէր. Մի՛ խորհակե՛ք Տանտինս սեղանը, բարուքեան եւ զիտութեան զգացումը մի՛ խի՛ք սրհն: Մարդուն մէջ բարեգործութեան զգացումը այն է, ինչ որ է սեղանը՝ տաճարին համար: Հոն է, որ զոները կը մատուցուին, հոն է, որ մարդիկ կը սրբագործուին: Աշխատելու ենք շարունակ զարգարուած և կենդանի պահել Մարդ—Տաճարին սեղանը, — Բարեգործութիւնը, և չթողունք, որ ամբարիշտ ձեռքեր, յաջողին խորտակել կամ պղծել մարդկային տաճարին այդ ամենամաքուր սեղանը:

Ի՞նչպէս պիտի կրնաք, սակայն, այդ սեղանին սրբութիւնը ապահովել միանգամ ընդ միշտ: Հարցումը շատ պարզ է, և պարզ է պատասխանն ալ: Բարեգործութեան զգացումը տալով կը սնանի, տալով կ'ապրի: Ըսուած է, թէ բարեգործութիւնը կարողութիւն մըն է, որ չգործածուելով կը սկարսնայ, կ'անդամաւորուի. . .

Բաց պահեցէք բարեգործութեան համար ձեր ասին ու քսակը, եթէ ո՛չ ամրապէս կը փակուին հետզհետէ. և յետոյ մահուան մատէն զատ ո՛չ մէկ

բան կրայ զանոնք բանալ: Բա՛ց պահեցէք, Բարեկամներս, ձեր ասին ու քաակը, երբ պէտքը զգալի է, և երբ ազգային ընդհանուր վստահութիւնը կայ, թէ Հայկ. Միութիւնը՝ իբրև միակ վստահնչի կազմակերպութիւն, ձեր քրտինքի, ու աշխատութեան և զսնդութեան կաթիլներովը շաղուած լումաները ի՛ր բարեսիրական, ու միայն բարեսիրական նպատակին պիտի գործածէ:



## ԱՅՍՕՐՆ ՈՒ ՎԱՂԸ

Ամբողջ մէկ տարուան ընթացքին, բոլոր երեկոյթի հանգէսներու մէջ, որոնք հայերուն կողմէ սարքուած էին, երկու բան աչքիս զարկած է. — տիրող տրտմութիւնը և դրամականի պահանջը: Չեմ գիտեր թէ այս տրտմութեան քօղը ե՞րբ պիտի թօթուենք մեր վրայէն. ե՞րբ պիտի փարատին այն վիշտերն ու նեղութիւնները, որոնք այս դժբախտ ազգը կը կրծեն, և որոնց թեթեւացումին նուիրուած է Հ. Բ. Ը. Միութիւնը: Իրապէս երջանիկ ժողովուրդ մը պիտի ըլլանք այն օրը, երբ Աղքատտխնամ ու Բարեգործական կազմակերպութիւններու պէտքը չունենանք: Պիտի տեսնե՞նք այդ երջանիկ օրը. պիտի գա՞յ ժամանակ մը, երբ դէմքերու վրայէն փարատած ըլլան դառնութեան ու սառապանքի խորշումները, երբ աչքերէն չորցած ըլլան արցունքները, և ժպիտները պիտի փայլին՝ գէմքերու վրայ, պայծառ ու անաղօտ արշալոյսի մը պէս:

Ասոնք հարցեր են, որոնց դրական պատասխան մը տալու համարձակութիւնը դեռ տուած չէ՛ մեզի աշխարհի դարաւոր պատմութիւնը: Բան մը միայն գիտենք, իբրև ստոյգ իրականութիւնը, և անիկա ալ աս է, թէ երջանկութիւնը չտրուիր, կը փոխանակուի:

ԾԱՆԹԹ. — Խօսուած Բրովիսեկնս, Հ. Բ. Ը. Միութեան հանդիսին մէջ, 22 հոկտ. 1911 ին:

Մենք աշխարհի մէջ երջանկութեան մը գործաւորներն ըլլալու ենք: Եւ մեր գործաւորի պարտականութիւնը կարենալ կատարելու համար, գիտնալու ենք, թէ ի՞նչ պայմաններու տակ մենք կարող պիտի ըլլանք արդիւնաւորել մեր կեանքը, և թէ ի՞նչպէս պէտք է փոխանակել այդ փափաքուած երջանկութիւնը:

Մարդերուն ինչպէս ժամանակին միջև փոխազարձութեան կապ մը կայ, զոր կարելի չէ խորտակել առանց Վասսակար արդիւնքի: Մարդերու միջև երբ յարաբերութեան կապը խզուի, կը վերնայ խաղաղութիւնը, և ատելութիւնը իր աւերը գործելու կը սկսի: Ժամանակին մէջ գտնուած կապերն ալ եթէ խզուին, ճշմարտութիւնն ու արդարութիւնը կը դադրին գոյութիւն ունենալէ:

Մենք, Սիրելի Հայրենակիցներ, մեր կեանքին մէջ սխալ մը ունինք. և այդ սխալը մեր շեշտուած կողմը կը մնայ շարունակ: Երբ խնդիրը կը դառնայ մեր անհատականութեան, մեր անձին շուրջ, այսօրը շատ մեծ կարեւորութիւն ունի. այսօրով աւելի կը մտահոգուինք մեր անձին համար: Եթէ խնդիրը երջանկութեան շուրջ դառնայ, կ'ուզենք, որ այսօրուրնէ երջանիկ ըլլանք. եթէ խնդիրը դառնայ յաջողութեան կամ հարստութեան շուրջ, կ'ուզենք որ այդ յաջողութիւնը կամ հարստութիւնը այսօրուրնէ սկսի: Եւ ապահովաբար իրաւունք ունինք այդպէս փափաքելով:

Եւ, սակայն, երբ խնդիրը սողոսող հաւաքական կեանքին շուրջ կը դառնայ կարծես մեր մտայնութիւնը կը փոխուի բոլորովին, մենք տարբեր մարդեր կ'ըլլանք, կը մոռնանք ներկան, և վաղուան կեանքովը, ապագայով կը մտահոգուինք: Ինչո՞ւ, չեմ գիտեր, միեւնոյն չափը, միեւնոյն դատումը, չենք գործածեր երկու պարագային ալ:

Ըստուած է, թէ ճշմարտութիւնը ներկան ու ապագան վեհի վեհ ղնող գաղափարին վեհ չէ, այլ այն գաղափարին վեհ, որ ներկան ու ապագան ներդաշնակութեան վեհ կը դնէ իրարու հետ: Մէկը մեծ ծառայութիւն մը պիտի չկրնայ մատուցանել ունէ ազգի կամ անհատի, հայրենիքի կամ ընկերութեան, եթէ այսօրը մոռնալով, վաղով միայն հետաքրքրուի, և ոչ ալ մէկը, որ վաղը մոռցած, այսօրուան միայն նուիրուած է: Այս տեսակ մտածում մը, Կաղափար մը, որ ներկան ու ապագան իրարու հետ վեհի մէջ կը գնէ, ծառայած չըլլար ընաւ ճշմարտութեան:

Այսօրը իր կարեւորութիւնը ունի, ո՛չ միայն իրեն համար, այլ և կարեւորութիւն ունի վաղուան համար: Այսօրուան գործերը, մտածումները, ձեռնարկները, զոհողութիւնները վաղուան ազգային, ընկերական անհատական կեանքին հիմնին են: Անոնք են, որ վաղը՝ իր անընդհատ շարունակութեանը մէջ իրենց վրայ պիտի կրեն: Ո՛րքան օգլմտութեամբ, տրամաբանութեամբ, կեանքով ու գործունէութեամբ ապրուած ըլլայ այսօրը, ա՛յնքան ամուր կերպով երաշխաւորուած պիտի ըլլայ վաղուան կեանքը: Ըշմարտութիւն մը խորտովանեանելու, ապրելու, և յաղթանակել տալու միակ միջոցը, այսօրին ու վաղուան, կամ ներկային ու ապագային միջև ստեղծուելիք այս ներդաշնակութեան մէջ կը կայանայ:

Երբ ուրիշներ ազգային տառապանքին արիւնոտ ցաւերովը գալարուած, վաղուան ծրագիրներով կը հետաքրքրուին, ու կը գործեն, Հ. Բ. Ը. Միութիւնը, այդ միեւնոյն ցաւերուն զգայուն, նախապատիւ կը համարի ներկային ամժանքոտ ու ցաւատանջ իրականութեամբը հետաքրքրուելի: Ազգ

գային հաւաքական գործունէութեան դաշտին մէջ անհատական մտածումի և նախասիրութեան գրութիւնը կ'որդեգրէ, և ազգային մխիթարութեան ու վերաշինութեան գործին համար այսօր կը նախագասէ վաղուընէ, դիտնալով, թէ այսօր առնուած հաստատուն քայլ մը, վաղուան առնուելիք հաստատուն քայլին անվրէպ երաշխաւորութիւնն է: Որբերու, այրիներու, զրկեալներու դատը, հարբս տանարուածներու, նօթիներու, մերկերու դատը այսօրուան գատն է: աւելի քան վաղուան: Վաղը թերեւս ուշ պիտի ըլլար, քանի որ այսօր ամեն տեսակ փորձութիւն, անօթութիւն, զրկումուտառապանք, իրենց սև ճանկերովը գրկած են զըթբախտներու անհուն թիւ մը մեր հայրենիքին մէջ: Ահա թէ ինչո՞ւ համար Հ. Բ. Ը. Միութեան գոյութիւնը մեր աչքին զարնող ամենէն մեծ մխիթարական երեւոյթն է, ու կ'ըլլայ:

Անիկա տակաւին իր մանկութեան շրջանին իսկ, իբրև լուրջ գործ, իր դերը կը կատարէ հինգ տարիէ ի վեր, մերինին նման ցաւերով բեռնաւորուած ազգի մը մէջ: Իր նպատակն է երջանիկ ընել մարդերը, որոնք պէտք ունին գութի ու օժանդակութեան, այն վստահութեամբ թէ այսօր իրմով բարերարուածները, վաղուան բարերարները պիտի ըլլան, այսօր իրմով երջանկացածները վաղուան երջանկացնողները, այսօրուան փրկուածները վաղուան փրկիչները պիտի ըլլան: Ազգային երջանկութիւն մը այսպէս կը պատրաստուի ու կը պատուաստուի, մարդ մարդու հանդէպ և մարդ ժամանակին հանդէպ այս կերպով միայն պիտի կրնայ կատարել երջանկութեան իր աւուտուրը:

Պիտի դանդաղէի՞նք այդ երջանկութեան առուտուրին մարդը ըլլալու: Բայց ամեն մէկ յա-

պաղուժի վայրկեան , նոյն իսկ վազուան մասին մեր ունեցած մտահոգութիւններուն ու փափաքներուն լրջուժիւնը կասկածի տակ պիտի ձգէր : Եթէ մեր ազգասիրութիւնը հիմնական զգացում մըն է , այսօր մեծագոյն պատեհութիւնը ունինք զանիկա ապացուցանելու գործընդէ Եւ այդ ապացոյցը ա՛յսօր պէտք է մեզի : Ան որ այսօր կը նուիրուի , վաղուան իր նուիրումին վստահութիւնը կ'ունենանք : Մեծ և բարի տրամադրութեանէ մը նախընտրելի է փոքր ու բարի գործ մը :

Երբ օր մը Պօղոս առաքեալ , բանտէն բերուելով կը խօսէր Փելիքս դատաւորին , և անոր կնոջը , և երբ Պօղոսի բառերը երկաթէ ատրաչէկ գամբու պէս մխուեցան , սկեպտիկ , և ճշմարտութեան ու յարգկային տառապանքին անտարբեր հոգիին խորը , Փելիքս զարհուրած , դարձաւ ու Պօղոսին ըսաւ , հիմա զնա , եւ երբ ժամանակ ունենամ իեզ կը կանչելն : Բարեկամներս , Փելիքս երբեք քաջութիւնը չունեցաւ անգամ մ'էն ալ Պօղոսը իր ներկայութեան կանչելու , և ընդունելու անոր կողմէն քարոզուած ճշմարտութիւնները : Եւ ասանկով Փելիքս անգամ մըն ալ ապացոյցը տուաւ ախարհի , թէ ով որ այսօր իր պարտականութիւնը կատարելու բարոյական քաջութիւնը չունի , երբեք վաղը պիտի չկրնայ ունենալ :

Սիրելի Հայրենակիցներ , չէ՞ք խորհիր , թէ սոյն հանգէսը լաւադոյն պատեհութիւնն է մեզի համար , մեր ազգին թշուառներուն հանդէպ մեր միեթառութեան պարտականութիւնը կատարելու : Զէ՞ք խորհիր , թէ բարեգործութեան ճամբուն վրայ մեր թերացումներն ու կաղացումները ա՛յսօր կրնան դարձանուիլ , գոնէ մասամբ , եթէ գնահատելով Հ. Բ. Ը. Միութեան ազգանուէր ջանքերն ու զոհո-

ղութիւնները, սիրայօժար մեր բաժինն ու օժանդակութիւնը բերենք այդ մեծ մարմինին: Ձմեռն արդէն սկսաւ մեր հայրենիքին մէջ, արդէն գոյութիւն ունեցող չքաւորութեան և առաւապանքին վրայ այսօր աւելցան պատերազմի նեղութիւնը, և արուեստական սովը: Եւ այս ամենուն հանդէպ Հ. Բ. Ը. Միութիւնը միայն կայ, որուն գիմում կ'ընեն բոլոր տառապողները: Պէտքին մեծութիւնը, և ցաւին զառնութիւնը դարմանի կը կարօտին, և մե'ծ դարմանի: Ատոր համար է, որ այսօր այս բեմէն գիմում կ'ընեմ Ձեզի, ձեր ազգասիրական ու հայրենասիրական զգացումներուն: Արդիւնաւորեցէք այդ զգացումները: Եւ արդիւնաւորեցէք այսօր, վաղը ուչ է արդէն: Ձեր զգացումին միացուցէք ձեր լուծաները, անդամակցեցէք Միութեան, մտէք ազգային երջանկութեան փոխանակութեան ճամբուն մէջ, այդ երջանկութեան առեւտուրի մարդն եղիք: Երջանկացուցէք, երջանկացուցէք թշուառները, սա ապահովութեամբ, թէ դուք ալ երջանկացած պիտի ըլլաք:



## ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԲԱՆ

Չեմ գիտեր, զիպուածակա՞ն է թէ խորհրդածուած, այն զուգադիպութիւնը, որով տեղի կ'ունենայ, Միութեան Վարչական Ժողովին այս տարուան գումարումը մեր Երկնաւոր Վարդապետին Համբարձման տօնին հետ, զոր Հայ Եկեղեցին վաղը կը տօնէ իբրև փառաւոր յաղթանակի մը օրը:

Քրիստոնէութեան առաջին գործաւորներուն համար, մարդկայնական տեսակէտով ցաւի, դառնութեան և ընկճումի օր մըն էր Համբարձումը: Յաւիտենական բաժանումները երջանիկ առաւօտի մը արշալոյսը չեն եղած մարդկութեան համար: Ընդհակառակն, անոնք յուսահատութեան և վիշտի աղբիւր մը եղած են: Առաքեալները երբ Բեթանիայէն Երուսաղէմ կը դառնային Յիսուսի Համբարձմանը հանդիսատես ըլլալէն վերջ, տրտմութեան բաւական լուրջ պատճառներ ունէին այս տեսակէտով: Երուսաղէմի մէջ իրենց կը սպասէր քահանաներու վրէժխնդրութիւնը, սկեպտիկներուն ծաղրանքը, խուժանին հալածանքը, փարիսեցիին ատելութիւնը: Եւ իրենց գործունէութեան առջև կը բացուէր աշխարհը, յաւիտենական կոիւի այդ ասպարէզը, ուր դէմ դիմաց բանակող իմաստասիրական, կրօնական, ընկերական բոլոր վարդապե-

---

ՄԱՆՈՔ.— Խօսուած Ուստի հայ Բողոքական հովիւներու Միութեան Ժողովին մէջ 13 մայիս 1911 ին:

առութիւնները, բոլոր գրութիւնները գեղեցիկ և ոսկեզօծ շքեղ պատկեր մը չէր, որ կը պարզէին իրենց սկանակի քայլերուն առջև։ Եւ սակայն, հակառակ այս անորոշութեան և հակառակ զինուած ասեղութիւններուն, Աւետարանը երբ կը պատմէ, նոյն օրուան առաքեալներուն վերադարձը Երուսաղէմ, մեզի ցոյց չտար անոնց դէմքերուն վրայ վիշափ ու թախիժի ուէ նշան, ընդհակառակն կ'ըսէ, թէ անոնք մեծ ուրախութեամբ Երուսաղէմ դարձան (Ղուկ. ԲԳ. 52)։

Յիսուսէն 1800 տարիներ վերջ աշխարհի պետական ոյժերէն մին, Մեծն Նաբոլէոն, երբ օր մը պատեհութիւնը ունեցաւ իր կարծիքը յայտնելու Քրիստոսի մասին, ըսաւ, կը անկշամ մտադր, եւ կ'ըսեմ ձեզի, թէ Քրիստոս մտրդ չիտ։ Աղեփսանդ, Կեսար եւ ես մեր կայսրութիւնները ոյժի վրայ հիմնեցինք, իսկ անկիս սիրոյ վրայ հիմնեց, եւ անկ վայրկեան միջոնաւոր մտրդեր մեռնելու պատրաստ են իրեն համար։ Առաքեալները, որոնք դեռ երէկ տկարներ ու չհամոզուածներ, նոյն իսկ քրիստոնէական գերագոյն փաստին համար Գեթսեմանիի մէջ ու Գողգոթայի բարձունքին վրայ գասալիքներ էին. արդեօք Համբարձման օրը կրցա՞ծ էին Փրբանսայի պետական մեծ մարդուն մտածումով գոտեպնդուիլ։ Արդեօք նոյն օրը ըմբռնա՞ծ էին, թէ Սիրոյ կայսրութեան հաստատութեանը համար պիտի գտնուէին զոհուելու պատրաստ միլիոնաւոր մարդեր։ — Չենք գիտեր։ Միայն սա գիտենք, թէ անոնք մեծ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ, ուրկէ դեռ քառասուն օրեր առաջ վիշտերով համակուած, յուսախարութիւններով և տառապանքներով լեցուն հեռացած էին։ Եւ անոնց զգացած ուրախութիւնը երբ վերլուծենք, մենք պիտի տես-

նենք, թէ անիկա արդիւնքն է հիմնաւորուած ՀԱ-  
ԻԱՏՔԻ մը, արմատացած ՍԻՐՈՅ մը, և խորագլխ  
զգացուած ՅՈՅՍԻ մը. հաւատքի մը՝ Յիսուսի ան-  
ձին հանդէպ, սիրոյ մը՝ քրիստոնէական ճշմար-  
տութեան համար, և յոյսի մը՝ արդարութեան վերջ-  
նական յաղթանակին: Առանց այս հիմնական փո-  
փոխութեան կարելի պիտի չըլլար առաքելական մեծ  
ուրախութիւնը բացատրել, ինչպէս կարելի պիտի  
չըլլար բացատրել լոյսն ու ջերմութիւնը, առանց  
արեւին և անոր բաղկացուցիչ մասնիկներուն գո-  
յութեանը:

Սիրելի պաշտօնակիցներ, այսօր առաւել կամ  
նուազ չափով Ձեր դէմքերուն վրայ ալ կը տեսնեմ  
այդ ուրախութենէն մաս մը, նչոյլ մը գտնէ, որ  
իրաւունքի բաժինն է Աւետարանի այն բոլոր գոր-  
ծաւորներուն, որոնք իրենց կարողութեան չափով  
կրցած են աշխատիլ և օգտակար ըլլալ Աւետարա-  
նի դատին, և քրիստոնէական մխիթարութեան գոր-  
ծին: Գիտեմ դուք Բեթանիայէն չէք դառնար, զի-  
տեմ ձեզի համար գոյութիւն չունէին այն գծուա-  
բութիւններն ու հակառակութիւնները, այն վա-  
ղուան անստուգութիւնը, որ այնքան ահաւոր  
կերպով կը ցցուէին առաքեալներուն հանդէպ: Քր-  
սան դարերու կրօնական մեծ յեղաշրջումը բաւա-  
կանաչափ հարթեց, գտնէ աշխարհի մէկ մասին մէջ,  
այդ հոգեկան տրամադրութիւններու վայրագու-  
թիւնը, առանց սակայն կարենալ բառնալու փու-  
շերը և դժուարութիւնները, որոնք ճշմարտութեան,  
արդարութեան, քրիստոնէական եղբայրութեան  
դաշտին մէջ կը բուսնին հետզհետէ, և մեծ ճի-  
գեր ու գոհողութիւններ կը պարտադրեն Տիրոջ  
այգիին մշակներուն վրայ: Դուք այդ այգիէն կը  
վերագառնաք տարուան մը գործունէութեան հա-  
շիւը տալու համար Եկեղեցիին, և երէկի փորձա-  
ռութեամբը պատրաստելու վաղուան արդիւնարե-

բութեան ծրագիրը: Կը շնորհաւորեմ Ձեր զգացած ուրախութիւնը, անոր համար, որ կը հաւատամ, թէ ամեն մշակ, որ կ'աշխատի, և անկեղծօրէն իրեն լաւագոյնը կ'ընէ իր պաշտօնը արդիւնաւորելու համար, անիկա նոյն իսկ իր ձախողանքին մէջ ուրախանալու իրաւունքը ունի: Որովհետև մարդիկ իրենց ձեռք բերած արդիւնքէն չէ որ կը չափուին միշտ: Ո՛րքան մեծ մեծ գէմքեր կան, որոնց կեանքը արդիւնաւոր չէ՛ եղած, միջավայրի և պարագաներու բերմամբ, բայց որոնց կեանքը անձնագունութեան, պարտականութեան, նուիրումի բուրմունք մը եղած է ամբողջովին: Մարդկութիւնը ապերախտ եղած պիտի ըլլար, եթէ զլացած ըլլար այդ ուրախութիւնը աշխատողին և նուիրողին:

Դուք ձեր կարեւոր խորհրդակցութիւնները պիտի ունենաք անշուշտ, վաղուան ձեր գործունէութիւնը աւելի ևս արդիւնաւորելու համար: Այս երեկոյ ինքզինքս բարեբախտ կը զգամ համակերպելով ինծի եղած հրաւէրին, որպէս զի սա պանդխտութեան ափերուն վրայ Հայկական Մայր Եկեղեցիի մէկ ներկայացուցիչն ալ մասնակցէր այդ հոգեւոր ուրախութիւններուն, որոնք մէկ բարեբաստիկ արտայայտութիւնը պիտի ըլլան, կը յուսամ, վաղուան ազգային լայն համերաշխութեանը, որուն պէտք ունի Հայ ազգը, իր գոյութեան պահպանումին համար:

Սիրելի պաշտօնակիցներ, այս ուրախութեան օրերուն մէջ, ես նպատակ չունիմ բնաւ ակնարկութիւններ մը ընելու անցեալին, կամ վերջուշումներ ընելու այն տխուր դրուագներէն, որոնք մեր կրօնական բաժանումին և երկպառակութեան դառն օրերը յիշեցնել կուտան մեզի: Անոնք պատմութեան կը վերաբերին, և պատմիչի մը անողոք դա-

տաստանը օր մը իր՝ վճիռը պիտի դնէ անշուշտ հասարակաց խղճին առջև: Բայց քանի որ ժամանակը կը բալէ, և մեր ամեն մէկ քայլափոխ կամ՝ դէպի մերձեցում կը տանի մեզ, և կամ՝ դէպի ատելութիւն, մենք աշխատութիւն մը ունինք ներկայիս մէջ, որ է օժանդակել ամեն գնով, այն գընացքին միայն, որ այդ մերձեցումին, այդ համերաշխութեան, այդ ազգային եղբայրակցութեան կը տանի: Այս ամենուն մէջ, սակայն, կէտ մը միայն կայ, որու մասին չեմ կրնար իմ ափսոսանքս զսպել:

Վեց ամեաներէ ի վեր Ամերիկա իմ բնակութիւնըս ինծի սա համոզումը տուաւ, թէ կը գտնուիմ երկրի մը մէջ, որ գերազանցօրէն կրօնական է, և նոյն չափով ալ կրօնական ներողամտութեան ոգիէն կ'առաջնորդուի: Ամերիկա խղճատօրէն իր մէջ պահած է Եւրոպայի հիւսիսի ժողովուրդներուն մանկունակ նուիրումը դէպի գերբնականը, վերացականը, որովհետև ատով միայն պիտի կրնայ հակակրչուել կեանքի պայքարին մէջ իր ապրած յոգնեցընող եռանդը, ջղային հալումաչը: Հոգեկան ըզձանքի մը մարդուն մէջ ստեղծած կարողութիւնները կրօնքով միայն պիտի կրնային սնանիլ, և Ամերիկացին, նոյն իսկ իր նոր միջավայրին, իր տնտեսական կեանքի բարդ ու կնճռոտ մեքենականութեանը մէջ, աւելի պինդ փարեցաւ այն բոլոր կապերուն, որոնք զինքը ամիջական հպաւորութեան մը մէջ կը պահէին իր փոյփայած գերագոյն իտէալին՝ իր պատշաճ Աստուծոյն հետ: Եւ Ամերիկեան ազգին մէջ տրոփող այդ կրօնական վերյիշումներն էին, ապահովաբար, որ ներողամիտ աչքով նայել տուին Brigham Young (Պրիկըմ Երնկ)ի, որ Վերջին օրերու Մուրաբերուն կամ Մորմոնականութեան առաջնորդեց,

որ DoWie (Տաուի)ին ներեց, Սիօնականութիւնը կեննելու, իբրև նոր Եղիա մը, և որ Միս Էտիին թոյլատրեց, իբրև նոր մարգարէունհի իր Քրիստոս-Պիտոսիւն եկեղեցին կազմելու։ Այս երեւոյթները կրնան բացատրուիլ միայն այն իրողութեամբ, թէ դրապաշտ և տոյարապաշտ Ամերիկան, իր մէջ խորապէս կը պահէ կրօնքի խտնապաշտ ոգին, և այդ երկուքին միացումովն է, որ ան կրնայ իբրև մարդ և իբրև ազգ իր հաւատարակչութիւնը պահպանել։

Կրօնական խորունկ զգացումը հին աշխարհի մէջ աններող մոլեռանչութիւն մը եղած է միշտ, մինչդեռ Ամերիկայի մէջ անիկա մոլեռանչութիւն մը չըլլալէ զատ, իրմէն ծնցուցած է ներողամտութեան ամենալայն ոգին։ Ամերիկան բաց դաշտն է եղած գաւառանայնորդ բազմազիմութեան մը, և հոս մարդ մը կրնայ լըջօրէն ըսել, ինչպէս դիտել կուտայ Saint-Andre de Lignereux, «եթէ ձեր նոր համոզումը յուրջ է, եթէ դուք անոր մեջ կը գտնեք դրախտի մը առաջնորդը կամ յոյսը, ածիկա յարգելի է» (L’Amerique au XXe siecle. p 75)։ Հոս տեղի չունեցան բնաւ ո՛չ բիւզանդական վիճաբանութիւնները, ո՛չ լատինական աստուածաբանական զինարարութիւնը (orgie) և ո՛չ ալ արեւելեան Ասիոյ ասորական դաւանական կոշտ նրբամտութիւններու բազմախումբները։ Հոս եկեղեցին վարդապետութիւնը չէր. ամեն մարդ միմիայն փնտոեց, թէ Եկեղեցին ինչչափ բարոյական ներշնչում կըրցաւ սերմանել, և ո՛րքան օժանդակութիւն կըրնար բերել ապրուած կեանքը ազնուացնելու համար։ Եթէ այս չըլլար պարագան, եթէ կրօնական ներողամտութիւնը ընդունուած կրօնքներուն լաւագոյնը չըլլար, Ամերիկան պիտի գերազանցէր Բիւզանդիոնը, իր աւ-

տուճաբանական վէճերով, և կրօնքը պիտի վե-  
րածէր անաւոր չարիքի մը, եղբայրասպան գործի-  
քի մը: 'Եթէ այս կրօնական ներողամտութիւնը  
գորութիւն չունենար, օրինակի համար, էտլընդիստ  
Եկեղեցիին վեց հատուածները, Մկրտչական 12 յա-  
րանուանութիւնները, Մէնոնիտներու 12 հերձուած-  
ները, Մեթոդականներու 17 ստորաբաժանումնե-  
րն, Երիցականներու 12 ճիղաւորումները ո՛չ միայն  
իրարու, այլ իրենցմէ դուրս միացող բազմաթիւ  
յարանուանութիւններու հետ դէմ դիմաց ճակատած  
արիւնտտ և տխուր ռազմադաշտի մը պիտի վերա-  
ծէին այս գեղեցիկ երկիրը: Եւ այս խաղաղութեան,  
հասարակաց եղբայրակցութեան, կրօնական ազա-  
տամտութեան այս լիանոծ և անբաղդատելի կեան-  
քը դիտած պահուս կ'ափսոսամ, թէ ինչո՞ւ Ամե-  
րիկեան Միսիոնարութիւնը դէպի Արեւելք իր ար-  
չաւանքի միջոցին այդ կրօնական լայնախոհութեան  
և ներողամտութեան ոգին մոռցած էր իրեն հետ ու-  
նենալ Աղլանտեանէն անցած պահուն, քանի որ  
անիկա միացած Հայ Եկեղեցիի ընական ներողամը-  
տութեան և ազատախոհութեան ոգիին հետ, պիտի  
կրնար հրաշքներ գործել մեզի պէս կրօնական խառ-  
նուրդով մը և նկարագրով ծնած ազգի մը մէջ:  
Եւ ես վստահ եմ, թէ այս տեսակ ոգիով գործու-  
նէութիւն մը, ո՛չ միայն տեղի պիտի չտար թիւ-  
րիմացութիւններու, այլ ընդհակառակն պիտի ըլ-  
լար յառաջամուղ զօրութիւն մը, լուսաւորող ջան  
մը, կենդանացընող շունչ մը մեր դէպի վարդա-  
ցում դիմող ժողովրդական կեանքին: Եւ Հայ Եկե-  
ղեցին այս տեսակ շարժումի մը հակառակողը չէր  
ու պիտի չըլլար իր տեւողութեանը միջոցին: Եթէ  
կա՛նուիկ Եկեղեցին Ամերիկայի մը պէտք ունէր  
իրմէն մերկանալու իր միապետական ձգտումները,

և ըլլալու աւելի մօտիկ ուսմկավարութեան, եթէ կաթոլիկ Եկեղեցին Հոռոմէն հետի Ասլանտեանի ասիերուն վրայ միայն կրցաւ զգալ, թէ գործնական առաքինութիւններու պաշարով մը միայն կարելի է արդարացընել եկեղեցական կազմակերպութիւն մը. շնորհիւ իր տաղանդաւոր առաջնորդներուն, կարտինալ Կիպպընսներուն, Այբլենտ և Սփալտինկ արքեպիսկոպոսներուն, Հայ Եկեղեցին Փոքր Ասիոյ մէջ, գարերու ընթացքին կրցաւ շատ կանուխէն իր վրայ բերել թսաներորդ դարու գիտնական զարգացումին յարմարող կրօնական ընդունակութիւնը: Եւ եթէ անիկա իր մաքրութեան շրջաններէն վերջ ունեցաւ պղտորումներ ալ, այդ յոռութիւնները, իր հոգեբանական կեանքին ծնունդը, իր սեփական յոռութիւնները չէին, այլ եկամուտ տարրեր: Որչափ կը յիշեմ, կարծեմ Լորտ Պայրն էր, որ ըսաւ Հայերուն համար «Հայերը ինչ որ ունին զա՛ իրենցն է, իսկ ինչ որ ունին գէշ իրենց դրացիներէն առած են. որովհետեւ իրենց պատմութեան շրջանին մէջ, շրջապատուած են դրացիներէ, որոնք իրենցմէ ստորին էին նկարագրով»: Ինչ որ ճշմարիտ է Հայուն համար, ճշմարիտ է նաև Հայ Եկեղեցիին համար: Եւ ասոր պէտք է համոզուինք իրապէս, առանց կանխակալ կարծիքի, առանց նեղմտութեան:

Սիրելի պաշտօնակիցներ, այն կրօնական համոզումները և սկզբունքները զոր դուք ունիք և կր թարողէք հայութեան մէկ մասին, տարրեր չեն բնաւ Հայ Եկեղեցիին քարոզած համոզումներէն և սկզբունքներէն: Տարբերութիւն մը, եթէ կայ, այն ալ սա է, որ անոնք փոխանակ դարբնուած ըլլալու հայ ազգային հոգեբանութեանը շինած կաղապարին վրայ, ձեւուած են ամերիկեան մտածողութեան մը

վրայ, Տարբերութիւնը առեւրեւոյթային է, մակերեւոյթային է առանց հիմնական ըլլալու: Ազգերը, իրենց ցեղային խառնուածքին, իրենց կլիմային, իրենց ցեղային հոգեբանութեան հետեւանքով, իրենց մտածելու, ըմբռնելու, արտայայտելու, բացատրելու կերպերը ունին: Կրօնական համոզումները այս շրջանակէն դուրս չեն կրնար մնալ: Շատ անգամ մարդիկ ծիծաղելի կը դառնան օտարներու առջև, երբ անոնց կը խօսին այնպիսի եղանակով մը, որ անծանօթ է իրենց: Օրինակի համար եթէ Ֆրանսայի մէջ ուզէք ճամբայ մը հարցընել մէկուն, կրնաք ըսել պարզապէս. «Կը փափափիս այսինչ տեղը երթալ» և դիմացինդ բարեացակամութիւնը պիտի ունենայ զեզի ցոյց տալու ճամբան: Կը պատմուի, թէ Ֆրանսացի մը Ամերիկա գալուէն, Ամերիկացիի մը կ'ըսէ. թէ «այս ինչ տեղը կը փափափիս երթալ», Ամերիկացին կը ծիծաղի, առանց պատասխանելու, և երբ խօսքը կը կ'երկրորդէ Ֆրանսացին, այն ատեն Ամերիկացին ըմբիծազով մը կ'ըսէ իրեն. «փափափածդ ինձի յայտնելու պիտի չունիս, կրնաս երթալ ուզած տեղդ»: Ինչո՞ւ Ամերիկացին չէր ըմբռներ, թէ դիմացինը իրմէն ճամբայ կը հարցընէր պարզապէս: Ճեղքու չկարագրին և ըմբռնումին ազգեցութիւնը անհերքելի իրողութիւն մըն է աշխարհի ամեն կողմերը:

Նւ այսօր Ամերիկա անգամ տագնապ մը կանցընէ, երբ կը խորհի զանազան ցեղերու անհուն ստուարացումին վրայ. ցեղեր որոնք իրենց հետ կը բերեն նոր նկարագիրներ, նոր բարքեր, նոր բացատրութեանց ձեւեր, նոր ըմբռնումներ, որոնք հին տարրին ունեցածներուն համանման չեն և որոնք կրնան իրենց տարբերութեամբը ընկիրական

կրօնական և նոյն իսկ ազգային վտանգ մը ստեղծել:

Բայց ի՞նչ հարկ այդ օտար տարրերուն, երբ արդէն սեւամորթին գոյութիւնը ինքնին բաւական պատճառ մըն է մտածելու համար: Սեւամորթ Ամերիկացին ալ ծնունդն է ամերիկեան կրօնական համոզումներուն. բայց իր ցեղային տարրերութիւնը պատճառ եղած է, որ ինք կամաց կամաց ընդվզի սպիտակամորթին կրօնական բացատրութիւններուն դէմ, և իրեն համար ստեղծէ իր խառնուածքին, իր հոգեբանական ընդունակութեան, իր մտածելու, ըմբռնելու և բացատրելու կարողութեան համաձայն բրիստոնէութիւն մը, և բրիստոնէական գրականութիւն մը: Քանի մը տարի առաջ Շիքսկոյ Ափրիկեան Եպիսկոպոսական Մեթոդիստ եկեղեցիի սեւամորթ եպիսկոպոսը, H. W. Turner, երբ այս տեսակէտով, սեւամորթիներու դատը կը պաշտպանէր, զգայացունց բարոյի մը մէջ ըսաւ. «ւեզի պէսք հիւր գրեմք մեզի համար, քան անսեղծութիւններ մեզի համար, գիտական անոտեր մեզի համար, որոնք համաձայն ըլլան մեր գոյնին եւ մեր ցեղին: Մի՛ սորվիք երբեք երգեր, զօր օրինակ լուսալիս, եւ ես ձիւնէն աւելի ներմակ պիտի ըլլամ երգին պէս, զոր ես թոյլ պիտի չսայի որ իմ ներկայութեանս երգիսն»:

Միեւնոյնն էր նաև մեր պէտքը.— դաստիարակութիւնը, Հայ սիրտը բաւականաչափ լայն էր կարենալ ընդունելու համար լոյսի ամեն կաթիլ, թէ իսկ անոնք հեռուներէն բղխէին: Բնութեան մէջ լոյսին և հողին սնունդը միեւնոյն ձեւով արդիւնք չեն ծնիր բնաւ. վարդը կարմիրի կը փոխէ այդ լոյսը, իր թերթերուն մէջ, և տերեւը կանաչի,

մանուշակր կապոյտի կը վերածէ, և շուշանը ճերմակի: Ասէն բոյս ու ծառ իր ժառանգական, դարաւոր յարմարութիւնը, իր ընդունակութիւնը ունի: Կրնանք այդ ժառանգականութեան դարաւոր ոյժը խորտակել արուեստական միջոցներով. օտար պատուաստումներով կրնանք ունենալ աւելի գեղեցիկ և բազմաթերթ վարդեր, մանուշակներ, շուշաններ, բայց առէք այդ արուեստական գեղեցկութիւնները ձեռքերնիդ, և պիտի տեսնէք, թէ անոնք իրենց հոգիին, իրենց ներքին էութեան լաւագոյն մասը, իրենց ՍԵՓԱԿԱՆ ԻՍՅՐը կորսնցուցած են: Ինծի համար կրօնական համոզումներու երկրորդակէն տարբերութիւնները, նշանակութիւն չունին: Այս տեսակէտով Հայ Եկեղեցիի մէջ տեղի ունեցող բոժանում մը ո՛րքէ անպատեհութիւն մը չէր կրնար ունենալ, եթէ կանուխի փորձերը կատարուած միջոցին այս պարագաները նկատի առնուած ըլլային երկուստեք: Մենք այն ատեն պէտք ունէինք. ինչպէս նաև շիմա, կրթութեան ու զարգացումի յոյսին: Չենք արհամարհեր իւղի ամեն մէկ կաթիլ, որ միւր միտքին ու սրտին կանթեղին մէջ կը խափուի, նոյն իսկ օտարներու ձեռքով: Կ'ըմբռնեմ թէ մեր արեւիջի կանթեղները ա՛լ բաւական չեն ելեքտրականութեամբ յուսաւորուած դարու մը մէջ, միւր պարտականութիւններու ճամբան կարենայ պէտք եղածին չափ յստակ տեսնելու համար: Բայց հիեկտրականութիւն վառելու համար պէտք չկայ անպատճառ խորտակել հին կանթեղները: Եւրոպական մեծ տուններու մէջ փառաւոր Գահեր կան, առիճներէն կախ, որոնց վրայ երբեմն մոմեր կը վառէին, և որոնց մոմերը տեղի տուած են շիմա ելեկտրական լոյսի կառուցներու: Հայ Եկեղեցին այդ նատարեան մաքուր Գահերէն մէկն է, որուն վրայ կարելի է շողացընել մարդկային մաքին, սրտին ու հոգիին ցոլացուցած ամեն լոյս:

Եւ միսիոնարները պիտի կրնային նոր Լուսաւո-  
րիչներ նկատուիլ մեզի համար, եթէ այդ լոյսը, ու  
միայն այդ լոյսը բերէին մեզի: Բայց անոնք այն-  
պէս չ'ըրին: Ընդհակառակն, ինչպէս Ուորտէ ին  
Պոստըն ցուցանանդէսին բացման օրը, Լօրէնս  
Եպիսկոպոս ըսաւ իր ճառին մէջ, անոնք փոխանակ  
կրօնին լոյսը սանելու, իրենց դաւանանքը տարին  
ուր որ գացին:

Սիրելի Պաշտօնակիցներ, իբրև Հայ մը, որ կը  
փափաքի իր ազգային պարտականութիւններուն  
նուիրուիլ միշտ, և իբրև Հայ Եկեղեցիին մէկ պաշ-  
տօնեան, ես պիտի սիրէի որ հնարաւոր չան-  
քերը ընէինք անկեղծօրէն զիրար հասկնալու հա-  
մար: Եւ մանաւանդ պիտի փափաքէի, որ ջանք մը  
ընէիք Դուք մօտէն ճանչնալու համար Հայ Եկեղե-  
ցին, կը ներէք անշուշտ ինծի, լսելու համար մեր  
և ձեր Մայր Եկեղեցին: Համարձակութիւնը տուէք  
ինծի ըսելու, թէ այսօր Դուք, և ամբողջ Հայ Բո-  
ղոքական Եկեղեցին աւելի լաւ կը ճանչնաք Ամե-  
րիկացի այս կամ այն միսիոնարին գործն ու կեան-  
քը, քան Սահակի մը, Մեսրոպի մը, կամ Շնորհա-  
լիի մը կեանքն ու գործերը. աւելի լաւ գիտէք  
ամերիկեան երգ մը, քան հայկական շարական մը,  
և աւելի շատ ծանօթութիւն ունիք ամերիկեան  
յարանուանական Եկեղեցիի մը նկատմամբ քան Ձեր  
Մայր Եկեղեցիին նկատմամբ: Եւ այսդէսով զուք  
նմանած էք այն կարգ մը մարդերուն, որոնք իրենց  
կեանքին մէջ ինքզինքն ին ճանչնալու փոյթը չեն  
ըրած, ու նուիրուած են ուրիշները ճանչնալու հե-  
տաքրքութեան: Ես պիտի փափաքէի, որ ձեր վա-  
ղուան գործունէութեան մէջ, կարելոր տեղ մը տա-  
լիք այդ ծանօթութիւններով հարստանալու, որով-  
հետև ո՛րքան շատ ճանչնաք, ա՛յնքան շատ պիտի  
սիրէք, և ո՛րքան շատ սիրէք ա՛յնքան օգնած  
պիտի ըլլաք քրիստոնէական—ազգային ողիի զար-  
գացումին:

## ԿԵԱՆՔԻՆ ԱՐԴԻԻՆԱԻՈՐՈՒՄԸ

Աշխարհի մէջ բնական ու տիեզերական դարձած օրէնք մը կայ, որուն համեմատ մարդիկ կը գուրգուրան այն բաներուն վըայ, զոր սրտանց կը սիրեն: Մէկ բանի մէջ միայն այդ օրէնքը պահպանուած չէ, և այդ բացառութիւնը կը տեսնուի ու կը զգացուի մեր ազգային հաւաքական կեանքին հանդէպ մեր ապրած անհատական կեանքին սխալ ուղղութեանը մէջ: Չկայ մարդ մը, որ իր կեանքը չը սիրէ. մեր անձի մասին մեր տածած սէրը երբեմն նոյն իսկ եսապաշտութեան կ'երթայ, և մենք մեր անձէն դուրս բան մը տեսնելու յօժարութիւնն ալ չենք կրնար ունենալ: Նմանապէս չկայ մարդ մը, որ չ'ըսէ, թէ ես ազգասէր եմ, և երբեմն նոյն իսկ մեր ազգասիրութիւնը մոլուածեան մը հանգամանքը կ'առնու, և կ'ըլլայ թթու ազգամոլութիւն մը: Եսամոլն ու ազգամոլը երկու ծայրայեղ անձնասէրներ են, որոնց նեղմտութիւնը երբեք բարիք մը չկրնար արտադրել ո՛չ ազգին և ո՛չ ալ անձին համար: Ծայրայեղ ազգասիրութիւն մը կամ ազգայնամոլութիւն մը թերեւս պիտի արդարանար Ազգին հանդէպ նիւթուած ծայրայեղ դաւաճանութեան մը միջոցին, բայց եսապաշտութիւնը բնաւ պիտի չկրնայ իր արգարացումը գտնել:

ԾԱՆՕԹ.— Խօսուած Ֆաուլբրի գաղութին, 9 յուլ. 1911ին:

Եթէ մարդիկ որոշապէս գիտցած ըլլային այն պարտականութիւնները, որոնց համար կոչուած են ապրիլ իրենց ընկերական կեանքը, եթէ մարդիկ գիտցած ըլլային այն բարոյական գիրքը, զոր գըրաւելու կոչուած են ընտանեկան, ազգային և մարդկայնական կեանքին մէջ, վստահ կրնանք ըլլալ, թէ բաւական մեծ չարիքներ խնայուած պիտի ըլլային այս թշուառ մարդկութեան: Հին փրիսոփաները մարդր կը կոչէին պզտիկ աշխարհ (microcosme), իսկ տիեզերքը՝ մեծ աշխարհ (macrocosme): Ստուգիւ մարդ աշխարհի փոքրանկարն է, աշխարհ մը՝ իր մանր աստիճանին վերածուած: Բնութեան մէջ բոլոր տարրերը իրարու կ'օժանդակեն մարդկային, անասնական և բուսական կեանքերը ազդեցընելու և յաւերժացընելու համար: Արեւը՝ իր լոյսն ու ջերմութիւնը, հողը՝ իր արտադրող կարողութիւնը, ջուրը՝ իր կենդանացընող զօրութիւնը իրարու մօտ կը բերեն, արտադրելու համար բնութեան գեղեցկութիւնները, և մարդկային հարստութեանց աղբիւր՝ սա առատութիւնները: Այս գեղեցիկ երկիրը՝ ուր դուք հիմա կ'ապրիք, դեռ երէկ անապատ մըն էր. ո՛չ այս համատարած երկիրը, և ո՛չ ալ համասփիւռ արեւին ջերմութիւնը կարծես բաւական պիտի ըլլային զձեզ շրջապատող սա այգիները, և պարտէզները հասունցընելու, եթէ ջուրի առու մը չգար արեւին ու հողին կազմած դաշնադրութիւնը ամբողջացընել: Մարդուն կապըն ալ միեւնոյնն է մարդկութեան հետ. որպէս զի մարդկութիւնն ալ նիւթապէս և բարոյապէս զարգանայ ու բարդաւածի, անհրաժեշտ է, որ ամեն մէկ մարդ իր աշխատութեան բաժինը բերէ, մէկը՝ իր արեւի ճառագայթը, միւսը՝ իր հողի արգասաւորութիւնը, մէկը՝ իր զօրութիւնը, միւսը՝ իր խելքը.

մէկը՝ իր սիրտը, միւսը՝ իր հոգին, մէկը՝ իր հան-  
ճարը, միւսը՝ իր գրամը, և այդ կորովի, ոյժի և  
առաքինութեան մասերն են, որ իրարու միացած՝  
պիտի գործեն և արտադրեն աշխարհի փառքին ու  
մարդկային երջանկութեան համար: Մեկուսացած  
մարդ մը, ևսապաշտ մը, ամայի կղզեակ մըն է  
աշխարհի ընդարձակ տարածութեանը վրայ, կղզեակ  
մը՝ որ բնակութեան յարմար չէ. և որուն  
ժայռերուն վրայ բան մը կարելի չէ՝ բուսցրնել:  
Այն բոլոր գործերը, որոնք կր տեսնուին աշխար-  
հի վրայ, այն բոլոր գեղեցկութիւնները զոր կը  
վայելենք, այն բոլոր մտաւոր և բարոյական զար-  
գացումները, որոնց վրայ մեր յաստիքութիւննե-  
րը հիմնած ենք, արդիւնքն են մեր նախնեաց ըն-  
կերական աշխատութիւններուն, անոնց շինարար  
համագործակցութեանը: Մեր լեզուն, կրօնքը, օրէնք-  
ները, մեր արուեստները ամենքն ալ նուիրական  
ժառանգութիւններն են մեր նախնեաց, անոնց ա-  
րիւնքի ու քրտինքի կաթիլներէն կազմուած: Անոր  
համար էր որ օր մը նշանաւոր խորհող մը րսաւ.  
ցորենի հասկին մէջ, զոր մեր մասնէրով կը շփենք,  
նախահայր մը կայ եւ ներկայ է.՝ հոս ամեն մոխիր,  
ճամբուն վրայ գլորած ամեն քար նուիրական մա-  
սունքն է աշխատողի մը, որ իր արիւնով ու անձ-  
նուիրութեամբ յաղթականօրէն տիրացած է ճշմարիտ  
դրախտին:

#### Սիրելի Հայրենակիցներ,

Մենք ալ միեւնոյն պարտականութիւնները ու-  
նինք մեզի, ու ապագայ սերունդին հանդէպ: Եւ  
մեր այդ նուիրական պարտականութիւնը կատա-  
րելու համար պէտք է ունենանք նախ աշխատելու  
ոգի, ու յետոյ մեր աշխատութեան պէտք է խառ-  
նենք քարեպարտիւնը: Ամեն աշխատութիւն իրեն

նպատակ ունի արտագրութիւնը, և արտագրութիւն մը իր օգտակարութեամբն է որ կը գնահատուի: Աշխատութիւններ կան, որոնք կը կործանեն, բարեսիրութեան միացած չըլլալնուն համար: Սուլթան Համիա երեսուն տարիներ աշխատեցաւ Կ'ըսուի, թէ ամենէն քիչ քնացող մարդն էր անիկա աշխարհի մէջ. սակայն այդ հրէշին աշխատութիւնը ուրիշ արդիւնք չունեցաւ, բայց միայն այն արիւննոտ աւերը, զոր ցանեց մեր երկրին մէջ, մեր օճախներուն վրայ: Չարութեան ու վատութեան մէջ սատանան պիտի չկրնար թերեւս գինքը գերազանցել, ա'յնքան բեղմնաւոր էր իր դժոխային միտքը, քանդումի ծրագիրներով, ու իր հոգին արիւնով, անէծքով շագուած էր: Հնդկական առածը կ'ըսէ. Ով որ մեռնէ, յ առաջ ծառ մը ճնկած է, անօգուտ յէ եղած կեանք: Այդ մեծ մարդասպանը տնկուած ծառերը և շէնցած գիւղերն ու քաղաքները կործանեց, թագազարդ ոճրագործի մը կեանքը ապրելով:

Իր կեանքը՝ յաւիտենապէս անիծուած ա'յն չիբիմներէն, զոր ինքը պղծեց, այն ստուերներէն, զոր ինքը հալածեց, այն հոգիներէն՝ զոր ինքը որբացուց, և այն գժբախտ ազգէն, զոր ինքը հալածական ըրաւ, իր կեանքը յաւիտենական դաս մը պիտի ըլլայ բարութեան ոգիէն զուրկ աշխատութեան չարիքը ցուցնելու համար աշխարհի: Եւ դուք որ հալածանքներէ, զրկումներէ, անիրաւութիւններէ, և անգթութիւններէ փախաք, դուք հիմա, ուրիշներէ աւելի պէտք ունիք այդ բարեսիրութիւնը խառնել ձեր աշխատանքին, և այս պղծատիկ գաղթականութեան մէջ պէտք է ապրիք բարի դրացնութեան սկզբունքով: Դուք ամեն ժամանակէ աւելի հիմա, և ամեն տեղէ աւելի հո'ս պէտք

ունիք այդ բարի դրացնութեան սկզբունքը կիրարկելու, որովհետև պէտք ունիք իրարու, պանդրխտութեան ցաւը մոռնալու, և օտարութեան տառապանքը կարենալ կրելու համար: Ձեր սէրն ու համերաշխութիւնն է որ պիտի ապահովէ ձեր շահը. ձեր կեանքը, ձեր պատիւը:

Հին աշխարհի մեծ իմաստունը Սոկրատէս, երբ մարդերու կը խօսէր աշխատութեան ու արդիւնքի մասին, շատ անգամ մեղուն ու մրջիւնը օրինակ կը բերէր: Որովհետև շատ անգամ մարդիկ պէտք ունին անասուններէն օրինակ առնելու: Այդ երկու պատիկ արարածներուն, մեղունն ու մրջիւնին աշխատութիւնը տեսած էք անշուշտ: Երկուքին ալ մնջ անսահման համերաշխութիւն մը կայ, գործելու որոշ նպատակի մը համարք: Մեղուն մանաւանդ, անհունօրէն արուեստագէտ այդ միջատը, բոլորով, երգելով կ'աշխատի օրն ի բուն, և ամեն ինչ որ կը հաւաքէ իր նուրբ բերնովը, քաղցրահամ մեղրի կը փոխէ: Մօտէն դիտած էք արդեօք, մեղրով ու բջիջներով լեցուն փեթակ մը: Պիտի տեսնէք, որ հոն աւելորդ բան մը չկայ. մեղուն իր տունը տարած է այն, ինչ որ պէտք է իրեն, բջիջ ու մեղր չի նկատու համար: Այս իրողութենէն յափտակուած Հոովմայեցի իմաստասէր Կայսրը, Մարկոս Աւրելիոս, իր խորհրդածութիւններուն մէջ գրեց, թէ «Ինչ ՈՐ ՕԳՏԱԿԱՐ ՉԷ՝ ՓԵԹԱԿԻՆ, ՕԳՏԱԿԱՐ ՉԷ՝ ՄԵՂՈՒԻՆ»: Հոովմայեցի Կայսեր այս խօսքը կարծեմ իր մէջ ահագին նիւթ կը պարունակէ խորհրդածութեան, բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն արդիւնաւոր կեանք մը ապրիլ:

Մեղուն մեղր կուտայ, և ամենէն դառն ծաղիկներն անգամ անուշ մեղրի կը վերածէ, միմիայն անոր համար, որ աւելորդ բաներով չհետաքրքր-

բուիր, աւելորդ ու անպէտ նիւթերով չխճողեր իր փեթակը, և կատարեալ ներդաշնակութեամբ փեթակի մը գործաւորները իրենց կոչումին ու պարտականութեանը կը հետեւին:

Սիրելի Հայրենակիցներ,

Առէք ձեր մեջէն մէկը, և վայրկեան մը վերլուծեցէք անոր սիրտն ու միտքը և պիտի տեսնէք, թէ ո՛րքան խճողուած են անոնք աւելորդ մտածումներով խորհուրդներով: Մեղուն մեղր կը շինէ, իսկ մարդկային սիրտը յաճախ՝ դառնութիւն, ատելութիւն: Մեղմէ ոմանք կը տեսնեն, որ իրենց միտքը տուած են ընկերական այն տեսակ վարդապետութիւններու, զորս ո՛չ կրնան մարտել, և ո՛չ ալ գործնականացնել: ոմանք՝ կրօնքի ու եկեղեցիի դէմ հակառակութիւն մը պահած են, ուրիշներ՝ ընկերական կարգ ու սարքերու դէմ, տեսակ մը անխիստական ըմբռնում, և ոմանք նոյն իսկ ընտանեկան ու ազգային գոյութիւն մ և անոր նուիրականութիւնը կուզեն ուրանալ: Եւ երբ կը տեսնենք այս ամենը, ալ չենք մօտենար անոնց սրտի փեթակին, որովհետեւ գիտենք թէ այդ տեսակ համոզումներէ, պղտորումներէ, ըմբռնումներէ կարելի չէ բնաւ մեղր շինել: Եթէ մենք ընդունած ըլլայինք սկզբունքը, թէ ինչ որ օգտակար չէ՝ փեթակին, օգտակար չէ՝ մեղուին, շատ մը ապարդիւն աշխատութիւններ խնայած պիտի ըլլայինք մենք, և շատ մը չարիքներ ալ՝ մեր ազգային կեանքին:

Սիրելի Հայրենակիցներ, ըսուած է, թէ դիւանագէտ մը կրնայ սխալ մը գործել, և անպատիժ մնալ, որովհետեւ երկար կեանք չունի, ու կրնայ մեռնիլ գեռ պատիժը չկրած: Բայց ազգ մը չը կըրնար սխալ գործել և անպատիժ մնալ, քանի որ

ազգ մը աւելի երկարակեաց է քան անհատ մը: Ազգ մը կրնայ սխալներ գործել երկու ճամբով. սխալ կրնայ գործել ի՛ր առաջնորդներուն ձեռքով, սխալ կրնայ գործել նաև զինքը կազմող անհատներուն մեծամասնութեանը ձեռքով: Իզուրէ (Yzoulet) կ'ըսէ, թէ քսակ մը չկորսուիր. մարդկային ցեղը կը փաշէ իր նսիւնեաց ոճիրներուն քեռիկն չակ կրփած, ու զաղտնապէս կ'ազդուրուած նաեւ անոնց առաջիննութիւններով: Մեր նախնիք, մասամբ իրենց կամկամքէն անկախ պատճառներով, և մասամբ ալ իրենց քաղաքային անիմաստութեան շնորհիւ մեր ուսերուն վրայ դրին, ակամայօրէն, այդ ոճիրներուն բեռը: Մենք կ'օրհնենք զիրենք, նայելով իրենց զոհողութիւններուն, իրենց նուիրական և սուրբ տքնութիւններուն վրայ: Բայց անոնք մեզի ժառանգ թողուցին նաև առաքինութիւններու անըսպառ մթերք մը: Այդ առաքինութիւնները ծառուած կը մնան Հայ ազգին համբերող տոկունութեանը մէջ, ընտանեկան կցորդութեան բարեպաշտիկ անձնուիրութեանը մէջ, ու ազգին սիրոյն անցամաքելի աղբերացումին մէջ: Եւ եթէ մենք այդ բոլոր առաքինութիւնները ամբարենք մեր սրտի փեթակին մէջ, ապահովաբար պիտի կրնանք շինել անոնցմով մեր սա ազգային դժուարին և դժնդակ կացութեան միջոցին, հալածանքէ, արիւններէ, պանդխտութենէ դառնացած մեր շրթները քաղցըրապընող մեղրը:

Պէտք է մեր կուրծքերը պողպատէ զրահներու պէս զցենք այն բոլոր դժուարութիւններուն առջև, որոնք մեր քայլերուն պիտի հանդիպին: Տկար կամքերը կը փշրուին ամենազգտիկ դժուարութիւններու առջև: Անձրեւներ կրնան մաշեցնել աւազաքարերը, փխրուն լեռները, բայց կրանիճր

դարերու մէջէն իր ճակատը ցցած, կ'արհամարհէ սառն ու անձրեւը: Եւ դուք պէտք է կրանիթի կարծրութիւնը ունենաք վիշտին, տառապանքին, և քաղաքային, ու ընկերական ձախորդութիւններուն մէջ, և եթէ ուզէք պիտի կրնաք այդպէս ըլլալ, քանի որ մեր նախնեաց մեզի կտակած առաքինութիւններուն մէկ մասը կը կազմէ այդ հաւրաբերող տկուրութիւնը:

Պէտք է մեր սիրտերը ունենան յուսալու արիւտ քիւնը: — Բաւական է որ մարդիկ լաւագոյն պատի մը զինուորները եզած ըլլան, բաւական է որ մեր գործերը ձեւուած ըլլան հասարակաց բարիքին վերայ, ալ պէտք չէ՛ դադրինք յուսալէ: Յոյսը փառքիւնը կ'աւելցնէ, միևչդեռ յուսահաստքիւնը ամենապէտքիս չարիքն է: Յուսացող մարդը ո՛չ միայն կ'աշխատի շարունակ, այլ և աշխատելու կարողութիւնը ժամէ ժամ կը նորոգուի իր մէջ, մինչդեռ յուսահատ մարդուն բազուկները ուժաթափ կ'ըլլան: Եւ մենք եթէ ուզենք կրնանք ունենայ այդ յոյսի արիութիւնը, քանի որ նախնիք մեզի կտակած առաքինութիւններով այդ արիութիւնը մեզի փոխանցեցին:

Պէտք է որ ընտանեկան սերը հաստատուն մնայ մեր մէջ: — Ուր որ ընտանեկան պաշտամունքին սեղանը վառ կը մնայ, հոն շատ դժուարին պիտի ըլլայ ընկերական յոռութիւններ տեսնել: Ընտանիքը պզտիկ հայրենիք մըն է, և ընտանիքի մէջ պարկեշտ զաւակն է որ պարկեշտ քաղաքացի կրնայ ըլլալ: Ընտանեկան սրբութիւններու հանդէպ պատկառանք չունեցող զաւակ մը, հայր մը, ամուսին մը, չկրնար օգտակար պաշտօն մը կարարել մարդկային ընկերութեան մէջ: Եւ մենք այն համոզումը ունինք և պիտի ունենանք, թէ որչափ ատեն ըն-

տանիք մը կ'ապրի, մաքուր և խորունկ բարոյա-  
կանով մը, պիտի ապրի ԱԶԳը: Ուստի, Սիրելի  
Հայրենակիցներ, սէր ունեցէ՛ք ձեր տուներուն վը-  
րայ, եթէ կուզէ՛ք ազգն ու մարդկութիւնը սիրել:  
Ընտանիքիս սերը միակ սերուն է հայրենիքի սիրոյն  
և ընկերական բոլոր առաքինութիւններուն: Մի'  
վախնաք. եթէ ուղէ՛ք պիտի կրնաք սիրել Ձեր տունն  
ու ընտանեկան կցորդութիւնը, որովհետև մեր  
նախնեաց մեզի կտակած առաքինութիւններուն  
մէջն է ընտանեկան սէրը:

Վերջապէս պէտք է մեր սիրտն ու հոգին, ի  
հարկին մեր կեանքն ու բոլոր կարողութիւնները  
նուիրենք մեր ազգին: Ազգասիրութիւնը մարդկային  
և ընկերական առաքինութիւններուն լրումն է կար-  
ծես: Աշխարհի մէջ երբեք այնքան սուղ գնուած չէ  
ազգ մը, քան մեր ազգը. աշխարհի մեջ երբեք կը-  
րօնք մը եւ եկեղեցի մը ա՛յնքան արիւններ ար-  
ժած չեն, որքան մերը: Հայութեան դարաւոր  
մարտիրոսութիւնը ազգին, եկեղեցիին և լեզուին  
պահպանութեանը ուխտուած մարտիրոսութիւնն  
է եղած: Եւ վստահ եղիք. որչափ ատեն սրտեր  
գտնուին, որոնք այս ազգին սիրովը պիտի բաբա-  
խեն, որչափ ատեն հոգիներ գտնուին, որոնք այս  
կրօնքին ու եկեղեցիին ներշնչումներովը ճենճերին,  
որչափ ատեն մանուկներու շրթունքները այս լե-  
զուն թոթովեն, այս Ազգը պիտի ապրի, Հայրենի-  
քին, ու օտարութեան մէջ, հակառակ զուլումնե-  
րուն, հալածանքներուն, և հակառակ օտարու-  
թեան մեզի հրամցուցած ազգայնական փորձու-  
թիւններուն: Եւ մենք պիտի կրնանք ունենալ մեր  
եկեղեցիին, մեր լեզուին սէրը, եթէ ուզենք, որով-  
հետև մեր նախնեաց մեզի կտակած արիւնոտ ժա-  
ծանգութեան, անոնց առաքինութիւններուն գըլ-

խաւոր և էական մասը կը կազմէ այդ սէրը։ Այսպէսով է որ մեր կեանքը պիտի արդիւնաւորուի, մեր ազգին ու ամբողջ մարդկութեան շահուն համար, այսպէսով է որ մե՛նք մեր մեղուի գործը պիտի կատարենք։ Ձեր սրտի փեթակէն դուրս հանեցէք, ինչ որ օգտակար չէ փեթակին ու մեղուին, և անոր բջիջներուն մէջ տեղաւորեցէք, միմիայն մեզի կարեւոր եղող տարրերը, համբերող տոկունութիւնը, չյուսահատող արիւթիւնը, ընտանեկան բարեպաշտութիւնը, և մեր ազգին, մեր հաւատքին ու մեր լեզուին սէրը, որոնք դարաւոր նուիրականութիւններն են մեր ազգային գանձարանին։

Ձուիցերիոյ քաղաքներէն մէկուն մէջ հինաւորոց ծառի մը հանդիպեցայ։ Հելվետական անկախութեան պատերազմի օրերուն այդ ծառին տակ կռուեր ու ինկեր էին քանի մը արի զինուորներ, հայրենիքի փառքին համար։ Դարեր վերջ մարդիկ սկսեր էին անտարբեր աչքով նայիլ այդ ծառին վըրայ, որ դիւցազներու արիւններով չրջանակուած փառաւոր մահ մը, և օր մը հովանաւորած էր։ Վերջապէս, օրին մէկը պարկեշտ քաղաքացի մը տեսնելով որ անտարբեր հայրենակիցներ այդ ծառին ճիւղերը կը փրցընեն, առտու մը կ'ելլէ և ծառին վրայ սա աղղը կը փակցրնէ։ Բաղաբաղինէր, պաշտպանեցե՛ք այս ծառը, որովհետեւ նուիրական եւ նոյն օրն իսկ Ձուիցերական կառավարութիւնը իր հովանաւորութիւն տակ առաւ այդ ծառը, և այնուհետեւ խորունկ յարգանքի մը առարկան դարձաւ։ Սիրելի Հայրենակիցներ, այսպէս կը վարուին դէպի ազատութիւն քայող ժողովուրդները, զարաւոր սրբութիւններու հետ։ Ամերիկեան կառավարութիւնը մասնաւոր գուրգուրանքով մը կը պահէ, Տի-

լատէլֆիայի մէջ Besty Ross Houseը, ուր Տիկ. Ճօն  
Պէսթի Բոս, 1777ին առաջին ամերիկեան դրօշը  
հիւսեց իր ձեռքով: Մեր ազգն ու եկեղեցին ամե-  
նամեծն է այդ նուիրականութիւններուն, անոր  
մայրենի գրկին մէջն էր, որ Հայ մարտիրոսները  
մեռան, դիւցազները կոուեցան, սուրբերը ազօթե-  
ցին, մայրերը ծնան, և ժողովուրդը ծնրադրեց:  
Պաշտպանեցէք, Հա՛յ քաղաքացիներ, պաշտպանե-  
ցէ՛ք այդ Ազգը, արտաքին ու ներքին թշնամինե-  
րու դէմ, պաշտպանեցէք այդ կրօնքը՝ անտարե-  
րութեան դէմ, պաշտպանեցէք Ընտանիքը՝ ընկե-  
րական թուլութիւններու դէմ, պաշտպանեցէք Հայ  
լեզուն, օտար ազգեցութիւններու դէմ, և Հայ  
Ազգը պիտի ապրի:





## ՀԱՅԱՑՈՒՄԻ ՊԱՀԱՆՋԸ

Մարդիկ սովորութիւն ունին իւրացընելու ամեն ինչ որ կայ ուրիշներու վրայ: Այդ իւրացումը կրկին ճամբով տեղի կունենայ, մէկը անգիտակցաբար և միւսը գիտակցաբար: Անգիտակցաբար կատարուած իւրացումները կախումն ունին միջավայրի ազդեցութիւններէն: Այդ իւրացումներուն լաւութիւնը և ազնուութիւնը կը ծնի մեր ապրած միջավայրին, կեանքին, յարաբերութիւններուն բարոյական որակէն: Եթէ մեր ընկերակցութիւնները, մեր ապրած միջավայրը, մեր ընդունած տպաւորութիւնները իրապէս առողջ են բարոյապէս, և կրնան իբր ատաղձ ծառայել մեր նկարագիրն ու ազնուականութիւնը հիմնելու, մենք կը տեսնենք, որ առանց մեր գիտնալուն, և մեր ուզելուն ազնուացեր, և լուրջ ու պարկեշտ նկարագրի մը տիրացեր ենք: Միեւնոյն ճամբով տեղի կունենայ նրկարագրի վատասերումը: Յաճախ տեսնուած է որ շատ մը երիտասարդներ առանց իրենց ուզելուն, և գիտնալուն ապականուած են, և բարոյապէս փճացեր, կորսուեր են իրենց կրած ազդեցութիւններուն, իրենց ըրած անգիտակից, ակամայ իւրացումներուն շնորհիւ:

Այդ իւրացումի օրէնքը իր ոյժը ցոյց կուտայ

ՄԱՆՕԹ.— Խօսուած Գոստնի մէջ 1911 ղեկս. Տիմ Սե. բասսիոյ Որբասիրացի հանդեսից:

նաև ազգերու մէջ: Անհատական իւրացումներու մօտ, ազգային հաւաքական իւրացումներ ալ կան: Երկուքը գիրար կը լրացնեն կարծես: Եւ երկրորդ իւրացումները բնական արդիւնքն են առաջիններուն:

Այդ իրացումի հոգին, գիտակցաբար ընդգրկուած միջոցին, շատ անգամ մոլութեան մը հանգամանքը կ'ըստանայ, գոհացում տալու համար մարդկայնական կամ ազգային ճղճիմ փառասիրութիւններու: Հարկաւ լսած էք, թէ Ամերիկայի գործաւորը, երբ տարիներու ընթացքին բախտի բերումովը կը հարստանայ, և տոլարի ուժով դիրք մը կը շինէ իրեն համար, կ'սկսի իր միւս փառասիրութիւններու գոհացումին աշխատիլ: Ինք անծանօթ մէկը, ու աննշան ծագումով, երբ կը տեսնէ, թէ սնամիտ մարդկութիւնը կարեւորութիւն կուտայ տիտղոսներու, և ազնուակալութեան, հետամուտ կըլլայ կեղծ ու պատիւ վաւերաթուղթերով յարաբերութեան կապ մը հաստատել այս կամ այն կոմսին, այս կամ այն ազնուական Տան հետ, մէկ խօսքով իւրացընել այդ տան վերաբերեալ պատմական պատուանունը, Տիտղոսը: Եւ այս նկատումով, Ամերիկայի կարգ մը հարուստներ ծիծաղելի դարձած են Եւրոպայի աչքին: Այդ իւրացումի գործը մեր մէջ ալ ցոյց տուած է իր գոյութիւնը: Ունայնամիտներ կան, որոնք չիտուած ամբարտաւանութեամբ մը, իրենց պարծանք կը համարին ըսել, թէ սերած են Բագրատունիներէ, Արծրունեաց թագաւորական Տունէն, թէ՛ Օտեանի հետ, Ղազէզ Ամերայի հետ ազգականութեան կամ խնամիական կապեր ունին: Մենք մարդկային սնահատական ունայնամտութեան խառնուելու իրաւունք չ'ունինք, երբ անիկա անձնական է լոկ: շատ շատ աչքերն իս կը փակենք չտեսներու համար

գողունի ազնուականութեան մը, կոնստիթեան մը, փաշայութեան մը կեղծ փոշին, կամականջնիս կը խըփենք. ունայնամիտ յոխորտանքներու վլվլուկով մեր ուղեղներուն գործունէութիւնը չ'մաշեցընելու համար:

Բայց երբ, այդ իւրացումի յոռի սովորութիւնը ազգային հանգամանք կ'ստանայ, և կը դառնայ տղայական ունայնամտութիւն մը, մենք պէտք է աչքերնիս չորս բանանք, և աշխատինք որ այդ յոռութիւնը մեր բարբերու մասը չ'կազմէ: Ճաշարի է ըսել, թէ մեր մէջ այդ յոռութիւնը բաւական լայն տեղ մը բռնած է այսօր: Ուր որ կը տեսնենք մէկը, որ միտք, խելք, հանճար, ոյժ, զօրութիւն ունի, կ'աշխատինք որ անիկա անպատճառ հայկական ծագում մը ունեցած ըլլայ: Օրինակի համար, երբ տեսանք թէ Էդմոն Ռոսթան, ամբողջ Տրանսական գրական հրապարակը կը բռնէ, իր թատերական և բանաստեղծական տաղանդով, ելանք ըսելու, թէ անոր պապը հայ մըն էր, Ռոստոմ անունով, որ Նաբոլէոնի բանակին մէջ ծառայեց Եգիպտոս: Եւ երբ մեր պատմական վաւերագրութիւնները չգորեցին ապացուցանել սերհայացումի կիրքը, դիմեցինք մարչաբանական-անդամազնական փաստերու, և ըսինք թէ «Ռոստանի հայութեան ապացոյց մըն է իր արժուեռունգն քիթը»: Դեռ մոռցուած չեն այն օրերը, և այն տեղագրին ու խելայեղող փորձերը, որոնցմով կուզէինք փաստել, թէ Անդղիոյ Վիքդորիա Թագուհին ծագումով հայ է: Վաղը Չինական յեղափոխութիւնը երբ իր յաջողութիւնը դնէ հաստատուն գետնի վրայ և Չինական Հանրապետութիւն մը հիմնուի դեղին ցեղի սուր ընդարձակ ու բազմամարդ հողին վրայ, պիտի գտնուին՝ ապահովաբար, մեր մէջ

տղայածիաներ, որոնք ո՛չ միայն պիտի պնդեն, թէ իրենք կազմակերպած են Չինական Յեղափոխու-  
թիւնը, այլ և պիտի պնդեն, թէ ղեղին ցեղին  
Հանրապետութեան առջին նախագահը Հայ-  
կական ծագում ունի: Եւ իրենց վարկածին  
վկայութեան պիտի կոչեն Խորենացիով պատ-  
մուած Մամիկոնեաններու Չինական ծագումը:  
Ենթադրենք պահ մը թէ բոլոր այս մեր ջանքերը  
հիմնուած ըլլային պատմական փաստերու վրայ:  
Սակայն, ի՞նչ օգուտ մեզի, այս հայացումներէն:  
Ը—Ժ դար Բիւզանդական կայսրութեան մականը  
ծագումով հայ զօրապետներու ձեռք մնաց: Յունա-  
կան խաչն էր, որ զարդարեց Լեւոն Հայկազնի, և  
Նիկեփոր Փոկասի կայսերական ճակատը: Բիւզան-  
դական ծիրանին էր որ ծածկեց Յովհաննէս Չմբը-  
կիկի փառաւոր յաղթանակները, և ոճիրները: Սա-  
կայն այս մարդերէն ի՞նչ խեղ տեսան Հայն ու Հա-  
յաստան. ինչ շահեցան այդօրինակ մեծ ղէմքերու,  
թագաւորներու, թագուհիներու հայացումէն, —  
Ոչինչ:

Ես չեմ խորհիր, թէ հոս ու հոն փայլող և  
ղիւք գրաւող անհատներով, ըլլան զօրապետ թէ  
թագուհի, և անոնց հայացումովը կարելի պիտի  
ըլլար փրկել այս ազգը իր վաղուան անորոշու-  
թիւններէն, ու մանաւանդ այսօրուան ֆրոնիկ վի-  
ճակի հասած խառնակութենէն: Բաներ կան, որոնք  
թէ՛ իսկ հայկական ալ ըլլան, պէտք է մոռցուին,  
արհամարհուին, և նոյն իսկ պարագաներ կան, ուր  
ուրացումը անհրաժեշտ է, երբ խնդիրը այլասե-  
ռուած բարքի մը. կամ հայկական արգանդէն ծը-  
նած ու վատթարացած սերունդի մը, կամ անհատի  
մը շուրջ զառնայ: Եւ ասիկա կընենք ինչ ինչ պա-  
րագաներու մէջ: Երբ Ֆրանսացի հեղինակ մը  
«Ներքին Սուլթան Համիդը» անուով գիրք մը գը-  
րեց, և ըսաւ, թէ այդ ոճրագործը ապօրէն յարա-

ընդունելու մը զաւակն է, թէ անոր հայրութիւնը հայու մը կը պատկանի, մենք Հայերս, երբեք թեր չ'եւանք այդ կարծիքին, որովհետև կըզգայինք, թէ ոճրագործ Սուլթանի մը հայրութիւնը անհատական և ազգային նախատինք մըն էր: Պէտք է այս միեւնոյն վերաբերումը ունենանք բոլոր այն բաներուն համար, որոնք ազգային արժանապատուութեան և ազգային նկարագրի գանձարանին մէջ շօշափելի առաւելութիւն մը չ'ընկերէ զատ, տգեղ խորթութիւն մը պիտի ստեղծէին:

Գիտակից իւրացումներու շարքին մէջ, մենք ամենքնիս ալ պարտականութիւն մը ունինք. որ է, հայացքնեղ այն ամեն բաները, որոնք մեր նկարագրին շինութեան, մեր ազգային ոյժին ջղուտ կազմուածքին պիտի սատարէին: Կիչ մը առաջ արհամարհանքով խօսեցանք մեր այն շարժումին վերայ, երբ Անգիոյ Թագուհի մը հայացքնեղու շանքերը կը պարզէինք: Եթէ այդ ջանքերնիս լրջօրէն նուիրուած ըլլային, փոխանակ Թագուհիին, Ազգիական նկարագիրը հայացքնեղու, կարծեմ առանց ո՛ր է տարակուսանքի, աշխարհի մեծագոյն իմաստութիւնը ապրած, և ազգային մեծագոյն գանձը դիզած պիտի ըլլայինք: Կը կարծեմ, թէ գեռ ու չէ ժամանակը, և մենք տակաւին պիտի կրնանք անգլո-սաքսոն բարքերու հայացումով դարմանել և դէպի կեանք բերել մեր ազգային-ընկերական մարմինը, որ հիւանդ է իր հոգիով, իր միտքով, իր նկարագրով և իր բարոյականով:

Ունեցանք բանաստեղծներ, որոնք ազգային ընկերական-քաղաքային ձերբազատութեան երազներուն մէջ, իրաւամբ երգեցին մեզի

Օսարներէն յիպ յոյս. . . :

Այսօր երբ նկատի կ'առնունք մեր ազգային

ընկերական-բարոյական կեանքը իր հիւանդոտ ինկածութեանը մէջ, պիտի փափաքէի լսել Հայ Գուսանի մը հնչուէն և անկեղծ ձայնը, որով մեզի ըսէր, առանց այլեւայլի.

Հայութենէն չկայ յոյս...

Եւ մեր ուշադրութիւնը գարձընէր օտարներէն կատարելիք մեր փոխառութիւններու վերաբերմամբ, ու մանաւանդ անգլո-սաքսօն ցեղէն ըլլալիք ազգային փոխառութեան մը մասին, որով կարող ըլլայինք լուրջ և տոկուն նկարագիր մը տալ Հայուն:

Եւ որպէս զի մեր այս փափաքը իրականութեան ճամբու մէջ կարելի ըլլայ դնել, բաղդատութիւն մը ընենք հոս Հայ նկարագրին և Անգղիական նկարագրին միջեւ, հասկնալու համար մեր տարբերութիւնը, և զգալու համար, թէ ի՞նչ բան պէտք է հայացրնենք, և ինչ բան պէտք է արհամարհենք հայուն մէջ, և հեռացրնենք մենէ: Եւ այս մեր ընկերական պզտիկ ուսումնասիրութեան նիւթերը պիտի քաղենք ձեռննա ընկերաբաններէ:

1. Գարլայլ, երբ կը խօսի Անգղիացիներու մասին. կըսէ. «Անգղիացիները հաւրեւոր ժողովուրդ մըն են»: — Ձեն խօսիր շատ, ու նոյն խօսքն վիճիր լուրջ խնդիրներու շուրջ: Գործքի մարմնացումն են. անոր շուրջ է, որ կը հաւաքեն իրենց կամքին բովանդակ զօրութիւնը: — Մենք Հայերս մեր ամբողջ ոյժը մեր լեզուին տուած ենք. մեր խելքը, մեր կամքը, մեր ուղեղը, մեր սիրտը մեր լեզուն է: Ոչ միայն կը խօսինք եղածը, այլ և չեղածը, և ան որ ըլլալիք չունի բնաւ: Կը խօսինք և կը թմրկահարինք մեր ընկերական ու քաղաքային ծրագիրները, որոնց իրականացումին վրտահան չենք, և մեր պոռոտախօս սպառնալիքները կը

դնենք կամ Զարիզմի և կամ ուրիշ բռնապետութեան մը հանդէպ: Մեր շատախօսութեամբ մեր ազգային գոյութիւնը կը վտանգենք, մէկ խօսքով: Եւ եթէ լեզունիս կտրէին օր մը, ալ ո՛ր և է յատկութիւն, արժանիք պիտի չունենայինք կարծես: Եւ շատ խօսող ժողովուրդ մը տկար է միշտ գործքի մէջ: Մենք մեր այսօրուան շաղակրատութեամբը կը նմանինք հին Յոյներուն, որոնց համար Սելուստոս իր Կասայիկս գիրքին մէջ դիտել կուտայ, թէ Յունանտանը անմահացուցիկ իրենց խօսել գիտնալուն չնորհիւ: Անպղիացիք ընդհակառակն կը նմանին Հռովմայեցիներուն, որոնց համար Սայուստոս կըսէ, թէ աւելի կը սիրէին գործել քան խօսիլ:

2. Անգղիացիները կը յարգեն ամեն ինչ որ, կրնան տեսնել կամ կը տեսնեն. — Անոնց մէջ չես կրնար գտնել արհամարհանքի ամենապզտիկ վերաբերում մը բոլոր այն բաներուն հանդէպ, որոնք զարհրու մէջէն քալած եկած են դիմադրելով ամեն տեսակ ընկերային կամ քաղաքական վտանգներու: Եւ այս յարգանքը անոր համար, որ կը պաշտեն ՈՅԺՐ: Ռամկավար Անգղիան, կընդունի թէ ազնուականութեան ջնջումը կը համատատասխանէ իտէալի մը ջնջումին, որովհետեւ ամեն մարդ՝ Անգղիոյ մէջ ազնուականը կը փափաքի: Հոն «ազնուականութիւնը ազդիացիին կրօնի յարկաբաժիններէն մէկն է, և երբեմն նոյն իսկ իր կրօնը: Անիկա բարձրագոյն նպատակ մըն է, ուր ոյժը, հարստութիւնը, չը վիճուած ու անվիճելի իրաւունքը ամենէն ապահով կերպով միացած են իրարու»: Կը յարգէ այդ ամենը որովհետեւ հնութիւն մըն է և ոյժ մը միանգամայն: Յոյգերէ չեն շլանար, անոր համար յաղթութեան գաղտնիքին տիրացած են: Թալպոթ կըսէ. «կարեւորի է Անգղիացիները սպասել, քայց անոնց յաղթել»

երբեք: Անոնց մէջ ոյժը, Քիզաքական ոյժը, բարոյական ոյժի վերածուած է: — Մեր Հայերուս մէջ կը պակաս այդ ազգային առաքինութիւնը, մենք ծաղրով ու արհամարհանքով կը վերաբերուինք մեր ազգային դարաւոր ոյժերուն դէմ, որոնք յարգանքի միայն արժանի էին: Մեր թուլցած ջիղերը մեր մէջ բարոյական թուլութիւն մը շինած են. կը յաղթուինք մեռնելէ առաջ, և մեր մտէր երկարաձգուած պարտութեան մը ամօթովը դրոշմուած է:

Յ. Անգղիացիները կը զնահասեն որեւէ բարոյական, նիւթական եւ մտաւորական արժանիք նոյն իսկ հակառակորդին վրայ. — Չեն կրնար հանդուրժել, որ մէկու վրայ արժանիքը, խելքը, տիտղոսը, իրական ազնուականութիւնը յարձակում կրեն ուրիշներու կողմէն: Երբ 1356 սեպտ. 19 ին Բուաթիէի մէջ Ֆրանսայի Յովհաննէս ԲԱՐԻ Թագաւորը գերի ինկաւ Անգղիոյ Եդուարդ Սէ իշխանին ձեռք, այս վերջինը չ'համարձակեցաւ միասին սեղան նստիլ իր գերիին հետ, վախնալով, թէ այդ իր վերաբերումով անպատուած պիտի ըլլայ անոր Թագաւորութիւնը, և համբաւուած Բարութիւնը. և ծնրողիբ ծառայեց անոր սեղանին: — Գերի ինկած ոյժի մը առջև ապրուած այս ծնրողիբ ծառայութիւնը երբեք նախատինք մը չնկատուեցաւ Եդուարդի իշխանական անբարտաւանութեանը: Նմանօրինակ դէպք մը պատահեցաւ 1348 ին Գալէի դղեակին առջև մղուած պատերազմին մէջ: Եւսթաշ Տը Ռիպոմոնտ զօրավարը կատաղի մենամարտ մը ունեցաւ կռիւի դաշտին վրայ Եդուարդ Գ. Թագաւորին հետ, առանց գիտնալու թէ իր մենամարտի մրցակիցը Թագաւոր մըն էր: Վերջապէս Ֆրանսացի զօրապետը իր սուրը յանձնեց տխոյեանին: Երկուոյին Եդուարդ Գ. խնջոյքի միջոցին, հանդիսապէս

ժօտեցաւ Եւսթօշին, և մարգարտէ թանկագին համ-  
բիչ մը տալով անոր, ուրախութեամբ ըսաւ. Տէր  
Եւսթօշ, այս համբիչը կուտաւ քեզի, դուն որ այ-  
սօր ներսէն ու դուրսէն բոլոր կուռողներուն մէջ  
ամենէն քաջամարտիկը եղար, եւ կը խնդրեմ որ այս  
տարի այս համբիչը քու վրայ կրես իմ սիրոյս հա-  
մար: Ուր որ երբաս ըսէ, քե ես քեզի տուած եմ  
այս համբիչը: Ինչ իմ քանտարկեւոյս ես, ես քեզ ա-  
զատ կը բողոքեմ, եւ դուն կրնաս վաղը մեկնիչ երկ  
ուզես: Առնական արիութիւնը, և ռազմական ար-  
ժանիքը նոյն իսկ թշնամիին վրայ գնահատել գիտ-  
ցող մէկը Եզուարդ Գ էն տարբեր ընթացք մը պի-  
տի չ'ունենար: Այդ կը տրամադրէ ասպետական ու  
ազնուական ոգին: Մենք Հայերս, այս տեսակէտով  
բոլորովին կը հակասենք Անգլիացիները: Մեր մէջ  
չգնահատումը, արհամարհանքը. ամենաստորին մե-  
ծամտութիւնը մեզմէ ամեն մէկերնուս բարքերուն  
մէկ մասը կը կազմէ: Պէտք է Հայերուն, և մանա-  
ւանդ Հայ կուսակցութիւններուն քարոզել, թէ  
ժողովուրդ մը որ չգիտեր յարգանք տածել բարո-  
յական ու նիւթական ոյժին, մտքի զօրութեան,  
հանճարին ու առաքինութեան հանդէպ, երբեք աշ-  
խարհի մէջ մեծ տեղ մը բռնելու, մեծ գործ մը  
կատարելու կոչումը չ'ունի:

4. Անգղիացիին դիւրագամ չէ, պաղարիւն ի եւ  
նոյն իսկ քիչ մը քրամիս: — Չը հետաքրքրուի որ  
բիշներու կեանքով. ինքզինքը կզգիացուցած է,  
անոր համար ըսուած է, թէ Անգղիացիին կղզի մըն  
ի. իր գործովը միայն կը հետաքրքրուի, կը պաշտէ  
իր գործը, մտածումին շատ կարեւորութիւն չ'տար,  
որովհետեւ իր ամբողջ գնահատումը զրական է և  
չօշափելի: Եւ այդ կզգիացումը իրեն տուած է ան-  
զրդուելիութիւն մը. ուրիշներէն չ'աղղուիր. իր

կամքը, իր թելադրողն է: Ասով է որ անիկա օրի-  
մինալ ըլլալու չտփ եղական է: Ինք թաղուած է  
իր գործին մէջ, և անոր հետ մարմնացած: — Մենք  
հայերս այդպէս չենք. գործը երկրորդական տեղ  
մը կը բռնէ մեր վարձուներին մէջ. զիւրահաղորդ,  
զիւրահաւան, զիւրագգած, մենք մեր ինքնութիւ-  
նը կը մոռնանք, երբ ուրիշներ մեզ առաջնորդել  
կ'սկսին: Կրքնանք մեր ամենէն կարեւոր գործերը  
մոռնալ, երբ կարգը դադարկողմանութեան գայ:  
Արտայայտուած գաղտփարի մը հմայքը մեզ կը գի-  
նովցընէ. ալ չենք փնտռեր, թէ այդ գաղտփարը  
կրնա՞յ գործքի վերածուիլ: Իսկապէս թիւն չ'ու-  
նինք, օրիմինալ չենք, կապկողներ ենք, ընդօրի-  
նակողներ ենք, և մեր առագաստները կը բանանք  
ամեն հովի առջև, և ահա այդ պատճառով չենք  
կրնալ բնաւ նաւանգիստ մը հասնիլ: Մտքի ու  
սրտի փոթորիկներու մէջ, և այլադան ազդեցու-  
թիւններու ներքև, մեր չկազմուած զիմագծութիւնն  
ալ կը կորսնցրնենք, և անճանանչ, տգեղ, ու ան-  
գոյն փիզիոնոմի մը կը զգենունք:

Ծ. Անգղիացիին շաւ շեսնեշու ջսնիք մը ունի:  
Կըսուի թէ, Անգղիացիին մէջ լաւ տեսնել ուզելու  
այդ բոլորն փափաքը իր մէջ ծնած է իր մատախա-  
պատ միջաւայրէն: Անգլիոյ մէջ մշուշը բնական-  
բապէս իբր վարագոյր կը ծառայէ մարդուն աչքէն  
ծածկելու ամեն ինչ որ կայ քիչ մը անդին: Մը-  
թութիւնը, մշուշը խորհրդաւոր բան մը ունի իր  
մէջ: Վախն ու հետաքրքրութիւնը այդ մշուշնե-  
րէն: մութէն կը ծնին: Եւ մարդիկ ինքզինքնին  
պաշտպանելու ու իրենց մտքին գոհացում տալու  
համար կ'աշխատին Լիլի Տեմնել: Պայծառ արեւի  
տակ միտքերը կը ծուլանան Եւ աւելի յանդուգն  
են մարդիկ, որոնք դէպի խաւարը կը քալեն: և

աւելի պաղարիւն, երբ իրենց կեանքը իրական կամ արուեստական վտանգներու դիմագրաւելու վարժուած են: Լաւ տեսնել ուղիւր ապահովութեան առաջին քայլն է: — Մենք հայերս, եթէ ո՛չ խոնաւութեան, գէթ քաղաքական կամ ընկերային տառապանքի շինած մշուշներու մէջէն կը քալենք դարերէ ի վեր. ու դեռ լաւ տեսնելու կարեւորութիւնը չենք բժրոնած: Վտանգը դիմագրաւելու յանդէնութիւնը և փորձանքները արհամարհելու պաղարիւնութիւնը կը պակսի մեզի: Կոյրերու կը նմանինք, առխարխար կը քալենք ընկերական ճամբաներէն, և աչքերնիս անգամբանալ չենք ուզեր իրականութիւնը, ճշմարտութիւնը, օգտակարը, և տեւականը կարենալ տեսնելու, կարենալ գործնականացրնելու համար:

Ս. Յռասնեսութիւնը հսկասնզդիակսն է. կըսէ Ֆէմինա Անզդիացին չ'յուսահատիր, որովհետև շաւ տեսնելու վարժուած է, որովհետև պաղարիւն է, որովհետև յսնդուզն է: Չյուսահատիր Իր սկրզբունքն է. ունենալ ջանքի ախորժակը, յարատեւելու կամքը. հաստատակամութեան կիտքը: Անիկա ապատած մըն է փոթորիկներու առջև. այրքները չեն քչեր գինքը, կը փշրուին իր վրայ — Հայերու համար յուսահատութիւնը ձեռնարկի՛ր, մտածուսի մը վախճանն է. լաւ կը սկսինք, բայց յարատեւութիւն չ'ունինք: Մենք շատ անգամ կրտնք. «Անզդիացիի պէս կըսկսինք, ու Հոյու պէս կը վերջացրնենք»: Ասիկա յատկանշական խօսք մըն է, մեր յուսահատութիւնը, մեր հաստատամտութեան պակասը, մեր անտոկուն կամքը ապացուցանող:

Կը տեսնէք, թէ անհուն տարբերութիւն մը

կայ Հայ և Անգլիական բարբերու և նկարագրի  
յայտնութեանը մէջև:

Քանի որ մենք մարմանջ ունինք հայացրնե-  
լու, հայացընենք Անգլիական նկարագրին այս մեծ  
գիծերը, և ասով իսկ մեծագոյն ծառայութիւնը  
մատուցած պիտի ըլլանք մեր ազգին, մէկ խօսքով  
ազգը փրկած պիտի ըլլանք, քողաքային մշտնե-  
րէն, և աւելի առողջ ու փրկարար համբու մը մէջ  
գրած:



## ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԸ

Աշխարհի մէջ մարդկային կեանքին հետ լծորդուած խնդիրներուն հետ կարելի է վերաբերուիլ զանազան ուղղութիւններով: Քաղաքային և զինուորական զիւանագիտութիւնը, որ յաճախ կը դործէ ազգերու, պետութիւններու, և ժողովուրդներու յառաջդիմութեան և բարելաւութեան անունով, համայնաբոյժ դեղը չէ՛, ու չկրնար ըլլալ ազգերու երջանկութիւնը ապահովելու համար: Ժողովրդական տառապանքի ձայնը, սրտակեղեք հառաչանքի մը պէս կը բարձրանայ նոյն իսկ այն երկիրներէն, ուր զիւանագիտութիւնն ու զինուորական ոյժը իրենց կատարելութեան հասած են: Չկայ անկիւն մը աշխարհի մէջ, ուր այդ հառաչանքը թւրեղացած չըլլայ յուսահատ արցունքներու կաթիլներուն մէջ: Տառապանքի ու դժբախտութեան, ցաւի ու զրկումի երաժշտութիւն մը կայ, որուն ձայնաշարերուն վրայ կը տարուբերուի մարդկային կեանք, ըլլայ քաղաքակիրթ, ըլլայ բարբսրոս, ըլլայ անիրաւ թէ արդարասէր Պետութիւններու սահմանին մէջ: Նոյն իսկ այսօր, երբ ամբողջ Ամերիկան, իր ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏՕՆը կը կատարէ, Ատլանտեանէն մինչև Խաղաղականի փուռներ, եւ երբ երջանիկներու ուրախութիւնը

---

ԵԱՆԹԹ. — Խօսուած 30 նոյեմ. 1911 Ն. Բ. Ը. Միւրբեան Ֆիլասոփիայի եւ յետոյ Պոստնի Մասնահիւղերուն:

ոսկեզօծ ձեղուններու տակ կ'արձագանգէ, չէ՞ք լըսեր անիրաւուածներու, զրկուածներու, տառապողներու խուչ չծծիւնր։ Եւ ո՞վ էր, որ դժբախտութեան և ուրախութեան, երջանկութեան ու ապերջանկութեան, ցաւի և զուարթութեան, վիշտի ու գոհունակութեան այս յաւիտենական ու աններդաշնակ խառնուրդը պիտի լուծէր ընկերային ներդաշնակութեան մը մէջ։ Միթէ երջանիկը երջանիկ եղաւ, անոր համար որ արժանի էր լլլալու այնպէս Ա'ն, ոչ ոք իրաւունք պիտի ունենար դրական պատասխան մը տալու, երբ մանաւանդ կը տեսնենք մարդիկ, որոնց երջանկութիւնը ուրիշներու միտոյն ու արիւնովը կազմուած է, և մարդիկ՝ որոնց զրկումը անանուն է, և զրկումին չափը անասմանս։

Ընկերական այս անհաւասարութիւններուն մէջ, կէտ մը կայ, որ մեզի որոշապէս ցոյց կուտայ կեանքերու բուն արժէքը։ Կեանքիւրուն արժէքը բարձրադընոզ այդ աստիճանաչափը ընկերային առաքինութիւնն է։ Եւ մարդկութիւնը, որ դարերով ծափահարեց ոսկեզօծ ունայնութիւնները, և ոյժին տիրապետութիւնը, որ բռնաւորներուն ծնրադրեց, և վատութիւնը աստուածացուց, որ կեղծիքի ու քծինքի բազիններ կանգնեց զօրաւորներուն, խընկարկելու համար, հազիւ քանի 'ը տարի առաջ իր զաւակներու լաւապոյնին ձեռքով յաջողեցաւ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐԾԱՆԱԿ հաստատել, բոլոր անոնց համար, որոնք իրենք մոռցուած կեանքի անկիւնէն բոլորանուէր զոհարերութիւն մը եղան մեղմելու համար տառապանքներն ու վիշտերը։

Ընկերային առաքինութեան նուիրուածները, ճշմարիտ զինուորի գերն է որ կը կատարեն չարին ու չարիքին, տառապանքին ու դժբախտութեան

դէմ: Անոնց ճամբան փշուռ է, ու տաժանակիր, մանաւանդ հիմա, երբ մարդկային բարոյականը խեղճողւած է կիրքերու կատաղութեան մէջ, և ասպետական, անշահախնդիր զգացումները տեղի տուած են անձնական նկատումներու: Այս դժուարութիւններուն մէջ ամեն մարդու տրուած չէ՛ առաքինի ըլլալ: «Առաջինութիւնը պատեւագրական վիճակ մըն է, կըսէ Ժ. Ժ. Ռուսօ, ակոխ մեջ կարեկնայ ապրելու համար, միշտ իր անձին դէմ պատեւագր մը պիտի ունենայ մարդ»:

Մեզմէ ոմանք կ'սկսին ընթանալ առաքելութեան ճամբան, բայց անձին դէմ մղուած կըռիւին մէջ յաղթահարուած՝ կը վերադառնան իրենց կրօնականներուն վրայ, և կը լքեն ասպարէզը: Այսպէս պատահեցաւ նաև Գէորգի օրով, երբ Հայրենիքի փրկութիւնը հրամայական պարտքեր կը դնէր քաղաքացիներու վրայ: Ժողովրդական մարգարէին ձայնը ազգասիրութեան գերազանց բուրմունքով մը խնկուած, բոլոր ժողովուրդը ոտքի հանեց Առաջին խանդավառութիւնները, սակայն, բաւական երաշխաւորութիւն չեն կրնար նկատուիլ ժողովուրդներու արիութեանը և զոհաբերութեան ոգիին համար: Ժողովրդական բռնակը որքան կը մօտենար ճակատամարտի վճարական վայրկեանին, այնքան ոտքերը կը գանգաղէին կարծես: Թուլասիրտ բանակով մը կարելի չէր յաղթանակի յոյսը ունենալ: Եւ այն ատեն Գէորգի իր ձայնը բարձրացուց ու ըսաւ «ո՛վ որ վասաւիտէ եւ երկչոտ քող ետ դառնայ» (Դատ. է. 3): Բանակատեղը դարտըկեցաւ, ու երեք հարիւր մարդեր, երեսուն հազարէն ընտրուած և զտուած, իրենց նուիրումի և զոհաբերութեան բովանդակ հաւատքովը շահեցան յաղթանակը, զոր

պիտի կորսնցընէին ապահովարար երեսուն հազար վաստախոսներու ակար կռիւովը:

Ով որ վաստախոս է եւ երկչոտ քող, իր տունը ֆաշուի անոր համար առաքինութեան ճամբաներու, ընկերական ազնուացումի կռիւի դաշտին վրայ տեղ չկայ բնաւ:

Հայ ժողովուրդին ցեղային յատկութիւններէն մէկն է եղած ոգորումի ոգին, բայց այդ յատկութիւնը յոռութեան կը փոխուի, երբ խնդիրը կը դառնայ անձին դէմ կռուելու շուրջ: Մեր սիրտ-կան զբաղումն է եղած կռիւիլ ուրիշներու դէմ, հոգ չէ՛ թէ մեր կռիւը արդարացի ըլլայ թէ անիրաւ: Եւ այդ կռիւի պահուն է, որ մենք կը մոռնանք մեր անձին դէմ, մեր մոլութիւններուն, մեր սխալ համոզումներուն, մեր կուսակցական նեղմտութիւններուն, մեր դռնհիկ ու դիւային մենամոլութեան դէմ կռուելու մեր նուիրական պարտականութիւնը: Ասոր համար է որ մեր մէջ առաքինի մարդերու աննշան թիւ մը հազիւ ունինք, անոր համար է, որ երբ ցնորֆի ու անիրանալի զադախարներու ու վարդապետութիւններու համար անձնուեր, եւ ջերմեռանդներ կ'ուսնեանաք, իրականին և տեւականին համար աշխատողներու թիւը կը պակսի. անոր համար է, որ Բարեգործութիւնը, և անոր վսեմ սկզբունքը հետեւողներու շատ քիչ թիւ մը միայն կուսենայ:

Սիրելի Հայրենակիցներ,

Ընկերային առաքինութիւնը ամենէն աւելի իր գոյութիւնը կ'ապացուցանէ Բարեգործական կեանքի մէջ: Ինձի համար առաքինի է զինուորը, որ իր Հայրենիքի փրկութեան համար պատերազմի դաշտին մէջ կուրծքը վիրաւոր կ'իյնայ, պատանջուած իր Հայրենիքին դրոշովը: Առաքինի է այն-

չափ նաև ան, որ մութին մէջ թափուած արցունք մը կը սրբէ, և ցաւած սրտի մը մխիթարութիւն կը պարգեւէ: Մեռելի մը յարութիւն տալու չափ աստուածային է բարոյապէս քայքայուած, յուսահաս ու լքուած սիրտի մը վերադարձընել իր կորսուած ոյժերը, մխիթարութիւնը խանդը, եռանդը:

Այսօր մեր հայրենիքն ու մեր ազգը այդ կորսուած ոյժերուն, խանդին, աւելնին, մխիթարութեան պէտք ունին: Եւ քաղաքային կամ գինուորական գիւանագիտութիւնը չէր, որ պիտի յաջողէր այդ հրաշքը գործելու: Եթէ Թուրքիոյ նոր վարիչները իմաստութիւնը ունենային մօտենալու ժողովուրդի ցաւերուն, ուսումնասիրելու համար անոնց ազգիւրները, պիտի զգային թէ Թուրքիոյ ապահովութիւնը կախումն ունէր այն միջոցներէն, որոնք զանազան ազգաբնակչութեանց նիւթական բարեկեցութիւնը պիտի ապահովէին, և բռնապետութեան օրերուն վատթարացած և թունաւորուած բարոյական կեանքն ու նկարագիրը պիտի վերստեղծէին: Այդպէս չըրին, սակայն: Անոնք շիակնոսքիֆե, ախսանանանչուքեան գիտութենէն զուրկ բժիկներուն պէս, փոխանակ ներքին ու հիմնական դարմաններով բուժելու Թուրքիա կոչուած դարաւոր հիւանդը, ժողովրդական յուսահատութիւնը ա՛լ աւելի շեշտեցին, վաղուան երջանկութեան և այսօրուան ապահովութեան յոյսը կասկածի տակ թողուցին, և կերպով մը հիւանդութեան ծանրանալուն պատճառ դարձան:

Թուրքիոյ մէջ գործուած ընդհանուր սխալը կը տեսնուի նաև Հայ Ազգային շրջանակի մէջ մասնաւորապէս: Սխալը միջավայրէն ու մթնոլորտէն կը ծնի կարծես: Մեր միտքերը իրականութիւնը տեսնելու անկարող, երեւակայական, դային ցը-

նորքներու, տեսիլքներու տարուելու բնական հա-  
կա Իրտութիւնն են առած կարծես:

Մինք այսօր, մեր ազգային վերածնութեան  
համար անմիջական պէտքեր ունինք, եթէ իրապէս  
լուրջ ըլլալ կ'ուզենք, մեր ազգասիրական ձեռ-  
նարկներուն մէջ: Ազգ մը, որուն Հոգին վտան-  
գուած է այլասեռութի և տխուր յուսահատու-  
թեան ճամբուն մէջ, իր դարաւոր իմերուն վրայ  
չկրնար կանգուն մնալ և տեսել: Գոյութեան պատ-  
ճառը, ոյժի և տեսականութեան ազրիւրը պէտք է  
ապահովել նախ, կորսուելէ և ցամքելէ, եթէ կու-  
զենք կեանքը փրկել: Ազգային վերաշինութեան  
գործը բժշկական գործ մըն է յաւէտ: Ազգային  
գործիչներ, բժիկներու դերը կ'ստանձնեն. պէտք  
է հիւանդութեան պատճառները, պարագաները,  
փոխանցիկ թէ բրոնխի վիճակը երեւան բերել նախ,  
դարմանումը օգտակար և փրկարար կարենալ ընե-  
լու համար:

Մենք կը տեսնենք, թէ Հայ ժողովուրդին հո-  
գերանութիւնը և անոր ազգային հոգին, տառա  
պանքի, զրկումներու, հարստահարութեանդ, թա-  
ւանի և ջարդերու շարունակական և երկար շրջանի  
մը մէջ, չեղած է իր բնականոն վիճակէն, կորսն-  
ցուցած է իր զուարթախոնութիւնը, և ինչպէս  
կըսէր օր մը հայ վարդապետ մը՝ եղած է սարդա-  
րուքեան ողորդական սէրը: Լաղող ժողովուրդ  
մը ապագայ չ'ունի: Սիրաքի իմաստութիւնը կըսէ.  
«Մրտի ուրախութիւնը մարդուն կեանքն է, եւ մար-  
դուն ցնծութիւնը՝ օտերու երկարութիւն. Կու անձդ  
սփոսի, սիրոյ միփարե, եւ ճրտութիւնը քնէ հե-  
ռուցուր: Որովհետեւ ճրտութիւնը շատերու մահուան  
պատճառ եղաւ» (Լ. 23-25): Կեանքի պայմանը  
նոյնն է մարդու մը և ազգի մը համար: Պէտք է ըս-

տեղծել այդ ուրախութիւնը, ցնծութիւնը, սփոփանքն ու մխիթարութիւնը: Պէտք է տրտմութիւնը հեռացընել ազգի մը սրտէն, մանաւանդ սրտէն անոնց, որոնք տառապանքի մը բեռին տակ ինկած են, որոնք զուլումներու լեղին ունին իրենց շրթներուն վրայ, և որոնք իրենք իրենց չեն բաւեր այդ տառապանքի, ցաւի, տրտմութեան մահացուցիչ բեռներէն ազատելու համար: Ասիկա մէկն է այն բնական օրէնքներէն, որոնց դէմ չկրնար կոուիլ ամբողջ մարդկութիւնը անգամ, առանց տկարներուն վիճակուած ճակատագրական պարտութիւնը կրելու:

Եւ մեր Ազգն ու Հայրենիքը այսօր ամեն բանէ առաջ ու ամեն բանէ վեր այդ մխիթարութեան, այդ սփոփանքին, այդ ուրախութեան և վիշտերէ թեթեացումին պէտք ունին: Ուրախ ենք, որ այս ազգային պէտքն ու պահանջը ըմբռնուած է Ազգին մէջ լրջօրէն խորհող և պարկեշտօրէն իրենց պարտականութիւնը կատարել գիտցող շատերու կողմէն: Եւ Հ. Բ. Դ. Միութիւնը այդ գիտակցութեան արդիւնքն է եղած մեր մէջ: Անոր գերազանց կոչումըն է քալել տառապանքին ետեւէն, ճիշդ այնպէս ինչպէս կարմիր Խաչի ընկերութեան մը անդամուհիները, կը քալեն պատերազմի արիւնոտ դաշտին վրայ, սփոփելու և դարմանելու համար ընկերական կամ բաղաքային աղէտքին զոհերը: Ո՛չ մէկ կուսակցութիւն, ո՛չ մէկ թշնամի բանակ իրաւունք ունի կարմիր Խաչի անդամներուն վրայ յարձակում գործել: Անոնք զինուորներ չեն, այլ գթութեան հրեշտակներ, և ան որ հրեշտակային մխիթարութեան գործ մը կը կատարէ անիկա յարգանք միայն պէտք է վայելէ նոյն իսկ թշնամիներու կողմէն: Անոնց նայուածքը ո՛չ արիւնին կա.

տաղութիւնը ունի, և ո՛չ ալ տառապանքին ու մահուան չարաշուք խաւարը: Բարութիւնն իսկ են անոնք, ու մարդկային առաքինութեան լուսաւոր յայտնութիւնը:

Յաւալի է ըսել, թէ մեզմէ ոմանք, բռնաբարեցին այդ միջազգային օրհնքը, և վատերու նման յարձակում գործեցին Բարեգործութեան և Բարեգործականին վրայ, կուրցած իրենց կուսակցական հաշիւներովը, և այսպէսով արատաւորեցին առաքինութեան հանդէպ տածուելիք յարգանքի զգացումը:

Հ Բ. Ը. Միութիւնը միեւնոյն դերին մէջն է այսօր Հայ իրականութեան մէջ: Իր կրթական, տնտեսական և բարոյական երբեակ գործունէութեան շարժումին մէջ, անիկա շարունակ քալեց դէպի Տառապանքն ու Տառապանքի աշխարհը, մրտաւ դէպի երկրին սիրտը, արեւաբոյր լեռներուն խորը, քանդուած օձախներուն մօտ, ցաւի հովիտներուն եզերքը, փնտոեց՝ վիրաւորներն ու ցաւած սիրտերը, և ամենուն համար մխիթարութեան բառ մը, օժանդակութեան ձեռք մը, յոյսի ձայն մը, վերականգնումի հրաւէր մը եղաւ: Եւ երբ իր ճամբուն վրայ հանդիպեցաւ նախամնծոտ աչքերու կամ կայէն ձեռքերու, առանց սրտնեղելու, առանց նողկանքի ու ատելութեան զգացումէն տարուելու, Գէդէոնի պէս պաղարիւնով մը ըսաւ անոնց երեսին. «ո՛վ որ վաճախիտ է եւ երկչոտ, քող ետ դառնայ»:

Եւ եթէ այսօր հինգ տարուան արդիւնաւորութեան շրջան մը կը բոլորէ Հ. Բ. Ը. Միութիւնը, այդ արդիւնաւորութիւնը կը պարտի իր մեծ ու պզտիկ, հարուստ ու աղքատ անդամներուն հաւաստրապէս: Եւ այս ազդայնապէս արդիւնաւորու-

Թեան չըջանին մէջ, երբ կը տեսնենք հազարաւոր տառապողներ, որբեր, այրիներ մխիթարուած, ես մխիթարութիւններու մեծագոյնը կը տեսնեմ բոլոր այն հոգիներուն խորը, որոնք իրենց ծանդակութիւնով և իրենց ընկերակցութիւնով այդ մխիթարութիւնը ստեղծեցին ուրիշներուն համար:

Մեր կրթած ազգային դժբախտութիւնները և ջարդերը, ոչ միայն մեր նկարագիրը վատթարացուցին, և մեր մէջ սպաննեցին ապրելու յոյսն ու կորովը, այլև մեր ազգին թիւն ալահուելի համեմատութեամբ նուազեցուցին: Տասը միլիոն Հայութենէ մը այսօր աշխարհի վրայ ունինք 3 ½ միլիոնի աննշան թիւ մը միայն: Այս սպառուժը յառաջ չ'եկաւ միմիայն ջարդերէն: Մեր երկրին մէջ տիրող անապահովութիւնը և անտեսական պայմանները մէկ կողմէն գաղթականութիւններու և պանդխտութեան գուռ բացին, և միւս կողմէն կրօնափոխութիւններով կոտորակեցին ժողովուրդը: Պանդխտութիւնը և գաղթականութիւնը երկու մեծագոյն պատահասներն են, որոնք ազգի մը անկումը կը շինեն: Պանդխտութեան տարուած և տխուր ժողովուրդներու մէջ աճումը կը դադրի, սերնդագործութիւնը կրսպառի, ամուրիութիւնը տեսակ մը բնական վիճակ կը դառնայ. որրանները թափուր կը մնան, և գերեզմանն է, որ մարդերը դէպի իւրին կը հրաւիրէ: 1619 ին, առաջին անգամ ըլլալով Հոլանտական նաւ մը 20 հատ ամբիկեան սեւամորթ բերաւ Ամերիկա. ուրիշներ հետեւեցան Հոլանտական նաւին, այդ մարդկային վաճառակա՞նութիւնը շահագործելու համար: Եւ այդ քսան հոգիով սկսած գերիներու բռնի գաղթականութիւնը այսօր 8-9 միլիոնի պատկառելի թիւ մը կը ներկայացընէ Ամերիկայի մէջ: Անոնք թէպէտ գերի,

լաւագոյն կեանք մը ապրած չըլլայնուն համար հաշ-  
ատւած իրենց կեանքին հետ, ուրախ ու զուարթ  
ապրեցան. իրենց ու իրենց տէրերուն ուրա-  
խութիւնը աւելցընելու համար, բնական աճման օ-  
րէնքով, բազմացան հետզհետէ և իրենց վրայ հըրա-  
ւիրեցին բարեսէր մարդկութեան ուշադրութիւնը:  
Խաղաղութեան մէջ դարձնուած իրենց տառապան-  
քը եղբայր եզբօր չէ՛մ զինեց. և հարաւի ու հիւ-  
սիսի պատերազմին արիւններուն մէջէն ծնցուց ա-  
նոնց ազատութիւնը: Մինչ Ամերիկայի բնիկ ժո-  
վուրդը, կարմրամորթ Հնդիկը, իր կրած շարունա-  
կական պարտութիւններէն յուսահատ, կորսընցուց  
իր ուրախութիւնը, և իր զուարթութեան կորուս-  
տով պատրաստեց իր ազգային փճացումը: Եւ եթէ  
իրերը այսպէս շարունակուին, դար մը կամ երկու  
դար վերջ, Ամերիկեան հնդիկներուն ազգազրական  
գիմագծութիւնը ուսումնասիրելու համար թանգա-  
րաններէն զատ ուրիշ տեղ պիտի չկրնանք դիմել:

Ազատութենէ առաջ կեանք պէտք է ժողո-  
վուրդին մը: Կեանքերը ազատութիւն կը ծնին,  
բայց ազատութիւնը կեանք չկրնար չինել մեռած  
հոգիներէն: Եւ կեանքը մխիթարութեան, ուրա-  
խութեան մէջ է:

Սիրելի Հայրենակիցներ,

Մեր Հայրենիքին ու Հայրենակիցներուն հա-  
մար նաև կեանք պէտք է: Անոնք կեանքին ո՛չ  
միայն ոյժը, այլ և յոյսն են կորսնցուցած: Եւ Հօ.  
Բ. Ը. Միութիւնը այդ հիւանդ յոյսին մասհոգու-  
թիւնովն է, որ կը գործէ, կ'աշխատի, և իր աշ-  
խատանքին մէջ մինակ չմնալու, և աւելի զօրաւոր  
քայլերով յառաջգիմելու համար հրաւէր կը կար-  
դայ բոլոր ազնիւ Հոգիներուն, առաքինութեան  
սիրահար սիրտերուն, Հայկական մեծ ու իրական

Միութիւնը կազմերու համար բարիքին ու բարեգործական գաղափարին շուրջ, ուր յարանուանական խտրութիւնները կը գաղբին, ընկերական-կուսակցական այլամերժութիւնները կը լուին, և ուր Միութիւն է որ կը դարբնուի Հայ Ազգութեան, Հայ Հայրենիքին, և Հայ Տառապանքին անունովը:

Որչափ ատեն առաքինութեան զգացումը կայ մարդկային սրտերու մէջ, բարեգործութիւնը իր պաշտօնը պիտի կատարէ աշխարհի վրայ: Պիտի չլռէ իր ձայնը, և միշտ ազնիւ հոգիներ պիտի գտնուին իրեն հետեւելու համար:

Չեմ գիտեր, կարգացած էք Յայնսնոսթեան Գիտքը: Նոր Ուխտի մարգարէն, իր հոգեյուզութեան մէջէն կը տեսնէ հրեշտակ մը, որ կը թռչի երկինքի միջև, աշխարհի բնակիչներուն քարոզելու համար իր ձեռք գտնուած ՅԱԻՒՏԵՆԱԿԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԸ: Այդ աւետարանը, սգաւորներուն՝ մխիթարութիւն, անիրաւութեան մէջ հեծողներուն՝ արդարութիւն, թշուառներուն քաջալերանք, կեանքի կռիւն մէջ ինկողներուն սփոփանք, վհատողներուն՝ Յոյս, և տրտմածներուն ուրախութիւն բարոզող Աւետարանն է: Մէկ խօսքով բարիքին ու բարեգործութեան Յարիսեմական Աւետարանն է քարոզուածը:

Ականջնիս ու սրտերնիս չփակենք այդ վսեմ Աւետարանին առջև, եթէ Հայ ենք, ու իրական ազգասէրներ:





## ԳԻՐՔՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ գրամու մը չ'եղայ բարեբախտաբար, գը-  
րասէր մը եղած եմ կեանքիս բոլոր օրերուն մէջ.  
ու մինչև այսօր տակաւին ես անկողին չեմ մտնել  
առանց օրական գոնէ մէկ ժամ կարգալու: Ո՛չ  
յոգնածութիւնը, ո՛չ վիշտը՝ ո՛չ տառապանքը չէ  
կրցած զօրաւոր պատճառ մ'ըլլալ զիս հեռացընե-  
լու ինծի սիրական եղող սովորութենէ մը. ինչո՞ւ,  
գիտէ՞ք. — որովհետև կը սիրեմ գիրքը, և կը հա-  
ւատամ, թէ միտքի ու սրտի զուգընթաց դաստիա-  
րակութիւնը միակ միջոցն է մարդը ազնուացընելու,  
և անոր մէջ սպաննելու իր անասունի բնազդը:

Կրնաք բարեկամներ ունենալ, որոնք ձեզ հը-  
րահանգեն իրենց բարի օրինակներով, որոնք ձեզ  
քաջալերեն, մխիթարեն, բայց բարեկամները ամեն  
ատեն չին կրնար ընկերանալ ձեզի: Բարեկամները  
կրնան շատ անգամ խաբել ձեզի. անոնց ընտրու-  
թեան մէջ կրնաք սխալիլ: Կրնան ձեր բարեկամնե-  
րը փոխուիլ պարագաներու, արտաքին ազդեցու-  
թիւններու ներքև: Վերջապէս անոնք կրնան մեռ-  
նիլ և ձեզ մինակ թողուլ կեանքի իրական վիպա-  
գրութիւնը կամ ողբերգութիւնը ապրած ժամա-  
նակնիդ: Բայց լաւ ընտրուած, խնամքով ու լըր-  
ջութեամբ կարգացուած, ըմբռնելով մտքսուած

---

ՄԱՆՕԹ.— Խօսուած Թոռլի Հայ Գրասիրաց Միութեան  
հանդեսին մէջ:

գիրքերը յաւիտենապէս բարեկամ կը մնան ձեզի. չեն փոխուիր, պարագաներէ չեն ազգուիր, կրնաք գրպաննիդ պտտցընել, ի հարկին կրնաք ամեն բաղաքի ու մատենադարանի մէջ դանել նոյն կազքով, նոյն կազմով. . . մանաւանդ նոյն պարունակութեամբ գիրքեր, և անոնցմէ կրնաք միշտ ու ամեն տեղ ներշնչուիլ, խրախուսուիլ, մխիթարուիլ: Գիրքերը, մանաւանդ լաւ ընտրուած գիրքերը— որովհետեւ պէտք է ըսել թէ չար բարեկամներու պէս չար գիրքեր ալ կան—հաւասարիմ, անփոփոխ բարեկամներն են մարդուն, և երբ եո կը հանգիպիմ մէկու մը, որ գիրք չունի, ինքնիրենս կ'ըսեմ, ահա՛ աշխարհի մեջ դժբախտ ու չբուած մարդը, որ քարեկամ չ'ունի: Գիրքը անկանջէդ ի վար կը փսփոսայ. որտեղ, մտքիդ, հագիիդ, յիշողութեանդ կը խօսի, կը գգուէ իբր գրական արուեստով, մտածումով կ'ընդլայնէ իբր գիտական ներշնչումներով, նկարագիրդ կը շինէ իբր բարոյական թելադրութիւններով, անցեալը աչքիդ կը պատկերացընէ՝ հայելիի մը պէս իբր պատմական ճշգրտութեամբը:

Ըսուած է, թէ ւնարդուս առաջին գիտութիւնը ւնարդն իսկ է: Եւ մարդը ճանչնալու, ւնարդագիտութիւնը կարենալ ունենալու համար բաւական չէ՛ միայն մարդը գիտել, մարդուն հետ ապրիլ. պէտք է ուսումնասիրել զանի, և այդ ուսումնասիրութիւնները ըրած ատենիս պէտք չէ՛ որ մենք մեր գլխին միայն հաւնինք. պէտք է օգտուինք ուրիշներու դատողութիւններէն, մանաւանդ անոնցմէ, որոնք առողջ դատողութեան մը ապացոյցը տուած են. պէտք է օգտուինք դարերու փորձառութիւններէն: Ներկային ու անցիակին պատմութիւնը մեր միակ ոյժն է. որ կարող ըլլայ մեզ ա-

ուսմանը հետևելու մարդկային կիրքերու, կարծիքներու, հակասական գործերու, մանուածապատ ճամբաներու մէջէն: Եթէ կը հաւատաք, թէ մարդուն կուտայ միշտ դէպի վեր բարձրանալ է, այն ատեն պէտք է ընդունիք նաև, թէ մարդուս դէպի վեր թռիչք տուող ոյժ մը կայ, որ երկու թեւերունի, այդ թեւերէն մին կրօնքն է և միւսը Գիտութիւնը: Փրցուր մարդուն վրայէն այդ երկու թեւերէն մին, մարդը պիտի սողայ թեւակոտոր թռչունին պէս, և իրեն համար անկարելի պիտի ըլլայ թռչիլ:

Ես կը կարծեմ թէ եթէ մենք իբրև ազգ մարդկային կեանքի պատմութեան ճամբուն վրայ կը սողանք ժամանակէ մը ի վեր, պատճառը սա է, որ գիրքին ու իրեն բերած դաստիարակութեան հետ տակաւին չենք ընտելացած: Գաւառին մէջ ամբողջ գիւղեր պտըտած եմ, առանց տունի մը մէջ գրքի մը հանդիպելու: Ասիկա ազգային ամօթ մըն է, զոր պէտք է խոստովանինք: Ամերիկայի մէջ, ո՛չ միայն ամեն տուն կրնաս բաւական թիւով գիրք գտնել, այլ և ամեն մէկ քայլափոխիդ կը հանդեպիս հասարակաց կամ մասնաւոր մատենադարաններու, Գրիստոնէական ընկնրութեանց սալոններու, ամեն տեսակ վարժարաններու: Եւ ասիկա է մեծագոյն պատճառը Ամերիկեան առողջ զարգացումին:

Ուրախ եմ տեսնելով, որ Ամերիկեան Հայ գաղթականութիւնը նոր զարթնումով մը, սկսած է գիրքն ու գրականութիւնը սիրել: Կը վախճամ միայն, որ այդ գրագարանները բոյն գառնան կուսակցական կիրքերու, կուսակցական ատելութիւններու: Կուսակցութիւններէ վեր Ազգը կայ, ամեն միութիւն, ամեն նպատակ, ամեն քայլափոխ դէպի Ազգը պէտք է երթայ: Երբեմն մոլեռանդութեամբ և ընկերական ապականութիւններով կուր-

ցած Հոովմ Հոովմեական եկեղեցիէն դուրս փրկութիւն չըկայ կ'ըսէր: Վերածնութեան դարը ապացոյցը տուաւ, թէ փրկութիւնը Հոովմի չորս պատերուն մէջ չէր սահմանափակուեր, թէ մաքուր և պարկեշտ հոգիներ կան, որոնք գիտեն փրկութեան ճամբուն հետեւիլ, Հոովմի եկեղեցիէն դուրս, իրենց ու երկինքին միջև լուսաւոր սանդուխ մը շինելով: Այս կոյր ու անամօթ մուկանդութիւնը սկսած է դործել կարգ մը անհեռատես, շուրջի կեանքին անծանօթ, պատմութեան դասերէն անտեղեակ, ապագայի մասին անստոյգ տղաքներու միտքին վրայ, որոնք իբրև դարավերջիկ պապեր «արտաքոյ մեր կուսակցութեան չի՛ք փրկութիւն» կ'ըսեն ու կը կրկնեն, կ'ըսեն ու կը պոռան: Փրկութիւնը ազգին Միութեան մէջն է. անհատական ու հաւաքական ազատութիւնները ազգային այդ միութեան մէջ միայն կրնան ձեռք բերուիլ: Այն ատեն միայն Ազգը կրնայ վեր բարձրանալ, երբ ամենուն միտքին մէջ խորապէս արձանագանգէ Դանիէլ Ուէպստրի խօսքը. ազատութիւն և միութիւն, այժմ և միշտ, մի և նախ անբաժանելի: Արհամարհեցէք կուսակցական հիւանդ մուկանդութիւնը և աշխատեցէք, որ ձեր գրադարանները, և Գրասիրաց Միութիւնները պարկեշտ, անկաշկանդ, ազգային աւանդութիւններու հաւատարիմ փաղափարներու միութիւն մը ըլլան: Յոյց տուէք, թէ կուսակցական մուկանդութենէն վեր ազգային առողջ կամք մը կայ:

Ազատութիւն և միութիւն ըսինք քիչ մը առաջ, և զանոնք զրինք իրենց անբաժանելի միացումին մէջ, իբրև յենարան ազգերու գոյութեան ու տեւականութեան: Դժբախտաբար, սակայն, ազատութիւնը վտանգ մըն է նկարագրէ, դաստիարա-

կութենէ, դատողութենէ և բարոյականէ զուրկ անհատներու կամ ժողովուրդներու համար: Բիւփարոյ կ'ըսէ, թէ խուժանը չի հաւատար, քի ազատութիւն ունի, մինչև որ ուրիշներուն ազատութիւնը չի կասկէ: Ասիկա դժբախտ իրողութիւն մըն է ազգերու պատմութեան մէջ: Ճշմարիտ ազատութեան սկզբունքը պարտաճանանչ ու պարկեշտ քաղաքացիներու կը սորվեցընէ, թէ պե՞տ է պաշտպանել ազգը անհատին եւ կուսակցութիւններու դէմ: Գիրքերով, ուսումնասիրութեամբ և դաստիարակութեամբ գնահատուած ազատութիւնը մեր զօրաւոր, անարկու ոյժը պիտի ըլլայ: Պէտք է խօսիլ շարունակ ժողովուրդին բանականութեանը: Խօսքը սերմ մըն է, որ ժամանակով պիտի աճի, պիտի պտղաբերի: Եւ այդ խաղաղ ժամանակը տալու ենք ժողովուրդին, միութեան և ազատութեան սերմը հասունցընելու համար իր արթնալու սկսած բանականութեանը մէջ: Լօվէլ իրաւամբ ըսած է. — ժողովուրդին բանականութեան ուղղուած կոչ մը չ'վրիպիր, երբ մարդիկ ժամանակ չունենան հասունանալու: Այս խօսքը տարբեր ձեւով մը կը բացատրէ Քլիվլէնս, ըսելով. կարելի է վստահութիւն ունենալ խուժանին դատողութեանը. բայց կարելի չէ զայն ունենալ անապատանքով: Ամեն հայու պարտականութիւնը թող ըլլայ այդ դատողութիւնը հասունցընել ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ:

Բնութիւնը, և անոր մէջ ապրող ժողովուրդ մը, ազգ մը և անոր բաղկացուցիչ մասերը եղող անհատները թանկագին գանձեր են, պէտք է զանոնք շահագործել բնութեան գեղեցկութեանը, և ժողովուրդներու, ազգերու և անհատներու մեծութեան հաշուոյն: Ի զուր չէր, որ Վէն Տայք ըսաւ. բնութեան աշխարհը գանձերու պաշտ մըն է, բա-

նաշիով կդպուած, զայն թանաչը մատուցելն պատճառն ու առանձնաշնորհումն է: Տրեղերքի մէջ գրամարկըղ մը, պալատ մը բանալու տարբեր միջոցներ կան: Գողերը բանութեամբ կը խորտակեն. խարճախները՝ կեղծ բանալի կը յարմարցնեն, իսկ պարկեշտ մարդիկ պատուաւոր կերպով, իրենց արդար վաստակով, իրենց ճակտին քրտինքով կ'արժանանան անոնց բուն բանալիին: Բնութեան պալատին, աշխարհի գանձարանին տիրելու պարկեշտ միջոցը՝ առողջ դաստիարակութիւնը կուտայ մեզի, և այդ դաստիարակութեան հասնելու ամենէն ապոհով ճամբան ուղիղ ըմբռնուած ազատութիւնն է: Տգէտ միաքով, ապականուած նկարագրով, բորոտած հոգիով ապրիլ ուզող մարդու մը արուած ազատութիւնը կը նմանի խոզի մը յիզէն կախուած աղամանդի մը: Գողեր միայն կ'ստեղծէ իր շուրջը, առանց իր արքով բարիք մը ունենալու: Բանութիւնը ինչ ձեւի տակ ալ որ գործուի ընկերական կեանքի մէջ, վատութիւն մըն է: Պարկշտ, պատուաւոր և գիտակից միջոցները անհատին և ազգին պսակն են: Եւ այդ միջոցները մեզի կուտան ազատութեան օրինաւոր գործածութիւնը, խելքը, դատողութիւնը, կամքը, ձեռներէցութեան ողին, բարոյականը, մէկ խօսքով զարգացած ու պարկեշտ նկարագիրը: Ընկերակցութիւն մը, ինչպէս անհատ մը որ յափշտակութեան կը դիմէ, հարստանալու համար, ընկերութիւն մը, որ բռնութեան կը դիմէ դիրք մը շինելու համար՝ գողերու ընկերութեան մը համարաւ կրնայ շահիլ, բայց ո՛չ պարկեշտ և ազգասէր քաղաքացիներու: Ինքզինքնիդ դաստիարակութեան տուէք, ազատ ըլլալու համար, գիտնական ըլլալու համար, վերջապէս նկարագիր ունենալու համար: Այդ ամենը ունենալ, այդ ա-

մենք ըլլալ մարդուս ամենանուիրական իրաւունքն է: Եւ նուիրական իրաւունքները կը պահպանուին — պէտք է պահպանուին միշտ — պարկեշտ, գիտակից և նկարագրի տէր անհատներու կողմէն: Մարդուն նուիրական իրաւունքները, կ'ըսէ Ալէքսանտր Համբլթըն, երբեք քաղցած չեն հին մագաղաթներէ կամ մզոցած դիւանաքուղիներէ, անոնք գրուած են, իբրեւ արեւի ճառագայթով մը, մարդկային կեանքի գրքի էջերուն վրայ, բուն իսկ աստուածութեան ձեռնով: Եւ ո՛չ մէկ մահկանացու զօրութիւն չ'կրնար զանոնք ջնջել: Եթէ ազատութիւնը կը բռնաբարուի, եթէ նկարագիրը կը պղծուի, եթէ կամքը կը տկարանայ, եթէ տգիտութիւնը կը նախադասուի, միմիայն տեղ տալու համար հաճոյքներու, կերքի, և գոեհիկ նկատումներու, պատճառը սա է, որ մարդիկ շատ անգամ արամադիր կ'ըլլան, ինքնայոժար, իրենց անդրանկութիւնը ծախելու ոսպի հատիկի մը փոխարէն:

Մարդիկ իրենց տեսակէտները ունին կարողութիւն մը, արժանիք մը գնահատելու մէջ: Անոնք երբեմն ուղիղ չեն համեմատիր բուն իսկ արժանիքին հետ: Օրինակի համար, Ամերիկայի մէջ առածի կարգ անցած խօսք մըն է թէ.

Երբ նիւ Եորք երթաս քեզի կը հարցընեն.

— Ո՞րչափ տոլար ունիս:

Երբ Պոստոն երթաս կը հարցընեն.

— Ի՞նչ գիտես.

Իսկ երբ Ֆիլատէլֆիա երթաս. քեզի կը հարցընեն.

— Ո՞վ ես և որո՛ւ զաւակ ես:

Նիւ Եորք արժանիքը հարստութեան մէջ կը փնտռէ, Պոստոն գիտութեան մէջ, իսկ Ֆիլատէլֆիա՝ պարկեշտութեան մէջ:

Ասոնց ամենքն ալ իրենց արդարացումը ունին թերեւս, բայց Նիւ Եորքի և Պոստոնի գնահատումը ինքնին շատ թերի պիտի ըլլար՝ եթէ Ֆիլատէլ-

Ֆիւայի տեսակէտը զանոնք չ'ամբողջացընէր: Թո՛ւք հարուստին ալ, գիտունին ալ երեսին, որոնք բարոյական արժանիք չունին: Դրամն ալ, գիտութիւնն ալ թանկագին իւղեր են, բայց գէշ ու սղտոտ տրկերու մէջ լեցուած, եթէ անոնք պարկեշտութեամբ չ'ստացուն, չ'խնամուն ու չ'պահպանուն: Գնահատումի չափը, կշիռը ամեն տեղ միեւնոյնը չէ՝ վա՛յ անոր որ կը հանդիպի չար գնահատիչներու, կսքիւնաքօրներու, որոնց կամ կանգունն է պակաս կամ գործածած կշիռը...:

Ուր որ պէտքերը շատ են, հոն պահանջները բազմադիմի կ'ըլլան: Հայ Ազգը պահանջ մ'ունի իր բոլոր զաւակներէն. ըլլան պանդուխտ թէ հայրենի հողին վրայ, և այդ պահանջը պիտի ըլլայ սա, թէ. — կեանքիդ մէջ, ի՞նչ շահեցար, ի՞նչ սորվեցար, ի՞նչպէս ապրեցար: Որովհետև եթէ հարստութիւն չունիս, շատ քիչ կրնաս օգնել քու նմաններուդ ցաւերը մեղմելու համար. եթէ գիտութիւն չ'ունիս, ապուշ մըն ես, ու խաւարամիտ մը, և չես կրնար ազգիդ բարձրացումին և յառաջդիմութեանը ծառայել. եթէ բարոյական չ'ունիս և ո՛չ ալ պարկեշտութիւն, վատ մըն ես, և ոճրագործ, խաբեբայ, խարդախ, ստախօս և զրպարտող ըլլալու ամեն յարմարութիւն ունիս քու մէջդ: Մի՛ մոռնաք դրամ վաստկիլ պարկեշտ միջոցներով, և անդու աշխատութեամբ: Մի՛ մոռնաք գիտութիւն սորվիլ յարատև ջանքով, ու մանաւանդ մի՛ մոռնաք անձնական արժանիքնիդ փայլեցընել:

Եւ ձեր մէջ եղած ուժերը զարգացընելու համար մէկ միջոց ունիք: ԲԱՐԵԿԱՄ ԵՂԷ՛Ք ԳԻՐԳԻՆ ԵՒ ԴԱՍՏԻԼՐԱԿՈՒԹԵԱՆ: Անոր հետ ապրեցէք ձեր կեանքի բոլոր օրերուն, բոլոր ժամերուն. մինչև ձեր անկողինը տարէք գիրքը, եթէ կ'ուզէք իբրև մարդ ապրիլ, ու ապրիլ նիւթական, բարոյական և մտաւորական երրիակ կարողութիւններով օժտուած:

## ՀԻՒԱՆԴ ՏՂԱՔԸ

Ուստի քաղաքային հիւանդանոցը կ'այցելեմ.

Հիւանդներն ու բանտարկեալները, բնութենէն անժառանգուածի, իրենց դժնէ վտարումի կեանքին մէջ, քաշողութիւն մը ունին բոլոր անոնց համար, որոնք կը զգան, թէ ի'նչ կը նշանակէ անձնական ալատութենէն զրկուիլ, կա'մ ախտի մը, կա'մ օրէնքին անուշաբուսեան եր'սէն:

Շէնքը ինքնին մաքրութիւն է համակ, ու հոն նրբերու հոգածութիւնը, հիւանդներու սնարն մաս, միկի կը պատկերագրէ հին մարտիրոսներու համբերող համակերպութիւնը վիշտին հետ, անոնց լոին նուիրումը՝ տառապողներու սփոփանքին համար: Հիւանդներու սալոններէն մինչև Տասնայատուկ խողերը, վիրաբուժական գործողութեանց սալոններէն մինչև X ճառագայթի խաւարախոցը, նոյն մաքրութիւնը, նոյն լուծութիւնը, նոյն մխիթարող փայտը, նոյն գուրգուրանքը, նոյն նուիրումը ցաւին ու մխիթարութեան, նոյն մայրական քաղցրութիւնը հիւանդանոցի բոլոր բնակիչներուն հանդէպ, որոնցմէ ոմանք դէպի կեանք, և ուրիշներ դէպի մահ ճամբորդելու նախազգացումը ունին, և որոնց ամենուն ալ դէմքին վրայ, օրուան բոլոր ժամերուն, ցաւին դառնութիւնը կայ խորագրուած: Վիշտի ու տառապանքի Մեծ Գիրքին յարածուն է-

ջերն են անոնք, մերթ նուիրագրեալան ու մերթ առեղծուածային տառերով գրուած, որոնցմէ ամեն մէկը իր ցաւը բերած կցած է այդ Գիբբին, որուն մէջ երջանկութեան միտկ վանկը նշրսին ժպիտն է, և անոր դիւրահաղորդ, զգայնիկ պատրաստակամութիւնը՝ ծառայելու, յուսադրելու, խնամելու, և մխիթարելու:

Օր. էլէն մեզ կ'առաջնորդէ որահէ սրահ, խուցէ խուց, ու կը տանի մինչև մատուռը՝ ցուրտ ու պատկառելի, որ ազօթատեղի մը չէ, այլ հանգստավայր մը. ուր կը տարուին անտէր մեռելները, հոն անոնց վրայ կարգալու համար յուղարկաւորութեան վերջին ազօթքը, «Ճանապարհ քարին», կամ «Դարձ անձն իմ»ը:

Այդ հիւանդանոցին մէջ ամենէն աւելի աչքիս կը զարնէ երախաներու յարկարամիւրը:

Պզտիկ ճերմակ մահճակալներ, անբիծ մաքրութիւն համակ, քով քովի դրուած են: Շրջանակի երկաթէ ձողերը վանդակներու տեսքը տուած են մահճակալներուն: Այդ վանդակներուն մէջ, սակայն, սոխակներ չեն որ կը քնանան կամ կ'երպեն, այլ հիւանդ տղայք, 1-3 տարեկան երախաներ, որոնցմէ սեւամորթներուն քնացող ղէմքը աւելի ևս կը շեշտէ մահճակալի կազմածին սպիտակութիւնը: Երկարօրէն կը դիտեմ զանոնք, այդ հիւանդ տղայք: Քնացող սեւուկի մը սնարը կունգուն կը մտածեմ ընութեան ժպիտն անողորբութեանը մասին, ու հոնօգեկան ընդվզում մը կը ցնցէ զիս:

Այդ ցնցումս անիծող բողոք մըն է բոլոր անոնց ղէմ, որոնք հրեշտակային մանկութեան մը հոգիին թեւերէն վար կը կախեն ախտաւորութի, խօթութեան բորբոսը...:

Անիկա անմեղին բունը կը քնանայ. խաղաղ

ու վճիտ անդորրութեամբ մը, կեանքի ցնորքներուն անգիտակից երանաւէտութեամբ, և դուրսը լացող մանուկի մը ճիչն անգամ չի թափանցեր անոր մաքուր վանդակէն ներս, կարենալ խանգարելու համար քնացողին խաղաղութիւնը:

Մէկ մահճակալէն միւսը կ'անցնիմ մեքենայաբար: Մահճակալներն ալ մանուկներն ալ իրարու կրկնութիւններն են միայն: Եւ արդէն մարդկային կեանքին ճշգրիտ հանգիտութիւնները թարգմանողը մանկութիւնը չէ՞ միթէ: Ո՛րչափ մեծնան մարդիկ, որչափ անհատականութիւնը շեշտուի իրենց մէջ, ա՛յնքան կարծես կը հեռուընան հասարակաց բունէն — մարդկութիւնէն ու իւրամէ: Մանկութիւնը նախնական ձեւն է, որուն վրայ կը կաղապարուի մարդկութիւնը, իր ապագայ տարածութիւնները, հրէշային վատութիւնները հագնելէ առաջ,

Անոնցմէ ոմանք ջղային տկարութիւններով ծնած են, ու ոմանք անարիւնութեան տուայտանքը ունին: Հիւանդութեանց տեսակաւորում մը կայ աչքիդ առջև, որոնց նայած ատենդ կը փորձուիս ինքնիրենդ հարցընել, թէ արդեօք մարդկային ախտերու ցուցադրուած նմոյշները կամ հշակֆիյոննե՞ւրն են այդ սղաքը:

Հիւանդ սղաքը, վիրաւոր հրեշտակներու պէս զալուկ ժպիտ մ'ունին; ակօսուած՝ իրենց դալկադէմ ու նիհար թուշերուն վրայ: Պեպի՛ք քովերնին է, պլլուած են անոր, իրենք ալ ապրելու սկսելէ առաջ կիսամեռ պեպի՛քներ, որոնց միամիտի ժպտուն ու մերթ պանդոյր նայուածքին մէջ կեանքին նողկալի բորբոսը կը հոտի, և որոնցմէ՝ արդարներու անարկու բողոքին պէս. յուսահատութեան բուրմունքը կը բուրէ...

Ու կը մտածեմ. այդ հիւանդ տղաքը իրենց ծընողքին մեղքերուն, անոնց հրէշային ապրելակերպին ապաշխարանքը կուլան, ու քաւութիւնը կը քաւեն իրենց ճերմակ վանդակներուն մէջ: Գինով ու ցոփ ծնողքներու հաշմած այդ սերունդը, գերեզմանի եր դրացնութեանը մէջ, նետուած յաւիտենական բողոքն է բոլոր անոնց երեսին, որոնք իրենց դիւային մէկ վայրկեանին, անասունի հաճոյքը կ'զգան մանկութեան որրանը պղծելու, իրենց բորոյական-ընկիրական ոճրագործ ապականութիւններովը խանձարուրելով մեռելարոյր այդ կենդանութիւնները . . . :

Այդ հիւանդ տղաքներէն շատերու կեանքի ճամբան շատ կարճ է: Մօր մը արգանդէն՝ հիւանդանոց, ու հիւանդանոցէն՝ գերեզման. . . Երջանիկ ճամբորդներ, սակայն, որոնց կը խնայէ բնութիւնը ապագային իրենց մանուկի ախտաժէտութիւնը իրենց ծնողքին երեսը թքնելու անհուն տառապանքը. . . :



Մտածումս զիս հիւանդանոցի պատերէն դուրս կ'առաջնորդէ դիտելու համար. մեր ազգային-ընկերական կեանքին մէջ ՀԻԻԱՆԴ ՏՂԱՔԸ, ցաւագարներու ուրիշ խումբեր, որոնց հիւանդութեան հայրութիւնը կը պատկանի կարգ մը Առաջնորդոջներու, որոնց մէջ վատառողջ ընկերականութեան մը սերմերը ծլարձակած են: Պատճառի ու արդիւնքի միեւնոյն տեսակաւորումը հոս ալ, Ու դուրսն ալ հականեխումի ու բուժումի պէտքը. . . Չարիքը ինչ տեսակով ալ որ կերպարանուի, դարմանումի պէտք ունի: Ու ամեն դարմանում կ'սկսի վարակիչ ախտերը ու ախտաւորները փոխանցումէ՛ պրզիլելով:

Այդ հիւանդ աղաքներուն մէջ հետզհետէ ար-  
մատանալու վրայ եղող տարափոխիկ ախտն է ա-  
զատութեան սոսկուելը և թունապետութեան նախասի-  
րութիւնը: Երբ հիւանդութիւնը իր ազդեցութիւնը  
կ'ընէ տկար ու անյիտակից տղերքներու հոգիին  
վրայ, երբ կ'սկսի անոնց մէջ սպաննել անհատ-  
կանութիւնը՝ իր բոլոր նախաձեռնող կարողութիւն-  
ներով, և անոնց մէջ կ'ստեղծէ հաւաքապաշտ (col-  
lectiviste) մարդանեխեան, ալ չենք զարմանար թէ  
ինչո՞ւ անուանական ազատականներ նողկալի բռ-  
նապետութեան մը գործաւորները կը դառնան:  
Ազատութիւն մը կայ, իրական ազատութիւնը,  
որուն պէտք է ձգտի ամեն ինքնավատան մարդ,  
իբրև իր բնական ու մարդկայնական իրաւունքին,  
և ազատութիւն մըն ալ կայ, որ ախտավարակ է,  
և որուն ետեւէն կը վազեն տկարները, այլտոե-  
րածները, վատերը միայն:

Իրական ազատութեան պաշտպանները զօրա-  
ւորներն են, այսինքն անոնք, որոնք բնութենէն  
սրտով ու հոգիով օժտուած, իրենց մէջ կ'զգան  
մրցութիւններու, ձեռներէցութիւններու թոխքին  
մէջ յաղթանակելու ոյժը, պարկեշտ ու փրական:  
Տակէ, կ'ըսէ թէ այդ ազատութիւնը զօրաւորին կըր-  
կին ոյժը կը կազմէ, իսկ սկարին սկարութիւնը ա-  
պացուցանող փորձաքար կ'ըլլայ. անոր հանար տը-  
կարները հաւասարութիւն կը պահանջեն:

Բայց այդ հաւասարութիւնը կեղծ ազատու-  
թեան շաղիկովը հազցուած բռնապետութիւն մը  
միայն կրնայ փորձել ստեղծելու, այոխնքն տկար-  
ներուն փառաբանած ազատութիւնը, որ սպանու-  
թեան արտօնագիր մը կուսայ իրենց ձեռքը, և որոնք  
ուրիշներուն ազատութիւնը անտեսելու չափ ազատ  
կ'զգան ինքզինքնին:

Հիւանդ աղաքը...

Հիւանդագին եսականութեան մը մրուրը կայ

անոնց հոգիին խորը, բուժումի կտրօտ տառապանք մը, զոր պիտի զգան ու ըմբռնեն այն ատեն միայն, երբ ինքզինքնին տխտաղննելու վիճակի մը բերեն: Ողջամիտ բաղդատութիւն մը միայն այդ ախտազննութեան պէտքը պիտի զգացնէր իրենց: Բայց անոնք, Հիւանդ Տղաքը, մեկուսացուած են բաղդատութեան այդ պատենութենէն: անոնք կամազրկուած են իրենց զաղափարի ճնողներուն թունաւոր շունչին տակ, և բռնութեան ու ճնշումի ասպարէզին վրայ միայն ի հանդէս կուգան մոլորած, վայրենի ու անճանաչուած, և երբ բռնութեան հրայրքը ողջմտութեան ու դատողութեան երակները ցամքեցուցած է իրենց մէջ: Անգղիական եսականութեան պատճառը բացատրելու համար սապէտ ըսած էր սրամիտ Ամերիկացի մը. «Անգղիա կղզի մըն է, ու Անգղիացին կղզիաբնակ մը: Անգղիացին կղզիաբնակ մ'ըլլալէ աւելի կղզի մըն է»:

Շատ հեռու ենք Անգղիական ձեռներէց ու լայնամիտ եսականութեան, և մեր հեւանդ տղաքներուն ազազուն, նիհար ու այլասեռած եսականութեան միջև բաղդատութեան եզր փնտռելէ: Բընաւ: Առողջ հսկայի մը և հիւանդ թզուկի մը միջև բաղդատութիւն չ'կրնար գոյութիւն ունենալ: Բաղդատութիւնը սա չափ է միայն, որ մեր հիւանդ տղաքն ալ կղզի մըն են, խոպանացած ու վայրենացած, որոնք չարիքի ու քանդումի դիւրապատուստ, ինքզինքնին անկարող կ'զգան բացարձակապէս ո՛չ միայն լաւագոյն գործերու, վսեմ թոխչքի, այլ նոյն իսկ բուժուելու, երբ այդ բուժումը իրենց բարեփոխուած, նորոգուած կեանքին նախաքայլը պիտի ըլլար: Եւ ահա, իրենց հիւանդագին օրերուն, անձնասպան ու ազգասպան ժտութեամբ անոնք, հիւանդ տղաքը մէկդի կը նետեն բժշկին ու նորսին փրկարար օժանդակութիւնը:

Հիւանդ տղաքը. աւելի. արգահատելի քան հիւանդանոցին հիւանդ օղափր:

## ՄԵԾԱՄՈԼ ԱԽՏԱԻՈՐՆԵՐԸ

Ժամանակները ո՛րքան կը յառաջանան, այնքան գիտութիւնը նոր հիւանդութիւններու տեսակներ երեւան կը բերէ: Հիներուն ծանօթ հիւանդութիւնները՝ հազիւ մատի վրայ համրուած, ա՛յնքան ստորաբաժնուած են, որ ամենէն ճարտար բժիշկներն անգամ այսօր դժուարութիւն կը քաշեն մէկ շունչով անոնց անուանիւրը տալ մեզի:

Հիւանդութիւնները երկու կարգի կը բաժնուին. բժիշկներն ալ նմանապէս: Անոնցմէ ոմանք ֆիզիքական են կամ մարմնական, և ոմանք՝ հոգեկան կամ բարոյական: Եւ ախտավարակ մարդկութիւնը, ո՛րքան կը յառաջդիմէ կեղծ քաղաքակրթութեան ճամբուն վրայ, կարծես ինքզինքը այնքան տրամադիր կը զգայ բարոյական հիւանդութիւններով վարակուելու: Սէն Վէնսան Տը Բօլ կը գրէր, թէ «Մարդուն միտքը իր հիւանդութիւններուն եւ խորութիւններուն ճեսակները ունի, մտմիտին նըման»: Իսկ աշխարհի եօթն իմաստուններէն մէկը՝ Պիաս, Քրիստոսէն 750 տարի առաջ կը յայտարարէր, թէ «Անկարելիին բաղձալ, ուրիշներու դրժբախտութեանց հանդեպ անկարելիի ըլլալ, հոգիին երկու մեծ հիւանդութիւններն են»:

Պիասի դարէն ի վեր հոգիի և սիրտի հիւանդութիւններու տեսակները ա՛յնքան շատցած են, որ անոնց ճշգրիտ ցանկը չինել դժուարին պիտի

ըլլար բարոյախօսի մը համար, կարծեմ ամեն մարդու մէջ հիւանդութեան տեսակ մը կայ: Այդ հիւանդութիւններէն ոմանք անբուժելի, ոմանք վնասակար են միայն ենթակային, իսկ ուրիշներ, կը վնասեն ենթակային ալ, զինքը շրջապատող անհատներուն ալ: Այսուհանդերձ շատ քիչերն են, որ իրենց հիւանդութիւնը զգալու վիճակը ապրած ըլլան: Առողջութեան սխալ հոմոզում մը իւրաքանչիւր մարդու մէջ ստեղծած է ինքնավստահութեան անսպառելի պաշար մը: Այս պատճառով էր անշուշտ, որ օր մը Մատամ Տը Լամպէր կը գրէր, թէ մարդիկ իրենց քերութիւններուն հետ կ'ապրին այնպէս, ինչպէս կը կրեն հոսերը. անոնք իրենց կրած հոսերը չեն զգար. այդ հոսերը ուրիշներուն միայն անհանգստութիւն կը պատճառեն:

Իմաստուն Պրասի երջանիկ օրերէն ի վեր մարդկութիւնը տեսաւ մտքի ցաւագար մը, Նրոտարատ, որ մեծամոլութեան, անմահութեան ախտէն բռնուած, իր անոնքը յաւեժացընելու միակ միջոցը գտաւ Արտեմիսի Մեհեանը այրելուն մէջ: Ու այսպէսով յիմարի մը մեծամոլ ցաւագարութեան զոհ գնաց աշխարհի Յօթն Հրաշալիքներէն մէկը:

Մարմինի ինչպէս հոգիի հիւանդութիւններուն ամեն տեսակները չեն կրնար ամին մարդու մէջ հաւասարապէս ծաւալ գտնել կամ արմատանալ: Գիտութիւնը կ'ընդունի, թէ այս կամ այն հիւանդութիւններու միջոցները կ'աճին անոնց տրամադիր կամ ենթակայ (sujet) հողերու վրայ: Սրինակի համար, յամառութիւնը կամ պինդգլխութիւնը, իբր հիւանդութիւն, իր ենթակաները, իր տրամադիրները ունի: Տկար ու գձուձ հոգիներն են, որ իրենց հիւթը կը ծծեն անկէ, և կ'աշխատին անով իրենց համար ոյժ մը շինել: Այս պատճառով էր, որ Լա-

ւտուէր ըսաւ, թէ «յամատուփիւնը սկարներուն գորտփունն է»: Սակայն յամատուփիւնը չ'չփոթենք հաստատակամութեան հետ, որ նոյն հեղինակին կարծիքով, «սկզբունքներու, նշմարտութեան, իրաւունքի, կարգապահութեան, օրենքի, պարսփի եւ վեհանձնութեան վրայ հիմնուած՝ իմաստուններու յամատուփիւնն է»: Սա իմաստուններու յամատուփիւնէն կամ հաստատակամութենէն անջատ, որ նկարագրին անկեղծ և հուժկու արտայայտութիւնն է, կայ բո՛ւն հիւանդութիւնը, սկարներուն, ապուշներուն, անգիտակից-գիտակիցներուն յամատուփիւնը, զոր խնջօք մարդկութիւնը անասուններու ամենէն խոնարհին.—իշուն միայն կը վերագրէ, և որ մարդերու մէջ ողբալիօրէն ժխտական կեցուած մը ունի ճշմարտութեան հանդէպ: Յամատներուն հիւանդութեամբը ինքզինքնին զօրացնել ուզող սկարներուն ըսուած է, թէ «եթէ իրաւունք ունիք, յամատուփիւնը ձեր յաղթանակը պիտի պզօնկցընէ, իսկ եթէ անիրաւ եք, ձեր պարտութիւնը աւելի անօրայի կ'ընէ»:

Ասոնցմէ վերջ կըսկսի հիւանդներու նոր շարք մը, չարախօսներու, զրպարտողներու, անուանարկողներու շարքը, որոնք իրենց ոյժը կ'ուզեն փրկուածել ու գտնել ուրիշներու մասին գէշ խօսելուն, ուրիշները զրպարտելուն կամ անուանարկելուն մէջ: Այս կարգի հոգիները իրենց զզուելիութեամբ, ո՛չ միայն ապացուցած կ'ըլլան, թէ սկար հոգիներ են, այլ և միեւնոյն ժամանակ ապացուցած կ'ըլլան, թէ ՎԱՏ ՀՈԳԻՆԵՐ են, ցեխով, մուրով ու ապականութիւնով շողուուած հոգիներ, որոնք ազնիւ և լաւագոյն բան մը արտագրելու իրենց անկարողեամբը, շուտով ու ինքսբերաբար կ'իջնան չարախօսութեան ու զրպարտութեան գոիհին մէջ:

ու ալ անկէ դուրս վիճակ մը չեն կրնար տեսնել ու զգալ: Հիւանդ—չարախօսին ու հիւանդ—չարագործին միջև եղած հեռաւորութիւնը քայլ մըն է միայն: Անոր համար է, որ Քուէնտիլիէն ըսած է, թէ «չարախօսին ու չարագործին կամ ոճրագործին միջև եղած տարբերութիւնը պատահութիւնն է միայն»: Թող առիթը ներկայանայ, չարախօսը ոճրագործ մը պիտի ըլլայ, եթէ չարախօսած պահուն իոկ չ'ուզենք զինքը ոճրագործ մը նկատել: «Երբ չարագործին շնորհն դաշոյն մը յի եղած, յանցանքը իրը չէ՝» ըսած է Րիվարոլ: Այս տեսակէն եթէ երկուքը հրարու հանդիպին, իրենց խօսակցութեան նիւթը ուրիշներն են միշտ: Ա՛խ, ուրիշները... որոնց մէջ գոյութիւն չունեցող թերութիւնները կը չարչրկեն զիրենք: Ուրիշներու վրայ պակասած թերութիւններուն տառապանքն է որ կ'ապրին անոնք, իրենց մեծ սիրտերնուն մէջ...

Բայց թողունք հիւանդներու այս տեսակաւորումը, իր պէսպիսուած Մեդուստեան բազմակընճոտութեանը մէջ, և անցնինք մեծութեան հիւանդութեան և մեծամոլ տիտաւորներուն:

Ասոնք որոշ տիպարի մարդեր են, բարեբախտաբար քիչ թիւով, որոնց հիւանդութեան ախտազննութիւնը երեւան կը բերէ կարգ մը առանձնաշատուկ ախտանիշեր:

Մեծամոլ ախտաւորները հասարակ մահկանացուներ են մեզի պէս, ու քիչ մը աւելի շեշտուած՝ իրենց միջակութեամբը, չ'ըսելու համար իրենց տափակութեամբը: Հասարակ մահկանացուներէ իրենց տարբերութիւնը սա է, որ աւելի շատ հաւատք ունին իրենց մտաւոր կարողութեան | վրայ, աւելի շատ բարոյական ունենալ կը կարծեն, և մաքսիմալ ճոզով մը եսասիրութիւն ունին և մեծ ըլ-

լալու, մեծ երեւնալու եռք մը կայ իրենց խոնարհ գրսերեւոյթով մորթին տակ, Անոնց բազուկնեօրուն վրայ մագաղաթէ գրապանակ մը միտյն կը պակսի իրենց ճշմարիտ Փարիսեցիի հանգամանքը երեւան բերձու համար:

Անոնք մոլութիւն մը ունին, որ է նոյն իսկ սկզբունքի ճամբուն վրայ բաժնուիլ իրենց գաղափարակիցներէն, ու իրենց մեկուսացումը, որ արդիւնքն է երեւնալու մեծամոլութեան, արգարացընելու համար չեն խղճահարիր աս ու ան անհատին ճակտին նետելու երեւակոյական թերութիւններ, ընկերական զանցառութիւններ, Ծայրայեղ մաքրասէրներ, փխրդրքներ կը ձեւանան, որովհետեւ ԸԼԼԱԼԷՆ ԱԻԵԼԻ ԴԻԻՐԻՆ Է ՁԵԻԱՆԱԼԸ, և այսպէսով կողքն պարտըկել իրենց մեծամոլ ախտավարակութեան արդիւնքը եղող հերձուածութեան վարուելակերպը:

Մեծութեան հիւանդութենէն վարակուածներու ամբողջ մտասեւեռումը երեւնալուն մէջն է միտյն: Անոնք պատուանդան մը կը փնտռեն, իրենց ԵՍին արձանը գնելու հոն: Չեն ուզիր իսկ անդրագառնալ իրենց արձանին տգեղութեանը: Եւ երբ տեսնեն, թէ ընկերական լիանոծ կեանքին մէջ, ուր իրենք պիտի նսեմանային, աւելի զիտակիցներու, աւելի կարողներու, աւելի անձնուէրներու շարքերուն գիրկը, անոնք իրենց համար կ'ուզեն ստեղծել գոնէ անկիւն մը, բաւական է, որ գիցական եռոտանի մը դռնուի հոն, ուրկէ կարող ըլլան պատգամախօսելու: Կեղծ պարկեշտութեամբ վահանուած ռազմիկներ, որոնք ինքզինքնին իրական Արէսներու հետ կը շփոթեն և կը սրտնեղին, ընկ'ընեն, եթէ մարդիկ զիրենք չի նկատեն իրենց աչքերով:

Անոնց հիւանդագին հոգիները, առեւերոյթ խաղաղութեան մը տակ, ահագին փոթորիկներ ունին: Անոնք կը տառապին գնահատուած չ'ըլլալնուն (?) ցաւատանջութեամբը:

Ապերտխտ ժողովուրդ, որ իր այսօրինակ դիւցազները գնահատել չ'գիտեր. . .

Աշխարհի մէջ որչափ ատեն պատրուակները չի պակսին, չքմեղանքի ամեն տեսակները, թէ իսկ ըլլան ամենէն գձուձները, տակաւին իբրև շապիկ պիտի կրնան ծառայել հոգեկան հիւանդուութիւնները պիմակաւորելու համար: Մեծամոլ ախտաւորները բացառութիւն պիտի չ'ըլլային, ապահովարար, շահագործելու համար պատրուակներն ու չքմեղանքները: Բայց թող գիտնան անոնք, Մեծամոլ Ախտաւորները, թէ կեղծ պարկեշտութեան, օգային հայրենասիրութեան իրենց մեքսերը, իրենց շապիկները բնաւ տարբերութիւն չ'ունին Դէոգիւնէսի ծակոտկէն վերարկուէն, որուն տակէն ամբողջ իրենց գարշութիւնը տեսնելու, իրենց մեծութեան հիւանդութիւնը ախտազննելու, իրենց ցեխէ արձանի բոլոր տձեւութիւնները շոշափելու կարող մարդեր կը գտնուին: Իրենց կարծածէն շատ ու շատ աւելին կան, որոնք զիրենք եղածնուն պէս ճանչնալու կարողութիւնն ունին. և ասիկա է նաև մէկը այն պատճառներէն, որով մինակ մընալ կը սիրեն անոնք, առանձնացած ու գլուխ գլխի տուած մէկ մէկու ուսի վրայ, իրենց անընչան զանցառելի թիւովը:

Անոնց նկարագրին, անոնց ընկերական բարոյականին, անոնց մեծամոլի հանգամանքին համար ըսելիք մը ունինք: Մեր ըսելիքը սա է, թէ հակառակ իրենց ջանքերուն, հակառակ իրենց մտա-

տանջութիւններուն, սրտով ու հոգիով պղտորներ  
են իրենք, ու պիտի մնան նկարագրի, բարոյական  
թզուկները, և թէ իրենց պղտորութենէն ի գուր պիտի  
ջանան մեծութիւն մը կերտել իրենց համար: Յը-  
րանսացի մեծ բարոյախօսը Ժիւլէր ակնարկելով  
այս տեսակ մարդերու, կը գրէր. «Մարդեր կան,  
որոնք բարոյականի պզտիկ մաս մը միայն ունին.  
ուրեքստիկն կը նմանի կերպասի կտորի մը, ուրկե  
յէ կարելի զգեստ մը շինել»:

Ժիւլէրի ակնարկածը մեծամուլ ախտաւորնե-  
րուն բարոյականն է, նուազ իր չափին մէջ, ան-  
նըչան կտոր մը միայն, ուրկէ ո՛չ իրենք և ո՛չ  
մենք, հակառակ մեր անվերսպահ բարեացակամու-  
թեան, չ'պիտի կրնայինք իրենց համար շինել ամ-  
բողջական, կոկիկ, մաքուր և տեւական նկարագրի  
մը, անով իրենց մերկութիւնը հագուեցընելու  
համար:





## ՆԿԱՐԱԳՐԻ ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Հնկերութիւնը իր կազմութեան և գործունէութեան տեւողութեան միջոցին երկու թշնամիներ ունեցաւ. մին կաթուղի կղերն էր, որ Միութեան առաջին օրերուն կը ցցուէր իր առջև, և միւսը Սուլթան Համիտ Անիկա առաջինին յազութեց, և հակառակ կաթուղի կղերամատութեան չ'կամութիւններուն, անոր պատուական անգամները ձեռք ձեռքի տուին կրթութեան ճամբով Հայկական-ազգային կեանք մը ստեղծելու համար գաւառներու մէջ. Երկրորդ թշնամին յաղթել զիւրին չէր:

Եթէ Իսրայէլ Օրին և Էմին Յովսէփեանի պատմածներուն նայինք, Հայը երբեք ստրկութենէ վեր պիտի չի կրնար բարձրանալ: Միացեալը իր պատուական գործիչներուն և իր ազգայնական կրթութեան շնորհիւ ստեղծեց հարստահարուած ժողովուրդի զաւակներուն մէջ գիտակցութիւն մը, որ կը խլրտէր, և իր ազգային-անհատական արժանապատուութիւնը փրկելու մտածումովը կ'առաջնորդուէր: Արիւնարբու բռնաւորները իշխելու համար մեքենաներու պէտք ունին, բայց ոչ մարդերու: Պէտք էր ուրեմն խեղդել ամին շարժում, որ այդ անհատականութեան զարգացումին և տնոր մշակու-

---

ՄԱՆՕԹ.— Խօսուած 28 մայիս 1911 Ուստի մէջ, Միացեալ Հնկերութեան ի նպաստ սարժուած հանդեսին:

Թեանը կը ձգտէր, և անա Միացեալը իր առջև  
ասպարէզը փակուած գտաւ:

Հայ արիւններու պատմութեան մէջ մեր գէմ  
ելլող առաջին Հայ մարտիրոսը Միացեալ Ընկերու-  
թիւնը եղաւ: Անոր համար էր, որ Օսմ. Սահմա-  
նադրութենէն վերջ առաջին անգամ Միացեալ Ըն-  
կերութիւնն էր որ գլուխ կը բարձրացընէր, ազ-  
նիւ հայու մը, Տիար Իսազուլեանի կոչէն արթըն-  
ցած, ու կը կազմակերպուէր իմ առժամեայ նա-  
խագահութեամբս:

Միբելի Հայրենակիցնե՛ր, աւելորդ է ըսել, թէ  
ո՛րքան մեծ ու հիմնական գործի մը ձեռնարկած է  
Միացեալը, իր գոյութենէն ի վեր: Ժողովուրդի մը  
բարձրացումը իր ընդունած կրթութեան մէջն է:  
Կրթութիւն մը, սակայն, որ ներքին հոգեկան ու  
բարոյական ոյժի մը վրայ կռթնած չէ, ուէ օգ-  
տակարութիւն չի կրնար արտադրել: Ես այնպէս  
կը խօրհիմ, թէ կրթութիւնը մաքի զարգացումը  
չ'է, այլ սրտի ու նկարագրի քաջութիւնը ստեղծե-  
լու միջոց մը: Լամարթին կը գրէր, թէ «*բայու-  
րիւնը ճարտարախօսութիւններուն առաջինն է, նկա-  
րագրի ճարտարախօսութիւնն է քայլութիւնը*»:

Բայց քաջութիւն ըսելով չ'հասկնանք հաստա-  
բազուկ մարդերու ոյժը, կամ միայն զինուորին  
մեռնելու յօժար տրամադրութիւնը: Քաջութիւնը  
զանազան յայտնութիւններ ունի մարգուս մէջ:  
Պարագաները շատ անգամ կը փոխեն այդ առաքի-  
նութեան անունը, բայց անիկա ի՛նչ ձեւի տակ ալ  
որ յայտնուի, չ'դադրիր քաջութիւն ըլլալէ: Օրի-  
նակի համար, Վովընարկ կ'ըսէ, թէ ընչաոհրու-  
թեան ծարաւին գէմ ցոյց տրուած քաջութիւնը՝  
փիլիսոսփայութիւն կը կոչուի, տառապանքին գէմ՝  
հանրերութիւն, պատերազմի մէջ՝ արժանիք, գործ-

նական ձեռնարկութիւններու մէջ՝ յանդգնութիւն,  
անիրաւութեան գէժ. հաստատականութիւն, մուռ-  
թիւններու գէժ՝ ժուսկալութիւն:

Ուրեմն, քաջութիւն մը ցոյց տուած ըլլալու  
համար հարկ չ'կայ անպատճառ պատերազմներու  
մէջ մտնել, վառօդին ծուխովը այրուիլ և կամ  
կապարին տաք համբոյրը զգալ մեր մորթին վրայ:  
Կեանքը ինքնին պատերազմուն է արդէն, ու ամեն  
մէկ վայրկեան մենք պէտք պիտի ունենանք կա՛մ  
փիլիսոփայութեան կա՛մ համբերութեան, կա՛մ  
յանդգնութեան, կամ հաստատակամութեան կա՛մ  
ժուսկալութեան և ամեն ժամանակ՝ ԱՐԺԱՆԻՔԻ:  
Մեր կեանքին մէջ դիւցազնութիւն մը կայ, որ  
չատ անգամ կը պակսի բուն իսկ արիւնի դիւ-  
ցազններուն մէջ: Եւ գիտէ՞ք, ո՞րն է այդ սովորա-  
կան կեանքին մէջ ապրուելիք քաջութիւնը. —  
Պարկեշ ըզլալու, ճշևարտութիւնը խօսելու և ընե-  
լու, ինքիսն ինքն անպատճառ պէս ցուցնելու քաջու-  
թիւնն և անկալ:

Ժիւլ Սիմոն, երբ դպրոցներու մասին կը խօ-  
սէր, կ'ըսէր, թէ մարդ դպրոցի մասին սխալ գա-  
ղափար կազմած կ'ըլլայ, եթէ անոր մէջ փնտոէ  
գիտութեան տարածումը. «պիտի ք դպրոցներու մէջ  
փնտոել, և անոնց մէջ ղնել քաջութեան և առա-  
փիւնութեան ճարտարներ», որովհետեւ, կ'ըսէ, «կա-  
մազուրկ ժողովուրդ մը դասապարտուած ք մտնե-  
լու, մինչ գորտոր կամփով ասի մը ժողովուրդ, ա-  
պերասիս հողի վրայ ձգուած, դեպի քաջութիւնն ու  
ապագան ճարտար պիտի գտնէ ու շինէ»:

Սիրելի Հայրենակիցներ, ներեցէք, որ ըսեմ,  
թէ մեր կրթական կեանքին կարեւոր եղած բա-  
բաժինը չ'տուինք ցարդ, հիմնելու համար մեր սե-  
րունդին մէջ մարգուն անհրաժեշտ նկարագրի ճար-

սարխօսութիւնը, և գիտնանք, թէ ո՛րչափ ատեն հիմնականն ու էականը պակսի ազգի մը կամ անհատի մը մէջ, ալ խեղ չ'կայ ուրիշ ուէէ յառաջդիմութենէ: Օրինակ մը տամ ձեզի: Մարդ մը կը փափաքի օրօնօպիչ մը ունենալ, սակայն պէտք եղած նիւթական կարողութիւնը չ'ունի լաւագոյնը գնելու: Կ'երթայ շուկայ ու ձեռքէ ինկած հատ մը կը գտնէ ու աժտն կը գնէ: Չէք կրնար այդ մարգուն զգացած ուրտխութիւնը երեւակայել:

— Կնի՛կ, կ'ըսէ, հիմա մենք ալ Պուրժուս ենք, օթօմօպիլ ունինք, ուրիշ հարուստներուն պէս. ելի՛ր պտոյտի երթանք:

Ու հազիւ ճամբայ ելած՝ ահա ինքնաշարժ կառքը կը դահի, կա՛մ պտուտակ մը աւրուեր է, կա՛մ կազին մեքենան: Ոտքով ետ կը գառնան, ու կառքը նորոգելու կը շրկուի: Ուրիշ օր մը, պըտոյտի պահուն ֆառչուն կը պատառի, ուրիշ օր մը ելեքարական թելը կը կոտրի: Ու ամեն օր նորոգութեան պէտք, ամեն օր աւրուելու հաւանականութիւն:

Սիրելի Հայրենակիցներ, ներեցէք, որ ըսեմ, թէ մեր ազգային կազմը այդ հինցած օրօնօպիչին կը նմանի, ու մենք յաւիտենական նորոգողներն ենք, հնակարկազներն ենք մեր ազգային կեանքին: Բայց մեր հնակարկատի ջանքերը ա՛լ բանի չեն գար, որովհետեւ մեր կազմալուծուած գոյութեան մէջ կը պակսի էականը, հիմնականը, կեանքին ոյժը կազմող քաջութիւնը:

Դիւրին է կոուիլ բռնաւորներուն դէմ, տապալել զանոնք, դիւրին է թշնամիին յաղթել, բերդեր գրաւել, և անոնց կիսախորտ աշտարակներուն բարձունքին վրայ անկել յաղթութեան դրոշը: Այլաբարի մէջ դժուարին յաղթութիւն մը կայ,

որուն համար անսպառ և անհասնում քաջութեան մը պէտք ունինք, քաջութեան մը, որուն ալը չ'ցամբի, և որ մեզի յաղթութեան պաշար մատակարարէ: Եւ այդ դժուարին յաղթութիւնը կը կայսայ մեր անհատական և կուսակցական եսամոլութիւններուն, և մեր ապուշ ու անբարտաւան մեծամրտութեան յաղթելուն, անիրաւութիւններուն դիմանալուն, վատութիւնները արհամարհելուն, և փորձութիւնները դիմագրաւելուն մէջ: Մեզմէն քանինե՛ր, որոնք առաջին փորձութեան կը գայթին, առաջին կըրուած անիրաւութեան կը յուսահատին, առաջին զրպարտութեան՝ կը տագնապին, և քանինե՛ր, որոնք գերի կը դառնան իրենց եսական կամ կուսակցական աղտոտ, կոյր կիրքերուն:

Սիրելի Հայրենակիցնե՛ր, մենք մեր դաստիարակութեան ճամբուն վրայ, և մեր տուներուն մէջ պէտք է ձգտինք, մեր մորթին, մեր սրտին խորը գործուելիք այդ խորհրդաւոր, մաքուր և լաին յաղթանակին, եթէ կ'ուզենք մեր ապագային ու յաջողութեան ճամբան հարթել,՝ աշուտացընել մեր հոգիները, և մեր սիրտերը բանալ առաքինութիւններու առջև: Մութին մէջ գործող և աշխարհի աւերակոյտին վրայ յաղթութեան դրոշը բարձրացընող անձնայաղթ դիւցազները աւելի մեծ են և օգտակար. քան պատերազմի դաշտին վրայ ինկողները:

Անգղիական առածը կ'ըսէ Ո՛վ որ սիրտ ունի ամեն բան ունի: Պօղոս առաքեալ իր կողմէն կ'ըսէր. Բան մը չ'ունիմ, բայց ամեն բան ունիմ: Պօղոս Առաքեալ ամեն բան ունէր, որովհետեւ սիրտ մը ունէր. սիրտ մը՝ ազնիւ, մաքուր, առաքինի սիրտ մը, որ իմաստասիրութիւն ծնցուց ընչաքաղցութիւնը յաղթելու համար, համբերութիւն ծրնցուց տառապանքին դէմ, արժանիք՝ գաղափարի կռիւին մէջ, յանդգնութիւն՝ ճշմարտութեան և արդարութեան քարոզութեանը մէջ, հաստատակամութիւն՝ անիրաւութեան դէմ, և յաղթանակ մը՝ իր նախկին սխալ համոզումներուն դէմ:

Սիրա ունեցէ՛ք. սիրա մը, որ մաքուր ըլլայ, ազնիւ, և առաքինի: Երբ կը հանդիպիք մարդերու, որոնք ազնուութենէ թափուր, բարութենէ զուրկ կը գտնուին, վստահ եղիք, թէ անոնք սիրա չ'ունին, քաջութիւն չ'ունին, առաքինութիւն չ'ունին:

Շարժը Վահնէր իր մէկ գիրքին մէջ Թագաւոր, Վեհապետ կը կոչէ բոլոր անոնք, որոնք աչք ունին՝ դիտելու համար ձերան ձիւնապաս դաշտը, բշուրներու վրայի ծաղիկները, կանանց դաշի մեջէն կեռասենիներու ձերմակ փունջերը, աւազգործնու վրայ կոհակներու շնորհայի կամ վայրի խաղերը, գոյները՝ զոր աշունը կը սփռէ այգիներու և անձառներու վրայ, զոհարները զոր իրենց քեւերուն վրայ կը կրեն թռչունները, քիթեղնակները, շերտփաղիները (libellule). ցողիկն աղամսանդները, կապոյն երկիկիկն յակիկերը, և ջուրերուն զերուխաչը: Վեհապետ կը կոչէ զանոնք, որոնք բնութեան գեղեցկութիւնները տեսնելու, զգալու, գնահատելու, անոնցմով հրանալու, յափշտակուելու կարողութիւնն ունին, այսինքն զանոնք, որոնք իրենց աչքերով բնութեան տեսարաններուն տիրապետելու կարողութիւնը ունին:

Շատ անգամ մեր կատակի խօսակցութիւններուն մէջ կ'ըսենք ու կը կրկնենք, թէ երկ հայերուն քազաւորութիւն մը տրուէր, անոնք գիտար պիտի սպաննէին, որովհետեւ ամեն մարդ քազաւոր ըլլալ պիտի ուզէր: Կը գովեմ Թագաւոր ըլլալու փափաքնիդ, եթէ ունիք: Բայց եթէ երբեք Թագաւոր ըլլալ ըսելով կը հասկնաք իշխող ու կառավարող, բարեկամներս ես այս երեկոյ ըզձեզ ամենքդ ալ Թագաւոր պիտի շինեմ, ամենքդ ալ առանց բացառութեան: Թող ամեն մարդ իր անձին Թագաւորը ըլլայ, այսինքն Թող սորվի իշխել իր կիրքերուն և կառավարել ինքզինքը:

Եթէ երբեք կրցիք ու յաջողեցաք կառավարութեան այդ ձեւին մէջ, և սրտի տէր մարդեր ըլլալ, առանց կոիւրի ու մարդասպանութեան, արդէն իսկ փրկուած պիտի ըլլայ Հայ Ազգը:



ու ամեն դարու մէջ տառապանքին գերագոյն խոր-  
հուրդը ծծեցին, լացին ու խմեցին:

Դեռ 15-20 տարիներ առաջ ժողովրդական  
տառապանքին չափաբերուած աղաղակը մեզի լըսե-  
ցուց Իտալացի բանաստեղծուհին Ատա Նէկրի (Ada  
Negri), որ իր վրայ ժարմնացուց ժողովուրդին  
Ձայնը, այսինքն, որ ապրեցաւ կեանքը կաշկան-  
դուած, ու պարտեալ ժողովուրդին, և զանիկա  
ահաւոր զգայնոտութեամբ մը երգեց իր արիւնոտ  
տաղերով: Բանաստեղծուհին կ'երեւակայէ, ան-  
ժառանգներու, զրկուածներու անվերջ երամակը,  
կը խօսի անոնց հետ, անոնց ցաւը, անոնց բողո-  
քը կուլայ, իր ՊԱՐՏԵԱԼՆԵՐ (Les Vaincus) երգին  
մէջ, ուր այդ եղկելիները կ'ըսեն.

— Մենք կուզանք տուներ, ուր կրակ չկայ.  
կուզանք վերնակ չունեցող անկողիներ, ուր հե-  
տզհետէ ընկճուած մարմինը կը կիփ, չեղի կուտայ,  
ու կ'ընդարւանայ. . . Մենք աշխարհի վրայ վը-  
տանգի եւ սուգի սպառնացող ստուերը կը ձգենք:  
Մենք հաւատքի իտեալ մը փնտնեցինք, եւ անիկա մեզ  
խարեց. մենք փնտնեցինք սեր մը, որ մեզի յոյս տար  
եւ վստահութիւն, ու անիկա մեզ մատնեց:

Ատա Նէկրիի Պարտեալներուն Ձայնը իր մէջ կը  
խտացընէ՝ ա'յնքան ճշգրտօրէն, Հայ տառապանքին  
ձայնը: Բայց եկած չէ՝ ժամանակը, արդեօք որ  
ըսենք. — Ո՛վ Հայ պարտեալներ, մի՛ յուսահա-  
տեք, Օսմ. հայրենիքը, մեր Հայրենիքը, վստանքի եւ  
սուգի սպառնացող ստուերին պէտք չունի. արդէն  
անիկա չա'տ հալածուեցաւ այդ ստուերներէն: Այն  
հաւատքի իտեալը, զոր կը փնտռէք, պիտի չմատ-  
նէ ձեզի, որովհետեւ Հայկական Միութիւնը պը-  
տուղն է այդ հաւատքի իտեալին, և այդ յոյս ու  
վստահութիւն ներշնչող սիրոյն: Վկայ այս հաւատ-

տուժին այն Հնգամեայ գործունէութիւնը, զոր Միութիւնը ունեցաւ տառապանքի ու ցաւի աշխարհին մէջ. և այդ բարեբաստիկ ու մխիթարական գործունէութիւնն է, զոր կը տօնենք այս երեկոյ:

Հայ Բարեգործականը, կշռուած ու տրամաբանուած մտածումի մը արդիւնքն է եղած: Եւ իր հետ կը բերէ ճշմարիտ ու անխարդախ հայրենասիրութեան մը գերազանց երաշխաւորութիւնը: Եթէ արդարութիւնը հայրենիքի մը գոյութեան սիրտն է, ճնշեսական քարգաւառ կեանք մը անոտ հոգին է եղած միշտ: Հայրենիք մը որչափ կը տառապի անիրաւութեան երեսէն, նոյնչափ կը տառապի ապրելու միջոցներու չգոյութենէն: Նիւթական և բարոյական սնունդի՝ պէտք ունին ազգերը, կարենալ միշտ ապրելու, տեւելու, և իրենց գոյութեան կոնիւն մէջ յաղթանակելու համար: Հայրենիքի մը մէջ, ուր երկրագործը արօր շունի հողը հերկելու, ուր արհեստաւորը գործիք շունի իր ճարտարագործ միտքը արդիւնաւորելու, և քաղաքացին որ խելք շունի գործածելու հայրենիքին օգտին համար, նոյնքան մնասակար տարրեր են, որքան մնասակար կը դաւանինք, դատաւոր մը, որուն կշիռը արդար չէ. թագաւոր մը, որ մարդասպան է, և վարչութիւն մը, որ ապօրինութիւններու կոյտ մըն է: Անիրաւ դատաւորը, ոճրագործ թագաւորը, ապօրէն վարչութիւնը, ինչպէս նաև անդրադ երկրագործը, անգործ արհեստաւորը, և տգէտ քաղաքացին վրասնգի ու սուղի սպառնացող ստուեր մը միայն կրնան ձգել իրենց ետին, առանց կարենալ ըլլալու իրական և գործնական ոյժ մը հասարակաց հայրենիքին մեծութեանը համար:

Հ. Բ. Ը. Միութիւնը՝ իր գործունէութեան

մեթոտողն իսկ իրական գործակիցն է եղած Օսմ. կառավարութեան վարչական կազմին, երկրագործին սերմնցու և արօր, արհեստաւորին գործիք, տգէտին ուսում, նօթիին հաց, և մերկին՝ զգեստ տալով: Հ. Միութիւնը դժգոհութեան աղաղակը մարելով իր մխիթարական գործով, Հայրենիքին տրամադրած կ'ըլլայ ոյժեր, որոնք իրենց պարկեշտ և պատուաւոր գործունէութեամբ գործաւորները պիտի դառնան ազգային վերաշինութեան գործին. հոն, Օսմ. հայրենիքին մէջ, ուր երեսուն տարիներէ ի վեր, անլուր անիրաւութիւններու, յուսահատ գաղթականութիւններու, արիւնոտ ջարդերու երեսէն անմայութիւն և աւեր բուսան, Հիմա ժամանակն է, որ խորտակուած ոյժերը վերակազմուին, լըքուած և յուսահատ սիրտերը կազդուրուին, խտէլէ և հաւատքէ զուրկ հոգիները ջրգեղուին, և զանազան տարրերու համագործակցութեամբ, Օսմ. հայրենիքին բաղկացուցիչ բոլոր ազգերը առանց ցեղային նախապաշարումներու, ջերմեռանգօրէն նուիրուին երկրաշինութեան ամենակենսական գործին:

Հ. Բ. Ը. Միութիւնը երկրաշինութեան գործին նուիրուած մարմին մըն է, ու պիտի մնայ Անիկա հագիւ սկսած է իր գործին: Արգաւանդ հողին մէջ նետուած սերմին պէս անիկա պիտի մեծնայ, և իր մեծութիւնը մխիթարութիւնն ու քաջանկութիւնը պիտի ըլլայ մեր ազգին ու Օսմ. հայրենիքին: Անիկա պիտի մեծնայ, որովհետեւ բարիքին զգացումը տառապանքի հողին վրայ կը բուսնի ու կը պտղաբերի: Որքան մեծ եղած ըլլայ տառապանքը, և արգաւանդ՝ անոր արցունքներով ու արիւնով ոռոգուած գետինը, այնքան արդիւնաբեր կ'ըլլայ բարեսիրութեան ալ զգացումը: Տառու-

պանկը դրդապատճառն է բարիքին ու բարեգործու-  
թեան եւ ընկերային յառաջդիմութիւններու:

Երկու բառ ալ, ու վերջացընեմ խօսքս: Հայ  
տառապանքի ճամբուն վրայ երկու անգամ է որ կը  
հանդիպինք Նուպարեան ընտանիքին ներկայացու-  
ցիչներուն: Առաջինը 1878 ին էր, երբ Արեւելեան  
Խնդիրը կը դրուէր Պերլինի Վեհաժողովին առջև:  
Այն ատեն Եգիպտոսի պետական Մեծ Մարզը, դի-  
ւանագէտն Նուպար Փաշա, տեսնելով Արեւելեան  
Խնդրոյն մէջ Հայ պաշտօնական մարմնոյն սխալ  
աւղղութիւնը, ուզեց իր թելագրութիւններովը  
արգիլիլ քաղաքական սխալ մը, որուն աղիտաւոր  
հետեւանքները պիտի կրէր ապագայ սերունդը: Այն  
ատեն չհասկցուեցաւ իր դաղափարին ուղղութիւնը:  
Դեռսպանախորհուրդի վաղորդայնին ազգային ընդ-  
հանուր ապաշաւի մը թարգմանը եղաւ նոյն ինքն  
Ներսէս Պատրիարք Վարժապետեան, որ Նուպա-  
րեան ծրագիրն արհամարհեց: Այդ միեւնոյն տա-  
ռապանքի ճամբուն վրայ, հինգ տարի առաջ, մեր  
զէմը ելաւ իր զաւակը Պօղոս Նուպար:

Հայրը դիւանագէտ մըն էր, իսկ տղան անտե-  
սագէտ մը: Հայրը ուզեց օգտակար ըլլալ իր ազ-  
գին ու հայրենիքին քաղաքային ուղղութեամբ, իսկ  
զաւակը ուզեց օգտակար ըլլալ իր ազգին ու հայ-  
րենիքին, ճնհասական ուղղութեամբ: Աւելորդ է հոս  
բացատրել, թէ անտեսական կեանք մը ի՞նչ բա-  
բոյական առաւելութիւններ կ'ընծայէ ազգի մը և  
հայրենիքի մը:

Ուրախ ենք, որ այս անգամ ազգը կը գնահա-  
տէ Պօղոս Նուպարի բռնած բարոյական-տնտեսա-  
կան գործին ուղղութիւնը, և հովանաւորած կազ-  
մակերպութիւնը, որ նոյն իսկ իր բառով ՊՁՏԻԿ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸՆ է եղած իր բարեբարե-

լու, մխիթարելու, ծառայելու կոչումովը՝ Ուրախ  
ենք մանաւանդ, որ Օսմ. կառավարութիւնն ալ  
մեր երկրին մէջ զնա՛նտած է Հայկ. Միութեան  
օգտակարութիւնը, և զանի նուիրագործած իր  
պաշտօնական վաւերացումով:

Հիմա կը մնայ մեզի, զոհաբերութեան կատարեալ  
ոգիով մը, նուիրուիլ Միութեան, բարիքի գաղա-  
փարը աւելի եւս շեշտելով միտքերու մէջ, յառաջ  
վարելու համար տառապածներուն մխիթարութիւն  
բաշխող Միութեան այս գործը, մեր մէջ փոխա-  
դրելով Պարսիկ բանաստեղծին ս.ս. համոզումը,  
թէ. ով որ ուրիշին կը նուիրուի, Աստուծոյ նուի-  
րուած կ'ըլլայ:

Օրը՝ զոր կը տօնենք, Միութեան, Բարեգոր-  
ծութեան, անհատական նախաձեռնութեան, համե-  
րաշիութեան և սիրոյ տօնն է՝ Մաղթենք, որ այդ  
տօնը համազգային ըլլայ, Միութեան հսկայտքայլ  
յառաջդիմութիւնով:



## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՐՔ

Երկար ասեցէ ի վեր էս հրաժարած  
եմ այս աշխարհիս մէջ փնտռելէ արեւ-  
լի շահեկան, արեւլի գեղեցիկ հրա-  
շալիք մը, քան նումարսուրիւնը, կամ  
գէթ զայն ճանչնալու համար մար-  
դուս ստանձնած ջանքը:

Մէթէրլինկ

Կեանքը պիտի դադրէր կեանք ըլլալէ, եթէ  
կիրքերը, անոր վառարանը չ'հրահրէին վայրկեանէ  
վայրկեան: Կիրքերը այն են կեանքին համար, ինչ  
որ է հիւթը ծառին համար: Երկուքն ալ պիտի  
մեռնէին, մէկը՝ կիրքերուն, և միւսը՝ հիւթին  
պակասէն: Բուսարանական գիտութիւնը այսօր շատ  
մը տերեւներու և ծաղիկներու գոյները կը փոխէ,  
անոնց ծծած հիւթը գունաւորելով իր կամքին հա-  
մաձայն:

Մարդերուն նկարագիրը կամ գոյնը կախումն  
ունի իրենց ունեցած կիրքերէն: Աղտոտ կիրքեր  
կան, ինչպէս մաքուր կիրքեր. բարձրագոյն կիրքեր  
կան, ինչպէս կան ստորին կիրքեր: Եւ բնականա-  
բար ամեն կիրք որ տիրելու ոյժը ունի անհատին  
մէջ, այդ անհատին պիտի տայ իր նկարագիրը կազ-  
մող հաստատուն գիծերը: Երբ կր տեսնէք մարդիկ,  
որոնց նկարագիրը անախտժ, թթու և ստորին  
հանգամանք մը ունի, ապահով եղէք, թէ անոնց

մէջ տիրող կիրքերը ստորին տեսակէն են. կը տեսնէք, ուրիշ անհատներ, որոնց պարզ ու մանկունակ աչքերուն մէջ ազնուական կիրքերու ցուքն ու հրայրքը կայ, մտեցէք անոնց սրտին, և պիտի համոզուիք. Սէ հոն կիրքերու գանձարան մը կայ, որ իր գեղեցկութեամբը կ'արտացոլայ. Մաքուր կիրքերը գերազանց ոյժ մը ունին, ո'չ միայն զանոնք կրող անհատին, այլ և զինքը շրջապատող մարդերուն համար. Գորերի մորենիին պէս կը վառին. չեն այրեր. լոյս, հաւատք, հիացում. յոյս, սէր կը սրսկեն ամեն ուղղութեամբ: Լա Ռուչֆուքո կ'ըսէ. Կիրքերը միակ թելքասացներն են, որ միշտ կը հաւնոզեն. Անոնք կը նմանին թնութեան մեկ արուեստին, որուն օրհնիները անփոփոխելի են, եւ ամենեւնի պարզ մտադր, որ կիրք ունի, շատ աւելի կրնայ հաւնոզել, քան մեծագոյն ճարտասանը, որ կիրք չ'ունի:

Դժբախտաբար մարդկութիւնը այնքան բեռնաւորուած է ազտոտ կիրքերով, որ ամեն ազգի լեզուներու մէջ ալ կիրք բառը շատ լաւ չի հնչեր ականջներու: Եւ ալ այդ համոզումէն տարուած, գրեթէ բոլոր բարոյախօսները, ստոյկեաններէն սկսեալ, կարծես ուխտած են ջնջելու՝ մարդկութեան սրտէն՝ կիրքերը, ձերբազատելու համար բանականութիւնը, անոնց կաշկանդումներէն, և մարդկութիւնը առաջնորդելու դէպի մաքրութիւն, դէպի բարձրացում. Հազիւ ժէ. դարու նշանաւոր քարոզիչներէն մէկը, օր մը բեմէն ըսաւ. Ստոյկեանները երդում ըրած էին մեր կիրքերը սպաննել. եւ այն հպարտ աղանդաւորները չէին նկատեր, թէ ասով քոչոր առաքինութիւնները կը սպաննեին, որովհետեւ կիրքերը առաքինութիւններու սերմերն են:

Ո՛չ, ոճիր մըն է կիրքերը սպաննել, միայն պէտք է զտել զանոնք. պէտք է մաքրագործել

զանոնք, եթէ կուզենք որ մարդկութեան բարոյական մակարդակը բարձրանայ, Առանց կիրքի ո՛չ անձնուիրութիւն կայ, ո՛չ զոհողութեան ոգի, ո՛չ դիւցազնութիւն, և ո՛չ ալ յաղթանակներ աշխարհի մէջ, Եթէ դիւցազները կռուեցան գաղափարի մը համար, եթէ մարդկութեան առաքեալները տառապանքները արհամարհեցին կրօնքի մը կամ իմաստասիրութեան մը հիմնաւորումին համար, եթէ հերոսներ կռուեցան ու ինկան, ազատութեան ու արդարութեան զրոշր բարձր բոնելու համար, այդ ամենը ըրին միմիայն տարուած կա՛մ ճշմարտութեան, կա՛մ արդարութեան, կա՛մ ազնիւ փառասիրութեան և կամ հայրենասիրութեան ազնուական կիրքէն: Եթէ կիրքերը սպաննուած ըլլային մարդկութեան մէջ, աշխարհի պատմութիւնը զրկուած պիտի ըլլար, արութեան, նուիրումի, վեհանձնութեան ամենէն ոսկեզօծ գրուագներէն:

Կիրքերը շատ անգամ կը թմրին, և արտաքին պարագաներու ազդեցութեան պէտք ունին արթննալու և գործելու համար: Այլասիրութեան և անձնուիրութեան կիրքը կը թմրի, ու յանկարծ կարթննայ մարդուն մէջ, երբ, օրինակի համար, ծոլն ինկող մը, կամ հրդեհին մէջէն մարդ մը փրկելու բացառիկ պարագան կը ներկայանայ: Հայրենասիրութեան կիրքը կը թմրի, ու յանկարծ կ'արթննայ այն ատեն, երբ Հայրենիքին սպառնացող վտանգ մը շարժման մէջ կը դնէ այդ կիրքը:

Մարդկութեան ապրած բոլոր կիրքերուն մէջ կիրք մը կայ, ամենէն ազնուականը թերեւս կիրքերուն, որ չ'թմրիր, և որուն համար գործելու ամեն պատեհութիւն պատրաստ է ամեն օր, ամեն վայրկեան: Եւ այդ կիրքը, ուրկէ շատերն իս զըրկուած ենք բոլորովին, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՐՔՆ Է:

Մենք մեր կեանքին մէջ, խորապէս ազդուած  
Հատին միտքին դանդաղ ու անհոգ երազիտու-  
թեանէն, կարծես թէ չենք հաշտուած պարսականու-  
թեան կիրքին հետ. և անոր հետ օտարներու կամ  
անծանօթներու պէս ապրեր ենք: Եթէ մեզմէն մէ-  
կը միջոց մը գտնէ, իր պարտքը չ'վճարելու կամ իր  
մէկ պարտականութիւնը չ'կատարելու, ինքզինքը  
երջանիկ կրգգայ, և բարեբախտ կը համարի դի-  
մացինը կարհնալ խաբելուն կամ իր մէկ ընկերա-  
կան պարքը՝ առանց պատիժի կարենալ անտեսե-  
լուն համար: Ուղղամիտ մարդեր ու ազգեր ամօթ  
պիտի զգային պարտականութեան հանգէպ մեր  
այս վերաբերումէն:

Մեր այս սխալ երջանկութիւնը կը ծնի մեր  
մէջ անոր համար, որ մինք զրկուած ենք պարսա-  
կանութեան կիրքէն: Հայէն աւելի կրքոտ ժողո-  
վուրդ չ'կայ թերեւս աշխարհի վրայ: Մեր ամե-  
նուս ջիգերը դարանակալ կըսպասեն վայրկեանէ  
վայրկեան, մեր մէջ ստեղծելու համար նոր կիրք  
մը, անծանօթ երանգներով, մինչև կատաղութեան  
տարուած անասնական վարնացութեամբ մը: Ու-  
նինք մեր մէջ խածնելու, բամբասելու, զրպարտե-  
լու, խանգարելու, թունաւորելու կիրքերու առատ  
պաշարներ: Պզտիկ նայուածք մը, արդար քննա-  
գատութիւն մը, թաւիչէ ձեռնոցով ապտակ մը,  
ամենազօր ոյժերը կը դառնան մեր կիրքերը հը-  
րահրելու, շարժման մէջ դնելու: Ու երբ անգին  
ամենամեծ պէտքեր, արիւնոտ ձախողուածներ,  
իրենց ահաւոր գոյութեամբը կը ցցուին մեր առջև,  
մենք արձաններու պէս կանգնած, պաղ աչքով կը  
նայինք անոնց վրայ, իբր թէ զգացումնիս սեռած  
ըլլար, որովհետև պարսակականութեան կիրքէն զր-  
կուած ենք:

Clarisse Harlowe Անգլուհին կը գրէ. երբեք չեմ կրցած անհարեռութեամբ նայիլ պարտականութեան մը, ու մանաւանդ կամաւոր պարտականութեան մը վրայ: Այս բառերը իրենց մէջ կը խտացընեն պարտականութեան մասին կազմուած ամբողջ Անգլիական հոգեբանութիւնը: Եւ զիտէք անշուշտ, թէ մարդկութեան պարտականութիւններէն մեծագոյն մասը կամաւոր են: Մատի վրայ կը համրուին այն պարտականութիւնները, որոնք օրէնքով մը պարտադրուած են մեզի:

Հայ ազգային կեանքին մէջ մեր պարտականութիւններու մեծագոյն մասը կը կազմեն կամաւոր պարտականութիւնները: Մարդիկ օրինական պարտքերնին կը կատարեն օրէնքէն վախնալով: Վախին մէջ առաքինութիւն, վեհանձնութիւն, ազնուականութիւն գոյութիւն չ'ունի բնաւ: Կիրքերը առաքինութիւն կը ծնին հոն, ուր կամաւոր պարտականութիւններ հաշուի կ'առնուին. և կը գործածուին: Կրնաս անտարբեր դիտող մը ըլլալ հըրդենի բոցերուն մէջ: այրող կնոջ մը աղաղակին հանդէպ. ո՛ր և է պետական կամ քաղաքացիական օրէնք քեզ շըստիպեր նետուիլ բոցերուն մէջ, այրուողի մը կեանքը փրկելու համար, քու կեանքիդ վտանգով: Բայց մարգուն մէջ գոյութիւն ունեցող պարտականութեան կիրքը զինքը առաջ կը մղէ: Եւ այդ կիրքին ներշնչումին տակ է, որ ամենախոնարհ դասակարգի մարդիկ, ազնուականութեան և առաքինութեան ամենաաչքառու օրինակները կ'ընծայեն, և զոհողութեան ու վեհանձնութեան հրաշալիքի նոր ու փառապանծ էջեր կ'աւելցունեն աղտոտ կիրքերով պղծուած աշխարհի պատմութեան մէջ:

Ո՛ր են այդ պարտականութեան կիրքով, զի-

նուորուած կամաւորները, որոնք ճշմարտութեան, դաստիարակութեան, սփոփանքի, առաքինութեան՝ և լոյսի տիրապետութիւնը պիտի հիմնէին սրտեւրու մէջ, և աշխարհի վրայ Մենք՝ հրաշքի սիրահար հոգիներ, այդ մեծութիւններու իրականութեան շնոր մօտիբ: Մէթէրլինկ, որ այս տարի նուպէլեան մրցանակը շահեցաւ, և որուն համար կըսուի, թէ այս պահուս Ամերիկա կը գտնուի, իր Մեղուներու կեանքը գրքին մէջ կ'ըսէ թէ. «երկար ասեցեք ի վեր ես հրամարած եմ այս աշխարհիս մեջ փնտռելու աւելի շահեկան, աւելի զեղեցիկ նրաշաղիփներ, քան ճշմարտութիւնը, կամ գեթ զայն ճանչնալու համար նարդուս սասնանած ջանքը»:

Ճշմարտութիւնը կամ անոր խուզարկութեան օրհանգրքը կը ծնին մարդուն մէջ՝ պարտականութեան կիրքէն, և ո՛րչէն որ Հայ ժողովուրդին մէջ այդ կիրքը չ'ստեղծուի մեր միւս կիրքերուն տեղ, մեծ բան մը չենք կրնար սպասել այս Ազգէն: Պարտականութիւնը և անոր ճանաչողութիւնը, պարտականութիւնը և անոր կամաւոր, սիրայօժար յանձնառութիւնը միակ տեւական հիմերն են ընտանիքին, Ազգին, Հայրենիքին ու Մարդկութեան: Պարտականութեան կիրքէն զատ չկայ ուրիշ կիրք մը, որ կարենայ իբր հիմ ծառայել ազգին ու ընկերական ու է կազմակերպութեան: Այս կիրքը կուտակուիմ է նուիրումի, անձնուրացութեան, այլասիրութեան, առաքինութեան և ամեն ազնիւ ու վեհանձն յոյզերու:

Ապահովաբար պիտի հարցունէք ինձի, թէ որո՞նք պիտի բլլան պարտականութեան կիրքին կամաւորները: — ԱՄԵՆՔՆԻՒՒ ԱԼ, ԱՄԵՆՔՆԻՒՍ ԱԼ, ԱՌԱՆՑ ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆ: — Առաջին պահուն մեզմէ ոմանք ինքզինքնին տկար պիտի զգան, ա՛յդքան ծանր

լուծի մը տակ մտնելու համար, Ոմանք աղքատ պիտի ձեւանան, և պիտի խուսափին: Ոմանց սիրտը ազնիւ յոյզերու անընդունակ պիտի ըլլայ, և դասալըքութիւնը պիտի ըլլայ անոնց բաժինը: Վստահ ըլլանք, թէ մեզմէ ամեն մարդ առանց բացառութեան ո՛չ միայն կոչումը ունի այդ կիրքը ապրելու, այլ և կարողութիւն՝ զայն գործնականացընելու:

Մեղուներու կեանքին հեղինակը, մեզի կուտայ Զուիցերացի Հիւպէր անուն մէկուն պատմութիւնը, որով կուզենք մեր բանախօսութիւնը փակել: Հիւպէր 1750 ին ժընեվի մէջ ծնած, իր առաջին երիտասարտութեան մէջ կորսնցուց իր աչքերուն լոյսը: Տղայութենէն սիրահար մեղուներու կեանքին, ա՛լ աւելի հետաքրքրուեցաւ անոնցմով, երբ կարգաց Ռէօմիւրի գիրքերը մեղուներու կեանքի մասին: Իր կուրութիւնը չ՛մարեց իր կիրքը: Մեղուներու կեանքը ուսումնասիրելու իր եռանդը օրէ օր աւելցաւ. բայց խեղճ բան մը չէր տեսնելու Հիւպէր սպասաւոր մ՛ունէր Ֆրանսուա Պիւրնէնս անունով, անոր աչքերով դիտեց մեղուներն ու իրենց փեթակը. և ճշմարտութիւն մը երեւան բերելու, գիտութիւնը ճոխացընելու իր զգացած պարտականութեան կիրքովը, իր խելքը միացուց իր սպասաւորին աչքերուն, և կրցաւ իր ուսումնասիրութիւնները հրատարակել երկու հատորներու մէջ, որոնք 1780 էն ի վեր ամենէն կարեւոր վաւերագիրները, և առաջնորդները եղած են մեղուներուն կեանքը ուսումնասիրողներուն համար: Մէթերլինկ կ՛ըսէ. մարդիսոյն ճառագայտներու եւ յաղթանակներու սարեգրութեանց մեջ, ոչինչ աւելի յուզիչ է եւ քարի խորհուրդներով շեցուն, քան պատմութիւնը այս համբերասար աշխատակցութեան:

ուր մեկը՝ միայն (միսֆին) աննիւթական շոյսովը կը  
եսաներ, եւ որ իր միսֆով կառաջնորդէր ձեռքերն  
ու նաշուածքը անոր, որ իրական շոյսը կը վայելէր.  
եւ ուր ան որ ինչպէս կը հաւաստեն, երբեք իր  
սեփական աջերով չ'կրցաւ անցնել մեղրի խորիւսի  
մը, յանկարծակիի կը բերէր աննախորին գազ-  
նիխները հանձարին, որ անեսասնելի մեղրին այս  
խորիւսիը կը շինէր, եւ իբր քե անիկա այսպէսով  
կուզէր մեզի ստովեցընել, քե ո եւ ե պարագայի մեջ  
պէտք չէ՝ հրաժարինք յուսալէ եւ ճշմարտութիւնը  
փնտռելի:

Երբ կոյր մը, միմիայն իր պարտականութեան  
կիրքէն առաջնորդուած, կը յաջողի իր նուիրուածով  
երեւան բերել մեղուին մէջ գործող հանճարը կամ  
ողին, գիտական ամենանուրբ փոփոխումով, պէտք  
է համոզուիւնք, թէ ուէ պարագայի մէջ մենք չենք  
կրնար, և պէտք չէ որ հրաժարինք մեր պարտա-  
կանութիւններու կիրքէն, և մենք պէտք է աշ-  
խատինք մեր կամաւորութեամբը շարժ կողմերնիս  
լոյս, սէր, հաւատք, վստահութիւն, գառախորա-  
կութուն, լոյս սփռելու: Եւ ասոնց ամենուն կա-  
րենալ հասնելու, կարենալ բաւելու համար պէտք  
է պարտականութեան կիրք ունենալ:

Բայց կարծես, թէ կիրքերով լեցուած մեր որդ-  
տերուն մէջ ա՛, տեղ չէ միացեր կիրքերու ազնուա-  
գունին համար: Պէտք է որ սիրտերնիս գորտը-  
կենք, նոր Տարին աւելի մաքուր սրտով և հոգիով  
սկսելու համար: Բայց չեմ գիտեր, թէ քիմիական  
ի՞նչ բաղադրութեամբ պիտի կրնանք ցնդեցընել  
մեր սիրտերուն աղտոտ կիրքերը, անոնց տեղ դը-  
նելու համար Պարտականութեան կիրքը:

Սթէվընսըն գիրք մ'ունի, նուիրուած՝ Տոֆօ  
Ռեֆիլի եւ Մըսըր Հայթի պարագաներուն: Տըբտորը

չափազանց անճնատէր էր, և միեւնոյն ժամանակ ունէր լաւ յատկութիւններ: Տաքթոր ձէքիլ չէր հաւեներ իր եսամոլութեան, անոր համար աշխատեցաւ գտնել քիմիական բազադրութիւն մը, որ երբ ուտէր, իր եսամոլութեան յոռի միտումները կ'անդամալուծէին, և մէջ տեղը կ'ը մնային միայն իր լաւ կողմերը, իր մարդավայել յատկութիւնները:

Եթէ Հայ ժողովուրդը ունենար այդ բժիկնութեն գտնէ հաս մը, որ հսկող մը մեր գէշ կողմերը անդամալուծէր, կը հաւատամ, թէ ազգային փրկկութեան ճամբան արդէն իսկ գտած պիտի ըլլայինք:

Բայց Տոքթոր ձէքիլ իրմէ դուրս չ'փնտոնեց դարմանը, և իր անձին օրինակով ցոյց տուաւ, թէ տմեն մարդ, եթէ ուզէ, պիտի կրնայ ինքզինքը դարմանել, անգամալուծել իր յոռի կիրքերը, և լայն տեղ մը տալ՝ իր մէջ ազնուագունին:

Այս տարին գործածենք ա'յդ նպատակին և ա'յդ ազնիւ աշխատութեան, մեր և մեր ազգին երջանկութեանը համար:





## ՔԱՂԱՔԱՑԻՆ

Ամերիկայի մէջ կուսակցութեան մը պատկանելու պէտքը ծնունդ առած է Ամերիկացիներու ընկերականութեան (Sociabilite) ոգիէն: Ամերիկեան ժողովուրդը՝ այնքան զանազան տարրերէ կազմուած, իր պանդխտութեան առաջին օրերուն, իր մինակուութիւնը մոռնալու համար, իջլպներ, ընկերութիւններ կազմած է, և անոնց մէջ ապրած է իբր ընտանեկան շրջանակի մը մէջ, ուրկէ զրկուած էր ինքը: Պէտք է ընդունիլ թէ գերմանական միտքը, մեծապէս նպաստած և ազգած է այդ միտուածին: Այս պատճառով Ամերիկայի մէջ ա՛յնչափ ընկերական, քաղաքական, մտաւորական, կրօնական և տնտեսական ընկերութիւններ կան, որքան չկայ թերեւս ամբողջ աշխարհի մէջ:

Հոս գոյութիւն ունեցող կազմակերպութիւններու շարքին, երկուքը գերազանցապէս քաղաքական հանգամանքով մը կը ներկայանան մեր աչքին, Հանրապետականն ու Ռամկավարականները, որոնք այսօր Ամերիկեան բաժնած են իրենց մէջ: Ընտրութիւններու ատեն ահաւոր և վիթխարի պայքարն է որ կը մղուի. երկու բանականեր դէմ դէմի կանգ-

---

ՄԱՆՕԹ.—Խօսուած Ուստի Թեփիւպիլիբն իշրպիկն սար-  
ֆած հրապարակային ժողովին մեջ:

նած կը պատերազմին, իրենց զէնքը քուէն է. ժողովուրդին ձայնը:

Չեմ գիտեր, թէ դուք ամենքնիդ ալ խելամուռ եղած էք, թէ ի՞նչ էական տարբերութիւններ այդ երկու կուսակցութիւնները կը բաժնեն իրարմէ: Եթէ անուններուն նայինք, մեծ տարբերութիւն մը պիտի չ'գտնենք իրենց մէջ, որովհետեւ՝ քաղաքական ըմբռնումով Հանրապետական մը, Ռամկավարական է, և Ռամկավարական մը՝ Հանրապետական: Բաց աստի այսօրուան Ռամկավար կուսակցութիւնը հանրապետական անունը կը կրէր մինչև 1832 թուականը. իսկ անոնք որ Յեռերայիս կամ Ազատական կը կոչուէին, 1850 ին միայն Հանրապետական անունը առին: Հին ասան այս երկրին մէջ երկու կուսակցութիւն միայն կար. հարուի գաւառներուն ծխախոտի մշակողները ազնուայիւսական էին, իսկ Նիւ Ինկլէնտի արուեստաւորները և վաճառականները՝ Ռամկավար: Կարծես հիմտ անուններուն հետ որդեգրուած վարդապետութիւններն ալ փոխուած են:

Այդ երկու կուսակցութիւնները, ուրեմն, իրարմէ կը զանազանուին ո՛չ թէ քաղաքական նպատակներով, այլ քաղաքական—վաճառականական սկզբունքներով. կամ ի՞նչպէս կ'ըսէ Հէնրի Վէն Տայք, ֆադաբական զգացումներով: Ինքնավստահութեան ազդեցութեան պայքարն է, որ կը մղուի երկու կուսակցութիւններուն միջև: Տեմոնրայիները կուզեն այդ ինքնավարութեան գործը արդիւնաւորել տեղային պզտիկ մասերու մէջ, և կը ձգտին սպալեղրոնացումի. իսկ Հանրապետականները կուզեն այդ ինքնավստահութիւնը արդիւնաւորել ազգային մեծ խմորումի մը մէջ, և զէպի կեղրոնացում կը դիմեն: Երկու կուսակցութիւններն ալ, սակայն,

հակառակ են քրչասներու Մր. Պրայըն ժամանակին յօգուածով մը յայտարարեց, թէ Ռուզվէլդ քրչասներու դէմ կոռուելով, դարձի կուգայ, և Ռամկավար կ'ըլլայ, մինչ մեւ կողմէն Մր. Թէֆթ կը յայտարարէր, թէ ժողովուրդին ընթացքը հասկես հանրապետական է, եւ քե իր կուսակցութիւնն է միայն, որուն վսայ կարելի է վստահիլ, սևոր ինաստուն գործադրութեանը համար:

Ըսենք, վերջապէս, թէ Հանրապետականները ոյժ աւալ կուզեն ազգային պանքաներու, մաքսապաշտպան գրութեան բարեկամներն են, կուզին որ գործադիր իշխանութիւնը աւելի մեծ իրաւասութիւն ունենայ: Գաղթային ընդլայնումը, ցամաքային սւ ծովային զինուորական ոյժերու աճումը, իրենց նպատակն է: Տէմոքրատները կը պահանջեն ունենալ՝ բացարձակ ապակեղրոնացում մը այս երկրին մէջ, մրցումի պատեհութիւն ամեն հատուածի համար, մաքսային ազատ փոխանակութիւն և եկամտաւոր տուրք, բառական կիրարկուկութիւն Սահմանադրութեան, և բանակին սովորական թիւը չ'աւելցնել:

Ասոնք խնդիրներ են, որոնց վրայ ծիծաղելի պիտի ըլլար մեր վիճարանիւր: Երկու կուսակցութիւններու պահանջաւմներուն մէջ ալ իրաւացի կէտեր կան: Բայց ամենէն աւելի նկատելի կէտը այս երկրին պաշտպանութեան և ոյժի խնդիրն է: Երկիր մը ո'րքան յառաջդիմէ տնտեսական և ճարտարարուեստական զարգացումներով, և որքան հարստանայ ա'յնքան կը շատնան իր թշնամիները, և թշնամիին դէմ ոյժ պէտք է պաշտպանուելու համար: Արդ, յայտնի է, թէ այլեւս կարելի չէ այս երկիրը պաշտպանել (44, 50) զինուորներով, թիւ մը սր օրէնքին կողմէն ճշդուած է, և երբ օրէնքը

100,00) ի բարձրացուց այդ թիւը, Քօնկրէսը իջեցուց 65,000 ի: Եւ Ամերիկա որ ապագայի համար իր դէմը ունի Դեղին վտանգն ու ամբողջ Եւրոպան, 65,000 մարդերու բանակով մը երբեք պիտի չ'կրնայ իր գոյութիւնը ապահովութեան տակ դընել, Բանակ մը երկրին կեանքն է. ըսել չեմ ուզեր, թէ պէտք է կոռուզ ժողովուրդ մը ըլլալ, բնաւ բայց զօրաւոր բանակ մը աշխարհի խաղաղութեան երաշխաւորութիւնն է եղած միշտ: Թե՛ս Թե՛ս ԼՐԱՅԱՆ ՈՒՆԵՆԱՔ, ՀԱԻԱՆԱԿԱՆ Է ՈՐ ՉԱՅՆ ԳՈՐԾԱԾԵՆԼՈՒ ՊԷՏԲԸ ՉՉԳԱՔ, ԲԱՅՑ ԵԹԷ ՀՐԱՅԱՆ ՉՈՒՆԵՆԱՔ, ՎՍՏԱՀ ԵՂԷՔ, ԹԷ ԱՆՈՐ ՊԷՏԲԸ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՔ»:

Հայ քաղաքացիներ, ի՞նչ պիտի ըլլայ ձեր դիրքը այդ կուսակցական հատուածներու ընդհարումին ատեն. մէկ թելադրութիւն միայն պիտի կրնանք ընել այս մասին. — մասնակցիլ ընտրութիւններու, և Ձեր քաղաքացիի պարտականութիւնը ի գործ դնել. և Ձեր իրաւունքը յարգել տալ. մասնակցիլ ընտրութիւններու, ձեր քուէնեքը իրարու միացուցած. մասնակցիլ ընտրութիւններու, գիտնալով, թէ որո՛ւ կուտաք քուէները. վերջապէս մասնակցիլ ընտրութիւններու միմիայն Հայրենիքին շահը նկատի ունենալով:

Այս երկրին մէջ ոյժը ինչ տեսակէ ալ որ ըլլայ, մեծագոյն դրամագլուխն է, և ամենազօր ազդակը: Քուէն գերագոյն ոյժն է այս երկրին: Ան է, որ իրարու մօտ պիտի բերէ ուժերու ցրուած մասնիկները, և ասոնցմէ պիտի շինէ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎՃԻՌԸ, որուն առջև կուսակցութիւնները կը լռեն, օրէնքը կը խոնարհի և մարդիկ իրենց գլխարկը կը վերցընեն յարգանքի համար: Եթէ ձեր քուէները

իրարու չ'միացընէք, անհատաբար բան մը պիտի չ'արժէք. բայց իբրև հայ, ձեր միացած հայու քուէն կրնայ հրաշք գործել, և ձեզի հանդէպ յարգանք մը աւելցընել տալ: Ա'յն ատեն միայն ոյժ մըն էք, և ազգակ մը պիտի ըլլաք այս երկրին մէջ: Քուէն Ձեր քաղաքացիի զէնքն է, չ'սպաննե՛ր, բայց սպաննող զէնքէն աւելի ահարկու է՞ ան է որ կը շինէ անհատներու և ժողովուրդներու բախտը, ա'ն է որ կեանքերը կ'արժեցընէ:

Մինչև այսօր դուք այս երկրին մէջ քաղաքացի եղաք միմիայն անկէ օգտուելու համար: Տեսաք թէ առանց քաղաքացի ըլլալու դժուար պիտի ըլլար ձեր կիները հոս փոխադրել, քաղաքացի եղաք. յոյս մը ունէիք թէ քաղաքացի ըլլալով Համիտի օրով կրնայիք հայրենիք մտնել, քաղաքացի եղաք. համա ժամանակն է, որ քաղաքացի ըլլաք այս երկրին, ձեր պարտականութիւնը կատարելու համար այս հայրենիքին հանդէպ և անոր օգուտին համար:

Ձեր ընտրութիւններու միջոցին ուշադրութիւն ըրէք աւելի անձերուն, քան կուսակցութիւններուն. և աշխատեցէք որ չարերը չ'բարձրանան: Քիտցէ՛ք, թէ ժողովուրդ մը, հայրենիք մը, ա'յն ատեն միայն երջանիկ կ'ըլլան, երբ հրամայողները չարեր չեն: Վերջապէս պիտցէք, թէ ժողովուրդի մը քուէն Հայրենիքին նակասագիրն է:







հողութիւնը դարձուցած են իրենց կողմը, և իրենց մով դարզեցուցած՝ իմաստասէրը, բարոյախօսը, ճարտասանը, և մարգարէն: Ոմանք խոտի մը նըմանցուցին կեանքը, ոմանք սառուերի, ոմանք ունայնութիւն միայն տեսան անոր մէջ, և ոմանք ծագիկ մը միայն, Ու այդ խոտի, սառուերի, ունայնութեան և ծագիկի կեանքը շարունակ դիմայեղուած, իրականութեան մէջ եղաւ մերթ սըրբութեան բուրում մը, և մերթ՝ ապականութեան յայտնութիւն մը: Այնպէս որ հնութեան իմաստաւէրներէն Արիստոտէլ կրցաւ ըսել, — «Երբ իր բոլոր կարողութիւններուն ճիւղացած մարդը անասուններուն առաջինն է, անիկա անասուններուն ամենայնէինը կ'ըլլայ, երբ կ'ապրի առանց օրկնի և առանց արդարութեան: Զինուած անիրաւութեան և անարհեստի հրեշային բան չկայ: Մարդը բնութեան և ստացած է ինասութեան և առաջինութեան գինները, զորս պէտք է գործածէ, մաւաւանդ, իր շար կիրքերուն դէմ: Առանց առաջինութեան մարդը ամենէն խրատաւորանոց և ամենէն կասաղի եակն է:»

Արիստոտէլէն ի վեր շատ դարեր անցան: Կեանքը իր բիւրաւոր խաչատումներուն մէջ լսեց, տեսաւ, ու ապրեցաւ մարդկային տեսութիւններուն ամեն կերպերը: Անմեղութենէն վերջ, չարիք, մարտիրոսութեան մտեռանգութենէն վերջ, հաճոյքի մեղկութիւն, դիւցազնութենէ վերջ դաւաճան անտարբերութիւն իրարու յաջորդեցին: Բայց սա ստոյգ է, թէ այս ամեն վիճակներուն մէջ, բոլոր մեծ միտքերը, աշխարհի ամեն ծայրերու վրայ և բոլոր դարերու մէջ կարծես դաշնակցեցան սա մեծագոյն սկզբունքը՝ Գարբնելու համար, «Ապրիչ... զիսնայն է, յուսայն է. սիրելն է, սրաշեղն է, բարեգործելն է: Ա'ն միայն շատ անելի ապրած կ'ըլլա»

րայ, որ իր միտքով, իր սրտով եւ իր գործերով, անկեղծ անելի պաշտած է»:

Այդ պաշտելութեան, գիտութեան, յոյսի, սիրոյ վերածուած կեանքի դաւանանքը Քրիստոնէութիւնը քանի մը բարոյեաց մէջ խտացուց, երբ ըսաւ, թէ «Դուք կենդանի Աստուծոյ ջանատիք էք»:

Տաճարները միակ յարկերն են, ուր մարդերէ պահանջուած այդ առաքինութիւնները կրնան հիմ գնել ու պտղաբերիլ: Տաճարներէ առաջ մեհեաններ ունէր մարդկութիւնը: Խարխափի ու տգիտութեան դարերու երկունքը եղող այդ մեհեաններուն մէջ մարդկային երկունքն էր, որ կ'աստուածանար: Եւ կիրքերու աստուածացումն էր, որ մարդը անասուններէ յետինը կը շինէր, Արիստոտէլի ասութեամբ: Քրիստոնէութիւնը մեհեանները կը մաքրագործէ, անոնց աւերակներուն վրայ բարձրացնելու համար կենդանի Աստուծոյ Տաճարը, Մարդը, զանի աւելի վեր, աւելի առաջ տանելով, եւ հեռացնելով անկուսի խորափիտներէն, որոնց վերայ խաղաղ կեանքի մը հաշտութիւնը ծրածանց:

Մարդկութեան այդ փրկարար կերպարանափոխութեան և վերելքին մէկ ճամբայ միայն կայ, և դէպի վեր, դէպի երկինք մարդուս խոյանքը խորհրդանշող դրուագ մը կայ հին կտակարանին մէջ, եւ այդ դրուագն է Յակոբի երազը, որուն մէջ կը տեսնէ սանգուխ մը, որուն մէկ ոտքը դրուած է երկրիս վերայ, և միւսը դէպի երկինք կը ցցուի, և որուն վրայէն հրեշտակներ կ'ելեւէջին, և որուն կատարը բազմած է Աստուած, որուն հետ հաղորդակցութիւնը միայն մեզ պիտի հեռացնէ մեր անասնական կեանքէն, և պիտի տանի դէպի մարդկային կատարելութեան կատարները: Փախտական Նահապետը խղճի խայթերով կը տառապի: Օրհնութեան

գող մը եղաւ իր տունին մէջ: Տունը զոր կը թողու լեցուն է կշտամբանքով, տունը՝ գէպի սւր կ'երթայ, լեցուն է Եսաւի ատելութիւններով: Խղճմտանքը կը քրտնցընէ զինքը, և գիշերին զովութիւնն ու մթութիւնը միակ վարագոյրները կ'ըլլան իր ճակատին խոկերն ու կնճիւղները ծածկելու համար: Իր աստուածամարտ կոռուփը պարապին կ'երկարի, ջղուտ ու տնդակազմ, և պարապն է որ պողպատէ պատի մը պէս ետ կը մղէ զինքը: Քար մըն է իր խոռվայոյզ գլուխին բարձը. այդ քարն է, որ իր վրան պիտի բարձրացընէ գէպի երկինք վերելս կող սանդուխը, այդ քարն է, որուն կտտաբը պիտի բազմի Աստուած, եւ այդ քարը հիմը կ'ըլլայ տաճարին, Աստուծոյ Տանը, կամ ըսենք իր իսկ բառով, Բէթ-Էլին: Բէթ-Էլին մէջն է, որ խոռվութիւնները կը մարին, սրտին փոթոթիկները կը հանդարտին, միտքը կը մաքրագործուի մտածումները կ'ամբժանան, պաշտամունքի, սիրոյ, խաղաղութեան ու հաշտութեան խորհուրդները մարմին կը ստանան, որովհետեւ «Տաճար Աստուծոյ կենդանւոյն է և պէտք է մնայ մարդը»:

Ինչ որ դարեր առաջ նահապետներէն մին, իր քունին մէջ կը տեսնէր զգայիօրէն և իր կեանքին մէջ յայտնագործուած փոփոխութեամբ մը Փանուէլի բարձասնքին վրայ իրմէն կը ծնէր «ԻՍՐԱԵԼ»-ը, դարեր վերջ մեր երկնաւոր Փրկիչը զայն կ'իրագործէր հոգեկան և բարոյական սահմանի մը մէջ: Նենգութիւններու անընդունակ առաքեալը, Նաթանայէլ, կը հաւատայ Յիսուսին, միայն անոր համար որ զինքը տեսած էր՝ հեռուներէն, թղենիի մը տակ նստած: Իր հաւատքը որ համակ անմեղութեամբ եւ անկեղծութեամբ հիւսուած է, զինքը նորանոր կատարելութիւններու կ'առաջնորդէ. զին-

քը կ'առաջնորդէ մինչև մարդկային մեծութիւննե-  
րու երկնային կատարները, եւ ցոյց կուտայ անոր  
սա ճշմարտութիւնը, թէ «Այսուհետեւ դուք երկինքը  
բացուած պիտի տեսնեիք, եւ Աստուծոյ հրշակները,  
որոնք կ'եղան ու կ'իջնեն Մարդու Որդիին վրայ»  
(Յովհ. Ա. 51):

Այն օրէն, որ այդ խոստումը եղաւ նաթա-  
նայէլին, ալ խորտակուեցան Յակոբի երազին  
տմոյն թելերը: Բաց երկինքին վսեմ իրականու-  
թիւնը միայն խօսեցաւ հոգիներուն: Այն օրէն ի  
վեր Բէթէլը տեղափոխուեցաւ մարդերու մէջ, որոնք  
կենդանի Աստուծոյ տաճարներ եղան: Յակոբի  
գլխուն բարձ ծառայող քարին տեղ, մարմնեղէն  
որտեք գրուեցան սանդուխին ոտքերը հաստատե-  
լու համար, և անբծութիւնը ու աստուածային  
հաղորդակցութիւնը խորհրդանշող հրեշտակներուն  
այցը մեր սրտերուն ու մեր հոգիներուն, յաճա-  
խուած, ամենօրեայ իրողութիւն մը դարձաւ, ու-  
րովհետև Յիսուս ըսաւ մեզի «Դուք ճանաթ եք Աս-  
տուծոյ կենդանւոյ»:

Մարդկութիւնը իր մեղքի, ապականութեան,  
և տառապանքի վիճակէն վեր բարձրացընելու հա-  
մար քարէ կամ փայտէ սանդուխներու պէտք չ'կայ  
բնաւ: Աստուածային սանդուխ մը ունինք, քա-  
ւութեան, փրկութեան, հաշտութեան, սիրոյ, յոյ-  
սի, հաւատքի ատաղձներէն շինուած: Յակոբին  
սանդուխն ալ, մեր սանդուխն ալ Աստուծոյ ձեռ-  
քով շինուած են, և զէպի վար կախուած՝ մեր զէ-  
պի վեր բարձրացումը, ՎԵՐԻՆԻՆ հետ հաղորդակ-  
ցութիւնը սկսելու և տեւական ընելու համար:  
Եւ մեր սանդուխը Յիսուս Քրիստոս է, կենդանի  
իր հոգիով մեր հոգիներուն մէջ, կենդանի իր  
մաքրագործութեամբ՝ մեր ապականութիւննե-

բուն մէջ, կենդանի իր սիրով՝ մեր ատելութիւն-  
ներուն մէջ, կենդանի իր հաւատքով՝ մեր անտար-  
բերութիւններուն մէջ, կենդանի իր յայտով՝ մեր  
լքումներուն մէջ, կենդանի իր փրկութեամբ՝ մեր  
կորուստին մէջ: Հիշի՛ վար նայելու եւ յուսա-  
հասեցու ժամանակ չի, այլ դիպի՛ վեր նայելու եւ  
վստահութիւն ունենալու, դիպի՛ առաջ նայելու, եւ  
աշխատելու շաւղոյն բաներու ծիրականութեանը  
համար»:

Չեմ գիտեր, թէ ձեռնէ քանի՞ներ մտեցան այդ  
փրկարար սանգու խի մատներուն, դէպի վեր, դէ-  
պի կատարելութեան կեանքը բարձրանալու հա-  
մար. քանի՞նե՞ր ջանացին իրենց անձնական տա-  
ճարին մաքրութիւնն ու սրբութիւնը պահպանե-  
լու. քանի՞նե՞ր հանդիսատես եղան հրեշտակներու  
վայրէջքին ու վերելքին: Չեմ կրնար մտնել մին-  
չև ձեր սրտերուն խորը, հոն կարենայ կարգալու  
համար ձեր փոթորիկները կամ խաղաղութիւնները,  
ձեր կորուստը կամ ձեր փրկութիւնը, բայց աչքե-  
րը բաւական ճշգրիտ հայելիներ են, որոնք ներ-  
քին կեանք մը կը ցոլացընեն: Եւ ձեր աչքերը  
դէպի վար կը նային, և յուսահատութեան մը մը-  
շուշը կը բուրեն: Դուք դեռ պէտք եղածին չափ  
վարժուած չ'էք դէպի վեր նայելու, և փորձելու ձեր  
փրկութեան վերելքը մարդկային կեանքի մատախ-  
լապատ և գեհնաբոյր խորափիտներէն: Մի՛ մոռ-  
նաք թէ ձեր կոչումն է կենդանի Աստուծոյ տա-  
ճարներ ըլլալ: Մարդիկ աւելի հաճոյք կ'զգան և  
սրտի գոհունակութիւն, երբ ինքզինքնին կը դըռ-  
նեն տաճարներու մէջ, ուր Աստուած իր մաքրու-  
թեամբն ու վեհութեամբը կը խօսի: Ինչո՞ւ կը  
թողուք, որ ձեր տաճարները պղծուին կիրքերէ,  
ատելութիւններէ, անտարբերութիւններէ և արեւ

մտածումներէ, կեանքը զոր կոչուած էք ապրիլ, հասոյքի և ստորնութեանց ընդունարան մը չէ, և ոչ ալ պարզ անօթ մը; զոր կարենաք ձեր ուզած կամ փափաքած գործերուն յատկացընել. անիկա տաճար մըն է, նուիրականութեան և սրբութեան յատկացուած. կոչում մըն է, դէպի վեր բարձրանալու, և միջոց մը միսիթարութեան իր անձին ու նմաններուն համար: Իբրև այն գործածեցէք, ու իբրև այն ապրեցէք:

Լսեցէք ձայնին, որ Յիսուսի բերնով կը ըսէ, «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտութիւնը եւ կեանքը»: Ըշմարտութեան պէտք ունինք, Սրէնքի և Արդարութեան ծառայելու համար, ճամբու պէտք ունինք, տնսայթաք դէպի ուղղութիւն քալելու համար, կեանքի պէտք ունինք, կենդանի Աստուծոյ տաճարներ ըլլալու համար. և Յիսուսի կեանքն է, ճշմարտութիւնը և ճամբան միանգամայն: Անով ճամբան բացուած է, ճշմարտութիւնը քարոզուած և կեանքը ապրուած: Ապրեցէք նոյն ճամբուն մէջ, ապրեցէք նոյն ճշմարտութեան մէջ, ապրեցէք նոյն կեանքով: Սգաւորին վիշտը, թշուառին տառապանքը, ատեցողին վրէժխնդրութիւնը, տնտարբերին անհաւատարմութիւնը, այդ ճամբուն մէջ, այդ ճշմարտութեամբ և այդ կեանքով պիտի փորատին: Զանք մը դէպի վեր, ջանք մը նորոգումի և վերածնութեան, ջանք մը հաւատքի և սիրոյ, և ես վստահ եմ թէ ձեր մարմինի տաճարները սրբագործուած պիտի ըլլան, և Աստուած պիտի խօսի ձեր մէջ ու ձեզմով:





# ԲԵԹՂԵՂԷՄԻ ԱՍՏՂԸ

Կ Ա Մ

## ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ

Ահա --տրտրտիտ յեղ --բոբո--  
Բեթ ղեղ, --բեղեղի --թեթի յաղղղ--  
բեթ. ղե ղե-- յեղ --յոթ ֆրիէլ

(Պ.ուկ. Բ. 10)

Աշխարհի մէջ ամեն ծնունդ ուրախութիւն մըն է տուններուն և ընտանիքներուն: Մարդկութեան յաւերժացումը որբաններու վրայ երգուած մայրական երգովը կ'իրականանայ: Որբաները մարկային ուրախութեան, և դագաղները՝ սուգին խորըրդացանաներն են: Դագաղին սոսկումը կը փարատի որբաններուն տեսքով ու գերեզմաններն անգամ որբաններուն պարունակութեամբ կը զուարթանան, կը ժպտին: անոր համար որբաններու և գերեզմաններու երգիչ Իսայացի բանաստեղծը, Փոսկոլոս, ըսած է. թէ «Ով որ սիրոյ ժառանգ մը չը քողոր, ս'ն միայն պիտի յկրևայ իր գերեզմանեկն ժպտի»: Իմաստունը մանկութեան խօսելով կ'ըսէ. «Թող քու հայրդ ու մայրդ քու վրայ ուրախանան, և քեզ ծնողը քող ցնծայ»: (Առակ ԻԳ. 25): Թող երգէ բանաստեղծը, թէ մեռնիչը լաւ է, բայց լաւագոյնն է ծնած չըղաչը: Ո՞ր մայր, սակայն, իր զաւակին դագաղին վրայ փունջ մը ժպիտ սփռեց, և

[ 257 ]

մը մայր իր ծնած զուկին որբանին վրայ բուռ մը արցունք լացաւ: Թող երդէ բանաստեղծը, բայց իր երգը պիտի չկրնայ ո՛չ մահուան սոսկումը մարել, և ո՛չ ալ ծննդեան ցնծութիւնը կրճատել:

Մնունդի ուրախութիւններ կան, սրտնք մասնաւոր ընտանիքներու սեմէն գուրո չեն ելլեր. առտնք կը մնան իրենց նեղ շրջակային մէջ: Թագաւորներուն ծնունդները իրենց պետութեան սահմաններուն մէջ կը շրջանակեն իրենց բերած ուրախութիւնները: Ինչխարհի մէջ ծնունդ մը կայ, սակայն, որուն ուրախութիւնը տիեզերական է և անսպասելի, որը ընտանիք չունի, հայրենիք չունի, ազգ չունի և համամարդկային ըլլալու շնորհքովը օժտուած է, գերմարդկային ծնունդ մը եղած ըլլալուն համար: Եւ տակաւ է մեր երկնաւոր վարդապետին ծնունդը, որուն տարեկան յիշատակը կը տօնենք այսօր: Այդ ծնունդը իր եզակեան հանգամանքով պատճառն է մարդկութեան ուրախութիւններուն, որովհետեւ իր հետ աշխարհ կը բերէ արդարութեան և ճշմարտութեան յայտնութիւնը:

Սովորական ծնունդներու պատմութիւնն ու յիշատակը կը մոռցուին, կ'անտեսուին սովորաբար ոմանք՝ իրենց մասնաւորութեամբ ազգերու կամ ընտանիքներու ազգայնական պատմութեան պզտիկ էջերուն մէջ կը կորսուին: Բայց Յիսուսի ծնունդը՝ կը մնայ տիեզերական, անվերջանալի՝ դարերու մէջէն: Եւ անի՛ս ամեն ազգի, ամեն աշխարհի համար ընտանեկան ու ազգային տօնի մը հանգամանքն ունի: Իմաստունը կ'ըսէր, ընտանիքներու յառուկ ծնունդին ակնարկելով. «Թող քու հայրդ ու մայրդ քու վրայ ուրախանան, եւ քեզ ծրնողը քող ցնծայ»: Իսրայել վերջ իմաստունին մը ասածումը կ'ընդլայնուի, կը համամարդկայնանայ.

հրեշտակները ծնունդի մը խանձարուրքին վրայ կ'երգեն երգ մը, ուրկէ ամբողջ մարդկութեան ուրախութեան աւետիսը կը լսուի: Այդ ծնունդը տունի մը պատերուն մէջ ու երգիքին տակ տեղի չունենար. անիկա բացօդեայ է, և հազիւ երկինք մը կը բաւէ իր աստղազարդ կամարով անոր իբրև ծածկոյթ ծառայելու: Մայր մը չէ որ իր օրօրը կ'երգէ, նոր ծնած մանուկին անմեղութիւնը քնացընելու համար, այլ հրեշտակներ են, որոնց երգը քե' օրօր մըն է և քե մեծ ուրախութեան մը աւեցիսը: Այդ պահուն Մարիամ կը դադրի եսասէր մայրութեան մը իրաւունքէն, և կ'ըլլայ մարդկութեան մը ներկայացուցիչ: Մարդկութիւնն է որ Մարիամով իր միտէն ու արիւնէն կուտայ նորածին Մարգ-Աստուծոյն, և այդ իսկ պատճառով կը դառնայ արեւելեան ու համամարդկային:

Պատմեցէք, Սիրելի Մայրեր, պատմեցէք ձեր զաւակներուն, թէ ձեր մայրութեան ուրախութիւնները ո՛րպիսի ահաւոր երկունքի մը արգիւնքն են: Պատմեցէք թէ աշխարհի ուրախութիւններուն ահը ո՛ւրկէ կը բղխի Պատմեցէք, թէ ամուսնները, ըլլան որովայնով թէ սրտով, հոգիով թէ զգացումներով, յաւիտենապէս զրկուածներ պիտի ըլլան այն սփոփարար ուրախութիւններէն, որոնց պէսք ունինք կեանքի բեռը կարենալ տանելու, և անոր մեր վրայ դրած պարտականութիւնները սիրելու համար:

Ամեն ուրախութիւն, որովհետև, աշխատութեան մը, ցաւի մը, երկունքի մը արգիւնքն է: Մայրեր զաւկի մը ծնունդ տալու համար կեանքի և մահուան միջև կը տարուբերուին, տառապանքին ամենէն լեղինները կը խմեն, ցաւերուն դառնագոյնը կուլան իրենց երկունքին մէջ: Ու այդ զոհողու-

թիւններէն, այդ ցաւերէն, այդ մահաբոյր դառնութիւններէն վերջն է, որ կեանք մը ծնած ըլլալու ուրախութիւնովը կը ցնծան: Առանց այդ զոհարերութեան, առանց այդ միտի ու արիւնխնութիւնովն մայրութիւնը զրկուած պիտի ըլլար իր ծընողութեան պարգեւած հրճուանքէն, մխիթարութիւնէն, երջանկութիւնէն: Անոնք որ երկունքի ցաւերով ամուլ են, զաւակ մը ծնած ըլլալու ուրախութեան անմասն կը մնան, և երկունքի ցաւերը զգացած չըլլալնուն վիշտն ունին: Այդ միեւնոյն պայմաններով միայն մենք ալ պիտի կրնանք մեզի ըմբռնիսել տալ Յիսուսի Մնունդին ուրախութիւններն ու մխիթարութիւնները:

Մենք իբրև արեւելեան տառապող ազգի մը զաւակները, ո՛չ միայն աւելիլաւ կրնանք ըմբռնել աւետարանուած մեծ ուրախութեան մը կտրուորութիւնը, այլ և կրնանք գնահատել ծնունդ մը հովանաւորող աստղի մը արժէքը: Երջանիկ մը՝ որ իր կեանքին մէջ չէ՛ ճաշակած ապերջանկութեան մը բուրբ, անզգած կը մնայ ցաւին ու տառապանքին, անյոյս մարդը անմասն կը մնայ յոյսի պարգեւած վայելքներուն, անհաւատը չ'ըմբռնաներ հաւատքի մը մխիթարութիւնները: Զուարթ մարդիկ կրնան անտարբեր մնալ մեծ ուրախութեան մը աւետիսին հանդէպ: Ընդհակառակն դժբախտին երազը՝ ուրախութիւնն է, հալածուածին երջանկութիւնը՝ փրկութեան յոյսը, և հաւատացեալին սփոփանքը՝ սրտի և հոգիի խօսակցութիւնը իր Աստուծոյ հետ:

Մենք մեր զրկումի և ցաւի տառապագին օրերուն, երբ մեր կուշտին տեսանք երջանիկ մարդը, ըսինք. ի՛նչ երջանի՛ մարդ, բախտաւոր աստղի մը օակ ծնե՛ր ե՛ զինքը ի՛ր մայրը: Մի՛ նախանձիք այդ մարդուն: Լեռաւոր աստղերը կապ մը չունին մեր

կեանքին հետ, և մենք պիտի չ'կրնանք մեր դժբախտ կեանքին առկայծ ու աղօտալոյս աստղին վրայ լոյսի ճառագայթ մը աւելցընել: Մի' նախանձիք. այդ աստղերը շատ հեռու են մարդկութենէն, կարենալ ազդեցութիւն մը ունենալու համար մարդկային կեանքին վրայ: Հեռաւոր լոյս մը խաւար մըն է, և հեռաւոր Աստուծ մը՝ անծանօթ մը ամենուս: Մինչև որ լոյսը և Աստուած մեր մէջ չ'ընակին և չ'ճառագայթեն մեզմով, անոնք նըշանակութենէ զուրկ կը մնան: Բաց ատտի, այդ բոլոր աստղերը, յաւիտենական ճամբորդ, որոնց համար կը կարծենք թէ մեր երջանիկ կամ դժբախտ կեանքերը կը հովանաւորեն, օր մը պիտի մարին տմենքն ալ, և մոխիր գառնան:

Աստղ մը կայ, ստեղծ, տիեզերքին մէջ, որ իրական մխիթարութիւնը պիտի շինէ ամբողջ մարդկութեան, և այդ աստղը, Բեթղեհէմինն է, իր հոգեկան և բարոյական նշանակութեանը մէջ: Այդ աստղին տակ ամեն մարդ պիտի գտնէ տեղ մը, անկիւն մը, ինքզինքը տեղաւորելու համար: Որովհետև անոր ճառագայթած մեծ ուրախութիւնը ամբողջ մարդկութեան աւետարանուած է:

Սև ո՞ւր կարելի է գտնել, Բեթղեհէմէն զուրս, երջանկաբեր աստղի մը շողարձակումը, և հրեշտակներու մեծ ուրախութեան աւետիոր իրարու միացած:

Անոնք որ այդ աստղը կը դիտեն հոգիի բովանդակ խորհրդագրածութիւնով, անոնք կ'եղբայրանան Վաղդիասասանի Մոզերուն հետ, Հնդկասասանի զուշակներուն հետ, Հին Եգիպտոսի գիտնականներուն հետ»:

Հրեշտակներու այս երգին պէտք ունին ունկրնդրել ամբողջ մարդկութիւնը ընդհանրապէս, և Հա՛յ ժողովուրդը մասնաւորապէս: Տառապանքէն

յողնած, նեղութիւններէ ու հալածանքներէ վըշտարեկ հոգիները, Աստուծոյ փառքին, աշխարհի խաղաղութեան և մարդերու հաշտութեան երգովը միայն կրնան սփոփուիլ: Երաժշտուած աւետիս մը, իր իրականացած ձեւին տակ, միակն է, որ կրնայ կեանքի տենչանքը վերստեղծել ազգերու և մարդերու մէջ, և անոնց զօրութիւն պարգեւել բո՛ւն իսկ իրենց հոգիներէն ծնցընելու այդ փառքը, այդ խաղաղութիւնն ու հաշտութիւնը, և հրեշտակներու հեա երգելու, մեր Փրկիչ Յիսուսի մաուրին վերև. Փա՛ո՛ք ի բարձունես Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանուրիս:

Ա՛յն օրէն՝ երբ այդ երգը հնչուեցաւ նորածին Արդարութեան ու Ճշմարտութեան որբանին շուրջ, անիկա եղաւ հրաւէր մը բոլոր յողնածնեւորուն ու տառապածներուն համար, թոթուելու իրենց աչքերը վարապուրող մշուշը, և իրենց ուսերը կըող բեռները, երթալ որդեգրելու համար անոր բերած խաղաղութիւնն ու փառքը, արդարութիւնն ու հաշտութիւնը, և անոնցմով շինելու իրենց կեանքին ոսկի զաւարը:

Հետեւեցէ՛ք, սիրելի ժողովուրդ, Ձեր բրիտանէական հոգիի թոխչքով, այդ երգող հրաւէրին, և զանի ոսկեզօծող աստղին, որ կը փալի բեթղեհէմի մաուրին վրայ: Ձեզի առաջնորդողներ ունիք ձեր աչքին առջև: Անցնող դարերու Քրիստոնէութիւնն է, որ ձեզ գէպի հոն կ'առաջնորդէ: Հովիւները, որոնք կ'երգրպագեն, հրեշտակներու երգէն դիւթաւած, մոգերը, որոնք կըշտապեն Աստղին ակընպիչ, արդարութեան ի խնդիր վաղող, Աստուծոյ փառքին ծարաւի, աշխարհի խաղաղութեան բազմացող և հաշտութեան հետամուտ մարդկութիւնը կը խորհրդանշեն:

Հրեշտախներուն երգը, և Երկինքի դիսաւսրը  
դէպի ճշմարտութիւն տանող ճամբուն երկու ցը-  
ցանիշնեքն են. մին փարոսն է ու միւսը ոսն-  
վիրան: Անոնք որ գիտութենէ զուրկ, կը մնան  
հովիւներու պարզամտութեանը և ուսմկութեանը  
մէջ, անոնք, որոնց հոգիները լարուած քնարի մը պէտ  
զգայուն են հրեշտակներու մտաներու հպումին,  
թող բանան իրենց սրտերը այդ երգող հրաւէրին  
առջև, և թող երթան ծնրադրելու ճշմարտութեան  
և արդարութեան մարմնացում Մանուկ-Յիսուսին:  
Եւ անոնք, սրտնց մէջ հոգիին բանաստեղծութիւնն  
է մարած, անոնք, որոնց սիրտը հրեշտակային  
երգերու թրթռացումին անզգած կը մնայ, անոնք,  
որոնց միաքը կապուած կը մնայ նիւթին ու նիւ-  
թականութեան տափակութիւններուն, և գիտու-  
թեանց չոր ու ցամաք մեթոտներուն, թող նային  
Մագերուն պէս՝ Հերովդէսներու խառվը առթող  
Աստղին, և անկէ առաջնորդուած երթան իրենց  
սրտին ու հոգիին նուէրները դնելու նորածին  
Արգարութեան և Ճշմարտութեան սաքերուն տակ:

Եւ որպէս զի Մագերու և Հովիւներու քայլե-  
րուն վրայ կարենաք քալել, և անոնց ուխտաւո-  
րութիւնը փորձել, և ճշմարիտ երգրպագուները  
դառնալ ՄԱՐԴ—ԱՍՏՈՒԾՈՒԹՆ, պէ՛տք է թոթուէք  
ձեռնէ Հերովդէսներու փառամոլ աշխարհասիրու-  
թիւնը, և դպիրներու Փարիսեցիական կեղծիքն ու  
անտարբերութիւնը, և ձեր վրայ հագնիք Քրիստոս-  
նիէական խոնարհութեան, և աստուածատէր հնա-  
զանդութեան ոգին, Ճշմարտութեան անձնուէր  
զգացումը, և արգարութեան տենչացող փափաքը,  
որովհետև ասո՛նք միայն ձեր առջև. պիտի կրնան  
բանալ դէպի Բեթղեհէմ երկարող ճամբան:

Տառապող կեանքերու մէջ սիրտի պէտքեր

կան, որոնց կրօնքը միայն կրնայ գոհացում առլու  
Եւ խոնարհ հոգիները, որոնք ինքզինքնին չարչըր-  
կուած կ'զգան, ու արամարհուած՝ աշխարհի ան-  
տարբերութիւններէն, Աւետարանի առջև, ու Աւե-  
տարանով միայն պիտի կրնան իրենց արժանապա-  
տուութեան տիրանալ: Ոճրագործներ են անոնք, որ  
իրենց նիւթապաշտ վարդապետութիւններով կը  
ցամբեցընեն ժողովուրդի սրտին մէջ յոյսի և մխի-  
թարութեան ակերը, զորս Աւետարանի քարոզու-  
թիւնը բացաւ: Մարդիկ յոյսի եւ երջանկութեան  
պէտք ունին, կարենալ կեանքի լուծը կրելու հա-  
մար: Կեանքի զինուորութիւնը այդ երջանկու-  
թեան ու մխիթարութեան յոյսովը միայն կրնայ  
գօտեպնդուիլ, առանց որուն զասալքութիւնը հա-  
սարակաց կեանքին բաժինը պիտի ըլլար: Դարերէ  
ի վեր քաղաքական փոթորիկներու դիմադրաւող, ու  
արիւննհրու մէջ իրենց ազգային գոյութիւնը ա-  
պահովող մեր նախնիք իրենց կեանքին, իրենց կը-  
ռիւին ոյժը Քրիստոնէութեան ծնցուցած և Հայ  
Ս. Եկեղեցիէն քարոզուած այդ յոյսէն միայն ծը-  
ծեցին: Եւ եթէ երբեք այսօր, մեր նկարագիրը  
ապականուած է, եթէ մեր ներքին հոգեկան ու բա-  
րոյական ոյժերը խորտակուած են, եթէ յողթա-  
կան կեանքի մը ներոյժ խլրտումները կը պակտին  
մեր մէջ, եթէ երբեք ազնուական կիրքերու հը-  
րայրքը և ասպետական տենչանքներու հռանդնա-  
յուզութիւնը դոյութիւն չ'ունի մեզի համար, աւա՛ղ,  
պատահող սա է, որ մեր մէջ մարեր ենք Արդարու-  
թեան և Ճշմարտութեան Սէրը, մարեր ենք Տի-  
րոջը Հոգին, մարեր ենք զմեզ դէպի Բեթզեհէմի  
Մտուրը առաջնորդող Աստղը, և մեր ականջները  
խցեր ենք հրեշտակներու երգը չ'լսելու համար:  
Կոյրերուն առջև արեւու լոյսին նկատմամբ խօսիլ,  
կամ ծիածանի մը գունազանգ հրաշափառութիւնը  
պատմել, և կամ աստեղազարդ գիշերուան մը

ոգտնչելիքը փառաբանել՝ յիմարութիւն պիտի  
ըլլար: Երաժշտութեան մը աստուածային թըր-  
թըռացումներն ու ներդաշնակութիւնը չեն կրնար  
ազդել այն հոգիներուն, որոնց մարմինի ականջները  
խուլ կը մնան երաժշտութեան ազդեցութեանը:  
Չէ՞ք խորհիւր թէ Յիսուսի ծնունդն ալ միեւնոյն  
ամուլ իրողութիւնը կը մնայ բոլոր այն հոգիներ-  
ուն համար, որոնք ճշմարտութեան աստղը տես-  
նելու, կամ փրկութեան երաժշտուած աւետիսը  
լսելու ընդունակութիւնը կորսնցուցած են: Իրո-  
ղութիւնները որքան փրկարար ըլլան, ուէ՛տ ար-  
գիւնք չեն կրնար ունենալ առանց ենթականերու  
անոնց հետ շփումին, անոնցմէ ներազդուելուն,  
անոնցմէ օգտակար բաժին մը սեփականելուն: Եթէ  
կ'ուզէք, որ մեր Երկնաւոր Տիրոջ Մանդեան տօնը  
ձեզի ալ պարգեւէ այն միեւնոյն յոյսը, որով մեր  
հայրերը գօտեպնդուեցան կիանքի կոիւրն մէջ, այն  
միեւնոյն սէրը, որով մէկզմէկ սիրեցին, ու սիրե-  
ցին ազգն ու հայրենիքը, այն միեւնոյն հաւատքը,  
որով ինքզինքնին կենդանացուցին, այն միեւնոյն  
մխիթարութիւնը՝ որով իրենց ամենէն դժբախտ  
վայրկեանները քաղցրացուցին, ինքզինքնիդ ընդու-  
նակ շինեցէք, սիրելի հայրենակիցներ, Մանդեան  
տօնին խորհուրդը ձեր մէջը վերստեղծելու: **Գէտք**  
**է.** որ այդ Մեծ Տօնը՝ իր ամբողջ նշանակութեամբ,  
իր ամբողջ բարոյականով, իր ամբողջ հողեկան  
զարթնումի թովքովը գործնականանայ ձեր մէջ, և  
դուք կարող ըլլաք, իբրև պարկեշտ մարդ, իբրև  
առաքինի քրիստոնեայ, և իբրև անձնուէր հայեր,  
երգելու հրեշտակներուն հետ, «Փառքի բարձունս  
Աստուծոյ, եւ յետկիտ իսաղաղութիւն, ի մարդիկ հա-  
ճութիւն»: Եւ այդ երգին մէջէն է որ դուք պիտի  
լսէք և վայելէք մեծ ուրախութիւնը:



## ԴԷՊԻ ԿՌԻԻ

Ինչո՞ւ համար փորտիներուն ԺԶ  
նոր, որ հորերուն մայրը ընտան  
(ԳԽԱՑ. Ե. 16)

Մարդկային կեանքի ընթացքին մէջ վայրկեաններ ու պարագաներ կան, ուր դէպի ազգն աւելեղեցին, գէպի հայրենիքն ու մարդկային ընկերութիւնը մեր ունեցած պարտականութիւնները աւելի հրամայողական վիճակ մը կ'ստանան, և որոնց կատարումէն մարդ չի կրնար խաւսափել առանց իր վրայ հրաւիրելու հասարակաց գիտակցութեան արտաոսանած դատապարտութիւնը: Այսօրինակ հանդիսաւոր վայրկեաններու մէջ կարծես ալ մարդ իր անձին տէրը չէ՛. վասնզի, կռիւի, անձկութեան շեփորը հնչած պահուն, ամեն ոք կը դադրի, հայր, եղբայր, զաւակ, ամուսին ըլլալէ, և անոր վրայ կը տեսնուի միայն զինուորին հանգամանքը, որ ալ իրաւունք չ'ունենար իր պարտականութիւնը զոհելու իր հաճոյքին ու հանգստութեան, իր անձնական խաղաղութիւնը՝ իր շահուն:

Այդ հարկեցուցիչ պարագաները յաճախ երեւան կուգան աշխարհի վրայ, քանի որ ընկերական և ազգային շահերու բանարարողները «Օրհնս արդա-

---

ՄԱՆՈՅ.— Խօսուած Յրեզնոյի եկեղեցիին մէջ:

րութեան թունուփիւն մեր եղիցի» սկզբունքովը կուզեն վարուել անոնց հետ, որոնք բնութեան մէկ քմահաճոյքով գծրախտ ըլլալու լուծին տակ կ'ապրին: Եւ ասոր համար է, որ հակառակ մարդկութեան արեգերական բաղձանքին, կեանքը միշտ խաղաղութիւն մը չէ, այլ անդու կռիւ մը ներքին ու արտաքին դժուարութիւններու դէմ, հոգեկան և մարմնական նեղութիւններու դէմ: Եւ այս ոգորուփ հարկը այնքան անհրաժեշտ է, որ մարդ իր կեանքը կարծես կարճ կ'զգայ իր պարտականութիւնները ամբողջովին կատարել կարենալու համար, իր երջանկութիւնը կարենալ ապրելու համար: Անոր համար անիկա կուզէ երկու անգամ ապրիլ, և իր այդ փափաքէն է որ կը ծնի ամուսնական սէրը. անիկա կուզէ իր գերեզմանէն ալ հանդիտատեսը ըլլալ կեանքի խաղաղութիւններուն և կռիւներուն, և այդ փափաքէն է որ կը ծնի հայրական սէրը:

Եթէ յաճախ լսուած է ժամանակին ու պահանջներուն հրամայողական ձայնը, եթէ արդարութիւնը իր տիրապետութեան համար մարդկային զսկեր պահանջած է, եթէ վտանգուած Հայրենիք մը, կոչ ըրած է իր զաւակներուն, իր պատիւը փրկելու համար, դժբախտաբար ամեն մարդ հաւասար կորուսով, հաւասար եռանդով, հաւասար անձնուիրութեամբ չէ՛ հետեւած այդ մեծ զօրակոչին:

Ամեն ազգի պատմութեան մէջ կը տեսնուին պարագաներ, ուր անհատներ և ցեղեր ուղած են արհամարհել պարտականութեան ձայնը, իրենց հանգիստին, իրենց շահուն, իրենց խաղաղութեանը համար, և պատմութիւնը հաւատարիմ վկայի մը պէս իր խարանիչ մատովը ցոյց կուտայ այդ պարտագանց հատուածները: Այսօր ձեզի պիտի

ներկայացընեմ Իսրայէլի պատմութիւնէն նմանօրի-  
նակ դրուագ մը, անոր վրայ կատարելու համար  
մեր բազմաթիւնը, և անկէ քաղելու համար  
մեր այսօրուան դասը: Մտկեղծօր կռիւի մասին է  
խօսքս, ուր Քանանացի զօրապետը Սիսարա սպան-  
նուեցաւ հրեայ կնոջ մը ձեռքով, և ուր Յաբին  
թագաւոր ջախջախիչ պարտութիւն մը կրեց Իս-  
րայելացիներուն կողմէն: Այդ պատերազմը ազգա-  
յին գոյութեան տեսակէտով շատ յատկանշական  
եղած է: Ուժասպառ ժողովուրդ մըն է, որ կնոջ  
մը հայրենասիրական շունչին տակ ոռքի կ'ելլէ,  
ազգային նախատինք մը լուալու համար թշնամի  
արիւնին մէջ: Դերովրա, Իսրայելի ժողովուրդին  
այդ անձնուէր ժան ա'Արքը, Իսրայէլի բոլոր ցե-  
ղերը իրենց պարտականութիւններուն կը հրաւիրէ:  
Այդ ազգասէր կնոջ ձայնին մեջէն ահագանգի մը  
հանգիսաւոր և նուիրական զոռանջը կը լսուի:  
Այդ ձայնին մէջ դարաւոր յուզմունքը կայ տառա-  
պող ժողովուրդի մը, և կենսական պահանջը ներ-  
կային ու ապագային:

Տեսարանը վսեմ է և պատկառազու. իր դե-  
րեզմանէն յարութիւն առնող ազգի մը յաղթա-  
տօնն է զոր կը պտրեն պատերազմիկները, սիր-  
տերնին խանդով ու աչքերնին ժպտով լեցուն:  
Յեղերուն մեծամասնութիւնը դէպի դաշտ կ'եր-  
թայ պատերազմելու: Ջարուղոն և Նիվթաղիմ  
զիրար կը գերազանցեն արիութեամբ և անձնուի-  
րութեամբ, մինչ անդին Դաւիթ, Ասերի, Գաղաադի,  
Ռուբէնի ցեղերը հեռու մնացին կռիւի դաշտէն, և  
դասալիքը եղան իրենց պարտականութիւններուն:  
Անոնցմէ Դան և Ասեր ծովեզերքը նստած հանգիստ  
կ'ընէին իրենց նաւերը ապաստանած. Գաղաադ  
Յորդանանէն անդին կը պտնուէր, բացարձակ ա-

պահովութեան մէջ, իսկ Ռուսէնի հովիւ ցեղը իր ոչխարներուն մայրենովը, և իր հովուական սրինգովը կ'երջանկանար, չ'ուզելով իր հովիւի խաղազութիւնը վրդովել պատերազմի անսրտչութիւններով... :

Երբ կռիւի դաշտին արիւնի լիճը ցամքեցաւ, երբ ազգային հորիզոնին անստուկութեան ամպերը փարատեցան, Քանաճացիներու պարտութեամբ, և երբ Իսրայէլի ժողովուրդը իր վտանգուած խաղաղութիւնը ձեռք բերաւ, այն ատեն Դերովրատյոզ պատերազմին նուիրեց իր հոգեշունչ երգը, որ Երրայական հին գրականութեան մէջ ամենէն գեղեցիկ ու հնցող բանաստեղծութիւններէն մէկը պիտի մնայ. և երգեց քաջերուն գիւցազնութիւնը, և անտարբերներուն, դաստիւններուն վատութիւնը, և մասնաւորապէս իր խօսքերը Ռուսէնի Յեղիին ուղղելով՝ յանդիմանանքի ու ծաղրանքի շեշտով մը ըսաւ «Ի՞նչու համար փարսխներուն մեջը նստար, որ հօտերուն մայիլը չես»:

Կը խորհիմ, սիրելի ժողովուրդ, թէ որքան ատեն աշխարհ իր գոյութիւնը շարունակէ, և որքան ատեն մարդկային ստուերներ թափառկոտին մեր մոլորակին վրայ, շարունակ պէտք պիտի ունենաք հնչնցնելու Դերովրատյի շեփորը, զէպի պարտականութեան կանչելու համար ըլլոր այն մարգերը, որոնք կա՛մ իրենց հաճոյքին, կա՛մ իրենց հանգստութեան և կամ իրենց շահուն համար հետու պիտի մնան պարտականութիւններէ, և ասանկով պիտի լքեն հասարակաց դատը, և հասարակաց բարիքը: Մենք պէտք չ'ունինք բնաւ սպասելու, որ արիւնոտ Մակեդոն մը բազուի մեր քայլերուն առջև, մեր պարտականութիւնները կատարելու համար: Պարտականութիւնը ծաղիկ մըն է, որ կը բա-

ցուի թէ՛ պատերազմի կիզիչ արեւին, և թէ խաղաղութեան շուքին տակ. անիկա կը ծաղկի ու կը հատուննայ արցունքներու՝ ինչպէս արիւններու մէջ, երջանկութեան ժպիտներու՝ ինչպէս դառնութեան հծծիւններու մէջ: Եւ չ'կայ ժամանակ մը, ուր մեր ականջէն դադրի հրաւէրը պարտականութեան: Խաղաղութեան օրերու պարտականութիւններ կան, ինչպէս կան պատերազմի օրերու շարտականութիւններ, կրօնական և աղօթքի պարտականութիւններ կան, ինչպէս կան ազգային և ընկերական պարտականութիւններ, և մեզմէ մէկը իրաւունք չ'ունի այդ պարտականութիւնները զոհել իր շահուն, իր հաճոյքին և իր հանդառնութեանը: Եւ միթէ կեանքը շարունակական կռիւ մը չէ՞: Եղէ՛ք ուր որ կուզէք, միայն ուշադրութեամբ նայեցէք կեանքին և անոր պարագաներուն: անոր յայտնութիւններուն և կոչումին վրայ. և պիտի տեսնէք, թէ անիկա յարածուփ շարժում մըն է. մերթ գոհունակութիւն մը, մերթ բողոք մը. մերթ ժպիտ մը, և մերթ արցունք մը. կեանքերնիս կազմուած է բարի կռիւի մը համար. թշնամի բանակներ շարունակ ճակատած են մեր դէմ. երբ մէկուն կը յաղթենք միւսը կը յաջորդէ՝ անար: Ա՛հ. շա՛տ քիչերն են, որ սրբոյն Պօղոսի պէս, կրնան ըսել. «Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքս աւարեցի, հաւատքս պահեցի, այսուհետեւ արդարութեան պսակը կը մնայ ինծի» (Բ. Տրմ. Գ. 7, 8): Երանի այն մեռելներուն, որոնք իրենց գերեզմանէն ասդին բարի պատերազմի մը յաղթանակը կը թողուն. անոնք կեանքի, գաղափարի և պարտականութեան դիւցազներն են: Սիրելի ժողովո՛ւրդ, գիտեմ դուք երջանիկ էք Խաղաղականի ասիանց մօտ. հոս դուք ձեր հան-

գիտան ունիք, ձեր այգիներն ու առուները, ձեր կեանքն ու պատիւը ապահովութեան մէջ են. բայց այդ ամենը ձեզի իրաւունք չեն տար, որ գուք փակուած մնաք ձեր տուներուն մէջ. — «Ինչո՞ւ հասնար փարսխներուն մեջ նստար, որ հօտերուն մայկչը շնկս»:

Եազաղութիւնն ալ իր վասնզը ունի և իր պատերազմը, մանաւանդ օտար ափերու վրայ: Այսօր բարութեան պատերազմը պիտի մղէք չարութեան դէմ, օր մը հաւատքի պատերազմը պիտի մղէք անտարբերութեան, և վաղը մարդասիրութեան պատերազմը եսասիրութեան դէմ: Օր մը ընտանեկան սրբութեան պատերազմը պիտի մղէք անպարկերշտութիւններու դէմ: Եւ դուք ձեր գաղութին, ձեր տուներուն մէջ անհոգ, անտարբիր նստելով չէք, որ պիտի կրնայիք ձեռք բերել յաղթութեան զէնքերը. — «Ինչո՞ւ հասնար փարսխներուն մեջը նստար, որ հօտերուն մայկչը շնկս»:

Անտարբերութիւնը կեանքի զսպանակներուն թուլացումն է, ու կէ չէ կարելի սպասել լաւագոյն դործ մը: Կաշըմբուն և հաստատակամ թաղմիկներու գօտեմարտէն կը ճառագայթէ դիւցազներու ճակատը: Լուսապատկող յաղթութեան կայծակը: Դասալքութիւնը ոճիր մըն է կեանքի կոխի գաշախն վրայ: Եւ դասալիքներ են անոնք՝ որոնք ազգային կրօնական ճգնաժամի մը պահուն կա՞մ Դանի ու Ասերի պէս իրենց նաւերը ապաստանած, կա՞մ Գաղատիի պէս ապահովութեան մէջ փաթթուած, և կա՞մ Ռուբէնի պէս ոչխարներուն մայիկնի և զանգակներու մեղեդիներովը օրօրուած կը լքեն պարտականութեան ու յաղթութեան կեանքը, և կը մեղկանան: Մի՛ փախչիք կոխէն, երբ ազգային շահը կը պահանջէ. կոռեցէք, հոգ չէ՛

որ իյնաք. պարտակատարութիւնը աւելի բարձր է և վսեմ քան յաղթանակը: «Ամենագեղեցիկ գուպարները յուսանաս գուպարներն են, կըսէր Ժիւլ Ֆէրրի: Յաղորութեան վեր, յաջողութեան քարձ, ու նոյն իսկ փառքն ամենաքարձը քան սը կայ. ԶՈՂՈՂՈՒԹԻՒՆԸ»:

Դո՛ւրս ելէք, Սիրելի հայրենակիցներ, ձեր հա՛ոյքի, ձեր շահու, ձեր անձնական հանգոտութեան մտկադատեղիններէն ու փարախններէն թողէք, պահ մը ոչխարներուն մայրնը, և հովիւներուն սրինգը, և կեանքի կոիւին շեփոքը լսեցէք: Լսեցէք կռուելու համար, կռուեցէք պարտականութիւննիդ կատարելու, և ատով արդարութեան ու սրբութեան պսակը ժառանգելու համար:

Եւ Յիսուս, որ առաջին զոհն եղաւ և առաջին վկան արդարութեան և սրբութեան, գաղափարի ու պարտականութեան կեանքի, ամենուս օժանդակը պիտի ըլլայ՝ իր զոհաբերութեան կենդանի ու անմահ օրինակովը, իր սրբութեան բուրումովն ու արդարութեան ներշնչումովը, անպարտելի ոյժով մը կռուելու համար հաւատքի ու սիրոյ, յոյսի՝ ու խաղաղութեան «քարի պատերազմը», և շարունակ յաղթական կանգնելու ընկերական և քաղաքային մոլութիւններու աւերակայտին վրայ. . .





## Մ Ր Տ Ջ Ա Ն Ք Ը

Ֆրանսական երկու մեծ Յեղափոխութիւննե-  
րէն յետոյ, —(1793 և 1848)—երբ պահ մը արքայա-  
պաշտ գաղափարները սկսան նորէն խօսիլ Ֆրան-  
սայի ժողովուրդի հոգիին, ոմանք այնպէս կարծե-  
ցին, թէ Յեղափոխութեան գործը հետք մը պիտի  
չ'թողուր այլ ևս. թէ նորէն պիտի սկսէին վերապ-  
րիլ արքայական ու ընկերական հին կարգ ու սար-  
քերը, թէ՛ Յեղափոխութեան Պանթէոնը՝ մոխրի  
վերածուած՝ միաքերու պիտի երևնար իբր անցած  
օրերու ցնորք մը, իր թունաւոր ու խելայեղիչ  
գերյանդգնութեամբ:

Ամեն գաղափար իր արտայայտիչը ունի մեր  
մոլորակին վրայ, սկսեալ ամենէն վսեմէն, մինչև  
ամենահրէշայինը: Գանկերը արգանդի կը նմանին.  
անոնք արտաքին աղղեցութիւններու հետ շփուե-  
լով ու անոնցմէ տպաւորուելով կը յղանան, կ'երկ-  
նեն, կը ծնին իրենց զաւակները, ճիշտ մայրերու  
նման, ու ամեն ծնող՝ դժբախտաբար գուրգու-  
րանքի մեծ բաժին մը, պաշտամունքի ծանր հարկ  
մը ունի վճարելիք իր զաւակին հանդէպ, թէ իսկ  
անիկա ըլլայ հրէշ մը, անճանաչ մտակոյտ մը, կամ  
անկենդան գիակ մը:

Մաքիւրէն Տը Լէսքուր, իր կարգին՝ արտայայ-  
տողը եղաւ վերոյիշեալ արքայապաշտ ձգտումնե-  
րուն, Ֆրանսայի մէջ, հրատարակելով՝ ժամանա-

կին, իր Panteon Revolutionaire Demoli գործը: Իբրև գաղափար ու իբրև գրական արտայայտութիւն իր կարեւորութիւնը ունէր Տը Լէսքուրի հեղինակութիւնը: Բայց երբ գաղափար մը, գրական արտադրութիւն մը չի համապատասխաներ ազգերու կեանքին, անոնց յառաջիմութիւնը բեզմնաւորող օրէնքներուն պահանջներուն և անոնց ընկերային իրականութիւններուն, դատապարտուած է իր խանձարուքի փաթաթին մէջ իսկ զգալու պատանքին ցրտութիւնը: Առանց վազուան՝ սակաւօրեայ կեանք մը պիտի ըլլայ անիկա: Այդ գիրքը հազիւ թէ քանի մը մարդերու մտքին քմայքը շոյեց, հազիւ, թէ անդա՛մ մըն ալ արքայական պարեգօտին ծիրանին ցոլացուց հանրութեան աչքին, իբրև արտասուող երկինքի մը վրայ կամարկտպած ծիածանը, ու ահա գաղտփարի ու ազատատենչ զգացումներու արեւին ամբողջական յայտնութիւնը՝ ծիրանին ու անոր հիւսուածքը թեզանող Տը Լէսքուրի գիրքը միանգամ ընդ միշտ ջնջեց Ֆրանսական մտաւորականութեան հորիզոնէն:

Տը Լէսքուր, իր գիրքով, ի միջի այլոց Ֆրանսական ժողովուրդին երեսին կը զարնէր յեզափոխական շարժումներու առթած աւերը, ու կ'սպասէր որ, ան զղջումի դար, սրջանք մը ցուցնէր իր գործած Յեղափոխական ոճիրին նկատմամբ, և ջանար Յեղափոխութեան ձեռքով Ֆրանսայի ճակատին քսուած մուրք ջնջելու: 1864, օգոստոս 14ին, Սէնթ Գէօվ, սրանեղած Տը Լէսքուրի անհարկի պահանջկոտութենէն, ու ապշած քարոզուած վարդապետութիւններու ապսիւրս հանգամանքէն, սպայէս կը պատասխանէր.

«Ֆրանսան գոչալիք բան մը չ'ունի, թե իսկ յանցանքներ աչ գործած ըլլայ. ժողովուրդ մը, որ

իր ճանքան կը փաշէ, եւ որ կը փաշէ իր ճակատագրին ուղղութեանը մէջ, չի զղար բնաւ: Պատմութեանն աւելի անողոք բան չ'կայ, եւ եթէ մարդիկ կուզեն որ պատմութիւնը ինչ մը գորով ունենայ, այդ բանը կարելի է ձեռք բերել միմիայն ինքզինքը պահելով մարդկութեան վեհանձն զգացումներուն մէջ»:

Աէնթ-Պէօլ, իբրև վերլուծող միտք, երբ կուսուժնասիրէր Ֆրանսական Յեղափոխութեան արատադրած ընկերական յեղաշրջումը, երբ ձերբազատուած միտքին թռիչքը կը դիտէր գաղափարի ու արուեստի զարգացման ոլորտին մէջ, կը մոռնար պահ մը, այդ շարժումին լծորդուած չարիքը, նշքայրասպան ոճիրը, պատնէշներու կոխը, և այն քանդուածի անաւոր գործը, որուն սահմակած հանդիսատեսը եղաւ Փարիզ, երկու Յեղափոխութիւններու տաժանագին օրերուն:

Աէնթ-Պէօլ, ինչպէս նաև բոլոր խորհող միտքերը՝ «Մարդկութեան վեհանձն զգացումներուն մէջ ծրարուած» ներողամիտ աչքով կը նային ժողովուրդներու և ազգերու գործած յանցանքին, բաւական է, որ այդ յանցապարտութիւնը գործուած ըլլայ իրենց ճակատագրի ուղղութեանը մէջ գնացքի պահուն, և այդ յանցանքը չի վնասէ այն յառաջիմութեան, որուն տենչանքը՝ մարակող ոյժի մը պէս կը շաչէ անոնց սկանչին: Յանցապարտութեան պահուն, չքմեղանքի պարագան ձեռք առնուած ուղղութենէն միայն կախումն ունի ուրեմնք Առանց այս պարագային, ոչ ոք յօժարութիւն պիտի ունենար ներողամիտ աչքով մը դիտելու աւերի և քանդուածի գործելակերպ մը, որ խոտոր կը համեմատի ժողովուրդի մը ճակատարուած ուղղութեանը հետ, և որ կոչումը չ'ունի

վաղուան համար գեղեցիկ գործ մը, փայլուն ապագայ մը, երջանիկ ընկերակցութիւն մը տարապրելու:



Առանց զբազելու այն Յեզափոխական գործունէութեամբ, որ մեր քաղաքական կուտակցութիւններուն մինիմումն թէ մաքսիմումն պրասֆօրմը կաղմեց դեռ երէկ, այսօր աչքի առջև ունինք ազգային վիճակ մը, որ իր մէջ կը ծրարէ սրջանիք ա՛յնքան անագորոյն գործելակերպեր, որոնցմով չ'հետաքրքրուիլ, զանոնք չի վերլուծել, և անոնց չարիքը չի մատնանչել պարզապէս գործակի՛ցը ըլլալ պիտի նշանակէր չարիքին ու չարութիւններուն, որոնք այսօր մեր ազգային կազմը խորտակելու առաքելութիւնովը կը բնորոշուին:

Յրանսա գղջաշու քան մը չ'ունեցաւ, նոյն իսկ իր յանցաւոր եղած միջոցին, որովհետեւ, անիկա ձեռնարկած էր իր ճակատագրին տրժանավայել մեծ յեղաշրջումի մը գործաւորը գառնալ, անանկ ժամանակ մը, երբ դարէ մը և աւելի ժամանակներէ ի վեր անսխիջօփեցիսքներու և Ժ. Ժ. Ռուսոներու ստեղծած իմաստասիրական շարժումովը խումորուած ժողովուրդ մը, իրապէս գիտակից իր վիճակին, իր կեանքին, իր խտէտլին, իր քաղաքական ու ընկերական ձգտումներուն, սկսած էր խորտիլ իր ծոցին մէջ: Բարոյական ու իմաստասիրական ծննդաբերութեան վայրկեանը հասած կ'զգար Յրանսա, ու իրապէս ալ իր Ազգը ծնաւ Վիժումի ու ապաժաման, կանխահաս ծնունդքի մը վախերը փարատած էին, մանուկը զոր կը ծնէր Յրանսա առողջ, հասունցած կազմաւորութեամբ մը կ'ողջունէր աիւրերը, ու այդ կազմաւորութիւնը կեր-

առւած էր Ֆրանսական ազգին սեփական ընդունակութիւններուն, առանձնայատուկ յատկութիւններուն համաձայն:

Մեր ազգային շրջանակին մէջ ստեղծուած, ու մանաւանդ բռնի սեղծել ուզուած կացութիւնը աններելի յանցանք մըն է. մանաւանդ անոր համար, որ ստեղծել ուզուած կացութիւնը չի համապատասխաներ ո՛չ մեր մաաւոր կազմաւորութեան, ո՛չ մեր զարգացումին, և ո՛չ ալ այն պահանջներուն, որոնք անընդմիջական արգիւնքն են մեր ապրած միջավայրին, ու մանաւանդ մեր ազգային առանձնայատուկ բարքերուն և գարաւոր սովորութիւններուն: Անոնք որ տեղերու, միջավայրի ու ժամանակի պահանջներուն հետ ըիրտ խզումով մը կուզեն ժողովուրդ մը պատուաստել այն տեսակ վարդապետութիւններով, և մանաւանդ այն տեսակ ղզիով մը, որ կարգաւորութիւնը կը խանդարէ, որ անհատներու սրտէն կը գողնայ հնազանգութեան ոգին, որ ազատութիւնը չփոխել կուտայ ասպետանութեան հետ, որ երէկի տղէտին մէջ՝ բուռն միջոցներով՝ զիտակիցի յաւակնութիւնը կը ներմուծէ, որ արհամարհանք կը սերմանէ կոյս հոգիներու խորը այն բոլոր սրբութիւններուն գէժ, որոնք ինչպէս երէկի, նոյնպէս վաղուան իր կեանքին ոյժը, մխիթարութիւնը, սփոփանքը, իր հոգին կենսաւորող քանասեղծութիւնը ըլլալ կոչուած էին, պարզապէս ստեղծած կ'ըլլան կացութիւն մը, որուն վրայ ներկայիս չ'ափոտտալ, ու վազը ստորակն չ'ունենալ անկարելի պիտի ըլլար: Գիշ մը պարտականութեան դիտակցութիւն՝ այսօրուան համար, ու քիչ մը կանխազգացում վաղուան համար, ու մանաւանդ քիչ մը վեհանձն ուղղամտութիւն, բաւական պիտի ըլլային մեզի և բոլոր ըն-

կերութիւններու համար տեսնելու այս ամենը, և վերադառնալու՝ ազնուական ժեսքով մը դէպի իրական ուղղութեան, իրական ազգաշինութեան ճամբան: Եւ ես վստահ եմ, թէ երբ ընկերական բոլոր շարքերու մէջ այս ոգիով նախադասուի մը-տածել ու գործել, այն միակ ու կենսականօրէն փափաքելին, որուն գործադրութիւնը մեր ընկե-րական վերածնութեան, մեր ազգին կազմաւորու-թեան անհրաժեշտ ու անմիջական պահանջն է, ըսել կուզեմ՝ համազգային համերաշխութիւնը, իրականութեան վերածուած պիտի ըլլայ ինքնին:

Չեմ կրնար երբեք երեւակայել ազգային կեանք մը, հիմնաւոր ու տեւական, որ ծնունդ առած ըլ-լայ անկարգապահութեան ոգիէն, բուն իսկ ազգա-յին ոգիին, ազգային պահանջներուն, ազգային կամքին դէմ ընդվզումէն: Անոնք որ մեր ազգային ոգիին ու կարգապահութեան գործաւորներն են, ու պիտի ըլլան հետզհետէ, թէ իսկ սխալներ ալ գործելու հարկին մէջ գտնուին, Սէնթ-Պէտրի մը մաքուր իմացականութիւնը՝ իբրև թարգմանը ցե-ղին պահանջներուն, և ժողովուրդի հողիին, պիտի ներէ այդ ակամայ սխալները, նկատի առնելով միայն նպատակին վեհութիւնը, և անոր յարամեր-ձութիւնը կամ աւելի ճիշդը՝ անոր ընտանութիւնը ցեղին ճակատագրին ուղղութեանը և անոր արդար ու միեւնոյն առեն անկաւոր, հնարաւոր ու կարեւ-րի պահանջներուն հետ: Ուր որ գործողին նպա-տակը, և անոր գործելու կերպը չ'համապատաս-խաներ ազգի մը հոգեբանական ընդունակութիւն-ներուն, ուր որ կուսակցական փրեքսիժը նախա-պատուութիւն կ'ստանայ ազգի մը ճակատագրին վրայ, ուր որ կուսակցական պետերու կեանքն ու գոյութիւնը աւելի նուիրական կը սեպուի քան

ազգի մը դարաւոր նուիրականութիւններն ու վաղւան կեանքին փափաքուած կատարելութիւնը, ո՛չ դործողը և ոչ տլ անոր գործելակերպը կրնայ բաւարար երաշխաւորութիւն մը տալ մեզի իրենց ընկերական յեղաշրջումի խիզախ. անկարգապահ ու ապերասան ռզղութեանը մասին:

Այսօր, առաւել քան երբեք այդ հասկացողութեան պէտքը կը շեշտուի: Ուշ չէ՛ դեռ ժամանակը. քանի որ դեռ անկարգապահութեան ու ապերասանութեան մակարդը բոլորովին չէ թունաւորած զոհաբերութիւններով երկնուած սա ժողովուրդին հոգին, քանի որ դեռ պարկեշտհոգիներու անազին թիւ մը կը պահէ մեր ազգը, իր ժողովրդական խոնարհ դասակարգին միջ, դեռ իբրև ազգապրելու, տեւելու, վաղուան մը հասնելու յոյսը չէ՛ կորսուած մեզի հումար: Սակայն, յոյսը ինքնին նշանակութիւն մը պիտի չ'ունենար, եթէ զանի իրականացնելու կամքը, զոհողութեան ոգին, ազատախոհութեան հոգին, ու մանաւանդ ընկերական կեանքին մէջ երեւան եկող, ու դժբախտաբար արհամարհելու ճիգով մը ժխտասէր մեր ընդվզումին մէջ, դիտնայինք սկզբունքը յարգել առանց սօփիայի. որովհետև, ուր որ սօփա՛ն կը խօսի, հոն բանականութիւն, ողջմտութիւն, պատիւ գործ չեն ունենար, հոն մարդկային անասնութիւնն է որ խլրտիլ կ'սկսի: Դէպի վայրենի ժամանակներու շարժուձեւերը քալող, ու բոնութեան միջոցները ողջմտութեան ու արդարութեան պահանջներէն գերադասող մարդիկ՝ կրնան քայքայումի գործաւորներ ըլլալ, բայց բնա՛ւ պիտի չ'կրնան համոզել ազգ մը. թէ անոր վերաշինութեան կ'աշխատին:

Մենք համոզուած ենք, թէ ուշ կամ կանուխ սրտջանքի ծանր հարկ մը ունինք վճարելիք պատ-

մութեան և ազգին, և այն բարի տղաքը, որոնք այսօր իրենց մանկական անգիտակցութեամբ գործիքները կը գտնան ազգային ընաղումի, ազգային քայքայումի ապերախա գործին, վաղը այդ աղաքը պիտի ելլեն պահանջեն, որ ազգային Դիկտատուրիւն մը ստեղծուի Ազգային Պատրիարքարանէն ներս, գիտատորութիւն մը, որ Ազգինն ըլլայ, և ո՛չ կուտակցութեան մը, միմիայն դէպք ուզողութիւն առաջնորդելու համար բոլոր անոնք, որոնք այլեւս ինքզինքնին այդ ուզողութեան, այդ բարութեան գիծէն դուրս նետած են, կարգ մը նեղմիտ հայացքներով սնած պետերու առաջնորդութեամբ, որոնք շոֆոմոքիփի մը գերը կը կատարեն պարասականութիւններով, զոհողութիւններով ծանրաբեռնուած անգիտակից-կռուաչարքերով — կառաչարքերուա— ոջեւէն:

Ասիկա ստրջանքի ու ապաշաւի զգացողութեան ամենաթունգ յայտնութիւնը պիտի ըլլար մեր մէջ:

Մենք պիտի չուզէինք սպասել այդ հանդիսաւոր բողէին: Որովհետեւ ամեն վայրկեան, որ այդ հանդիսաւոր բողէն պիտի յապաղէր, իրական չարիք մըն է մեր ազգին համար: Խնայենք այդ չարիքը արդէն իսկ տառապած ազգի մը, որուն երախտիքի ահագին պարտք մը ունինք վճարելիք, ու փոփաքինք, որ այդ ստրջանքը վայրկեան մը առաջ ծնէր հոգիէն բուն իսկ անոնց, որոնք իրենց սխալ առաջնորդողի յանցանքը ունին, և որոնք այդ յանցանքը պիտի կրնային քաւել միայն գիտակից ողջմտութեան և ազգայինութեան իրական ոգին որդեգրումով:

Ու այդ ԴԱՐՁը մենք ամենքս պիտի ծափահարէինք, նկատելով զանիկա իրծնց գործելակերպին մէջ միակը, որ նսւրբուած ըլլար Ազգին ու անոր ապագային:

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏՈՒԹԱՆ ՄԷՋ

Այդտե՛ս տե՛ստե՛ս այդտե՛ս էրնե՛ս  
այդտե՛ս էրնե՛ս էրնե՛ս էրնե՛ս  
այդտե՛ս էրնե՛ս  
Յակ. Ռ. 13

Ճաշարի է տեսնել, որ երբ մարդկութեան մտաւոր զարգացումը ա՛յնքան հսկայաքայլ կը յառաջդիմէ, բարոյական և հոգեկան զարգացումը, հազիւ կրիայի ոտքերով կը քալէ մեր մոլորակին վրայ: Ո՛չ մէկ դարու մէջ այդ տարբերութիւնը աչքի զարկած է այնքան, որքան մեր ժամանակները: Յակոբոս առաքեալ իր Ընդհանրական թուղթով (երկրորդ գլուխ), մեզի կը ներկայացնէ հին աշխարհի բարոյական և հոգեկան մէկ պատկերը, ուր մեզի ցոյց կուտայ, թէ մարդիկ ո՛րքան արամադիր են արտաքին երեւոյթներուն կարեւորութիւն տալու: Քրիստոնէութիւնը երբ գերիին ու ազատին, ծառային ու տիրոջ միջև եղած պատուարը քակեց և հոգեկան հաւասարութիւն մը վարդապետեց ամենուն համար, խորհեցաւ, թէ մարդիկ պիտի կրնան նոր թո՛ւչքով մը վեր բարձրանալ իրենց սողացող, ստորնաքարչ կեանքէն, իրենց օժանդակ ունենալով ազատութեան օրէնքը, այսինքն ազատ կամֆը, սէրն ու պատասխանատուութեան ոգին, որոնք մարդկային առողջ բարոյա-

կանը պիտի կազմէին: Առաքեալը իր օրերուն տե-  
ռաւ, թէ մարդկային միջուկը դեռ փոխուած չէ՛,  
թէ՛ մարդիկ աւելի կը պատուեն ճոխ հագուած  
մարդը, քան թէ ցնցոտիներով աղքատը. տեսաւ,  
թէ մարդիկ արտաքին երեւոյթներով կը զբաղին  
աւելի, քան հիմնական մեծութիւններով: Դեռ քա-  
նի մը օր առաջ միեւնոյնն էր նաև առաքեալնե-  
րուն վիճակը. անոնք գայթակղութեան պէս բան  
մը կը զգային իրենց հոգիին խորը, երբ Քրիստոսը  
կը տեսնէին՝ Յակոբի ջրորին գլուխը՝ Սամարացի  
կնոջ մը հետ առանձինն: Չենք զտրմանար առա-  
քեալներու վիճակին վրայ, անոնք, դեռ պէտք  
եղածին պէս ապուլուած չէին Քրիստոնէութիան մե-  
ծութենէն, անոնք դեռ ազատութեան օրէնքը ըմ-  
բռնելու հոգեկան կարողութիւնը չ'ունէին:

Հոգին, Վերնատան մէջ, զիրենք նորագեց բա-  
րոյական և հոգեկան մաքուր կեանքով մը, զանոնք  
օժեց իր կրակով ու ճառագայթով, և այդպէսով  
Վերնատունը ըրաւ ազատութեան, ու անոր օրէն-  
քին վառարանը: Այդ օրէն անոնք կրցան ըսել,  
թէ «Ազատութիւն կայ հոն, ուր Տիրոջը հոգին կայ»:  
Այդ օրէն Յակոբոս առաքեալ նորագարձ քրիստո-  
նեաներուն կրցաւ գրել. «Ա՛յնպէս խօսեցե՛ք, այն-  
պէս զործեցե՛ք. որպէս թէ ազատութեան օրհնութիւնը  
պիտի դատուի»:

Չեմ գիտեր, թէ ի՞նչ է պատճառը, որ երբ  
մէկ կողմէն մարդկութիւնը իր բոլոր ջանքը կը  
թափէ ազատութեան տիրանալ, միւս կողմէն կար-  
ծես ինքզինքը տրամադիր կը զգայ գերութեան  
կեանքը նախընտրելու: Ամերիկեան քաղաքային  
պատերազմի պատմութիւնը մեզի իրողութիւն մը  
ցոյց կուտայ, և այդ իրողութիւնը ամբողջ աշ-  
խարհի պատկերն է կարծես: Երբ 1860-65 թուա-

կաններուն Հիւսիսային Ամերիկեան ժողովուրդը պատերազմի սկսաւ հարաւի ժողովուրդներուն գէմ, գերիներուն ազատութիւն տալու համար, գտնուեցան գերիներ, որոնք հաճոյք չ'զգացին իրենց տըրուած ազատութենէն, և աչքերնին արցունքով լեցուն, դիմում ըրին իրենց երէկի տէրերուն, որպէս զի գերինք առաջուան պէս իբրև ստրուկ ընդունին: Անոնք, գերիները. կը կարծէին, թէ ազատութիւնը իր օրէնքը, իր պարտքերը չ'ունի, թէ մտահոգութիւններ պիտի չ'ունենան ընաւ ապրուստի համար. կը կարծէին. թէ առաջուան պէս ուտեստ ու հագուստ պատրաստ պիտի գտնեն: Բայց երբ տեսան, թէ ազատութեան մէջ ալ աշխատութիւն կայ, պարտք կայ, պատասխանատուութիւններ կան, սոսկացին: Կերութեան մէջ մեքենաներ էին անոնք, ու ազատութեան մէջ ՄԱՐԴ ըլլալէ վախցան: Մարդ ըլլալը ա՛յնքան զժուարին կ'երեւէր իրենց: Եւ, սակայն, անցան այդ սոսկումի, տարտամութեան, և դեղեւումի վայրկեանները, գերիները ազատութեան բարիքները սկսան վայելել հետզհետէ, և հիմա չեմ յուսար, թէ պիտի զրտնուի ուէ սեւամորթ մը, որ գերութիւնը նախադասէ իր ազատ մարդու կոչումին:

Ինչքա՛ն մարդեր կան, սակայն, քրիստոնեաներուն մէջ, նոյն իսկ մեր՝ Հայերուս մէջ, որոնք սեւամորթէ մը աւելի սև սրտով ինքզինքնին գերիացուցած են իրենց կիրքերուն, իրենց տգիտութիւններուն, նախապաշարումներուն, և հոգեկան ազնուութենէ, սիրտի բարձրութենէ զուրկ, կ'արին կեանք մը, որ ուղիղ չկրնար համեմատիլ ազատութեան օրէնքին: Անոնք արտաքին ցոյցերու, արտաքին երեւոյթներու միայն կարեւորութիւն կ'ընծայեն. կ'արհամարհեն նոյն իսկ անհատներու

հոգիի մեծութիւնը, և միտքի անօրինակ, նախա-  
պատմական տնտեսութեամբ մը չեն կրնար ուրիշ-  
ներու մէջ տեմնել ու ըմբռնել տմենամաքուր բա-  
րոյականը, և ատով իսկ պատճառ կը դառնան չա-  
րախօսութիւններու, անոտի և ունայն կասկածներ  
հիմ բռնելով: Ա՛հ, եթէ այգւորսիները գիտնային,  
թէ արտաքին երեւոյթներու վրայ դատաստան ըրած  
պահերնուն, իրենց հոգեկան գիմազիծերն են, որ  
կուտան այդ երեւոյթներուն, չեմ կարծեր, ոյ պի-  
տի յանդգնէին այգքան ստորնօրէն ինքզինքնին  
մերկապարանոց ընել:

Գրիստոնէական ազատութիւնը անպատասխա-  
նատու չէ. պարկեշտութեան և բարոյականի ազա-  
տութիւնն է անիկա: Եւ այդ ազատութեան կըր-  
նան տիրանալ միայն անոնք, որոնք Տիրոջը Հո-  
գիովը կ'ապրին: Այդ ազատութիւնը օրէնք մը ու-  
նի, տիրական ու յաւիտենական օրէնք մը, որ  
պարտաւորիչ է ամեն մարդու համար, պարկեշտ  
ու բարոյականի տէր մարդերու համար. Վրէ ուրի-  
շին, ինչ որ կուզես որ ուրիշը ֆեզի ընես: Առանց  
այս սկզբունքին ո՛չ ազատութիւն գոյութիւն ու-  
նի, և ոչ ալ մաքուր բարոյական: Եւ մարգիկ ա-  
զատութեան օրէնքովը պիտի գատուին իրենց կեան-  
քին մէջն ու վերջը. ինչպէս Յակոբոս առաքեալ  
կըռէ. «այնպէս խօսեցիք, եւ այնպէս գործեցեք, որ-  
պէս թէ ազատութեան օրէնքովը պիտի դատուիք»:

Ազատութեան այդ օրէնքը կը պարտագրէ ու-  
րել մեր ընկերը մեր անձին պէս, յարգել անոր  
պատիւը մեր պատիւին պէս, անոր ընտանեկան  
կեանքը մեր ընտանեկան կեանքին պէս: Երբ ամեն  
մարդ այս օրէնքով կը վարուի, և պարտաւոր է  
վարուելու, այն ատենն է, որ գոյութիւն առնուլ  
կ'սկսի ընկերական և ընտանեկան բարոյականը,

այն ասեանն է, որ մարդ իր ազատութեանը տիրացած կըլլայ: Մտածումներ, որոնք կը ռոտորնանան կասկածով վերաբերուելու ուրիշներու կեանքին եւ բարոյականին, ամենալպիւրշ յայտնութիւններն են ինկած, ու ազատութեան անարժան կեանքի մը, որ ազատութեան օրէնքովս պիտի գատուի:

Ազատութեան այս քրիստոնէական օրէնքը միեւնոյնն է ամեն տեղ. Հոովմի մէջ, Աթէնքի մէջ, Գահիրէի, թէ Երուսաղէմի մէջ, Լոնտոն, թէ Ամերիկայ: Մտածելու, խօսելու, դատելու, և վճռելու միջոցից այդ օրէնքին խորհուրդ հարցուր, և խորհուրդ հարցուր պատշապանութեանց եւ ո՛չ րե կիրքերուդ, կա՛մ տգիտութեանդ, կամ նախապաշարումներուդ: Եւ այնուհետեւ, եթէ կ'ուզես ազատ ըլլալ, բարոյականի ու պարկեշտութեան տէր գտնուալ, յարգել սորվէ ուրիշներուն անկախութիւնը, քըրիստոնէական ազատութեան ճամբուն մէջ, և պարկեշտութեամբ վարաբերուիր բոլոր այն բաներուն, որոնք քենէ գուրս ուրիշին կը պատկանին:

Քրիստոնէական ազատութեան ճամբուն մէջ շատ անգամ այնպէս կերեւի մեզի, ՚ի՛է մեր նպատակները կը հակասին մեր պիտիներուն: Սրինակի համար, կուզենք պրամ շտէիլ, և մեր այդ նպատակին հասնելու աշխատած ժամանակնիս, շատ անգամ մեր գէմը կը գանենք ուրիշներուն շահը, և այդ ուրիշներուն շահը յարգելու մեր պարտականութիւնը կը մոռնանք: Եթէ ուշադրութիւն ըրած ըլլայիք. պիտի տեսնէիք, թէ կեանքին մէջ վիճակ մը կայ, ուր նպատակն ու պէտքը միշտ համերաշխ քալած են իրարու հետ. — Անձին կատարելագործուիլ եւ ուրիշներուն երջանկութիւնը: Հոս ա՛լ չեղում չկայ: մեր պարտքն է և մեր նպատակը ինքզինքնիս կատարելագործել, և աշխատիլ մեր և ուրիշներուն

երջանկութեան: Մենք ո՛րքան ինքզինքնիս կատարե-  
լագործելու, ազնուացընելու ջանանք, ա՛յնքան  
մարդկութեան մէջ շատցուցած պիտի ըլլանք բարո-  
յականը, որ օրհնութիւնն է մեր կեանքին, այն-  
քան շատ երջանկութիւն արտադրած պիտի ըլլանք  
մեր և ուրիշներուն համար: Եւ ասիկա ազատ մար-  
դուն պարտականութիւնն է, որուն գործադրու-  
թիւնը պարտաւորիչ է ամեն մարդու:

Եթէ կուզես քու ազատ մարդու պարտակա-  
նութիւնդ կատարել, մէկ ճամբայ ունիս առջեւդ.  
Ինքզինքդ ուրիշին ճեղք դիր: Այն ատեն միայն պի-  
տի կրնաս լաւ դիտել, և պիտի զգուշանաս անի-  
րաւ մտածելէ, անիրաւ խօսելէ, անիրաւ գատե-  
լէ, ու վճռելէ: Ըստուած է, թէ «եթէ զնած ասեցի  
ինքզինքդ ծախող մը նկատես, եւ ծախած ասեցի զը-  
նող մը, վստահ եղիր, թէ առեւտուրդ աւելի հաւա-  
սարմութեամբ պիտի կատարես»: Ամեն պարագայի մէջ  
ալ մրեւնոյնն է: Դատել սորվինք արդարութեամբ  
և պարկեշտութեամբ. և գիտնանք թէ գատելէ ա-  
ռաջ մեր պարտականութիւնը, մեր ազատութեան  
չափն ու սահմանը պէտք է ճանչնանք: Որքան լու-  
սաւորենք ինքզինքնիս բարոյական առողջ մտա-  
ծումներով, ո՛րքան ազատ ըլլանք մտքի ու սրտի  
կաշկանգումներէ, փոքրոգութիւններէ, ցած ու-  
թիւններէ, այնքան լաւ պիտի ճանչնանք պարտա-  
կանութիւննիս, և մարդկային ընկերական-բարո-  
ական մակար-լակը բարձրացուցած պիտի ըլլանք:  
Այսպէսով է, որ սորված և գործադրած պիտի ըլ-  
լանք ատաքեալին պասուէրը, թէ «այնպէս խօսե-  
ցեք, եւ այնպէս գործեցեք, որպէս թէ ազատութեան  
օրէնքովը պիտի դասուիք»:



## ԿԵԱՆՔԻՆ ԱՂԲԻԻՐԸ

Ուրիշ մէկ բանի տեսլի տե-  
ւորութիւնը պահանջներն, որոնցով  
ուրիշ բանի տեսլի տե-  
ւորութիւնը պահանջներն:  
(Առակի. Գ. 33)

Մարդկային կեանքին արժէքը իր ցուցադրած արտաքին երեւոյթներէն, կամ յղացած գաղափարներէն ու օղային երազներէն չէ որ կը չափուի. այլ իր գործերէն, Այն օրէն՝ երբ Գրիստոնէտութեան աստուածային Վարդապետը յայտարարեց. թէ «Մառ մը իր պտուղէն կը նանչցուի», նոր ճշմարտութիւն մը յառաջ բերած չ'եղաւ, այլ անգամ մըն ալ հաստատած ու բանաձևւած՝ դարերէ ի վեր ապրուած մարդկային իմաստութիւնը, անանկ ժամանակ մը, եւր գործերը անտեսուի սկսած էին և մարդկային կեանքի արժէքը կապուած՝ արտաքին ցոյցերու և երեւոյթներու իմաստունը, որ կանուխէն ըմբռնած էր, թէ մարդկային գործերու ակը սրտին մէջ կը գտնուէր, իր Առակաց Գիրքին մէջ կը գրէր սա տողերը. «Ուրիշ անկէ բանէ անկի ինչ սիրտը պահպանէ, որովհետեւ անկէ ե որ կը բոխի կեանքին աղբիւրները»:

Ճամբորդներ իրենց ծարաւէն այրող պատկեր յագեցնելու համար իստակ շուրերը կը նախընտրեն

---

ՄԱՆՈՅ. — Խօսուած Ֆիլաստիֆիոյ Հայ Գաղութիւն:

ու կը փնտռեն. արհամարհանք մը կայ շարունակ պղտոր աղբիւրներու վերաբերմամբ. անոնց տեսքը տգեղ է. և պարունակութիւնը կասկածելի. թունաւորուելու երկիւղը պահ մը մեզի մոռցնել կուտայ մեր ծարաւը: Մարդկային բոլոր գործառնութիւններու մէջ, ընկերական կեանքի բոլոր յայտնութիւններուն, բոլոր փուլերուն մէջ պէտք է փրնտուի իստակ անկեղծութիւն մը, ուր մարդկային սրտէն պահանջուած վճիտն ու մաքրութիւնը ցուանայ: Այդ վիճիտ մաքրութիւնն է որ անսուտ երաշխաւորութիւնը պիտի ըլլայ նեւքին և արտաքին կեանքի զուգընթաց համերաշխութեանը մարդերու և ընկերութիւններու մէջ: Կեանքի մէջ մարդու բարոյական ծարաւն այ, անոր բարձրագոյն փափաքն այ այդպէսով կրնան յագեանալ: Անկեղծութիւնը ճշմարտութեան հիմն է, և արդարութեան սկզբնաւորութիւնը: Անո՛ր համար է, որ Աւետարանի բարոյականը, դարերու ընթացքին, ամենէն աւելի ձաղկեց կեղծիքն ու կեղծաւորութիւնը, սուտն ու ստախօսութիւնը, զրպարտիչն ու զրպարտութիւնը, և շեշտեց, թէ ամենէն մեծ և հաստատուն բարոյականը կը հիմնուի մաքուր սըրտերու վրայ, և չ'դադրեցաւ երանի կարգալ անոնց, «*Որք սուրբ են սրտիք*»:

Ճշմարիտ ու կատարեալ կեանքը ներդաշնակութիւնն է սկզբունքին և ապրելակերպին, կամ սըրտին և արտաքին վերաբերումներուն: Անոնք, որ տարբեր կրզգան ու կը խորհին իրենց օրատվ, ու տարբեր կ'ապրին իրենց արտաքին կեանքով, խորտակած կըլլան կեանքին ներդաշնակութիւնը, և անոր արժէքը ստորնացուցած: Անոնք բռնաբարոյներն են եղած սկզբունքին, թէ «*Ո՛չ կարե՛՛ք երկուց տեսնց ծառայել*»: Այդ կեանքը կանխամուտ-

ծուած կեղծաւորութեան յայտնութիւնն է, ուր արտաքինը կը հակասէ ներքին, բուն կեանքին, և կը պղտորէ կեանքին ակը, և տակաւ առ տակաւ անոր ցամաքեցումին կը տարուի: Եւ քանինե՛ր կան, որոնց անհատական կեանքի այս լպիրշ երկու- ութիւնը միայն խռովք, միայն նողկանք կը ցանէ մարգկութեան ծոցին մէջ:

Սրտի սրբութիւնը ամենէն աւելի վտանգի են- թարկուած մասն է մարդուն մէջ: Սիրտը կեանքի կռիւին համար կառուցուած բերդին ամենէն տկար կողմն է, և ամեն թշնամի անոր վրայ յարձակելու մասնաւոր փութկոտութիւնը ունի: Երբ պատերազ- մական յարձակման պահուն երկրի մը սիրտը, այ- սինքն մայրաքաղաքը գրաւուի յաղթանակով, երբ բանակի մը սիրտը, այսինքն կեդրոնը խորտակուի յարձակումով, յաղթութիւնը աւարտած կը համա- բուռի գրեթէ: Երբ մարդու մը սիրտը մէկ վայրկեան կամ մէկ ակնթարթ դազրի տրոփելէ, կեանքը խոր- տակուած կ'ըլլայ, և մահն է որ կը յաջորդէ կեան- քին: Միեւնոյնն է նաև մարդուս բարոյական կեանքին համար: Եթէ մարդուս սիրտը դազրի լա- ւագոյն բաղձանքներու, մարգասիրական զգացում- աներու, վեհանձն ազնուութիւններու, գերազանց ճշմարտութեան և աստուածային արդարութեան փափաքով տրոփելէ, և երբ հոն լաւագոյն բաղ- ձանքներու տեղ չար կիրքեր, մարգասիրական զգա- ցումներու տեղ՝ գձուձ ստորնութիւններ, գերա- զանց ճշմարտութեան տեղ՝ սուտեր, արգարու- թեան տեղ՝ անիրաւութիւններ, բարութեան տեղ չարութիւն և իստակ անկեղծութեան տեղ՝ կեղ- ծաւորութիւն բուսնին: Այս տեսակ վիճակ մը ցոյց պիտի տայ, թէ մենք պէտք եղած խնամքը չենք տարած մեր որտին, ու թողած ենք, որ թշնամին

յափշտակէ զայն. մէկ խօսքով ցոյց պիտի տայ, թէ մենք չենք հետեւած Իմաստունի խօսքին, որ կ'ըսէ. «Ուրիշ ամեն բանէ աւելի քաւսիրդ պահպանէ, որովհետեւ անկէ կը բղխին կեանքին աղբիւրները»:

Բարոյախօսի մը կողմէն իրաւամբ ըսուած է, թէ պահպանութեան շատ մը կերպեր կան աշխարհի մէջ: Ոստիկանը կամ պահապանը կը պահպանէ բանտին գուռները, որպէս զի բանտարկեալները չի փախչին: Սիրտը, սակայն բանտարկեալ մը չէ: Աւանդապահը իրեն յանձնուած աւանդը կը պահպանէ որ չ'վտանգուի: Մեր սիրտը, սակայն պարզ աւանդ մը չէ: Մարգ մը թանկագին առարկայ մը կը պահպանէ, որ չ'կորսուի կամ չ'վնասուի: Վերջապէս մէկը սրբավայրի մը պահպանութիւնը կ'ընէ, որպէս զի դուրսէն պիղծ մը չ'մտնէ ներս, և չ'ապականէ անոր սրբութիւնը: Բարեկամներս, սիրտը պահպանելու գործին մէջ մենք աւանդապահներ ենք, քանի որ սիրտը աւանդ մըն է Յիսուս-Քրիստոսի կողմէն նորոգուած աւազանի մաքրութիւնով ու մեզի վստահուած, մենք պահապան մըն ենք մեր սրտին, քանի որ ան թանկագին, գերընտիր մասն է մեր ամբողջութեանը մէջ. մեր կեանքն իսկ է: Մենք սրտին հանդէպ սրբավայրի պահապանն ենք, քանի որ մեր սիրտն է «Ս. Հոգիին տաճարը». և մենք պարտաւոր ենք հսկել, որ մեր սիրտը անեղծ մնայ, չ'գողցուի կիրքերէ, չ'պղծուի ատելութիւններէ և վատութիւններէ: Սիրտը մեր կեանքին աղբիւրը, մեր կեանքին լաւագոյն մասն է. սիրտը մե'նք ի'սկ եմք, մեր զգացումներով, մեր հաւատքով, մեր սիրով, մեր յոյսով, մեր գործերով: Եւ երբ կա'մ մեր տկարութեամբ կա'մ ապիկարութեամբ, կա'մ անհոգութեամբ, կա'մ տգիտութեամբ, կամ ատելութեամբ, կամ կոյր վստահութեամբ,

կամ ալեղ չարամտութեամբ մեր կեանքին ակը կը պղտորուի. ալ այնուհետև որքան ալ ջանանք ինքզինքնին լաւ ցոյց տալ կեղծաւորաբար, երբեք պիտի չը յաջողինք ազնիւ և պարկեշտ մարդերու վստահութիւնը գրաւել: Եթէ ստուգիւ, ինչպէս կը հաւատանք, ծառը իր պտուղէն կը ճանչցուի և մարդը իր գործերէն կը դատուի, պատճառը սա է, որ գործերը ամենապաշտարիմ վկաներն են մեր ներքին, բարոյական վիճակին, և կ'ապացուցանեն մարդուս բուն արժէքը: Մարդուս սիրտը մէկ պաշտօն ունի միայն, որ է աղբիւրը ըլլալ խաղաղութեան, սիրոյ, արդարութեան և ճշմարտութեան: Անոնք որ կ'ատեն արդարութիւնն ու ճշմարտութիւնը, խաղաղութիւնն ու սէրը, ապացոյցը տուած կ'ըլլան. թէ պղծուած է իրենց կեանքին սրբավայրը, իրենց անտարբերութեան, և ստութեան գործաւորի վատութեան շնորհիւ: Այնպիսիները պէտք է ուշաբերին, զգաստութեան գան. և յիշեն իմաստունէն խօսքը. «Ուրիշ արևն քանկ աւելչի ֆու սիրոց պահպանե, որովհետև անկե կը բրդխիսն կեանքին աղբիւրները»:

Սրտին սրբութիւնը ամենէն աւելի վստանդի ենթակայ ըլլալուն հետեւանքով, անոր պահպանութեան գործն ալ ամենէն դժուարիններէն մէկն է մարդկային կեանքին մէջ: Բանտապահ մը կրնայ քնանալ պահ մը, վստահելով բանտի պատերուն. պարիսպներուն, և երկաթ վարդակներուն, որոնք բաւական ամուր են բանտարկեալի մը փախուստը արդիւիւրու համար: Տաճարապահը կրնայ անհող նստիլ ամեն սեփակաղտեղութիւններու առջև, սրբաւայրին գուռն ու պատուհանները փակելով: Դժբախտաբար սիրտը ոչ պարիսպ ունի, ոչ պատ, ոչ վանդակ: Մեր զգայարանքները, և մեր յիղե-

րուն ամենէն նուրբ թելերն անգամ պողոտաներու պէս լայն բացուած ճամբաներ են, ուրկէ թշնամին կրնայ ներս թափանցել՝ ամեն մէկ անհոգութեան ըստէի, և ապականել անոր մաքրութիւնն ու սրբութիւնը: Այս պատճառով, ամենամեծ աչալիջութեամբ պէտք է հսկել սրտի ճամբաներուն վրայ, որպէս զի հոն չ'սպարտին կիրքերը, ատելութիւնները, ստութիւնները, զրպարտութիւնները, բամբասանքները, ունայն վրէժխնդրութիւնները: Սիրտը ընդունարան մըն է, որ չ'կրնար պարապ մնալ. եթէ սէրը անկէ հեռանայ, անոր տեղ ատելութիւնը կը բռնէ, եթէ հաւատքը փախչի՝ անհաւատ անտարբերութիւնը կը բազմի հոն, եթէ յոյսը պակասի յուսահատ լքումը կը յաջորդէ անոր, եթէ արդարութիւնը հեռանայ, անիրաւութիւնը, ճշմարտութեան տեղ՝ ստութիւնը կը գործէ հոն: Մի՛ թողուք, որ ձեր սիրտը ապականուի, պղտորուի կամ թունաւորուի: Մեծ խորհուրդներու, զգացումներու, ազնիւ գործերու ներշնչողը սիրտն է: Զայն պահեցէք իր կոչումին բարձրութեանը վրայ:

Քաղաքը ուր կը բնակիք մաքուր սիրտերու, ազնիւ տենչանքներուն դարաւոր ապացոյցն է. իր գոյութեամբն ու իր անունովը (Ֆիլադելփա-Նիքայր-սիրուքիւն): 1632ին Ուիլեմ ֆէն և իր ընկերները իրենց սրտի մեծութիւնն ու մաքրութիւնը պահպանելու քրիստոնէական նախանձայուզութեամբ, ներքին հալածանքներէ զզուած Ամերիկայի վայրենի ակերուն վրայ կուգային ազատ երկնքի մը տակ իրենց սրտին վրայ կարենալ հսկելու, և զայն պահպանելու համար: Անոնք հրաչքներ դործեցին միմիայն այդ սրտի մաքրութեան, իրենց հաւատքին և կրօնական համոզումներուն ուժով: Դուք ալ, բարեկամներս, փախստականներ էք հալածան-

քի ու ջարդի երկրէն. բայց որովհետև դուք ձեր որախի ու կրօնական համոզումի կեանքէն աւելի սիրեցիք ձեր անձնական հաճոյքները, անոր համար նոյն իսկ «եղբայրասիրութեան» քաղաքին ձեզի պարգեւած ազատութեանը մէջ չ'կրցիք տեղ մը, գիրք մը գրուել: Եթէ գիտցած ըլլայիք ձեզի տրուած ազատութիւնէն օգտուիլ, և աւելի լաւ պահպանութիւն ընել, եթէ դիտնայիք ձեր սրտին ու ձեզի տրուած ազատութեան իրական նշանակութիւնը, և զանոնք չ'յատկացնէիք դէպի վար, դէպի կորուստ, դէպի բարոյական քայքայում յառաջ գիծութիւններու, կը յուսամ, թէ ձեր պանդխտութիւնը պիտի կրնար ձեզի ընձեռել իրական մեծութիւններու հասնելու ամեն միջոց. ճշմարիտ ընկերականութեան ոգին, ինքնավստահութեան զգացումը, և ճշմարտութեան ու բարոյութեան, արդարութեան և իրաւունքի, սիրոյ և խաղաղութեան հոգին: Աշխատեցէք ունենալ զանոնք, աշխատեցէք քարի պտուղներով զարդարուիլ, մի անգամ ընդմիջտ համոզուելով թէ կեանքին ներգանակութիւնը, մեծութիւնը սրտի պահպանութենէն կախումն ունի: Աշխատեցէք այդ բանին համար, և երբ ձեր աշխատանքը զձեզ չ'կարողացնէ, աղօթեցէք, և ձեր աղօթքը՛ն ու արթնութեամբը հսկեցէք ձեր սրտերուն մաքրութեանը. «Որովհետև սնկի կը բղխին կեսնֆին աղբիւրները»:







պիտի ծնէր նոր Պայազատը, որուն գահի ոտքերուն տակ խոնարհէին պիտի Հոովմէական արծիւը, և բոլոր ազգերու ամբարտաւանութիւնները:

Ամեն անգամ երբ հրեայ մայրեր՝ իրենց ֆառուսներէն սրբութեան օրը նուիրագործելու համար, իրենց արգանդին ճատակը գրկած, նուիրումի զոյգ մը տատրակներուն հետ, դէպի սեղան կը մօտենային, Սիմէոն Մերունի, իր ազօտալոյս աչքերը կ'երկընցընէր դէպի հոն, տեսնելու համար, թէ դարերու նուիրաչործած յոյսի ու փրկութեան նշոյլը կը փայլէ՞ր մանկութեան անմեղունակ դէմքին վրայ: Քանի՞ քանի՞ անգամներ յուսահատութեան ու անձկութեան դառնութիւնը լացաւ Մերունին տաճարին մէկ անկիւնը կանգնած: Տաճարի վեհանոյշ խաղաղութեանը մէջէն աչքերը յառած դէպի դուռը, ուրկէ՛ս արքութեան պէտքէն մզուած մայրեր պիտի գային ծնրազրնելու Ենովաի խորաններուն առջև, ջղային տենդոտութեամբ մը կը գիտէր տողանցը մայրերուն, անոնց դիրկէն ճառագայթի մը ծագումը ողջունելու համար:

Սիմէոնի կեանքը դէպի վար կը կքէր. գերեզմանի բորբոսը կը զգար իր մարմնոյն վրայ. ու հաւատքով, յոյսով, տառապագին անձկութիւնով կենդանի սիրուն էր միայն, որ իբր նեցուկ կը ծառայէր իր թալթալած կեանքին:

Մարիամ տաճար կ'ելլէր, Սրբութեան օրէնքին հնթարկուելու համար: Մերունին ա՛լ յոգնած էր յուսալէն: Խորտակուած կեանքին ու յոյսերուն առէջքը հոգեկան ազդումով մը անգամ մըն ալ կը թեզանուէր իր մէջ ի տես Մարիամի զաւկին, որուն ծնունդքը Բեթղեհէմի Աստղը հովանաւորած էր:

Ի՞նչ հրաշափառ վերկենցաղում: Մերունին կը

խայտար, իր մէջ խլրախլը զգալով մարգարէութեան շունչին, որ երկար ատենէ ի վեր լսած էր բարձունքներէն խօսելէ: Ծերունին երիտասարդացած էր, մանուկէն ճառագայթող կենսունակութիւնը ոգեւորիչ թովք մը եղած էր իր մէջ, իր միամիտի պարզ, մանկունակ հաւատքէն հրահրուած: Անցած դարերու յազթանակները իբրև նոր իրականութիւններ, իբրև վաղուան զրուագները կը խօսէին հիմա իրեն: Այնքան մեծ էր ազդային գերի:խանութեան ատենչանքը այդ շնչասպառ մարդուն մէջ: Ալ ուրեմն հիմա կրնար գերեզման իջնել Իսրայէլի փրկիչը տեսած ըլլալուն հանդարտ խղճմտանքով:

Օրհնեա՛լ գոհունակութիւն... : Հոգեկան ի՞նչ վսեմութիւն, ծերունիին վրայ, որ մանուկը իր պիրկը առած էր իբրև նոր մարգարէ, որ Քորեբի կրակներն ունի իր մէջ, ու Սղիայի մը աստուածանախանձ վրէժխնդրութիւնը: Իր զողոզղուն ձեռքերուն վրայ՝ աշխարհի փրկութիւնն էր, որ կը խայտար: Իր գիրկը այդ պահուն երջանիկ արեւածագն էր եղած՝ Լոյսին, որ կեանքի հորիզոնէն վեր բարձրանալ սահմանուած էր, խանձարուրքը ազգային Փառքին, որ մանուկին մէջ կը քնանար: Փառատենջ ազգի մը լուսաշող ապագայի արշալոյսն էր գրկած ծերունին, որ ալ զինովցած իր միտաիկ յուզումներէն, իր հաւատաւորի ետանդնատենչութենէն, իբրև մարգարէ մը, կը մրմնջէ: «Ահա զոյս մը ազգերը շուսաւորեցու հասար, եւ անա Իսրայելի փառքը»:

Մայրեր, Սիմէոն Ծերունիի խօսքին մէջ դարաւոր ճշմարտութիւն մը կայ, որուն պէտք է ունկընդրեն աշխարհի մայրերը: Կեանքերը, որ կը ծնին տարբեր կոչում և նպատակ չ'ունին: Պէտք է որ կեանքը ԼՈՅՍԻ և ՓԱՌԻԻ յայտնութիւն մը

ըլլայ աշխարհի մէջ. Խաւար կեանք մը ամօթով շաղուած, կեանք ըլլալէ կը դադրի: Մարդկային արժանապատուութիւնը, և աստուածային մեծութիւնը լոյսով ու փառքով շինուած են: Ի՞նչ կարժեն, տիեզերական արեւները, եթէ մարդկային հոգին ներոյժ և համասփիւռ լոյս մը չըլլայ:

Եթէ վերլուծենք մարդկային ընկերական կեանքի բոլոր յոռութիւնները, բոլոր ամօթապարտ ընկրկումները, ատոնց ամենուն պատճառը պիտի գտնենք այն խաւարին մէջ, որ մեր սիրտերը, հոգիները, մեր գիտակցութիւնն ու միտքը կը վարագորէ: Ա՛հ, եթէ մայրեր գիտնային, թէ արգանդի ամեն պտուղ լոյսի հիւլէ մըն է, և փառքի մը մասնիկը, ա՛յնքան անտարբերութեամբ պիտի չ՝վերարբերուէին իրենց զաւակներուն հանդէպ:

Բարոյական կեանքին նպատակը կը կազմեն այդ ԼՈՅՄն ու ՓԱՌԻՔը: Ո՛վ որ չէ կրցած իր կեանքի միջոցին խաւարին անկիւն մը լուսաւորել, ով որ չէ կրցած կամ տառապանքի վարագոյրը պատռել, և խաւարին մէջ հեծողներուն լոյս մը ըլլալ, ապրած չէ, ու չկրնար ըլլալ: Նմանապէս ան, որ գերազայն նպատակներու հետամուտ, ազնիւ խոէալներով գինովցած փառքի մասնիկ մը չկրնար աւելցնել ազգային կամ մարդկային մեծագործութեանց գանձարանին վրայ. զրկուած է ապրած ըլլալու բարձրագոյն կոչումէն:

Ատելութեանց, կիրքերու, տգիտութեան խաւարներուն մէջէն քալող կեանքերը դիակներ են, անխօս ու անբարբառ, որոնցմէ ոչ երջանիկ ժպիտ մը կը ծնի, և ոչ ալ գոհունակութեան խինդ մը: Մեռնելէ առաջ, պարտուած, փոշիի վերածուած կեանքերն են անոնք: Մանկութիւնը լոյսի սահ-

մանուած պատրոյգն է: Դուրգուրացէք անոր վրայ,  
և իբրև այն մեծացուցէք զանի:



Աշխարհի մէջ ամեն կեանք լոյսի սահմանուած  
մասնիկ մըն է: Խաւարէն ըռւսնող տիեզերական  
բոլոր մարմինները լոյսի վառարաններ էին պար-  
զապէս: Սաղայն, ի՛նչ տաժանագին փոփոխու-  
թիւն . . : Տիեզերքի արեւներէ ոմանք իրենց լոյսը  
թաղեցին մոխիրներու տակ, ու մարդն ալ իր լոյ-  
սը թողեց՝ անկուճի ու բարոյական նաւարեկու-  
թեան խլեակներուն ներքև: Երկինքի լուսաւորները,  
յաւիտենականութեան եթերային դաշտին այդ  
ծաղիկները՝ խաւարի վրայ ցոլացած, իրենց  
ցոլացումը կորուսին մարդկային սրտերու մէջ: Եւ  
գեռ հիմա մարմիններ կան, օրինակ արեւն ու  
աստղերը, որոնք մայրերն են իրենց ցոլացուցած  
լոյսերուն, և մարմիններ ալ՝ ինչպէս մեր երկրա-  
գունտը, լուսինն ու մուրակները, որոնք ուրիշ-  
ներէն կ'որգեգրեն իրենց լոյսը, կարենալ փայլելու,  
կարենալ գեղազարգուելու համար:

Միեւնոյնն է նաև մարդը:

Մարգեր կան, ինչպէս Յիսուս, որոնք համակ  
լոյս են և ճառագայթ, և որոնց համար Յորդանա-  
նու եզերքէն մարգարէի մը ձայնը կրնայ ըսել.  
«Ահա լոյսն ծշնարիս», և մարդեր ալ կան, հասա-  
րակ մահկանացուներ, որոնք իրենց լոյսի ողորկներ  
ըլլալու կոչումը արդարացրնելու համար պէտք ու-  
նին անընդհատ հաղորդակցութեան մէջ գտնուե-  
լու ճշնարիս լոյսին հետ:

Բայց նոյն իսկ ճշմարիտ լոյսը չկրնար միեւ-  
նոյն ազդեցութիւնը ի գործ դնել ամեն մարմիննե-  
րու վրայ հաւասարապէս: Որովհետև իւրաքանչիւր

մարմին, իւրաքանչիւր մարդկային կեանք իր ընդունակութիւններուն, իր յարմարութիւններուն համաձայն կընդունի լոյսը. զայն կը ծծէ կամ կ'արտացոլայ: Օրինակի համար, մեր մոլորակի լոյսերուն մեծ վտարանին, արեւին, միեւնոյն լոյսը տարբեր ազդեցութիւն կընէ քարին վրայ, փայտին վրայ, աղիւսին վրայ, ծաղիկին ու ծառին վրայ, թիթեռնիկի մը թեւերուն վրայ, և տարբեր ազդեցութիւն, արծաթին, ոսկիին, պղինձին, ապակիին ու ադամանդին վրայ: Այս տարբերութեան պատճառը պէտք է փնտռել ատարկաներու յակութեանը և յարմարութեանը մէջ միայն:

Յիսուսով յայտնուած ճշմարիտ շոյսին ճառագայթն ալ միեւնոյն խորհուրդներով կը պէսպէսի մարդկային կեանքի զանազան յայտնութիւններուն վրայ: Կեանքեր կան աղիւսի, քարի նման, որոնք լոյսի մը ճառագայթները ծծելու, և անով սնանկու կարողութիւնը չ'ունին. կեանքեր կան ապակիի նման, թափանձիկ, որոնք լոյսը իւրացընելու յարմարութիւնը չ'ունին: Անդամանդն է միայն, որ իր յղկուած բազմութիւ հատուածներուն մէջ կը յուծէ ճառագայթը, և ինքն ալ իբր փոքրկացած արեւ մը, կը շողայ կը փայլի: Եւ իր փայլը, կը շողացընէ այնչափ ատեն, որչափ ատեն անիկա շփուածի մէջ կը գտնուի լոյսին հետ:

Սիրելի ժողովուրդ, — Սիմէոն Մերունիի խօսքը. — «Լոյս ի յայնուփիւն հեքանոսաց, եւ փառք Իսրայէլի» — դարերէ ի վեր անկիւնաքարը կըլլայ քրիստոնէական Տեառնդատաղի Տօնին, և հայկական Տերընդասին (Թեք հնչագ, — Նեսաձիգ), զոր գաւառներու մէջ կը տօնենք լոյսերով և բոցերով: Մարդկութեան լուսատօնն է անիկա:

Բայց ի՞նչ կ'արժեն արտաքին լոյսերն ու լու-

սավառութիւնները, երբ խաւարակուռ հոգին պէտք եղած ցուքը չ'ունի իր մէջ: Հոգիի լոյսերն են, որ կը տեւեն, մինչ ամին լոյս՝ որ անկէ դուրս կը փայլի՝ մոխիրներ միայն պիտի թողու իր ետին, . . .

Այս պահուն, երբ աչքս Երուսաղէմի տաճարէն կը դարձնեմ Հայ իրականութեան վրայ, իմ բիւրբիս թանձր խաւարի մը կը հանդիպին: Տգիտութիւնը, նախապաշարումը, նախանձն ու ատելութիւնը, կրօնքի ու եկեղեցիի հանդէպ անտարբերութիւնը, ընկերական ոճրագործութիւնները, յուսահատ ազգասպանութիւնը խաւարի գիշեր մը հիւսեցին մեր ազգային կեանքին շուրջ, անդհակամն և դժնէ գիշեր մը, որուն վարագուրած անդունդին վրայ աստղ մ'ալ չի փայլիր: Եւ այդ անիծապարտ խաւարին մէջ խեղճուած հոգիները գէթ ջանք մ'ալ չ'ունին, Կէօթէի պէս, պոռալու, ԼՈՅՍ, ԱԻԵԼԻ ԼՈՅՍ . . . :

Դարուն ձայնն է Կէօթէի այս վսեմ լուսերգութիւնը:

Եւ ծերունի մըն ալ չ'ունինք, որ մեզի ըսէր. «Լոյս ի յայնուօրին հերանուսաց, եւ փառք Իսրայելի»:

Այսօր մանաւանդ, լոյսի, աւելի լոյսի պէտք ունինք: Առաւել լոյսի պէտք ունին մեր սրտերը, անկէ փարատելու համար ատելութեան, նախանձի խաւարը, մեր հոգիները՝ անկէ ընկերական ոճիրներու մշուշները վանելու համար. մեր միտքերը՝ տգիտութեան գիշերները խափանելու համար, մեր խղճմտանքը՝ անկէ վատութեան և անսանձ վերաբերումներու աղտը մաքրելու համար: Եւ լոյսի այս տօնը յարմարագոյն ասիթն է, անդրադառնալու մեզ շրջապատող խաւարներուն, և անոնց վրայ ծագեցընելու Աշուրիս լոյսը:

Հայ մայրեր, ձերն է լուսածագին պարտականութիւնը: Դուք պէտք է այդ լոյսը ջամբէք ձեր կաթին հետ, ձեր արգանդի պտուղներուն. և շոյսի կեանքի մը հիմնարկէքը ընէք անոնց մէջ: Ամեն անգամ, երբ ձեր մայրական գլուխը կը հակի որսորդի մը վրայ, ուր մանուկը հրեշտակի քունը կը քնանայ, պէտք է ըմբռնէք, և հաւատաք, թէ մանուկին մէջ ատուած մըն է, որ կը քնանայ, արև մը՝ որ վազը իր հորիզոնն ու գինիթը պիտի ունենայ, իր արշալոյսն ու վերջալոյսը: Եւ այդ զօրաւոր և շինիչ հաւատքով հսկեցէք անոնց կեանքերուն վրայ: Եւ ձեր մայրական օրօրը երգեցէք, ըսելու համար անոնց, թէ իրենք պիտի ըլլան մարդկութեան լոյսը, և ազգին փառքը:



## ԿՐՆԱՆՔ ՎՍՏԱՀԻԼ ՔԵԶԻ

«Ի՞նչ էրևում է Ի՞նչ» (Մատ. Գ. 18)

Գայիլիացին նոր վար իջած էր փորձութեան լեռնէն:

Հոգեկան մաքառումը իր դէմքին վրայ դրոշմած էր արտայայտութիւն մը, որ հին օրերու մարգարէներուն խստամբերութիւնը կը յիշեցնէր, և Քորեթի լոյսերը: Անիկա սովորական մարդերէն չէր այլեւս: Անապատի առանձնութիւնը, և բարձունքներու ներշնչումը Յովսէփի որդւոյն մէջ շինած էին Աստուածորդին: Ներքին մարդը յաղթանակած էր մարմինին, գաղափարը նուիրագործուած էր Ուաչին տեսլերեւոյթով, որ հեռաւոր հորիզոնէն կը լուսազրուէր իր աչքին, իբրև գերադոյն զո՞հողութիւններու սահմանուած մարդկային տրիտուր:

Ճշմարտութեան ու արդարութեան յաղթանակը իրագործուած է անոնցմով, որոնք, յանուն մարդկային փրկութեան, կրցած են մահը գիմագրաւել երանաւէտ ժպիտ մը շրթներուն վրայ:

Այդ ժպիտը հեգնանքն է հանդէպ ըրրտ ուժին, և նուիրումի յօժարակամութեան վաւերագրողը:

Եւ տքնութենէ, հոգեկան մաքառումներէ, ճանկութուած իր նիհար դէմքին վրայ, այդ ժպիտը միայն կար, և սուր ու թափանցող նայումը աչքերուն, ուրկէ երկինքի ցասումն ու խաղաղութիւ-

նշ կը բուրէին կարգ ըստ կարգէ, երբ Յիսուս վար կ'իջնէր լեռնէն:

Իր մէջ թրծուած էր ալ պայքարի մարդը. արդարութեան հիւլէ մը միայն՝ համատարած անարդարութիւններու մէջ, պզտիկ նաւուզիդ մը (Pilote) վիթխարի նաւին վրայ, ու փոթորկայոյզ ծովին մէջ. թղուկ մը՝ տիտանի մը առջև. և սակայն այդ հիւլէն էր, որ յոյսի մը պէս պիտի խմորէր. մարդկային ղանգուածը Աստուծոյ թագաւորութիւնը հիմնելու համար:

Դեռ բարեկամներ չ'ունի աշխարհի մէջ. անոր հետ իր խզումը երկնուած է բարձունքին վրայ: Արդարութեան սկզբունքը տիրականօրէն ջլաւորուած է իր մէջ: Յովնաննէսի բանտարկութիւնը ընդվզումի ու պայքարի հրամայողական վայրկեանը փութացուցած էր: Պէտք չէր որ լռէր ապաշխարութեան, կշտամբանքի, արդարութեան քարոզը:

Կը քալէ Գալիլիոյ ծովուն հզերքը...

Փոթորիկ մը կայ իր ներսը, լռին ու խոռովակոծ փոթորիկ մը, գաղափարի ու սկզբունքի. փոթորիկ մը կայ դուրսը. ծովին մէջ, ալեկոծ ու մանչող: Եւ գեղջուկներ, որոնք իրենց ուռկանները կը կտրկատեն աւազեզրին վրայ, հազիւ ուշադրութիւն դարձնելով շշունչին, որով աւազը կը շայչէր անոր ոտներուն տակ:

Գալիլիացին կը նայի պարզունակ մարդերուն, թողլով որ իր նիհար ու խիզախ դէմքը հայելիանայ, բեկբեկի ծովի մանչիւններուն միջով: Կը խըղուի մարդկային լուութիւնը... Կոչ մը կ'ուղղուի Պետրոսին ու Անդրէասին. «իմ ետևես եկե՛ք», Փոթորիկը կը փոխադրուի անոնց հոգիներուն մէջ. ապագայ փառքի, յաղթանակներու հետապատկերը կ'ուրուագծուի գեղջուկ սրտերուն մէջ. և լռին

պաքար մը, հոգեկան ու բարոյական գօտեմարտը տարակուսանքի ու վստահութեան, կասկածի ու հաւատքի միջև, — «Կրնա՞նք վստահիլ ինչի», հետեւելու համար քու քայլերուդ: Հարցապնդումը կը կատարուի սրտի couliceներուն մէջ. հաւատքի ու վրստահութեան փայլակը կը շանթէ հոգիներու խորը. և ահա Պետրոս ու Անդրէաս կը քալեն Նազովրեցիին ետեւէն, . .

— Կրնա՞նք վստահիլ ինչի. . . :

Ահա մարդկութեան և ազգերու ճակատագիրը բախտորոշող հարցը, այս երեք բառերուն մէջ խրտացած:

Դարերէ ի վեր այդ միեւնոյն հարցումն է, որ կուղղուի, ուղղակի թէ անուղղակի կերպով, բոլոր անոնց, որոնք իբրև մարդ, իշխելու, հրամայելու, առաջնորդելու, տիրելու, ծառայելու, հնազանդելու, գործակցելու, մէկ խօսքով ապրելու կոչուած են: Ո՛չ մէկ կնճռոտութիւն գոյութիւն պիտի ունենար թերեւս, եթէ աշխարհի մէջ կատարեալ վստահութիւն մը կարելի ըլլար ստեղծել: Անհատական թէ հաւաքական շահերը, միացած անվստահութեան, մարդկութեան հիմերը կը փորեն: Եւ իւրաքանչիւր դասակարգի մարդ խորամանկ անվրստահութիւնով մը կը նայի ամեն մարդու, ամեն առաջարկի, ամեն սկզբունքի, ամեն կազմակերպութեան, ու նոյն իսկ ամեն պետութեան վրայ: Ա՛յնքան չարաչար գործածուած է մարդկային դիւրահաւանութիւնը. . . : Եւ հիմա տարամերժօրէն անվստահ հոգիներն են, որ կեանքի հանդիսաւոր մէկ պահուն, նուիրական սկզբունքներու առջև կանգնած, սկիպտիկի դաժան քմծիծաղով մը լռելիայն կը հարցընեն. — «Կրնա՞նք վստահիլ ինչի»: Որովհետեւ հաւատացեալ միտքերու շուրջ քաշուած

բառերու և ոսկեղօծ հատուածներու պարբոսներու  
ընդ վրայ տարակոյսի և անվստահութեան մոզէս-  
ները սկսած են սողոսկիլ:

Վստահութիւնը կեանքերուն հիմն է, և հիմն  
է մարդկային բոլոր գործառնութիւններուն: Եթէ  
աշխարհ ջանացած ըլլար մշակել իր զաւակներուն  
մէջ, վստահութեան այդ հոգին, այսօր զինուորա-  
կան պատրաստութեանց ծախսուած միլիոնաւոր ոս-  
կինքը գործածուած պիտի ըլլային դատախարա-  
կութեան, և մեղմացուածին այն վիշտերուն, որոնց-  
մով մարդկութեան մեծամասնութիւնը կը հեծէ:  
Եթէ ընտրելիներ չարաչար գործածած չ'ըլլային  
ընտրողներու վստահութեան քուէն, ընկերական  
չարիքը ստեղծուած պիտի չ'ըլլար աշխարհի մէջ:  
Եթէ կեղծ սնանկութիւններով չարաչար գործածած  
չ'ըլլային մարդիկ վաճառականական վստահութիւնը  
կամ ֆրէսին, այսօր առեւտրական կեանքը օրինա-  
ւոր գողութեան երեւոյթն զգեցած պիտի չ'ըլլար:  
Խաբէութեան, սուտի, վստահութեան չարաչար  
գործածութեան աստուածութիւնն է, որ կը դար-  
ժնուի գարերէ ի վեր, և խաղաղութեան միակ  
նուաճանգիստը, ապահովութեան միակ անկիւնն  
է մնացած անվստահութիւնը:

Բարոյակա՞ն սնանկութիւն մարդկութեան...:

Դարաւոր խտրականքէն յոգնած մարդկային  
միտքը, անդամալուծուած՝ իր հոգեկան յօրինուած-  
քին մէջ, երկու դասակարգի ծնունդ տուած է իր-  
մէն, այսինքն անոնց, որ կը վստահին անպայտան,  
և անոնց, որոնց հաւատքը, վստահութիւնն է մե-  
ռեր:

Անհատականութենէ զուրկ, գիտակցութեան  
ճումբուն մէջ դանդաղ ու երազկոտ մարդերու  
համար, անվստահութիւն չկայ. ամեն ձայն հրաւէր

մըն է. և ամեն կոչ պատուէր մը: Անոնց անդամալուծուած միտքը ինքզինքը անկարող կը զգայ նոյն իսկ հարցընելու իրենց խօսողին. — «Կրնա՞նք վստահիլք քզի»: Դիտակից ինքնիշխանութեան մը գաւաճան խնայումը կայ այդ մարգերուն մէջ իրենց անձին հանդէպ, որոնց համար առատպելները պատմութիւններ են, օգային խոստումները՝ կատարուած գործեր, ստութիւնը՝ ճշմարտութիւն, և խարդախութիւնը՝ ուղղամտութիւն, ճեկքը՝ խօսք: Այս տեսակ շրջանակներու մէջ զգուելի անկրակուելի մըն է, որ կը խաղցուի, գոհացում տալու համար քառակուսի գլուխներու ապուշ փառասիրութեանը: Քնացէք, բարեկամներս, ձեր անվերապահ դիւրահաւանութեան սնդուսէ բարձերուն վրայ, երբ ձեր վստահութիւնը շահագործողներ իրենց արիւննոտ աղուաները բացած խաբողներու օրօրը կ'երգեն ձեր սնարը: Օր մը պիտի բանաք աչքերնիդ, և ալ յոգնած ձեր միտքի մեռելութենէն, ու ձեզ խաբողներու դիտումնաւոր՝ գաւաճան խարդախութիւններէն, պիտի հարցընէք. — «Կրնա՞նք վստահիլք քզի», ու ձեր դիմաց խուսափուկ ստուերը միայն պիտի գանէք բոլոր անոնց, որոնք ձեզ խաբողներուն ունայնամտութեանը զոհեցիք:

— «Կրնա՞նք վստահիլք քզի»:

Դարերու հարցումն է, մեր հարցումն է ասիկա: Ալ չափազանց յոգնեցանք խաբուելէն, մեր վստահութիւնը չարաչար գործածուելէն: Իբրև մարդ ու քաղաքացի խաբուեցանք մեր իշխանութիւններէն. Օսմ. Պետութենէն ու Հոգեւոր իշխանութիւններէն, խաբուեցանք ընկերական շիշրներէն, կուսակցական թշնամիներէն ու բարեկամներէն, խաբուեցանք վաճառականէն ու օրագրողէն, դրացիէն ու ազգակիցէն, ու համատարած

անվտանգութեան մը, երկաթէ վերարկուին մէջ  
փաթթուած, իրաւունք ունինք հարցընելու—«կըր-  
նա՞նք վստահիլ ինչի» :

Եւ վտանգելու համար պայմաններու պէտք  
ունինք: Պայմաններու պէտք ունինք վտանգու-  
թիւնը զանազանելու համար կոյր դիւրահաւանու-  
թենէն: Մենք ա՛լ չենք վտահիբ, ու պէտք չէ՛  
վտահինք անոնց, որոնց մէջ անձնականութիւնն  
ու անհատական կիրքերը հանրային շահերու զոհե-  
լու առաքինութիւնը չը կայ. չենք կրնար վտա-  
հիլ անոնց, որոնք իրենց վտանգելու բաւականա-  
չափ ապացոյցներ չեն տուած իրենց կեանքին մէջ.  
անոնց՝ որոնք ճշմարտութիւն մը ճակատաբաց խո-  
սելու անկեղծ համարձակութիւնը չ՛ունին. անոնց՝  
որ դիմակ ունին կեանքի ու ընկերական զանազան  
պայմաններու մէջ. անոնց՝ որոնց նկարագիրը կաս-  
կածելի ՚ի թուի մեզի. անոնց՝ որոնց միտքն ու  
բարոյականութիւնը պէտք եղած թո՛ւչքը չունին.  
վերջապէս անոնց, որոնց կեանքը, սկզբունքն ու  
ծրագիրները պայծառ չեն. ու արդարացման հիմք  
չ՛ունին: Որովհետեւ ընկերական մեծագոյն ոճիրնե-  
րը գործուած են անկեղծութեան և սկզբունքի կեղծ  
անսունին տակ պահուըտող ազուէսութիւններու  
ձեռքով:

— «Կրնա՞նք վստահիլ ինչի»:

Այս հարցումը յառաջարանն է մեր լուրջ և  
իրական գործունէութեան:

Այս հարցումը նախաքայլն է դէպի ապահո-  
վութիւն տանող ճամբուն վրայ առնուած: Մեր  
չարժումի ու ինքնագիտակցութեան առաջին յայ-  
տարար նշանն է այդ հարցումը: Հեռանալով մեր  
գիւրահաւանութենէն, ջնջենք մեր շրթներուն վրայ  
փայլող սկեպտիկի սարդոնական ժպիտը, ու ազ-

գին սիրուն, Հայ Եկեղեցիի սիրուն, Հայ ընկերական, ընտանեկան, առեւտրական, ու նոյն իսկ կուսակցական ու վարչական կազմակերպութեանց օգտակարութեան սիրուն, լրջորէն մօտենանք մարդերուն, խնդիրներուն, ծրագիրներուն ու սկզբունքներուն, և անոնց հարցընենք. — «կրնա՞նք վստահիլ ինզի»:

Որովհետեւ մենք կեանքի պէտք ունինք, և կեանքը վստահութեան վրայ հիմնուած է:

Ու Դուք ո՞վ խաբեբաններ, ըլլաք թագաւոր թէ կաթողիկոս, վաճառական թէ գրագէտ, կրօնաւոր թէ ախարհական, շիջր թէ հետեւող, գործարանապետ թէ գործաւոր, քարոզիչ թէ բեմասաց, հրոսապետ թէ հերոսապետ, ամբոխավար թէ սովիայակիր, գիտցէք թէ «կրնաք խաբել բոլոր ժողովուրդը՝ ժամանակ մը. ժողովուրդէն մաս մը՝ ամեն ժամանակ, բայց չէ՛ք կրնաք ամբողջ ժողովուրդը խաբել ամեն ժամանակ»:





## ՀԱՅ ՃԳՆԱԺԱՄԸ

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Իբրև գիտնական գործիչ,  
ստի՛յ յափտնական լեզու-  
տեղի-ը ինչ է յարդարյն հոգիին  
ժեշտ

Գիտնական գործիչ ինչ լատի-  
րացուած հանճարի ազգայն ինչ յա-  
փտնական յազնանայ ինչ է:

Ե. ՇՈՒՐԷ

Այս տարի յունվար 16 ին Գոստոնի Լօրէնս  
Հօլի մէջ բանախօսութեանը միջոցին, Ռարբի Չարլս  
Ֆլայշէր ակնարկելով Հայերուս կրած քաղաքական  
տառապանքին և ենթարկուած բռնաբարութիւննե-  
րուն ու հալածանքին, կրտէր. «Դարերու ընթացքին  
Հրեայ ճառագանքին թաղաբնակը, Հայկական ճա-  
ռագանքը դրախտի նախանշակ մըն է միայն»:  
Երկու «ճառագանք» ժողովուրդներու ճակատագ-  
րական դարձած դժբախտութիւններուն այս բաղ-  
դատութիւնը, հմուտ Ռարբի մը կողմէն կատա-  
րուած, չ'մեղմացըներ բնաւ պատմութեան ընթաց-  
քին մէջ շարունակաբար ստեղծուած «ՀԱՅ ՃԼԳ-  
ՆԱԺԱՄԻՆ» արիւնաղանջ ահաւորութիւնը. բնաւ:  
Միայն ցոյց կուտայ. թէ Հրեան ա'լ աւելի տառա-

ՄԱՆՕԹ.— Խօսուած եզրիպոս, 1910ի Վարդանանց օտնին:

պած, ա՛լ աւելի հարստահարուած, ա՛լ աւելի բռնաբարուած է Եղբայրութեան և Սիրոյ Առաքեալին — Քրիստոսի աշակերտներուն ձեռքով: Յաւի ուտտապանքի արգանդէն ծնած մեր եղբայրակիցը — Ռաբրին, եթէ պահ մը պատենութիւնը ունեցած ըլլար սերտելու Հայ ճգնաժամին դարաւոր յաջորդականութիւնը, հայ ցաւէն հոսած արցունքներու աղին, հայ վէրքէն կաթող արիւնին բոսորը, վերջապէս հայ սրտէն խլուած հառաչանքը, վստահ եմ, ա՛ն պիտի համոզուէր թէ երկու տառապող ազգերուն վիզին պլլուած շղթան միեւնոյն երկաթէն շինուած էր, սա տարբերութեամբ միայն, որ Հրեան իր անդուլ աշխատութեամբ, իր յարատեւող ու գործնական հոգիին ուժով իր սարկութեան ժանգոտ շղթան սկսած է փոխանակել ոսկի շղթայով մը, որ իր ոյժը պիտի պարտադրէ իր դահիճներուն, իր բռնաւորներուն, և իր երբեմնի տէրերը ստրկութեան պիտի դատապարտէ: Պատրանքի ծաղիկներով հիւտուած երազի մը առջև չէ՛ որ կը գըտնուի Հրեան, մեր չարչարակից եղբայրը, այլ անհերքելի, անտեղիտալի իրականութեան մը առջև, որուն ստեղծողը ինքն իսկ եղաւ:

Թողունք սակայն, այդ բաղդատութիւնը, և դիտենք պահ մը մէկը այն ահաւոր ու միանգամայն հրաշափառ վայրկեաններէն, որ Հայ ճգնաժամին իսկութիւնը կը բնորոշէ. և իբրև խորհրդրդանչան կը ծառայէ Հայ ազգին ցաւերուն և աւնոր ալ փրկութեան:

Վարդան այդ վայրկեանին ծնունդն է, ու ստեղծողը միանգամայն:



Անհատնիրու ինչպէս ազգերու ճգնաժամերը

երկու բներեւոյթով կը ներկայանան մեր աչքին: կա՛մ այն է, որ որդի մը պէս յամբօրէն կը կրծեն մարդուն կենսունակութեան ջիղերը, կա՛մ այն է, որ շանթահարող ոյժի մը ներգործութեամբ յանկարծ ու արագօրէն կը բնաջնջեն կեանքերը: Երկու պարագային մէջալ, սակայն, յամբ, ու աստիճանական ճգնաժամ մը, կայ, մահ մը կայ, յորգումէն առաջ, երկար ատեն անտեսուած, ու անսողութեանէ վրիպած վատթարացում մը նկարագրի, բարոյականի, ոյժերու, որոնք յանկարծ երեւան կուգան ստեղծելու համար անխուսափելի վայրկեանը, զոր շահագործելու պատրաստ կը գտնուին միշտ Օտարներ:

Արշակունեաց Թագաւորութեան վերջալոյսը, տեղունած՝ նախարարական տուներու վատասեռած իրերամերժութենէն, չ'կրցաւ երբեք իր բիծերէն, իր ազգային աղտերէն մաքրուիլ ծերունազարդ Հայրապետի մը, Սահակին արցունքներով, Հայկական կեանքի մէջ արմատացած ատելութեան, անկարգապահութեան, կամ ըսենք նոյն իսկ մատնութեան հիւանդութիւնէն վարակուած էին մանաւանդ ժամանակին նախարարները, որոնք իրենց անձնական փառասիրութիւններուն գոհացում առլու համար, Պարսիկ Դրան քաղաքական հերթիկներուն ծախսեցին Հայոց Թագաւորութիւնը: Աղետաւոր, քստմնցնող պատգամի մը պէս դեռ ականջիս կը խօսին Արտաշէսի բառերը, Վոսմին առջև ամբաստանուած Թագաւորի մը բառերը, որոնք ապահովաբար Հայութեան ճակատը պահող Թագի մը գոհարները ըլլալու բնոյթը չ'ունին բնաւ: «Ձեռ գիտե, քե նախարարներն ի՛նչ գրպարտութիւններ կ'ընեն իմ մասին, բայց ինչպէս վարժուած եմ իրենց տերերը թշնամանել նմանապէս հիւսա աչ

կ'ուզեն իրենց կամփին շարութիւնը յազգեցնել: որովհետեւ անոնք միշտ իշխան փոխել սիրած են, և ասած իրենց տերերն: Մեր պատմիչներէն Ղազար Փարպեցին է, որ դժբախտ թագաւորին այս խօսքերը կ'աւանդէ մեզի:

Սահակ Պարթեւի համար Արտաշէս հիւանդ ոչխար մըն էր, իսկ Պարսիկը առողջ գայլ մը. և տիրադրոյթ Հայ նախարարութիւնը այդ գայլը դէպի մեր երկիրը, դէպի Հայաստան առաջնորդեց:

Արտաշէսի այսօրինակ գահազրկութիւնը՝ Հայ ճգնաժամին արիւնոտ արշալոյսը եղաւ: Հայ նախարարները Պարսիկ թագաւորէն իրենց մատնութեան նուէրներն առած երբ կը վերագոռնային Հայաստան, իրենց հետ բերին ազգային կործանումին սերմը, օտար իշխանութեան մը միջամտութիւնը մեր ազգային եկեղեցական գործերուն: Վեհ—Միհր—Շապուհ Վռամի ներկայացուցիչ—Մարգարանը կըլլայ 428ին:



Այդ օտար միջամտութեան վաղորդայնին երկու դէմքեր կը ցցուին մեր առջև, իբրև ներկայացուցիչներ, իբրև մարմնացուած դադափարի, զգացումի, քաղաքական ըմբռնողութեան երկու հակամարտ հոսանքներուն, որոնք գրէթէ երեք քառորդ դար երկիրը իրենց մէջ բաժնեցին, և արիւններով նախչեցին Հայ Ազգն ու Պատմութիւնը:

Այդ երկու դէմքերն եղան Վարդան ու Վասակ. որոնցմէ մին՝ Վարդան իր ցեղին նահատակութիւնն ու ազատութիւնը կը խորհրդանշէ, և միւսը՝ անձնապաշտութիւնն ու մինչև մատնութիւն բուրոյ խոհեմութիւնը:

Վասակ իշխանն էր Սիւնիաց, ուր Գրիստոնէութիւնը երկար ատեն անուանական գոյութիւն մը ունեցաւ, և ուր հեթանոսական բարքերն ու

սովորոյթները անոր հետ զոյգ քալեցին, Կորիւնի  
և Խորենացիի վկայութեան համեմատ: Վասակ իր  
ցեղին ու իր աշխարհին հարազատ զաւակն էր.  
կրօններու մէջ գոյութիւն ունեցող խտիրը շատ չէ՛ր  
հետաքրքրեր զինքը: Իր գերադանցօրէն փայփա-  
յած գաղափարն էր անձնապէս զօրանալ, բացառիկ  
դիրք մը գրաւել, իր կալուածները ընդարձակել.  
ու այդ նպատակին հասնելու համար միջոցներու  
ընտրութիւնը աւելորդ կը համարէր կարծես: Իրեն  
համար շատ դիւրին էր կրօնափոխ ըլլալ, եւր այդ  
կրօնափոխութիւնը կը նպաստէր իր փայփայեցողու-  
թեան գործումին: Արդէն իրմէ առաջ իր փեսան Վա-  
րագ-Վաղան ուրացած էր իր քրիստոնէութիւնը,  
աներոջը պաշտօնն ու իշխանութիւնը յափշտակելու  
նպատակով: Վասակ հակառակ թոյլ նկարագրի տէր  
մէկը ըլլալուն, խելացի էր, պաղափարի տէր, հսկ-  
ճատեղ ու յառաջիկաց ինչպէս կ'ըսէ Կորիւն: Խո-  
րենացիի վկայութեամբ, սակայն, ան իր խելքն ու  
միտքը կը գործածէ անիրաւութիւններու. նենգա-  
միտ մըն է նոյն իսկ իր ազգականներուն հանդէպ.  
Երկիրը կը հարստահարէ իր շահուն, և Պարսից լաւ  
երեւնալու համար:

Վարդան տարբեր դաշտի ծաղիկ մըն է: Մա-  
միկոնեանց տան նահապետական անձնութիւնը  
ունի, և Պահլաւներու քրիստոնէական ջերմեռան-  
դութիւնը: Մամիկոնեան արիւնը Պահլաւներու  
խնամութեամբը ազնուացած է իր մէջ: Մերունի  
Հայրապետը իր հոգին, իր տենչանքները, Հայու-  
թեան վերածնունդի իր տեսլականը ներշնչած էր  
իւր Արի թոռանը, Վարդանին, զոր իբրև ի՛ր զաւա-  
կը կրթեց. զանի խմորելով իր արցունքներովը,  
իւր ազգայնական իտէալին բովանդակ կենդանու-  
թիւնովն ու բեղնաւորութեամբը: Վարդանի մէջ

Հայութիւնը հաւաստի մըն է, ու քրիստոնէութիւնը՝  
ազգութիւն. կրօնքը վահան մըն է, ու ազգութիւ-  
նը նիզակ, և երկուքը իրարու մէջ լուծուած, իրար-  
մով ամբողջացած, կազմած են մեծ անբաժանելին,  
մեծ միութիւնը, որուն ամենէն կենդանի, ամենէն  
խիզախ և ամենէն գիտակից յայտնութիւնը կը դառ-  
նայ ինքը: Վարդան իր երիտասարդութեան ամենէն  
աշխոյժ տարիքին տխուր հանդիսատեսը եղաւ իր  
Հայրենիքին մէջ գործուած ցնցող բանադործու-  
թիւններուն: Մեսրոպի հետ դէպի Բիւզանդիոն իր  
ճամբորդութիւնը 42) ին սա համոզումը կազմել  
տուած էր իրեն, թէ Հայերը իրենց նզնաժամին ո՛չ  
մեկ յոյս պէտք է ին ունենայ յունակսն ֆրիստնեայ  
Կայսրութեան, որ վաստակացած հանգանակով մը  
կը ներկայանար իր այժիկ: Կայսրութիւնը զինքը  
պատուած է Ստասեղասի տիտղոսով մը, բայց աւա՛ղ  
այդ աստիճանը չ'կրցաւ հակազդել բնաւ հոգիի այն  
մեծ խռովքին, զոր Վարդան Բիւզանդական ար-  
քունիքի վատառողջ միջնորդութենէն ծծեց: Վարդան  
համոզուեցաւ, թէ Հայր առանձինն կը գտնուէր  
մահուան ու կեանքի առջեւ:



Կացութիւնը պէտք էր փրկել. պէտք էր որ  
կեանքը, ազգային հաւաքական կեանքը նորէն ու  
յաւիտենապէս ժպտէր Մասիսի ու Արարատի ժո-  
ղովուրդին, որուն վրայ արեւը արիւնոտ պատան-  
գի մը շէտ իջնել սկսած էր: Փրկութեան հոգը  
նախարարներէն չէր կրնար գալ. անոնք պատակ-  
տուած էին. շատերը՝ ծախուած Տիգրանի արքու-  
նիքին, ու զբաղած իրենց շահերովն ու հաճոյքնե-  
րովը: Թագաւորական թափուր գահը, վհատութեան  
ու լքու մի խորհրդանշանը եղած էր: Ազգային բը-

նաջնջումի գործը ծրագրային վիճակէն դուրս ելած, գործնականանալ կը սկսէր կեղեքումներով, իրաւունքի բռնաբարումներով: Քրիստոնեայ եկեղեցիներու մօտէն ատրուչաններու մուխը կը տեսնուէր: Մազզէականութեան և Քրիստոնէութեան գօտեմարտին շեփորը կը զարնուէր ամեն առտու:

Հայաստանի պահապան հրեշտակները, Սահակ և Մեսրոպ, ուժգնօրէն ցնցուեցան Հայկական ճրգնածամի անօրինակ եղեոնէն: Անոնց ձեռք փրկութեան խորան մը կը մնար — ՏԱՃԱՐ, ԵԿԵՂԵՑԻՆ, փրկութեան զէնք մը կը մնար. — ԿՐՕՆՔը, Քրիստոնէութիւնը: Պէտք էր բիւրապատկել, կենսունակել այդ ոյժք, զանի արդիւնագործելու համար: Այսօրը վաղուան զոհարերութիւններով յղի էր: Վա՛յ այն ազգին, որ չ'գիտեր զոհարերութիւն կեանքի վճռական վայրկեաններուն: Քրիստոնէութիւնը միայն իբրև գերազանց կրօն, զոհարերութեան ու մարտիրոսացումի, այդ ազգաշինութեան ոյժը ունէր: Կողոզթայի Խաչը անմահութեան ու յաղթանակի խորհրդանշանն էր եղած, աստուածային զէնքը տիտան պետութիւններու կորանքին ու պարտութեանը: Պէտք էր որ կրօնքը գործնականանար Հայ կեանքին մէջ, պէտք էր որ Հայ ազգին յատկանիշը կազմէր անիկա:

Այդ հրաշքը գործեց 404ին կատարուած գրի գիւտը, լուսափառ երեւոյթը, որ ազգային փրկութեան գործին լուսագոյն օժանդակը եղաւ: Հայ կրօնականրու ազգային պատմութեան երկու անզուգականները, Սահակ և Մեսրոպ, գրի գիւտով ու Հայ մատենագրութեամբ անմահացած, նոր լուսապսակով մը կը դրուազուին պատմութեան մէջ, երբ մանաւանդ ուշադրութեամբ կը հետեւինք Վարդանանց պատերազմի արդիւնքներուն: Մեսրո-

պով կատարելագործուած գիրը և Սահակով առաջ-  
նորդուած Հայ գրականութիւնը իսպաս գրուած  
ազգայնացած Գրիստոնէութեան, անընկճելի ոյժ մը  
բերած պատուաստած էին Հայ քաղաքական կեան-  
քին, որ հիմնովին խախտուած, անդամալուծուած  
էր Հայ թագաւորութեան անկումով: Հայ գրա-  
կանութեամբը ազգայնացած Գրիստոնէութեան խո-  
րէն, Հայախօս աստուած մը, մինչև այն ատեն  
անձանօթ, ազգային ինքնագոյութեան կենսական  
հարցին համար, զոհողութեան, նուիրումի, նահա-  
տակութեան կը հրաւիրէր ամենքը: Դարուն այդ  
մեծ յեղաշրջումը, որուն ազգեցութեան տակ հո-  
գիները գլորդած էին, Հայ ինքնութեան կորիզը  
կը շինէր Եկեղեցին, որ իր ազգայնացած հանգա-  
մանքով միեւնոյն ժամանակ կ'ըլլար Հայ ոյժին  
անցամաքելի աղբիւրը, Հայ բարբերու, սովորոյթ-  
ներու, կեանքին ու կենցաղին վերանորոգողը:  
Պարսկական հալածանքին հետ միաժամանակ կը  
ծնէր այդ ոյժը.



Մրցումը ահաւոր էր քանդող և շինող ուժե-  
րուն միջև: Առաջինը բիրտ ուժն էր, երկրորդը  
կամոզումին ոյժը: Եր'յուքն ալ կ'ընէր կ'սկսին,  
առանց կ'ընէր Այն ըլլալու, սակայն:

Առաջին ակնարկով վարդանանց պատերազմը  
կ'ընէր կամ կրօնական պատերազմ մը կը թուի  
ըլլալ: Չ'խաբուինք երեւոյթներէն: Յազկերտի ինչ-  
պէս վարդանի համար կրօնքի անունով մկրտուած  
այս պատերազմը քաղաքական է զուտ, և ազգա-  
յին ինքնավարութեան, ազգային ինքնագոյու-  
թեան հարցն է, որ անոր բուն նպատակը կը կազ-  
մէ: Յազկերտ իր նախորդներուն քաղաքականու-

Թեան հետեւելով, կը հաւատայ թէ Սասանեան հարստութիւնը զօրաղընելու միակ միջոցն է, ոյժ տալ պետական կրօնփին, Մազդէականութեան, թէ՛ ջնջելու համար հպատակ ժողովուրդներու սրտէն ազգայնականութեան զգացումը, պէտք էր ջնջել անոնց կրօնները, և մազդէականութեան մէջ ձուլելով զանոնք, բերել լծորդել իր գահուն և իր թագաւորութեան ճակատագրին: Վարդան կը տեսնէ Յազկերտի քաթիփը, Հայ Քրիստոնէութեան դէմ ուղղուած իր հարուածին մէջ, և կը զգայ թէ Յազկերտի ծրագրին դէմ ամենազօր ոյժը պիտի կազմէր հարուածուած կրօնքը, Հայ Քրիստոնէութիւնը: Երեւոյթ երեւոյթի, պատրուակ պատտուակի դէմ, կրօնական ամբողջութիւն մը ուրիշ կրօնական ամբողջութեան մը դէմ ցոյցել ազգայնականութեան պահպանումին համար. ահա ամբողջ գաղտնիքը Վարդանանց պատերազմին, որ միեւնոյն ժամանակ գաղտնիքն է Հայ Եկեղեցիի ինքնուրոյնութեան համար մեր թափած դարաւոր ջանքերուն: Կրօնքը միջոց մ'է միայն: Յազկերտի համար Սասանեան թագաւորութեան ոյժն ու յարատեւութիւնը, իսկ Վարդանի համար Հայ ազգութեան ինքնագոյութեան ապահովութիւնը միակ ու միակ նպատակներն են: Ամեն գործ իր նպատակովը կը բռնորոշուի. ահա այդ պատճառով մենք կը պնդենք, թէ Վարդանանց պատերազմը քաղաքական ու ազգային իրականութիւն մըն է, և հեռի է կրօնական իրողութիւն մը ըլլալէ: Անոր բազմաթիւ ապացոյցները պատմութիւնն է որ կուտայ մեզի: Յազկերտ իր նախորդներուն նման մեր կրօնքը հարուածելով կը սկսի: Դինչապուհ երբ իբր Մարզպան Հայաստան կուգայ, իր սուաջին գործը կըլլայ եկեղեցականները տուրփի ենթարկել: Այդ միջոցը, ա-

կայն, շատ անգոր կը մնար բուն նպատակի իրագործումին համար: Իր երկրորդ գործը կ'ըլլայ Հայերու ազգային դաստիարակները ջնջել: Ազգերու գոյութեանը սատարող ոյժ մըն ալ անոնց օճեցական կեանքէն կը բղխի: Դենշապուհ տյո ոյժին դէմ ալ կը յարձակի: Նախ տուրքերը կը ծանրացընէ անհասկնալիս կերպով, ու յետոյ քաղաքի սիւսեւերը գործադրել կուտայ: Դժբաժնա երկիր, որուն թըշնամիները զինքն հարուածած են միեւնոյն զէնքերով, միեւնոյն միջոցներով, Սասանեան հարստութենէն սկսեալ, մինչև Օսմանեան ամենավերջին թալանները: Երկի՛ր մը Զուլումի ու Զուլումի յաւտենական քաղաքականութեան վիճակուած:

Յազկերտին ինչպէս Վարդանին համար միջոցին ու նպատակին միջև կատարեալ նոյնութիւն մը ստեղծուած էր: Յազկերտ Քրիստոնէութիւնը կուզէ ջնջել Մազդէականութեան պարտադրութեամբ, ազգը ջնջելու համար: Վարդան Քրիստոնէութիւնը կը պաշտպանէ Ազգը փրկելու համար: Եւ երբ ազգային ճգնաժամի ահաւոր պահուն, Վարդան, յաղթանակներով ուռած իր սիրտը, և պատերազմներու մէջ ստացած վերքերով ու սպիւններով վահանուած իր կուրծքը ցցելով, դառնութիւնը իր սրտին, և նահատակութեան զինովութիւնը իր հոգիին խորը, կը կանգնի իր ուխտեալներուն առջև, հաւատքով սաղաւարտուած, և իբրև Սպարապետ կը յորդորէ զանոնք: Ճխշուքեան արիութեան մէջ վատութիւն չ'խառնել, և երբ հաւատաւոր ռազմիկներու աչքին կը ներկայացընէ զթըշնամանուած Քրիստոսը, ինք խաչուած Գալիլիացիին մէջ կը տեսնէ Հայ ազգին մարտիրոսացումը: Քրիստոս խորհրդապատկերը կ'ըլլայ Հայ Ազգութեան կամ ազգայնացած Քրիստոնէութեան չար-

չարանքին, զրկումին: Եթէ այս եղած չ'ըլլար իրողութիւնը, երբեք պիտի չ'կրնայինք բացատրել Վարդանին գործը շարունակող և անոր յաղթանակը կատարեալ ընող Վահան Մամիկոնեանի մէկ շարժումը: Վահան կը տեսնէ, թէ հակառակ Վարդանանց պատերազմին արդիւնքն եղող Պարսկական թոյլտուութիւններուն, դեռ կը բռնաբարուէին Հայ ազգային իրաւունքները, դեռ հոս ու հոն Ատրուշաններ կը մխային, և դեռ կը վարձատրուէին այն նախարարները, որոնք վատաբար կը ծառայէին Սասանեան հերթիկներուն: Եթէ Վարդաններու և Վահաններու մտածումը միայն իրենց հաւատքը կամ Քրիստոնէութիւնը փրկել ըլլար, ապահովաբար Վահան այ իր հօրեղբօր Վարդանի նման նահատակութիւն մը նախամեծար պիտի համարէր: Բայց ո՛չ, Փարսիցի մեզի կը պատմէ, թէ Վահան նոյն իսկ պահ մը մտածեց՝ «կարանայ ի հաւաս», այսինքն ուրանալ Քրիստոնէութիւնը, եթէ վստահ ըլլար, թէ ատով կարող պիտի ըլլար փրկել Հայութիւնը, և վերջ մը տալ Հայ ժգնաժամին: Վահանի մէջ եռուզեռ գաղափարի ու զգացումի ոգորումի պահուն, իր պապուն Սահակի ալեհեր ուրուականը Աշտիշատէն ծառացած, Օշականի անմահին՝ Մեսրոպի լուսապատկերը, և իր հօրեղբօր Վարդանի կարմիր ստուերը Աւարայրէն լուսափայլած, կարծես կը յանդիմանէին իր սխալ քաղաքականութիւնը, և հաւատքի տկարացումին յաջորդող ազգայնականութեան բնաջնջումին աղէտքը կը մատնանշէին: Վահան, որ իբրև ճշմարիտ հայրենասէր գիտէ՝ ազատ ու անկաշկանդ խորհողութեամբ մը ազգին քաղաքական պահանջները հաշտեցընել կրօնական ըմբռնումներուն, իր անձկութեան վայրկեաններուն վերջապէս սա եզ-

բակացութեան կը յանգի, թէ Եկեղեցին ՓԸՐ-  
ԿԵԼ, ԱԶԳԸ ՓՐԿԵԼ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ, Այս պայ-  
մաններու տակ ըմբռնուած Վարդանանց պա-  
տերազմը կեղեքումին դէմ ընդվզում մըն էր, և  
Սահակ-Մեսրոպեան ազգայնական ոգիին, անոնց  
հոգեխռով տքնութիւններուն, ազգանուէր բաղ-  
ձանքներուն գործնականացումը: Եւ երբ Վարդան,  
և իր անձնուէրներու խումբը կը զոհուի պատե-  
րազմի դաշտին վրայ կանգնուած մարտիրոսու-  
թեան սեղանին վրայ, իր անմահութեան հետ կ'ե-  
րաչխաւորէ նաև Հայութեան գոյութիւնը, և անոր  
տեւականութիւնը: Գողգոթային վրայ խաչուող  
Մարտիրոսը կը կրկնեւելոյթի, Արտազի դաշտին  
վրայ: Մեծ Մարտիրոսը մարդկութիւնը կը փրկէ,  
և Աւարայրի դիւցազնը՝ Հայութիւնը: Երկուքին  
ալ մահերը Յարութեան առաջնորդող լուս'րեւոյթ-  
ներ կըլլան Մարդկութեան և Հայ Ազգութեան  
համար:



Ժամանակը՝ տխուր ու բնաջնջող ժամանակը  
իր ցաւատանջ իրողութիւններով, իր զրկումի ու  
ըմբոստացումի, դահիճի ու մարտիրոսի, վատի ու  
քաջի իր գիրկընդխառնումներով կը վերապրի մեր  
մէջն ու շուրջը, շարունակութիւն տալու համար  
Հայ ճգնաժամին: Վարդանանց ժամանակին կըն-  
ճիւններն ու սարսափները նորէն մեզ կը շրջապա-  
տեն: Բայց աւա՛ղ, կարծես սպառած է Հայ կան-  
թեղին իւղը, և նիւթականացած մեր կեանքերը  
ինքզինքնին անկաշող կը զգան Հայ Գրիտառնէու-  
թեան ներշնչումները արդիւնագործելու: Պզտիկ  
բաղդատութիւն մը Ե-րդ դարուն և մեր օրերուն  
միջև: Յազկերտին քաղաքականութիւնը յատակ

արտայայտութիւնն է Հայ ճգնաժամին ծնունդ տուող բոլոր մեքենայութիւններուն: Յազկերտ հարկատու ազգերու թագաւորութիւններու ջնջումէն յետոյ, կը ջանայ խաբերայութեամբ և բռնի միջոցներով ջնջել հպատակ ժողովուրդներու սեփական սովորոյթները, ազգային ներքին կազմակերպութիւնները կամ ըսենք ազգային-կրօնական առանձնաշնորհումները, որպէս զի Մազդէականութեան պարոյրին մէջ միաձուլուին տիրող տարրին հետ, և օր մը չկրնան լիսակ իր թագաւորութեան ամբողջութեանը, որ իր քաղաքական կեդրոնացումը տկարութիւններու չ'ենթարկուի, կամ դժուարութիւններու չ'բաղխի, և միանգամ ընդ միշտ վերցուի՝ Պետութեան ծոցէն, կրօնական-ֆաղափային պզտիկ կազմակերպութիւններու վստահը: Իր նպատակին հասնելու համար Հայ կրօնիք կը հատուածի, ազգային դաստիարակները կը ջնջի, ջուրհերը կը ծանաւացնէ, երկիրը քաղցեղ կուսայ. նախարարներութիւր շատցնելով, անարժաններն ու վատերը կաշատելով եղբայր եղբօր դէմ կը զինէ, և ի հարկին պատերազմի ու ջարդի պատրուակներ կ'ըստեղծէ: Հայ ճգնաժամին ծնունդ տուող այս քաղաքականութիւնը շարունակուեցաւ դարերու ընդ մէջէն: Մազդէականութեան քայլերուն վրայէն իսլամութիւնը քայեց. իսլամութեան շաւիշէն Բիւզանդականութիւնը, և պահ մը Լատինականութիւնը քալեցին: մէկը իր մոգը զրկեց. միւսը իր մոլորան, մին իր ճեւրտօք զրկեց, միւսը իր փաթեւան, ու ամենքն ալ մեր հաւատքը սակարկեցին, մեր ազգութեան բնաջնջումին համար: Հայ ոգին խորարոպէս յուզուած Մազդէականութեան ձեռնարկած ձուլումի սկզբունքներէն, շարունակ անջատ պահեց վարդանանց արիւնով նուիրագործուած Հայ

Եկեղեցին, որ 451 թուականէն սկսեալ Հայու-  
թեան կուրծքին վահանն էր եղած, և Հայ ինք-  
նութեան, Հայ իրականութեան փրկագործումի  
խանձարուրքը:

Թողունք պահ մը պատմական անցեալը. մեր  
երեսուն տարուան ապրած կեանքին մէջն ալ միև-  
նոյն իրականութիւններն են, որ կը վերյայտնուին:  
Յազկերտի դիւանագիտութիւնը՝ իբրև արեւելեան  
վարդապետութիւն, խղճմտօրէն և անպատկառօրէն  
գործադրուած է մեր վերայ. Կրօնական իրաւասու-  
թիւններու սեղմում, Եկեղեցական սոսնձնաշնոր-  
հումներու կապում, անեսական փնտցում, ջարդ ու  
քաջան շարունակ գործադրուեցան մեր վրայ. անի-  
րաւութիւններու բոլոր դառնութիւնները խըմ-  
ցուցին մեզի պետութիւններու կեդրոնացումը  
ապահովելու համար անիրական վտանգներու դէմ:  
Համիտ երեսուն տարիներ ոճրագործներու այդ  
միեւնոյն արիւնոտ ճամբէն քայլեց. ու Օսմ. Սահմա-  
նադրութիւնը երջանկութեան գաւաթ մը չէր որ հը-  
րամցուց մեզի, այլ մեր եղբայրներուն, մեր քոյ-  
րերուն, մեր մայրերուն և հայրերուն փրփուր ա-  
րիւնը: Արեւելք աւանդապահ եղած է իր քաղա-  
քական գրութիւններուն, իր ոճրագործ միտումնե-  
րուն մէջ: Բան մը չ'մոռնար, նոր քսն մը չ'սոր-  
վիտ, իր գէշ ընդունակութիւնները կը տեւեն, ա-  
նոր համար որ լաւագոյն, մարդասէր, ու արդար քա-  
ղաքականութիւններու ընդունակութիւնը չ'ունի:

Ու հիմա որ մեր ազգային կեանքին մէջ կրօ-  
նական հասկացողութիւնը կը պակսի հետզհետէ,  
հիմա որ Հայութիւնը ուժացումով մը կը նայի Հա-  
յութեան դարաւոր գոյութիւնը ապահովող Հայ  
կրօնքին ու Հայ Եկեղեցիին, այլասերումի ահաւոր  
դրուագներ միայն կը ցուցադրենք: Այնպէս որ

Վարդանի օրերուն, Հայ փափկասուն տիկիներ, մոռցած իրենց մեծութեան ու փառքի պերճանքները, երբ, ըստ Եղիշէի վկայութեան, «Բոպիկ ու հեճոսս Եկեղեցիները կ'երթային, եւ առանց ձանձրանալու ուխտերով կը խնդրէին, որպէս զի այդ մեծ նեղութեան կարող ըլլան համբերել»։ ա՛հ, մեր քոյրերը հիմա գահիճներուն հետ կը պարեն, նա հատակներու արիւնը դեռ չ'չորցած... (\*):



Օր մը նշանաւոր բարոյախօս մը աշակերտներու խօսած պահուն, կըսէր «Անոնց կարգը, որոնց պիտի հեճելի մեր երախտագէտ մտածուելը միեւջել մահ եւ պիտի պատուէ զանոնք զերզմանիս մեջ, անոնց կարգը պիտի դասենք բոլոր շուրջոյն դասերուն նահասակները. գիտութեան, Հայրենասիրութեան, յսուաջիւնութեան, արդարութեան, ազատութեան եւ ճշմարտութեան նահասակները»։ Որովհետեւ «Քաղաքակրթութեան բոլոր գործերուն եւ երկրի վրայ մարդերու ձեռքով կատարուած աշխատութիւններու արդիւնքին մեջ մեռեալներուն բաժինը անհուն է եւ անսահման»։

Վարդան մեր ազգային կեանքին մէջ հայրենասիրութեան, արդարութեան, ազատութեան և ճշմարտութեան հուժկու արատայադու թիւնը, և անոնց յաղթանակին, անոնց տիրակալութեան անձնուէր նահատակն է։ Իր ոգին Հայութեան ոգին է, և իր գործն է Հայ ազգին վերստեղծումը։ Իր արիւնին զաւակներն ենք մենք, ինչո՞ւ չըլլանք նաև իր հոգիին զաւակները։ Սրբազան յիշատակ-

\*) Ակնարկութիւն Պոլսոյ այն պարահանդէսին, ուր Հայ Տիկիները պարեցին Ասանայի եղեռնը սարեղ բուրբ սպաներուն հետ։

ներու վառարանը եղած է Աւարայր, որուն վերեւն դարեր, ամբողջ յարեր, ալիւոր Մասիս հովանաւորեց զիւցազնութիւններու երկար շարքեր, որոնք ոսկի օղակներու պէս ապագայ Հայութիւնը պարապնդեցին զիւցազններու, հերոս-նահատակներու ոգիին, նշխարներուն հետ:

Չեմ գիտեր լսած էք բնաւ Յունական զիւցազնութեան օրերէն մնացած Քլէֆթներու կամ Արմաստղներու ժողովրդային երգերէն պատառիկներ: Անոնց մէջ ոգի մը կայ, որ ազգութեան նահատակներունն է, և որ բարձունքներէ կը ներշնչուի:

Այդ ժողովրդական պատառիկներէն հատ մը սապէս կ'երգէ անձնազոհութեան ոգին, և անոր ներշնչութիւն մեծ փոխանցականութիւնը.

«Երկու մեծ լեռներ, Ուրմպոս և ՔիսաՎոս, իբրև որև հետ կը վիճին. լուէ՛ կըսէ Ուրմպոս, ով թուրքերէն ստնակտուած ՔիսաՎոս... Ես ծերունի Ուրմպոսըն եմ... աշխարհ արարատ կը ճանչնայ իմ ձայնո. երեսուն կատարներ ունիմ գէպի երկինք ցցուած, և կողերուս վրայ վաթսուն աղբիւրներ. աղբիւրներուս վրայ մէյ մէկ գրոշներ, իւրաքանչիւր ծառի տակ մէկ մէկ ռազմիկներ: Բարձրագոյն կատարիս վրայ արծիւ մը իր մագիլին մէջ գլուխ մը կը սեղմէ Այդ գլուխը արծիւին կըսէ. կե՛ր թռչուն, ա՛յո, կեր իմ միսէս արիւնսո. իմ երիտասարդութենէս սննդաւորէ, և քու թեւերդ կանգուն մը պիտի երկարին, և քու ղոթով մագիլներդ թիզ մը: Ես Արմաստղ պատերազմիկ մըն եմ իմ անձունս.— թուրքերը պիտի ըսեն քեզի. իմ զէնքե՛րս— շատ լաւ տեսան անոնք... Այո, ես կեանքս ի բուն կռուեցայ. վերջապէս կարգը ինձի եկաւ, ու ես քաջի մը պէս ինկայ:»

Իր դարաւոր սուգին մէջէն Մասիս նոյն երերգն է որ կ'երգէ մեզի: Հայութիւնը, այդ Արծիւը, մինչև որ իր կտուցը չ'մխէ Աւարայրի արիւննե-

րուն մէջ, և անոնց տիտանեան հոգիովը չ'կենա-  
գործուի, իր գոյութեան պահպանումին համար ո՛չ  
թե պիտի ունենայ և ո՛չ ալ մագիլ: Եւ ազգը կը  
մեռնի, երբ ալ իր զաւակներուն մէջ դիւցազնու-  
թեան, արիութեան, և Հայրենիքին համար զո-  
հուելու՝ յօժար սիրտեր չգտնուին:

Մեր սրտերու այդ կենսունակող վերազարթ-  
նումին համար յարգենք հայրենանուէր անմահնե-  
րուն յիշատակը, և թող Վարդանի կեանքը մեր  
կեանքը, իր ոգին մեր ոգին, իր զգացումը մեր  
զգացումը ըլլայ, կարենալ ապրեցըննելու համար  
Հայն ու Հայաստանը:





## ՑԱԽԱԻՆԵԼԻ ՄԱՐԴԸ

Դար մ'առաջ Ուոշինկթըն կը դնէր անկիւնա-  
քարը Կապիտոլի մը, որ այն ատեն պզտիկ փայտա-  
կոյտ մ'ըն էր դեռ Փոթոմեքին մօտ: Այժմ մենք  
կը պարտաւորուինք յաւելուածական մեծ շէնքերով  
ընդարձակել զայն՝ կառավարութեան գործերուն  
բաւականացընելու համար: Կառավարատան շէնքը  
մեծցընելու այս պէտքը՝ միակ օրինակը և ապագոյցն  
է որ զոյգ կուտայ Ազգին մեծութեան չափը և Ազ-  
գային իշխանութեան գործունէութեան շրջանակը:

\*) Հոս բարգմանաբար կը դնենք Ամերիկայի Հանրապե-  
տութեան նշանաւոր Նախագահներէն Պ. Ք. Ռուզվելդի այս  
բանախոսութիւնը, որուն մասնաւոր հրատարակութիւնը խրնդ-  
րած էինք: Ահա թէ ի՛նչ կը պատասխանէ Պ. Ռուզվելդի քա-  
նուղարը:

26 Փետրուար, 1912

### ՍԻՐՆԼԻ ՏԷՐ ԻՄ

Մր. Ռուզվելդ յանձնարարեց ինձ շնորհակալու-  
թիւն յայտնել ձեր նամակին համար, եւ աւելցընել  
թէ՛ օտս հաճոյք կը պատճառէ իրեն արտօնել ձեզ  
բարգմանելու եւ հրատարակելու իր 1906 Ապրիլ  
14-ին, Նրեպոլիսանուրանի հիմնարկէֆին ըրած բանա-  
խօսութիւնը:

Հաւատարմօրէն Ձերդ

FRANK HARPER

Քարսուկար

Մենք այժմ կոչուած ենք կառավարելու գործերը Ազգի մը, որու ժողովուրդին այս արտասովոր մեծութիւնը, նոյն իսկ գերազանցուած կը գտնենք անոր հարստութեան մեծութեամբը և շահու աղբիւրներուն զանազանութեամբը:

Նիւթականի խնդիրը՝ որ առջևնիս ունինք այսօր, շատ տարբեր փուլի մը մէջ է, քան ինչ որ էր Ուռչինկիթընի ատենը. իսկ մարդկային բնութեան պարագան նոյնն է ինչ որ էր այն ատեն: Մենք կը կռուինք այսօր չարիքի այն շարժառիթներուն դէմ, որոնք թէև արտաքնապէս փոխուած կ'երեւին, բայց նոյնը կը մնան ներքնապէս, ինչպէս էին Ուռչինկիթընի ժամանակ, երբ միեւնոյն բարի շարժառիթներով կը մաքառուէր անոնց դէմ: Այս տեսակ խնդիրներու վրայ է, որ բանի մը բառեր կուզեմ խօսիլ Ձեզ:

Պուք կը յիշէք Պընիէնի «Քրիստոնեական Ճամբորդութիւն» կամ «Ուխտաւորի Յառաջընթացք» (Pilgrim's Progress) գիրքին Յախաւելի Մարդը (Muck-Rake), մարդ մը որ միշտ ու միայն դէպի վեր կը նայէր, ցախաւելը ձեռքը: Երկնային թագ մը կ'առաջարկուի իրեն փոխան իր ցախաւելին, սակայն անիկա չէր ուզեր ոչ վեր նայիլ և ոչ ալ կը փափաքէր թագին, այլ միայն կը շարունակէր աւելի գետնի ազտութիւնը:

Այս Յախաւելի Մարդը կը նմանի անոր, որուն տեսողութիւնը ուղղուած է միմիայն տեսանելիին, մարմնականին քան հոգեկանին: Այդ մարդը նմանապէս կը պատկերացընէ այն անձը, որ այս կեանքին մէջ շարունակ կը մերժէ տեսնելու բարձր բաները, և իր աչքը ամենայն ուշադրութեամբ կը դարձընէ նուաստ և անարգ բաներուն: Արդ, անհրաժշտ չէ որ մենք ընկրկինք տեսնելէ այն, ինչ որ վատ է ու ստոր: Յատակի վրայ կեղտ կայ

պէտք է որ ցախաւելով մաքրուի. և տեղ ու ժամանակ ալ կայ, որ այս ծառայութիւնն ամենէ աւելի անհրաժեշտ է: Բայց մարդը որ ուրիշ գործ չ'ընե՛ր, որ կը խորհի, կը խօսի կամ կը դրէ միշտ ցախաւելային պաշտօնով, իսկոյն չարիք ստեղծելու ոյժ մը կըլլայ, և ոչ թէ հասարակութեան օգտակար, կամ դէպի բարին մղումի ոյժ մը:

Քաղաքական, տնտեսական և ընկերային մարմիններուն մէջ շատ մը տխուր չարիքներ կան, և ստիպողական պէտք մը կայ ուժգին կռիւ մղելու անոնց դէմ: Բոլոր չարարարներուն զլխուն, ըլլան քաղաքականութեան, ըլլան առեւտրական ասպարէզի, կամ ընկերական կեանքի մէջ, պէտք է անողորմ մերկացում և հարուած իջեցընել: Իբրև բարերար մը կ'ողջունեմ գրողը, հրապարակախօսը և ամեն մարդ, որ բեմի վրայ կամ գիրքի, ամսաթերթի, օրագրի մէջ, անողորմ խստութեամբ այսպէս հարուածներ կ'ուտայ, պայմանով, որ ինքը յիշէ թէ այդ հարուածը բացարձակապէս ճշմարիտ է: Ստախօս մը գողէ մը աւելի աղէկ չէ. և եթէ իր ստախօսութեամբ զրպարտութեան կը հասնի, բոլոր գողերէն աւելի վատ է այնպիսին: Յածութեան ամենածայրայեղ աստիճանն է հարուածել ուղղամիտ մարդ մը, կամ ջղային չափազանցութեամբ ու սուտով հարուածել գէշ մարդն իսկ: Մէկու մը նկարագրին դէմ ժահրոտ ու աննկատ հարուած մը օգուտ մը յառաջ չի բերելէն զատ, մեծ վնաս կը հասցընէ: Ասին մի նուաստի հոգին հրճուանքով կը լեցուի, երբ ուղղամիտ մարդ մը հարուածուած է, կամ եթէ մինչև իսկ ստորին մարդ մը անիրաւաբար նոյն հարուածը կը կրէ:

Հիմա շատ դիւրին է խեղաթիւրել ինչ որ խօ-

սեցայ. շատ հեշտ է զայն սխալ հասկցընել, և եթէ կրկնութիւններով աղաւաղել ուզուի այն, դժուար ալ պիտի չ'ըլլայ անոր սխալ հասկցողութիւնը: Մարդիկ կան, որոնք անկեղծօրէն անընդունակ են հասկընալու, թէ ցեխարձակումը դատապարտելը՝ մաքրել չի նշանակեր, և թէ ցեխարձակողներուն ու մաքրուելու պէտք ունեցողներուն, երկուքին ալ գործին կուգայ քաջալերել այսօրինակ շփոթութիւն մը կամ սխալ հասկացողութիւն մը:

Գլխաւոր կէտն այն է անոնց դէմ, որոնք աննկատ ու յախո՛ւոն յարձակում մը կը գործեն հասարակաց պաշտօնեաներու և գործի մարդոց դէմ, յարձակում որ կարող է յետադիմութիւն յառաջացընել ի շահ այսպիսի անխիղճ սրիկաներու, որոնք իսկապէս պէտք է որ հարուածո ին, պէտք է որ մերկացուին, և եթէ հնարաւորութիւն կայ պատժուին:

Եթէ Արիստիտէս իբրև արդար շատ կը գովաբանուի, ժողովուրդը լսելէն կը ձանձրանայ: Անարդարին նկատմամբ չափազանց քննադատութիւնը վերջնապէս և միեւնոյն պատճառներով իրենց ինպատտ արդիւնք յառաջ կը բերէ:

Որ և է չափազանցութիւն, վստահօրէն, հակազդեցութիւն յառաջ կը բերէ. և դժբախտաբար, հակազդեցութիւնը, փոխանակ պատժելու ծայրայեղութեան յանցաւորները, շատ հաւանական է, որ կամ պատիժ ու պատուհաս դառնայ անուեղներուն և կամ մինչև իսկ ոյժ տայ յանցաւորներուն:

Մէկու մը նկարագիրը հարուածելով տնտեսական կամ քաղաքական շահ փնտոելը՝ հասարակային աղէտ կը ծնցընէ: Նկարագրի դէմ խոշոր ու կոպիտ յարձակումներ. ըլլան բեմի վրայէն կամ մամուլի մէջ, հիւանդոտ ու արտաւոր հասարակաց զգացում մը կ'ստեղծեն, և միեւնոյն ժամա-

նակ բնականոն (normal) զգացողութիւն ունեցող կարող մարդերուն հասարակաց ծառայութեան մէջ մտնելը կ'արգիլեն ամեն գնով: Ասոր իբր փաստ, կրնամ յիշել այն դժուարութիւնը, զոր ունինք չիտակ մարդ գտնելու Բանամայի ջրանցքը փորելու համար, որովհետեւ այդպիսի մէկը կը մատնանշուի թէ դուրսը և թէ, կը ցաւիմ ըսելու, Երեսփոխանական ժողովին մէջ, բացարձակապէս կոպիտ յարձակումներ գործուելով անոր նկարագրին ու կարողութեանը դէմ:

Իմ կոչը չէ որ հանգիստ թողուին, ընդհակառակն, պէտք է որ անխնայ մերկացուին այն դիւանագէտները, որոնք իրենց ծառայութեամբ կը վաճառուին այն մեծ դրամատէրներուն, որոնք ահագին հարստութիւն կը վաստկին կամ կը ծախսեն ապօրինի կամ խարդախ կերպով: Պէտք է որ վրձնական հետապնդում մը ըլլայ ատանկ մարդ մը հետաքննելու այն պաշտօնէն, զոր ինքը ոտնակոխ կ'ընէ: Մերկացուցէ՛ք ոճիրը, և երեւան բերէք ոճրագործը. բայց յիշեցէ՛ք, մինչև իսկ ոճրագործութեան պարագային, թէ եթէ յարձակում կը գործուի աղմկալից, մթին ու անուղիղ միջոցներով, այդ հարուածը կրնայ աւելի վնասներ գործել հասարակաց միտքին վրայ, քան գործուած ոճիրը: Որովհետեւ ես կ'զգամ, թէ պէտք է որ հանգիստ չ'առնուի անվերջ կոիւ մղելէ չար ոյժերու դէմ. ա՛յդ պատճառով իսկ, ես կ'առաջարկիմ որ պայքարը ղեկավարուի վճռականօրէն ու խելացիօրէն: Յախաւելի մարդիկ շատ անգամ անհրաժեշտ պէտք են ընկերութեան բարօրութեանը համար: Բայց միայն այն ժամանակ, երբ անոնք գիտնան թէ՛ ե՛րբ պէտք է դադրին աւլելէ, և նային զէպի վեր, զէպի իրենց լիբւ երկնային թաղին, արժա-

նաւոր ջանքի պատկին: Անոնց շուրջ և անոնց վերև գեղեցիկ բաներ կան. և եթէ աստիճանաբար անոնք գան այն հաւատքին, թէ ամբողջ աշխարհ աղբ է, այն ատեն անոնց օգտակար ըլլալու ոյժը կը մեռնի: Եթէ ամբողջ պատկերը սև նկարագրուած է, ո՛չ մի ուրիշ գոյն չ'մտար սրիկաները մարդկութենէն զանաղանելու համար: Այս տեսակ պատկերներ, վերջապէս, կ'առաջացընեն տեսակ մը բարոյական գունակութիւն, և այդ ազդեցութիւնը կրող ժողորուրդ մը այն եզրակացութեան կուգայ, թէ ո՛չ մի մարդ իրապէս սև է, և ո՛չ ալ ճերմակ, այլ ամենքն ալ մոխրագոյն: Ուրիշ խօսքով, ո՛չ կը հաւատան յարձակումին ճշմարտութեանը և ո՛չ ալ ուղղամտութեանը այն մարգուն, որ յարձակումի դոն է դարձեր. որչափ ամբաստանութեան նոյնչափ ամբաստանեալին վրայ կը կասկածին. այսպիսով յուսահատական կը դառնայ ցասում յատաջ բերելէ սխրագործութեան դէմ, ու ոգեւորութիւն ճշմարտութեան համար. և ասանկ մտայնութիւն մը հասարակութեան մէջ ոճրագործին յոյս կուտայ, և պատուաւոր մարդուն յուսահատութիւն կը պատճառէ:

Մեր առեւտրական և քաղաքական կեանքի չարիքներուն դէմ յարձակման այն կոշտ և ընդհանրական եղանակը, որով անկեղծ ու լաւ մարդիկ ալ կը դատապարտուին անխնայ, և ասանց բացառութեան, հանրային խղճմտանքին չորացումին կ'առաջնորդէ. անոր արդիւնքը կ'ըլլայ ընդհանուր միտում մը, կա՛մ ծաղրելի անհաւատարմութեան և անտարբերութեան հանրային փտութիւններու դէմ, և կա՛մ անվստահելի անընդունակութեան մը՝ զանազանելու համար բարին չարէն: Երկու պարագան

ալ անհաւատալիօրէն մնասակար է ամբողջ հայ-  
րենիքին:

Այն յիմարները՝ որոնք անկարող են զանազանել  
չարը բարիէն, կամ գէշը աղէկէն, գրեթէ հաւասա-  
րապէս վտանգաւոր են անոնց չափ, որոնք կարող  
են այդ գնահատումը ընել, սակայն գիտակցաբար  
չարը կընտրեն: Չկայ աւելի փղձկացուցիչ բան մը  
բարոր ճշմարիտ հայրենասէրներուն, բոլոր լաւ Ամե-  
րիկացիներուն համար, քան այն թանձրամիտ ու  
ծաղրող ոգիները, որոնք հանրային մարդոց խար-  
դախանքին առջև խնդալ միայն գիտեն. այդ տեսակ  
խնդուք մը աւելի վատ է, քան ամաններու տակ  
մնացած փուշերու կոխոտման ձայնը. որովհետեւ  
անիկա ոչ միայն միտքի պարապութիւն մը կը  
ցուցադրէ, այլ և սիրտ մը՝ որուն մէջ ամեն  
ազնիւ զգացում խեղդուած է պտղաբերումի սս-  
ածան հասուննալէ առաջ:

Այս աշխարհին մէջ բարին գոյութիւն ունի:  
Եւ ոչ մէկ ժամանակ այնքան բարձր ու այնքան ան-  
չահախնդիր ճիշտ շէր թափուած մարդկութեան վի-  
ճակը բարելաւելու, որքան հիմա: Դէպի չարիքը  
ձգտող ոյժերը մեծ են ու անարկու. բայց սիրոյ,  
արիւթեան, ուղղամտութեան, առատածեռու-  
թեան ու կարեկցութեան ոյժերը անցեալէն աւե-  
լի զօրաւոր են: Վախկոտ, խենդ, ու սինլքոր է  
այն, որ իր աչքերը կը գոցէ չ'տեսնելու չարիքին  
ոյժը. բայց աւելի վատ է այն, որ չ'կրնար տես-  
նել բարիին կարողութիւնը: Ջղային զգայնոտու-  
թիւնը ամենախեղճ գէնքն է տեւական առաքինու-  
թեան ինպատակաւ կռուելու համար: Այն մարդիկ,  
որոնք մամուլի միջոցով դաժան լրջութեամբ և ճշ-  
մարտութեամբ կը հարուածեն մեր ժամանակի շատ  
մը չարիքները, ղեկավարներն ու դաշնակիցներն

հն ընկերական ու քաղաքական վիճակը բարելաւելու աշխատողներուն: Բայց եթէ անոնք իրաւացի պատճառներ կուտան չ'հաւատալու իրենց ըսածին, եթէ անոնք կը սառեցընեն անոնց ետանդը, որոնք կը պահանջեն ճշմարտութիւնը որպէս առաքինութեան պսակ, այդպիսիները կը դաւաճանեն ազնիւ նպասակին, և գործիք կը դառնան այն մարդերուն ձեռք, որոնց դէմ իրենք առանձնապէս պատերազմի ելած են: Հուքրը Յպիսկոպոս, այդ էլիզապէթեան Աստուածաբանը, իր «Նկեղեցական կազմակերպութիւն» գործին մէջ կը գրէ. —

«Այն որ կերթայ հաւնոզել ժողովուրդ մը, որ պիտի եղածին պէս կառավարուած չի, միշտ ուշադիր և նպաստաւոր լսողներ պիտի ունենայ, փափաքող գիտնալու իւրաքանչիւր դասակարգի պակասութիւններն ու թերութիւնները: Եւ սակայն հանրային շարժումներու մէջ անթիւ և անխուսափելի եզող չ'կանխատեսուած դժուարութիւնները, հոն են, որ այդպիսի ունկնդիրները սովորական հասկացողութեան դատողութենէն զուրկ կը գրտնուին»

Այս ճշմարտութիւնը պէտք է աչքի առաջ ունենան բոլոր ազատ ժողովուրդները, որոնք կը փափաքին պահել խոհեմութիւնն ու կշիռը, որ այնքան անհրաժեշտ են մշտնջենական յաջողութեան համար՝ ինքնավարութեան մէջ. և սակայն նոյնչափ ալ զգոյշ ըլլալ պէտք է որ այս խոհեմութեան և ինքնավստահութեան ոգին իմաստակութեան մէջ չը փճանայ:

Որքան ալ գէշ ըլլայ hysteric զգացողականութիւնը, ինչպէս նաև յոռի՝ սասանակ զգացողութիւններու անխուսափելի արդիւնքը եզող անզուսպ կիրքերը, կամ աննպատակ շարժումները, բայց և

այնպէս չարիքի հանդէպ թանձրացած անտարբերութիւն մը շատ աւելի վատ է

Այս պահուս մեծ իրարանցումի մը, ընկերական, քաղաքական և առեւտրական պայքարի մը, մէջէն կ'անցնինք. ուստի մեր ազգին համար ամենակարեւոր բանն է ջանալ որ այս բոլոր իրարանցումը կեանքի դէմ ապստամբութիւն մը չ'ըլլայ, ոչ ալ կեանքի անխուսափելի տնհաւասարութիւններուն դէմ բողոք մը միայն, այլ հաստատամիտ ու վրձնական տենչանքի մը իրականացումը, ձեռք բերելու համար անհատի ու ազգի բարելաւումը: Որչափ ատեն այս տակնուվրայութիւնը կը ներկայանայ իբրև հանրային դժգոհութիւն մը հանդէպ չարիքին, և հաստատ որոշում մը՝ պատժելու համար չարիքին հեղինակները, ըլլան անոնք առեւտրական կամ քաղաքական, հայրենիքի ամբողջ տարածութեան վրայ, անիկա սրտովին դիմաւորելի բան մըն է իբրև նշան առողջ կեանքի մը:

Բայց, ընդհակառակն. եթէ այն կը դառնայ անորոժակներու կոիւ մը, անգութ պայքար մը ունեւորի և չ'ունեւորի մէջտեղ, այն ատեն ոչ միայն բարիք մը պիտի չ'արդիւնաւորէ, այլ չարիք մը պիտի ըլլայ:

Եթէ ան ճգնի հաստատել բաժանումի գիծը, ոչ թէ բարի մարդուն և չար մարդուն միջև, այլ միւս գիծը՝ որ կ'երկնայ ուղղանկիւն, զատելով աւելի ունեւորը նուազ ունեւորէն, այն ատեն պիտի ըլլայ սպառնալիք մը՝ իր անհաշուելի վնասներովը, քաղաքական կեանքին հանդէպ:

Մենք ոչ նուազ և ոչ աւելի կարող ենք ներող ըլլալ դրամատէրի չարիքներուն. քան դրամ չ'ունեցողի չարիքներուն: Հարուստ մը որ կ'ուրախանայ երբ արդարութիւնը չ'յաջողիր փրօւքսպակտ մը

պատժելու իր ճիգերուն մէջ, անոր չարագործութիւններուն համար. այնքան գէշ է, և ոչ աւելի, քան աշխատաւոր դասակարգի պետ մը, որ համակրանք կը ջանայ ստեղծել հանդէպ ուրիշ գործաւորապետի մը, որ մարդասպանութեան գործակցած է՝ Մէն մի դիրք այնքան վատ է, որքան միւսը. ոչ աւելի և ոչ պակաս. իւրաքանչիւրին մէջ ամբաստանելի իրաւունքն է ճշգրիտ արդարութիւնը. և երկու պարագային ալ ուրիշները միջամտելու անիրաւ են. որովհետև անիկայ ոճիրի հանդէպ համակրութեան ցոյց մը պիտի ըլլայ միայն:

Առաջնակարգ անհրաժեշտութիւն մըն է որ յուզումը գործքի վերածուի, եթէ կ'ուզուի որ ներկայ իրարանցումը մշտնջենական բարիքի արտայայտութեան յանպի, և այդ գործը պէտք է կրէ դրոշմը ուզվածութեան, լրջմտութեան և անձնազոհութեան, որովհետև շատ քիչ բարիք առաջ կազմայ բարեփոխումի ստնգանքէն (spasm): Իրական բարեկարգութիւնը ձեռք կը բերուի հաստատ և շարունակական զարգացումով: Տենդոս զգացողականութիւնը ուժի սպատումին կառաջնորդէ մեզ:

Սա ժողովուրդին համար կարեւոր է զբաղիլ այն բոլոր հարցերով, որոնք առնչութիւն ունին հսկայ դրամադրվումներուն, և այս գիզումներու գործածութեան հետ, ըլլայ այն անհատական կամ հաւաքական. մենք պարտինք ճշգրտօրէն զանազանել լաւ եզանակով գիզուած հարստութիւնները գէշ ազդակներով հաւաքուածներէն: Հանրային սեծ ծառայութեան մը պարագային շահուած հարստութիւնները այն միւս տեսակ հարստութիւններէն, որոնք գիզուած են չար միջոցներով օրեկնի անկեղծութեան (հիքլէի շերի) սահմաններուն կրթնած, տարակոյս չկայ, թէ այդ վերջին հարստութիւն.

ներէն որքան մէկ մաս մըն ալ յատկացուած ըլլալ բարենպաստակ ձեռնարկներու, այդ հարստութիւնը դիզած ատեն կատարուած ոճիրը չի պիտի արդարացնէ: Առանց ունէ մանրակրկիտ ծրարիր մը ներկայացընելու յաւակնութեան, իմ անձնական հոմոգումս եղած է, թէ ուշ կամ կանուխ՝ վերջապէս պիտի պարտաւորուինք հաստատել յոռատուական տուրք մը բոլոր հարստութիւններու վրայ, այնպէս որ մասնաւոր քանակէ մը զատ՝ որ կը փոխանցուի իր կենդանութեան կամ մահէն վերջ, տուրքը անանկ կարգադրուի, որ անհատի կամքէն ու կարողութենէն վեր ըլլայ այս վիթխարի հարստութիւնները փոխանցել ունէ անհատի վրայ, տուրք մը՝ որ ի հարկէ դրուած պիտի ըլլայ Ազգային և ոչ թէ Նահանգային Կառավարութենէն: Տուրք մը որուն նպատակը ըլլայ անկարելի դարձընել ժառանգով կամ այլ կերպ փոխանցումը ահադին ու անարդարանալի հարստութեան մը,

Բաց աստի, Ազգ. Կառավարութիւնը աեսակ մը վերհսկողութիւն պէտք է ստանձնէ միջնահանգային առեւտուրին վրայ. որովհետեւ բոլոր մեծ առեւտուրները միջնահանգային եղած են, ըլլան արտօնութեամբ ըլլան այլ կերպ. ասանկով է որ պիտի կարենանք ունէ ազդեցութիւն բանեցընել և ծայրայեղ դրամատիրութեան շարիքներուն դէմ մաքառիլ:

Այս տարի սկիզբ մը դրինք այս ուղղութեամբ, երկաթուղային սակացոյց մը քուէարկելով, և այդ օրէնքին կրթնած՝ պիտի յաջողինք որոշ և դրական արդիւնքի մը յանգիլ, որ ինքնին կարեւոր քայլ մըն է այն ուղղութեամբ, որով կարելի պիտի ըլլայ վերհսկողութիւն և ֆոնդոյ միջնահանգային առեւտուրին արդիւնք հսկայադէզ հարստու-

Թիւններու վրայ: Ասանկ վերհակողութիւն և  
ֆոնդրոյ մը պիտի չ'ունենայ ու է. չար դիտաւո-  
րութիւն մը հանդէպ այս վիթխարի հարստութիւն-  
ներու ստեղծիչներուն, այլ հաստատ նպատակը՝  
թէ՛ արդարութիւն ընելու անոնց և թէ՛ հսկելու, որ  
անոնք ալ իրենց կարգին արդարութիւն ընեն ժո-  
ղովուրդին:

Առաջին բանը որ կը պահանջուի այս գործին  
հսկող հանրային պաշտօնեաներէն՝ իրրև օրէնսդիրներ  
կամ գործադիր իշխանութիւն, ուղղամտութիւն  
է, ուղղամտութիւն մը՝ որ անձնաւորութիւն  
չի ճանչնար: Միակողմանի ուղղամտութիւնը ան-  
կարելիութիւն մ'է: Իրական վտանգը փտած ընկե-  
րակցութիւններէ (Corporation) չը գար, այլ նոյն  
ինքն փտութենէն յառաջ կուգայ: Ըլլայ այն ինը-  
պաստ կամ ընդդէմ ընկերակցութիւններու:

Ութերորդ տատուիրանը կ'ըսէ, «մի՛ գողա-  
նար. անիկա չըսեր թէ՛ «հարուստներէն մի՛ գողա-  
նար», նոյնպէս չըսեր, թէ «աղիս ժողովուրդէն մի՛  
գողանար» այլ յստակօրէն և մեկին կերպով կ'ըսէ  
«մի՛ գողանար»: Վնասար է, անպարկեշտ կամ կեղծ  
բարոյականութիւնը, որ կը դատապարտէ հարուստ  
դասակարգի չարագործները, և կը մոռնայ այն  
չարագործութիւնները, որոնք կը գործուին անոնց  
հաշւոյն. որ կը դատապարտէ կաշառքը, բայց կոյր  
կը ձեւացընէ ինքզինք դրամաշորթութեան առջև,  
որ կը փրփրի կատաղօրէն երբ ընկերակցութիւն մը  
առանձնաշնորհումներ կ'ստանայ խարդախ միջոց-  
ներով, և սակայն չը տեսնելու կը զարնէ և զգուե-  
լի հրճուանքը կ'ունենայ, երբ առեւտրական ընկե-  
րակցութեան մը անարդարութիւն եղած է: Ընդմա-  
րիտ հանրային մարդը որ կարող պիտի ըլլայ ժո-  
ղովուրդը պաշտպանել ընկերակցութեան չարագոր-  
ծութիւններուն դէմ, այն մարդն է որ կ'ուզէ

պաշտպանել նաև ընկերակցութիւնները իրենց գէժ եղած անիրաւութիւններուն համար: Իսկ եթէ հանրային մարդ մը, որ ժողովուրդին քմայաճոյքին տեղի տալով՝ անիրաւութիւն կ'ընէ հարուստին կամ հանրային ընկերակցութիւններու, լաւ պէտք է պիտանանք, թէ պատեհութիւն գտած ատենը, զաւանանօրէն պիտի վնասէ ժողովուրդին, ի շահ ընկերակցութեան մը: Եւ սակայն, ուղղամտութեան մօտ պէտք է նաև լրջմտութիւնը: Ուղղամտութիւնը միայն կարող չէ օգտակար հանդիսացընելու հանրային մարդ մը, եթէ այն վախկոտ կամ յիմար մըն է, եթէ անիկա առք գլուխ եռանգոտ մը և կամ անգործնական երազատես մըն է:

Ինչպէս մենք բարենորոգումի (Reforme) կը ցանկանք, պիտի տեսնենք թէ բարենորոգումը որքան բլուրն ի վեր շարունակական և հասարակ քարշում մըն է, նոյնքան և կամըջելու և կամարելու գործ մըն է միանգամայն, որոնք կրնան շատ զիւրաւ փլուծի և տակնուվրայութեան երթարկուիլ:

Հարուստները, որոնք կաշխատին այսօր արգիս լել հաստատութիւնը օրէնքներու, որոնցմով իրենց գործերուն խնթոյ պիտի ըլլայ, ի շահ հանրութեան և կառավարութեան հեղինակութեամբը, պիտի չ'յաջողին իրենց ջանքերուն մէջ: Իմ կարծիքովս, կասեցընելու է այդ շարժումը. և եթէ յաջողին իսկ, պիտի տեսնեն, թէ հովին մէջ ցանած են և պիտի հնձեն միայն մրրիկ. որովհետև ատանկով վերջապէս պիտի արժնցընեն ծայրայեղ զայրոյթ մը, որ միշտ կ'ընկերանայ բարենորոգումներու, որոնք յառաջ կուգան պոռթկումներով, փոխանակ խաղաղ և բնական ընթացքով:

Միւս կողմէն, դժգոհութեան և վրդովմունքի

կառաղի քարոզողները, կատաղի ամբոխավորները, տիրող ամբողջ դրութեան դէմ, որոնք անուղղամտօրէն կը գործեն, ըլլայ այն ծրագրի պակասէն, կամ ցնորամտութեամբ, մարդիկ որոնք կործանել կը քարոզեն, առանց կործանուածին տեղը բռնող բանի մը վրայ խորհելու, կամ անոնք՝ որոնց խորհած դարմանը վատթարագոյն է քան դարմանել ուզուած չարիքը, բոլոր այս մարդիկը, ամենավտանգաւոր թշնամիներն են իրական բարենորոգման:

Եթէ անոնց մնայ ասպարէզը, անոնք ժողովուրդը պիտի առաջնորդեն աւելի խորունկ տիղմի մը մէջ, որչափ անիկա կը գտնուի այսօր իսկ եթէ չը յաջողին իրենց ուզածը, ընել, անոնք անբեւակայելի ինսաներու պիտի ենթարկեն՝ այնպիսի հակառակեցութիւններ յառաջ բերելով, որոնք իրենց կարգին պատճառ դառնալով այն տեսակ գծագրութիւններու, իբրև արդիւնք իրենց քարոզածներուն լոկի չարիքներուն, աւելի պիտի հաստատեն ու ամրացնեն այն չարիքները, որոնց դէմ մաքառել կը հաւատացնեն ժողովուրդը:

Ամեն բանէ առաջ և ամենէ կարեւորագոյն բանն է շայնագոյն համակրանքը մարդուն՝ մարդու հանդէպ: Գործաւոր դասակարգին, հողը ժողովին բարելաւութենէն կախումն ունի հանրային հայրենիքի բարելաւութիւնը: Անոնց բարիքը պէտք չէ փնտռել ուրիշները վար քայելուն մէջ. անոնց հանգիստը ամենաառաջին և զլխաւոր նշանաբանը պէտք է ըլլայ մեր բոլոր քաղաքագէտներուն:

Նիւթականի մասին, մեր ամենուս ջանքը պէտք է ըլլայ ձեռք բերել աւելի լայն անտեսական պատեհութիւններ բոլորին համար, այնպէս որ իւրաքանչիւրը պատեհութիւն ունենայ ցոյց տալու այն որ իր մէջը ունի:

Հոգեկանապէս և բարոյապէս, պէտք է ջանանք ձեռք բերել մաքուր ապրելակերպ և ուղիղ մտածելակերպ: Մենք գիտենք որ մարմինի վերաբերեալ խնդիրները շատ կարեւոր են, և սակայն գիտենք նաև, թէ հոգիին վերաբերեալները անբաղդատելիօրէն աւելի կարեւոր են: Միջնակարգ քաղաքացիին անհատական բարձր նկարագիրը Ազգի մը հիմնաքարն է և միշտ պէտք է այնպէս ըլլայ:





# ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿ

Ձ Օ Ն

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Փ Ի Ի Ն

Յ

15

17—11

I. ԱԶԳԻ ՄԸ ՍՏԵՂՄՈՒՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ.— Գատմութեան դասերը.— Կեանքն ու գիտութիւնը.— Ցախտենականութիւն.— Ազգերը կը խօսին.— Հայ Ազգի կազմութիւնը.— Միջավայրի ազդեցութիւն.— Ամերիկեան Ազգային կազմութիւնը.— Հասարակաց շահ եւ հասարակաց հոգի.— Հայ միջավայրը.— Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ, եւ անոնց դերը.— Ազգի մը պահպանութեան միջոցները.—

13—39

II. ԱԶԳԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀԱՍԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.— Բաղդատութիւն մը Հայ Գաղութներու միջեւ.— Հոգեբանական գիտութիւնը.— Ժառանգականութեան ազդեցութիւնը.— Լորտ Պայրըն.— Պատմութեան դերակատարը.— Գնահատումի եւ արդար դատողութեան պակասը.— Կեանքը՝ սովորութիւններու կրկնութիւն.— ՊԼԵՖԻ ԿԵՐԷՆԸ.— Նկարագիր.— Կամք, խելք, զգացում.— Մատակասգարեան նուագարանը.—

40—55

III. ՔԱՂԱՔԱՑԻՒՆ ԴԻՐՔԸ ՎՏԱՆԳԻՆ ԱՌՋԵԻ.— Բաղաբաշխական պարտականութիւն.— Անտարբերութիւն.— Գաղափար եւ արդիւնք.— Ժողովուրդին եւ անհատին կոչումը.— Հայը եւ Հայ Ռամկավարութիւնը.— Ընկերական սխալ ուղղութիւններ.— Այլասեռումի պատճառները.— Շահագործում.— ԹԻՎԻՆԻ ՌԻՎԻ.— Բերդապահներու վատութիւնը.— Կազմակերպութեան պէտքը.— Ռամկավարութեան սկզբունքները.— Ազգային նուիրականութիւններ.— Անկախութեան զանգակը.

57—78

IV. ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԱԶԳԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԻՆ ՄԷՋ.— Փոքրոգի հետաքրքրութիւնը.— Հետաքրքրութիւնը՝ իբր բնական պահանջ.— Դիտելու պատեհութիւնը եւ տեսնելու ազատութիւն.— Գանքարաթափոյցը.— Հաշուեպահանջը.— Ազատութիւնը՝ արտասահմանի մէջ. եւ բռնակալութիւնը Հայաստանի

[ 347 ]

մէջ.—Օրինապահութեան ոգի.— Ընկերակցութեան ոգի.—Կըրօնական ոգի.— Հայրենասիրութիւն.— Իտէպլիտոս եւ լաւատես.  
79—101

V. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ.— Կազմակերպութիւնները.—Ելեքտրականութիւնը.—Էլէքտրիկ լիւր.— Բռնապետութեան արդիւնքները.— Իսլամացած Հայերը.— Ամերիկեան կազմակերպութիւններ.—Ռամկավարութիւն.— Հայ Ռամկավարութեան կրկին դերը.  
103—110

VI. ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Գաղթականութեան երկիրը.—Ամերիկեան քաղաքակրթութիւն.— Հայկական սովորամուտքիւնը.—Պատեհութիւնները.—Ձեռներէցութեան ոգի.— Արժանապատուութեան զգացում.—Անճնասիրութիւն.— Դրամասիրութիւն.  
111—120

VII. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.—Դաստիարակութեան կոչումը.— Անճնական օրինակ. Մոտէն ու Իտէլի.— Ջարգացում.—Փորձառականութիւն.—Սերունդներու ճարտարապետութիւնը.—Արտիստիկ շէնքը.—Վիթթորիա Կոլոնա եւ Միշէլ Անժ. կամ մարդասիրութեան արուեստը, եւ արուեստին կրօնքը.  
121—128

VIII. ԵՐԿԱՆՋԱՍԷ.—Ազգային երկու սխալները.—Ազգային ներկայացուցիչներ.—Վերլուծում Շիրվանզատէի գրական գործերուն եւ անոնց ոգիին.—Արուեստագէտը՝ հեղինակ, գերասանը՝ Թարգմանիչ.—Վիլհէլմին Շրոտէր.  
129—135

IX. ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.—Ապրուած կեանքի մը արդիւնքը.—Անճնապաշտպանութիւն.—Ինկածները ու բարեգործութիւնը.—Թշնամի եւ բարեկամ.—Ջարգուշակ մարգարէ.— Յամառութիւն եւ հաստատակամութիւն.—Հ. Բ. Ը. Միութիւն ու անոր դերը.  
137—144

X. ԱՅՍՕՐՆ ՈՒ ՎԱՂԸ.—Տրտմութիւն եւ զրամական պահանջ.—Երջանկութիւնը չտրուիր.— Անհատական տեսակէտը հանրային գործերու մէջ.—Այսօրուան կարեւորութիւնը.—Դէպի Հ. Բ. Ը. Միութիւն.  
145—150

XI. ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԶԱՄԲԱՆ.— Մեծ քրտնաբերութիւնը.—Նարդէտն կը խօսի.—Մշակները.—Վերլուծումներ.—Միսիոնարական սխալը.— Ներողամտութիւն եւ աններողութիւն.—Ամերիկեան կրօնները.—Հայ Բողոքականութեան հայեացքը, եւ առեւտրային տարբերութիւններ.—Ազգային խառնուածք, եւ Ազգային կրօն.—Եպիսկոպոս Թըրնըր.— Պատուաստումը.—Հին ջահեր.— Զիրար ճանչանք.  
151—162

XII. ԿԵԱՆՔԻ ԱՐԴԻՒՆԱՒՈՐՈՒՄԸ.—Եսամոլութիւն եւ ազամոլութիւն.—Մեծ ու պզտիկ աշխարհներ.—Տարրերու համագործակցութիւն.—Աշխատելու ոգի եւ բարեսիրութիւն.—Չար գործիչը.—Փեթակը.—Ամուկ աշխատութիւն.—Սխալ գործունէութիւն.—Ազգային առաքինութիւններ. 173—173

XIII. ՀԱՅՍՏԱՆԻ ՊԱԶԱՆՋԸ.— Գիտակից եւ անգիտակից իւրացումներ.—Ժառանգական պարծենկոտութիւն.— Հայացումի ախտը.—Վիքթորիա Թագուհի.—Սուլթան Համիտ.—Անգլո-Սարսոն նկարագրին հայացումի պահանջը.—Անգղիական նրկարագիր եւ Հայ նկարագիր.—Բաղդատութիւն. 175—186

XIV. ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԸ.—Դիւանագիտութիւնն Տառապանքին ծայնը.—Ընկերային առաքինութիւն.— Գէղէոպատերազմը.—Ընտրեալներ.—Քաղաքական եւ ազգային սխալ ուղղութիւնը.—Հայկական հոգեբանութիւն.—Արդարութեան ողորդեցական սէրը.—Ուրախութեան ազդեցութիւնը կեանքերու վրայ.—Հ. Բ. Ը. Միութեան դերը.—Հ. Բ. Ը. Միութիւն, եւ Կարմիր Խաչ.—Ամերիկեան Սեւամորթը եւ Հնդկը.—Յաւիտեան անտոբանը. 187—197

XV. ԳԻՐՔՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒՅԻՒՆԸ.—Գիրքը բարեկամ ամենուն.—Աւաջին գիտութիւնը.— Գրագրկում.— Մատենադարաններուն դերը.—Ազատութիւն եւ Միութիւն.—Կոչը՝ ժողովուրդին ուղղուած.—Գանձերու պալատը.— Մարդկային իրաւունքներուն ակը.—Գնահատումի կերպերը.— Եիւ եորք, Գոստոն, Ֆիլատէլֆիա. 199—206

XVI. ՀԻՒԱՆԴ ՏՂԱՔԸ.—Ուստրի Հիւանդանոցը.— Գզտիկ հիւանդները.—Գէպէքը.—Ախտերու ցուցադրութիւն.—Գաղափարի ու բարոյականի հիւանդները.—Բուժուելու պէտքը. 207—212

XVII. ՄԵԾԱՍՈՒ ԱԽՏԱՒՈՐՆԵՐԸ.—Բարոյական հիւանդութեանց տեսակները.—Վատ հոգիներ.—Չարախօս.— Չարագործ.— Մեծամոլ ախտաւորներ.—Ժիւպէրի կանգունը. 213—219

XVIII. ՆԿԱՐԱԳՐԻ ՃԱՐՏԱՐԻՍՈՒՅԻՒՆ.—Ստրկացումի մէջ Հայկական զարթում.—Միացեալ Ընկերութեան մահն ու զարթումը.—Անոր գործը.— Քաջութիւնը՝ իր յայտնութիւններուն մէջ.—Հնակարկատի գործը.— Ինքնամաքառում.—ձյմարիտ Թազաւորութիւնը. 221—226

XIX. ՕՐԸ ՋՈՐ ԿԸ ՏՅԵՆՔ.— Տառապանքի աղաղակը դարերու մէջէն.—Ատա նէկրի եւ Պ-բ-Է-Է-Է.—Չմատնող հաւատքը.—Արդարութիւն եւ տնտեսական կեանք.— Հ. Բ. Ը. Միութիւնը օժանդակ Օսմանեան Հայրենիքին.—Քաղաքական ուղղութիւն եւ տնտեսական ուղղութիւն.— 227—232

XX. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՐՔԸ.— Կիրքը հիւթ կեանքի.— Կիրքը սխալ ըմբռնուած.— Ստոյիկեաններ.— Կեանքերու զարթնումը.— Կրքոտ հայր զուրկ պարտականութեան կիրքէն.— Կամաւոր պարտականութիւններ.— Գիտութեան կերքը եւ Հիւպէր.— Մէթէլլիկի կարծիքը.— Տոքթ. ձէքէլ. եւ ինքնաբուժում.

232—241

XXI. ՔԱՂԱՔԱՑԻՆ — Ամիրիկեան ընկերականութեան ոգին եւ ծագումները.— Հանրապետական եւ Ռամկավար.— Քաղաքական երկու որոշ ուղղութիւններ, եւ անոնց ազգային ծրարագիրը.— պատրաստ եղիր վտանգին առջեւ.— Հայուն քաղաքացիութիւնը.— Քուէ, եւ ընտրական սկզբունք.

243—247

XXII. ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԿԵԱՆՔԸ.— Կեանքն ու անոր գործածութիւնը.— Մարդ անասունը.— Իտէալ կեանքը.— Վերելք.— Յակոբի երազը եւ քարոզուած իրականութիւնը.

249—255

XXIII. ԲԵՅՂԵՇԷՄԻ ԱՍՏՂԸ ԿԱՍ ՄԵՍ ՈՒՐԱՍՈՒԹԻՒՆԸ.— Ծնունդ եւ որբան.— Տունին ուրախութիւնը.— Մեծ Ծնունդը.— Մեծ ուրախութիւնը — Բախտաւոր աստղը.— Գիտունին եւ տգէտին ճամբաները.

257—265

XXIV. ԴԷՊԻ ԿՈՒԻ. — Պարտականութեան ճայնը.— Մարդը՝ զինուոր.— Ամուսնական սէր.— Հայրական սէր.— Մակեդոնի կռիւր.— Պարտազանցները.— Ջինուորի պարտականութիւնը խաղաղութեան մէջ.— Անտարբերութիւն՝ ընկերական չարիք.

267—273

XXV. ԱՏՐՋԱՆՔԸ.— Տը Լէսթըր եւ իր հակայեղափոխական գործը.— Թոգաւորական Ծիրանին.— Ազգային ստրջանք եւ Սէնթ Պէօվ.— Ազգը իր ճակատագրին ուղղութեան մէջ.— Մեր ազգին չարիքը եւ վաղուան ստրջանքը.— Համերաշխութեան պէտքը.— Ազգային զիկտատորութեան պահանջը.

275—282

XXVI. ՊԱՍՍՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԱԶՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ.— Բարոյական զարգացումի դանդաղումը.— Երեւոյթներ.— Գիտութեան նախասիրութիւնը.— Պատասխանատու ազատութիւն.— Ընկերական օրինագիրք.— Նպատակները կը հակասեն պէտքերուն.

283—288

XXVII. ԿԵԱՆՔԻՆ ԱՂԲԻԻՐԸ.— Արտաքինն ու ներքինը.— Եւառը իր պտուղէն.— Սրտի պահպանութիւն.— Ներդաշնակութիւն կեանքի.— Վտանգուած սիրտը եւ պահպանութեան կերպերը.— Ուիլիեմ ֆէն, եւ եղբայրասիրութեան քաղաքը.

289—295

XXVIII. ԼՈՅՍ, ԼՈՅՍ.— Երեւոյթները Խորանին առջեւ.— Սիմէոն Երեւոյթի.— Լոյսի եւ փառքի մարմացումը.— Կեանքը լոյսով ու փառքով խառնուած.— Լուսաւոր մարմիններ.— Լու-

սառութիւն. — Հաղորդակցութիւն լոյսին հետ. — Լուսատունը եւ  
Լուսերգութիւն. 297—304

**XXIX. ԿՐՆԱՐՔ ՎՍՏԱՀԻԼ ՔԵԶԻ.**—Փորձութեան լեռնէն  
վար. — Հրաւէրը. — Վստահութեան հարցը. — Վստահելէն յոգնած-  
ները. — Կոյր վստահողները. — Վստահութեան պէտքը եւ դերը. —  
Խաբկանք. — Լինքրնի պատգամը. 305—311

**XXX. ՀԱՅ ԶԳՆԱԺԱՄԸ ՊԱՏՄՈՒՅԵԱՆ ՄԷՋ.**— Հայ քա-  
ղաքական կեանքը պատմութեան մէջ. — Սրշակունեաց թագա-  
ւորութեան կործանումը. — Սահակ-Մեսրոպ եւ անոնց դերը. —  
Յագկերտ եւ Վարդան. — Մազդէականութիւն եւ Գրիստոնէու-  
թիւն. — Վարդան ու Վասակ. — Նպատակ եւ միջոց. — Քաղաքա-  
կան ԿՒՐԷԻՆԵՐ. — Վարդանանք ու Վահան Մամիկոնեան. — Քան-  
դումի քաղաքականութեան շարունակութիւնը. — Մեռելներուն  
դերը. — Նահատակութեան ոգին. — Արմատողներու երգը. —

**XXXI. ԻՑԱԽԱԻԵԼԻ ՄԱՐԴԸ** 313—329  
**Ռանախոսութիւն Մ. Թ. ՌՈՒՋՎԷԼԻԴԻ** 331—345

### ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԷՋ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
<b>21</b>	25	կ	կը
<b>21</b>	26	զորա ուր	զորաւոր
<b>22</b>	13	ըսուածլ	ըսուածը:
<b>22</b>	26-27	արգիտութեան	սգիտութեան
<b>23</b>	26	ւ	է
»	28	պատրա սել	պատրասել
<b>29</b>	17	փորո ւած	փորուած
»	27	անոն	անոնք
<b>32</b>	29	Դւ	Եւ
<b>49</b>	11	զնելու	դնելու
<b>50</b>	14	ճերտոյ	ճերտոյ
<b>54</b>	16	ուղեղը	ուղեղը
»	18	բլլար	ըլլար
<b>60</b>	34	անճանապատութիւն	արճանապատութիւն





Գին՝ Թղթակազմ 50 սենթ  
Լարակազմ 70 »

Վանառման կեդրոնատեղի.—

Գրատուն Լ. ՕՏԱՊԱՆՇԱՆ

**THE FOREIGN BOOK STORE**

795 WASHINGTON ST Room 2

*BOSTON MASS*





UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 03885 8872

